

203.1
Q-95





2004

203.1
Գ-95
Ա 1509
208-47

# ՍՐԲՈՑ ՀՕՐՆ ՄԵՐՈՑ

# ԳՐՔՈՒՔԻ ՆԱՐԵԿԱՑԻՈՑ

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՏԵԱՆ ՃԱՌԻՑ

*Յորում Պատմեւ սքզ Յայնն Ընդարանից, ներբողք
'ի ոբ Յայնն Ասծընկալ, 'ի ոբ Ընծայինն, 'ի ոբ Ընա-
քեալն և 'ի սքն Յակոբ Հայրապետ Մծբնայ,
Հանդերձ Պանձիւք Հոգևոյն սքզ, և Նկեղեցւոյ,
և Յայնն։*

*'ի հարցափորձ ընտրութիւն օրինակացն, և ըստ տեղեացն առնել տեղե-
կութիւնս, լուծմն նախկին աշխատութեանն Յատուցանել կամեցաւ*

Հ· ԳԱԲՐԻԷԼ ԱՒԵՏԻՔԵԱՆ
ԱԹՈՌԱԿԱԼ ՎԱՐԴԱՊԵՏ
'Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷ

1003
33295

· Հրամանաւ Ա·Ր·Հ·Ա·Պ·Ա·Տ·Ի·Ա·Ր·Ի Տ·Ի Սուքիասյ Սմալեան
Ա·Ր·Ք·Ե·Պ·Ի·Ս·Կ·Ո·Պ·Ո·Ս·Ի և Ընդհանրական Ա·Բ·Ե·Ց·Ի
Մխիթարեան Միաբանութենէ։

'Ի Վ·Ե·Ն·Ե·Տ·Ի·Կ

'Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

1827 · ռ·ՉՀԷ

213+28

# ՅԱՒԵԼՎԱԾՔԱՆ

Ո՛չ ոք՝ է վաղ ժամանակաց ղեռվելէ ի փափուկ քանասէր քոյ յանձին առեալ մեր ածել՝ է կատարումն, վնէ Աղօնամա պոյց մատենի Աբէյ վերդապետին մերոյ Գրիգորէ՝ է շար արկանել համեստ ընդարձակ Ո՛ոս ընծայեալ՝ է գովեստ Աբէյ Խաչէնի և Արբուհոյ Աճառնին, այլովքն հանդերձ որ է ած Աստուածաբան, և՝ ի ձեռն Յակոբ մծբնայ հայրապետի, ըստ ընդ Գանձասրին ակնբնաւորաց՝ է տառէդ անուանն նորա։ Աչք՝ երիցուրդ տան կարգեալ Լուսոյ առ նախընծայ տան Աղօնիցն. յորում նէ էին Աղօնաւոր հոգեւորականն պատուեցեալ վերս Գրիգոր երանելի, յերիցուրդս ձեռնարկ ճանկեալ արդարև Հոգեւոր ճարտարապետն՝ առաքել չան յառաջնոյն խառնակաս. որով և բացայայտութեան յաւելս և կարօտեալ, և՝ է նոյն մեղ կանխագոյն և արդեօք գուշակել, երբ առ ձեռն վկայ առաքեցի և զուղղափեր օրինակ Ո՛ոսին դիւրին էր ունել՝ յընտրութեն վերպատուոյ և եկմտաւ յաւելուածոյ։ Ուղղափեր առեմ օրինակ, որ յանդիպի և՝ է չէիսուն գրչաց էնեն առաղաղել յանայայութե և կամ յեղծումն առայուածոյն։ Եւ առաքել հաւատարմին հայցել է, յորս ձեռն օտարք կամ օտարոյ էին՝ է ներկս արձեալ գողտեսր ըստ ի՛ւրն ձեռնդ տալոյ, եթե յորդեփերս ալյն պատվ բնիկ մատենագրին, զնորին յուսացեալ անուն քաղանգել և ըյարգանս։

Աչս ակա ընտակեր յաճախել առ ոմանս յերբեմն ժամանակի առ անգիտութե դարուց, երանի՛ ըե պակասել ընկալել էր եպատս, և ոչ՝ է ծօտարս՝ է գիտնական դարս ձգեալ ըե՛ւրն քանասցուցել ինացուածս։ Աչյ ասկայն պետս, և պետանի ցարդ՝ մատն հնեալ՝ է գեղեցիկ մատենագրութե առակնոց, ո՛վ հիան ուր առանձնային գրուածս ոչ կամեցե ի՛ւր վասն յերբեբել, այլ ուր պատկեր աբչանացուցմամբ յաղեան հատարակաց հանել խոստանայ զառակնոյ ուրուք մատենագրի ընձեռութե. ինվ մատամբ՝ նախանձ բարի յանձին երկեցուցանել զհայրենական նոյն երկասրութե պալ՝ է վայելուչն որդուցն աշակերտելոց, քայց այլով գործ զրոմնացանի կատարելով՝ է բարութե երկրագործութե. անհատատարիմ առ բուռն մատենագրին, դառնաձան առ վերծանօղս, առ երկանչէրն անպատիառ. երեալ՝ է մեղ մատենագրին չէմանայ՝ ըե չէ՝ ի ինչ, և ընդերցողն

հաւատայ՝ պէտ անգէտ է. եւ սակայն ինչո՞ւ եմ ես որ փիլիսոփայ համբուն, ըստ մարդկային կայ կէնդանի չէ՞ր հարցաղատ օրէնսդիր, եւ՝ ի վերծանողաց երբ եւ է գտանիցի ոչ՝ խարդախութեան գիտակ եւ վրէժխնդիր։ Այնուհետեւ բանիւ, սպառնայ եւ խարդախութիւն՝ պէտ հաց ասացեալ է յաւուրս, ոչ գիտայ բնաւ անասնական ասելն. եւ օրինացն արդարութիւն առ խարդախելս գրոյ գիտակ դասուիցիս ածել պայմանիկ՝ որ պէտ ընտանի առնիցեն։ Պանդիտ արդարեւ օտարոտի այլազգի բանից եւ ասացուածոց՝ ի գիրս վաստակս նախնեաց՝ կեղծիքդ եւ սիրելագոյն բանս նոցա կայսրացնեն, եւ չընդունել պատուիդ՝ բովանդակ հալածական այնուհետեւ պէտ լինիցին։

Ո՞յսուհիկ համառօտիւ խելի՝ ի դէմս աճել առ պէտս, պէտ երկայնափունիկ կղզամբանաց եւ խրատու՝ այնուհիկ որոյ անկն է՝ լնաց փանդիտն, պէտ ուրայն պէտ կայսրացնել կամիմ պէտ ընդունել չընդունել չնուէ՞ զօրինաւէս գրոցն, եւ պէտ ասպարէզ յանդգնասուրիւն՝ ի բացայայտել պէտ առ նոցա մնինս. գիտի հաւել յանդգնել՝ առնել հակառակել պէտ ասպարէզ ընդ նախնի մատենագրաց. պէտ ապագայիսն ուսումնասիրէ պարբերական եմանալի եւ պանպղտոր՝ ի սեպհական յարակ պղերգաց անարգ յանգիսն ծողովելոցն։ Այնր ջան եւ գտաւուն՝ ահա այդ է. եմ ընդերցողացն, որպէս եւ ակարծիցէ՞ր. երբ պէտ հակալել, նոցա կնոքանց՝ ի բարեւ այն լինիցի. եւ երբ եւ պէտ գել, պէտ ձեւս անարգ եւ ուշ մ։ Պանդիտ ուշ նոր ինչ համարեալ ինչ կամ երբ օտարոտի, երբ ուր վաստակիցն տէր ուսուցանել սերողացս պղպղելն, եւ պանդիտ պէտ ասպարէզ եմբեկցաբար, այլ ոչ գիտ պէտ պրոտ՝ սիրոյ պայն գրեցիք, որպէս րե ինչն հնոյ սիրոյ էր. կամ ուր պէտ գրոյ առնուսկ՝ ի մնինել, այլ ոչ մնինել պատակրել պերբաբս՝ կոչիցե ճեռակեան բառիս պատ ուրումն հերքոտեալ սրտի. կամ ուր պանդիտ ուղղագրութեան վարդապետացն առանձս առակի դնեսկ, անդրադարձ այլ ոչ կարողութիւն՝ ի շահագոյ հարցն պայն բողոքիցե, անգիտացեալ րե պէտ ոմանս ընդերցե՞ր ուր հարս եւ վարդապետս։ Այ՛ն այդկ օտարոտի երկ են ասեսկ, այլ կանխաւ յաղագս դպրութեան պերբիայեալ յառաջելապէս անդր, րե անուսումնասիրեալ եւ յողդողդկ համակրել առվոր են պերբս, յօգուտ անչահ արդեօք՝ րե՝ ի երկրորդ, ի պարզոյ անդր ճանիցե։

Պայսպէս ինչ երբ չարարակամօրէն պուեալ՝ ի գլխաներկ ազարբեալ ճառիցդ, որ ինչ այլ երբ պանդիտ նոցա առանձին գիտելի հայցե, ի Վախարդութիւն անդր նոցա հպարտացուկ։

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ՉԱկանաւոր անցս սրբոյ Խաչին Պարանից՝ ընդ անգէտ դիպուածս մարդկայինս լինելը արդարև դասել՝ և իբր ընդ ձեռաց, թէ ոչ բարեխանձն արիմնութիւն Սահմանոյն մնայց դիտապետի շարժէր յորդորական նամակաւ զմերոյ սրբոյ Գրիգորի զիմաստականն դրիչ՝ արձանագրել զդործեցեալսն յիշատակ անկորուստ։ Յանձն առ զարժանահայոց խնդրելին արագալուրն այն և իմաստախոհ դպիր արքայութեն, մտադիւր յաւելուածով և տարեալ ի դլուխս, ոչ զպատմականն ևեթ ճառարտադրելով, այլև զներբողականն առասպելս ի սբ Խաչն ձգընկալ և ի սբ կոյս Ածամայրն. զոր օրինակ խոստանայ յաւարտ Պատմութեն ասելով. * Զկնի դծագրութե դումարաց հոլով պատմաբանութես խառնել դուն ինչ դրութիս համառօտագիր դրուատից, նախ՝ նմին իսկ կենդանարարն ճնագրութե ձգեան Խաչն, և զկնի սորին՝ սբ Տիրուհոյն և Ածածնին ‖. զոր և կատարեալ ասէ ի Յիշատակագիր նամակին առ նա ինքն Սահմանոս։

Այլ քանզի բազմադրութագ յօրինուածոցն աղագաւ մնայլ ունի պատմութիս նարեկեան, անկաւոր համարիմք ի կանխաբանիս մեկն տեսութ զհանդիպումն իրացդ համառօտել։ Դիպ եղև յաւուրս տիեզերակալութե երկոցունց եղբարցն Վասլի և Կոստանդեայ՝ առն միում մոկացւոյ ի տանէ ազատաց դիմել զինուորիլ ի դրան ինքնակալացն։ Սա եղբօրորդի լեալ սրբաւորի և նշանագործ ճն Դաւթի մոկաց եղելոյ դիտապետի, ունէր առ իւր մանն ի նշխարաց հողոյ տապանի Հօրեղբօրն երջանկի, իբր պահպանիչ և մխիթար յիւրումն ծաւրութե. յորմէ և նշանք բժշկուե առ բազումս ախտացելոցն դործէին ի թագաւորական քաղաքին։ Իրաղեկ եղեալ այնմ ինքնակալացն բարեպաշտից, և առաւել ևս պատուասիրեալ զմոկացին իբր աղգային այնպիսւոյ նշանագործ հովուի, ի վերայ և հասեալ տեղեկանային՝ թէ իւր իսկ քեռորդի Սահմանոս անուն՝ անցեալ կայ յաթոռ դիտապետութեն փոխանակ երջանկին Դաւթի. և կամէին մեծապարգև հանդերձանօք ընծայաբեր լինել ի զարդ հանդստարանի նորա։ Այլ այրն հանճարեղ՝ փոխան երկրային նուէից պատուականաց՝ ընտրեաց հրամանաւ նոցունց իսկ ինքնակալաց հարցեալ գիտել՝ թէ զինչ ինչ ի հոգևորականաց առնել փափագիցեն իւրքն աղ-

դայինք. և սորին վասն նամակատար զոք առաքեալ ի քուն դաւառն, ընկալաւ առ ի նոցանէ պատասխանի՝ մեծ և շատ և ս լինել, եթէ ի պարգևի շնորհեցի նոցա մասն ի Կենաց փայտէն: Գովուրթէ հաճեալ ինքնակալացն ընդ բարեպաշտութենն լնդիր, յառաջամիտք և գտան յաւելուլ ի փայտն Կենաց ի միւս ոսկեձոյլ քառաթև ամանի մասն ի Ղենջակէն՝ որով ծրն սփածաւ, և ի Փշոցն և ի Սպնգանէն, ի Բևեռացն և ի Խանձարրոցն: Զայն պարգև երկնաւոր ինքնին բարձեալ մեծարանօք այրն պայազատ՝ միջնորդն բարեացապարտ, զոր պատմութիւն ծանուցանէ պատուոյ անուամբն ևեթ՝ Մանգլաբ կոչելով, և հասեալ ի բնագաւառն Մոկաց առ քեռորդի իւր Ստեփանոս, ամիսս իջեցին զգանձն տէրունի նախ առաջին մօտ ի հանդստարան Դաւթի երջանիկ դիտապետին, և ապա ի տաճար սքի Կարապետին Յովհաննու, և անտի յաւուր մեծի Ուրբաթուն ի տաճար սրբուհւոյ Աճածնին. զորս նա ինքն Ստեփանոս նախակերտեալ բովանդակեաց մեծագործ շինուածովք: Յայն բազմահանդէս փոխադրութի առաջնկայ գտան երեքին թագազարմ եղբարք արծրունիք՝ Սենեքերիմ, Գուրգէն և Աշոտ հանդերձ նախարարակոյտ ազատօք և անհամար ժողովրդովք: Կատարեցաւ այս ի հայկականս թուականէ նկ (432) այն է ամ ոն 983:

Այս քեզ աւասիկ մեկնօրէն պատկեր՝ համառօտիչ ընդարձակ զրուցելոյն ի նարեկեան պատմութենս. զորոյ ժամանակ թէ երբ արդեօք, կամ քանի ամաւ յետ իրացն զործելոյ խընդրեցաւ ի Ստեփանոսէ մոկացւոյ, և ի սքի Նարեկացւոյն գրեցաւ, չունիմք սահմանել ճշգրտաբար: Եւ առաւելագոյն ևս տարակուսանաց խնդիր է, արդեօք ճառս պատմական որպէս ի Նարեկացւոյն գրեցաւ՝ եկած մնաց այնպէս անյաւելուած, թէ յետ այնր յայլոց ումանց խառնեալ ինչ իցեն բանք ազգի ազգի: Իրաւացի ապաքէն ամենայն ոք տեսանիցէ զերկբայութիս, եթէ զոր միանգամ յայս խնդիր զհաւաստիան ընտրեցեալք նախ, որով անհաւաստիքն ինքնին դայցեն ի յայտ:

Հաւաստի նախ առաջին այն է, զի հանդէս եկաւորութենէ սքի խաչին Ագարանից կատարեցաւ ի հայ թուականին նկ. որպէս պատմութիւն ինքնին զեկուցանէ:

Երկրորդ հաւաստի, զի Աղօթամատոյցն մատեան նորին սքի վարդապետի կատարեցաւ ի թուին նծ կամ նծ. ըստ ո՞ր բում Յիշատակարան նորա յայտ առնէ, այս է՝ յետ նախագրեալ անցից իւր քսանիւք ամաք:

Երրորդ հաւաստի, զի վաղ քան զԱղօթն յօրինեալ խակ էր Ներբող սքի Աճածնին. որ և ի բանն ճ. յաղօթն առ Նա յիշատակի. * Խառնեալ զանձն իմ նախնի մեծիդ ներբողի ի քոյդ պաղատանս ‖: Եւ յայտ խակ է, թէ զոյդ այնմ գրեցաւ նաև Պատմութիւն, և Գովեստ սքի Խաչին:

Ա յսոցիկ հաւաստի գիտացելոց զհետ գայ աներկբայաբար, թէ Պատմագրութիւն և որ կից այնմ, գրեցաւ զինի նկ թուա-

կանին, և յառաջ քան զնծայ ։ Այլ ինայ հարցաքննելն, որ-
չափ յառաջ արդեօք, և յիրաւի տարակուսելն այնու՝ զի բա-
զում ինչ զրուցաբանեալ տեսանին ՚ի պատմութիւնս յաղագս
գործոց կայսերացն Վասլի և Կոստանդեայ, որոց ժամանակ
իրագործութիւնն՝ ըստ գրելոյ Կեդրենոսի յոյն վիպասանի, և
ըստ հայ պատմադրաց իսկ՝ գայ անկանի առ Թուականաւն
նլե, կամ նլը, կամ նխը, նխթ, մանաւանդ այլ ևս դիպք ո-
մանք կատարեալք ՚ի նկե Թուականի. որով և Պատմադրու-
թիւնս ժամանակ ոչ միայն սակաւ ամօք յառաջ քան զաղօթան
կարծիցի, այլ յետոյ ուրեմն քան զնոյնս ։ Զայսցանէ համա-
ռօտ ևեթ ակնարկութիւն տուեալ աստանօր, ՚ի ծանօթութիւնսն
կարդի հատուածոցս զնւրաքանչիւր անցից զհամար ։ Այլ ՚ի
մի բան գլխաւորեալ զպատճառս տարակուսանացն, որչափ
ինչ շարադրեալ զրուցին ՚ի պատմութիւնս յաղագս ընդար-
ձակութեան և յաղթողական տիրապետութեան վասլի կայ-
սեր յարևելս և յարևմուտս, ճշմարտեալք տեսանին միայն ՚ի
նորա յետին ամս տէրութեանն, ուստի և ամօք բաղմօք յետ
զրուցեան նարեկեան Աղօթիցն ։

Բայց քանզի յանընդունելեաց է այս, և ոչ գայտնի ընդ-
դիմութիւնք մարթի է օրինաւոր պատասխանեօք ՚ի բաց փարա-
տել, հարկ ուրեմն է խոստովանել թէ յետ տալոյ սէյ Նարեկա-
ցւոյն գլուխ պատմաբանութեան, ձեռն այլոյ ուրուք մխեալ ի-
նչ յայն՝ յընդարձակել և ՚ի զարդարել, յաւելեալ ՚ի նոյն գլե-
տոյ գործեցեալն. համարձակութիւն թերևս առեալ ՚ի ընորհ-
մանէ նորին իսկ Նարեկացւոյ ՚ի յիշատակագիր նամակին, *Զթերին լրութեան և զպակասն աճեցութեան ընորհել ‖ ։
Առ այսու, քանզի նարեկացի ինքնին խոստովան լինի անտա-
նօր, *Անբնտել զոլ տեսութիւնք բաղձալի վայրիցն և սէյ խո-
բանացն ‖, կարի դժուարին և անհաւանելի թուի թէ ՚ի լսե-
լոյ ևեթ տեղեկացեալ, կարողանայր այնչափ մանրամասն նկա-
բագրել զվայրս և զչինուածս, և զազգի ազգի որոշմունս տա-
ճարացն և հանդերձանաց նոցա ։ Ահա և այս նշանակ գրչի
օտարի ։ Բնր յաւել և զնրաւադատ զարմացումն բանագէտ
քննողաց, որք ՚ի հիւսուած պատմադրութեանս այսմ ուշ ե-
դեալք, բազում ինչ ՚ի յարմարումն բանիցն, յիմաստան, ՚ի
քերդողական կամ ՚ի հռետորական շարադրութիւնն ոչ վայել-
չականս տեսանեն ընտրողական դատման սէյ Նարեկացւոյն ։

Իսկ արդ՝ թէև ըստ հաւաստաբանութեանցս՝ նշմարին ՚ի
պատմադրութեանս հետք օտար ձեռին միոյ ուրուք կամ ո-
մանց, բայց բուն առաջնին հաստուածոյն մատենադրող՝ նա
ինքն Նարեկացի իրաւապէս համարելի է. և որպէս հաւանա-
բար զհետ գայ ցայտակայր ասացելոցս, ոչ յետ բաղում ամաց
անցանելոյ իրացն. քանզի զԱծածնին գովեստ ներբողի՝ քան
նախնի կոչէ յաղօթիսն. յայտ արարեալ, թէ վաղու ևս քան
զնծայ Թուական յօրինեալ էր. և ոչ կարծել արժան է թէ
Ստեփանոս բաբեհնդիր դիտապետ՝ անագան ուրեմն յետ

հնանալոյ իրացն յայց եղեալ ի՛ց արձանագրութեանն։ Ապա հաւանիմք կնքել, թէ յետ սակաւ ամաց՝ իբր ՚ի թուականին նո՛ր կամ նո՛ր գրեալ ի՛ց հարազատ պատմութի՛ն յարակցեալքն հանդերձ։

Յառաջիկայ տպագրութե՛ս յանդիման ունելով մեր զտպագրեալն ՚ի Կոստանդնուպոլիս, և ՚ի բաց սրբելով յայնցանէ զվրիպանս գործարանի՛ որպէս զիարդ խմաստքն ցուցանէին, կալաք և զայլ գրչագիր գաղափար գտեալ ՚ի կոստանդնուպոլիս, յորում կայր Պատմութի՛ն՝ գովեստիւ հանդերձ սո՛ղ Խաչին, և սրբուհւոյ Աճածնին։ Ըստ պատմական մասինն տանելի էր հաւատարմութի՛ գաղափարին, բառից ևեթ ունելով զանազանութի՛, և քան զնախ տպագրեալսն առաւել վստահելի, թէպետ և ՚ի տեղիս ուրեք պակասորդ։ Բայց ՚ի ներբողական ճառսն՝ եթէ սո՛ղ Խաչին, և եթէ Աճածնին՝ այլափոխութի՛ բազում յոյժ բանից և կարդի ասացուածոցն ՚ի ներքս երևէր, յայտնապէս զտարի ուրուք՝ և ո՛չ զնաբեկացոյն բերելով զկերպարան. որով ո՛չ վստահելի, քան թէ կշտամբանաց իբր և դատախազութի՛ խմաստակին այնմ, որ յայն եղև ձեռներէց։ Սորին վասն ՚ի կարգի մերոց լուծմանցս և ծանօթութեանց՝ միայն ՚ի պատմականին, և ո՛չ ՚ի ներբողականն յիշեցուցանեմք զտարբերութի՛ն ինչ օրինակացն։ Այլև ՚ի պատմականն չափ ևեթ յաւելումք տեղեկութի՛ն ուր միանգամ խմաստքն խնդրեն։ Քանզի ՚ի վաստակս մնաց երանելւոյ մերոյ Նարեկացւոյ յանձն առեալ եմք լինել միջամուխ, իսկ առ ձայն օտարաց զՀետ պնդիլ ոչ ախորժեմք։

Աբէլ Հօրն մերոյ Կրեփորէ սասպետէ Զ՛ոռա, Հեղափա-
խտիրուհէ պարոնաբանուհէ Ազնուազօր Հշանէ Ազուռաճեան
Իսալէն։ Որ՛է վերուստ ամենահայեաց նախատրէանն աչնարհու-
՛է սորբին հողմանոյ հայեց աղխարհէ ազգային յուշոյ՝ բերել
հանգուցեալ՛է սահմանս վայրէց գաւառին մոկաց, [1] ՛է շի-
նուածս բնակութենան ուխտին Աբբութենան, որ հոչէ Պող-
բանք։

Ա. Ընդ աւուրս ժամանակաց [2] բազմավրդով տատանութենէ, որ՛ի կայս և՛ ի կոյս կողմանցն յու-
նաց հարաշատութենէ արեան զարմին եսաւայ, և որ
գւոյն մտից արևու, որ յաւարտումն երրորդէ՝ և
՛ի ծագ գլխաւորութեան մասին ասիայ, յարեալ և
յարմարեալ՛ի հիւսիսոյ լերինսառն, և խիտ ընդ-
ծիրանաճաւալ ծովային ծոցոյն ասպարէս. ունելով
զդարձ դիտելոյ դիմացն՛ի թեման. [3] որ ըստ ումանց
լեզուաց միջօրեայ կարգացեալ. որպէս ըստ երբայա-
կանին՝ հարաւ համբաւեալ. որ այժմ կոչի բուր-
հալք, իբր թէ հալք և մարդիչք ըստ մերս դիտմանց՝
բազում գոյութեց պատուական նիւթոց։ Ի սոյն [4] եր-
կաքանչիւր բանականաբոյս բազմածին լերանց հզո-
րաց և բարձրագունից՝ խիտ և հատու հակառակու-
թեց, որք կառուցան կազմեցան կարգեցան կանգնե-
ցան կայեն՛ի կիցս կայից խարսխաց բարձից տանողացն
ոտից, իբր նախ քան զսոյն՝ սեիր և հազար, ընդդէմ
մահարք միմեանց և ներհակակիրք։ Որք կուռ և
կարծրաճաճկոյթ վառեալովք կառօք, լեգէոնախուռմբ
կառաւօք, Ճարտարաձիգ ամրոստեան մատանցն [5]
ղինուք, ի ընդ միոյ մարտուցեալ՛ի հարուստ աւուրս
և յերկայն ամանակս։ Ի՝ինչև խնայեաց տատուկք
հերքեաց ըստ դանիէլի՝ նոխազն ծովային զեղոյն ցա-
մաքային. զարևմտայինն զոյն՝ արևելայինն։ Որպէս
երբեմն կամբիւսեանն կիւրոս զբաբելայինն։

Ը. Եւ ամբարձան բարձրացան ՚ի պատիւ փառաց Հոխութեանն կայսերական ոսկեփայլ գահոյիցն պճնուելն, եւս վայելչաբար բազմեցան և հանդարտութեամբ հանգուցեալ նստան։ Ճ առաւիղս ամենավստահս ՚ի խոնարհ առաքեալ[6] ոստքն սքանչելուղէշ բարուհասկին բարձրութեանն, տիրական և արքայական հաստատմամբ անկոյն, Եղբարքն երկոքին հարազատք միաշաւիղք համակցորդք և զուգածիրանիք՝ Ասիլ և Յոստանդին։ Վասն մարտուցեալքն ընդ ՅՃաշէն ամուրս նոցա՝ ընկլան կորացան և խոպառ սուգան մերձ առ գարշապարս ընթացից ոտից Հզօրացդ, և ՚ի ոսպասաւորութեան Հպատակութեանն նոցա պատրաստեալ գտան. որք երբեմն անձանց նոցա յուսային տիրել։ Եւ եղեն վայրք բնակութեանն առեալեաց նոցին անապատ յետին. և կուրացան շաւիղք նոցա, իբրև ընդ դիմաղաց կամաց գթութեանն լինամոց բարձրութեան աջոյն ՅԱ։

Թ. Վա՛յ զի և[8] յիշատակս քարոզելոյս՝ բազմադիմակս և յոքնապիսիս՝ անեղծականս և անստուերապիծս ՚ի դէմս երեսաց պատկերաց անզգայականաց վիմաց մատուցին։ Ո՛վ եթէ ՚ի բարբառ բերանոյ քանից՝ անդանդաղ ձայնիւ և անդուլ գոչմամբ մշանջենաւորապէս հնչեալ պատմեսցի տիեզերալուր համբաւ գովելի գործոցն նոցա։ Յորոց մեքենայից ՅՃատուր հանձարոյ խորին խորհրդոյ իմաստիցն նոցա՝[9] բնական բարոյից ընտանի սովորութիւնք այլ ընդ այլոյ յեղանակեցան։ Վասն վտակք լայնակայլակք ջրականաց գետոց յորդաբուղխ ուղխից՝ եթէ երասանաւ փոկոյ նահանջեալ հնչականապէս՝ ընկրկեալ յետին կացուցան։ Եւ որպէս զերիվարս վարժողական կրթականութեանք դաստիարակեալք՝ յոր ընթացս և միտք կառավարին կամիցին, նմանաբար և նոքին՝ լքին զՀանապարհս հետոյ խաղացման իւրեանց. և գնացին ըստ մարգարէութեանն երջանկին դաւթի՝ գետք ընդ անջրդիս։ Եւ կարծրակերտ կարկառք սպդակցորդք քարապատուարք վիմահոլովք՝ մահարձանօք պարսպաց՝ ուժգին շարժութեամբ խոպառ սասանեալ՝ եղեն ՚ի հարթ Հանապարհս։ Եւ տիրեաց բազկի նոցա արհութեանն՝ լայնութեանն տարած-

մանն մեծութեանէ երկրի։ Որպէս [10] արարիչն աշխարհի՝ երկնի և երկրի ։

Դ· Եւ ահագնութիւնք աշխարհատարածունակ՝ երկրապարփակ՝ տիեզերապատ պատուհասացն պիսդոնի , որպէս սիդոնին սիոնի՝ ի սպաս երեւելի քրովբէականի և սրբագործմար ամենայարմար նոաձեայօ- ձառ , աքանչելի սխրալի և սօսասարսան սրահի իմաստունն սաղոմմոնի , իբրև զզոյգս ձիոց լծելոց հանդարտական հպատակութեամբ զվիճանուն մասանց մարմնոց անդամոց իւրեանց՝ մատուցին յընդունակութիւն հանգստեան իրանաց նոցին։ Եւ հետս շաւղաց երթեւեկութեց փայտակերտ լաստաց՝ անխարիսխ յարկաց և անշունչ կառաց՝ գերագոյն դիմաց՝ երկնագոյն դաշտաց՝ լուծական լերանց՝ անկայուն յատակաց՝ ի կոյտս կոհակաց՝ կապոյտ կուտակաց , իբր ի թռիչս օդոց ի թեւս թեթեւս և յարագընթացս ամպաչուս թռչնոց երկնաւեան կենդանեաց՝ զամենեքումբք անցեալ տիրեցին ։ Եւ [11] եւ ի քիլս ձեռին և ի քայլս ոտին՝ թէպէտ և ոչ զընաւին տարերս , այլ զբազում տեղիս չափեցին ։ Եւ ի կշռոս բանից խմաստից խօսից՝ զյոգունս քանակեցին ։ Եւ միանգամայն ասել՝ երկնօրէն լայնութեամբ՝ ամենահաս թեւոցն ձգմամբ՝ զվիջոց բացուածն ընդարձակատարը յարկի բնաւէն աշխարհի բազմուն ակ ծոցոյ անթիւ ամբարոյ , իբր զմի հօտ ի միում խմբի , և զմի սիւնհոդոս ի մի եկեղեցի , և զմի հարսն ի միում առագաստի , և զմի սիրելի ի միում սենեկի , և զմի ամուսին ի միում տաղաւարի , և զմի ընդակից ի միում վերարկուի , և զմի զուգակից ի միում խորանի խորհրդարանի , ի սէր փափագման տենչանաց աչաց , ի գաւիթ կամաց անձկութեանէ սրտի , կամ ի սահման միջոցի անդաստանի գորովոյ գրկի , երկուց միջնորդաց՝ համալծակցաց բարի գործակցաց՝ բերողաց բազկաց դիւրաթեր բարձին ։

Ե· Արդ այսքանեօք և այսպիսեօք բարեպատեհ պատահմամբ ծածկին համեստով հզօրապէս արիութիւք հաւատարաբար հարթեցին տապալեցին ընկրկեցին ընդոստնեցին և ի կոր կործանեցին զբեռնակաբ

կառ մոլութիւ[13] հարաւային բռնութիւնէ որդւոցն Հա-
գարու։ Եւ հաստատեալ հիմամբ կառուցին պատ-
րաստեցին յօրինեցին յարմարեցին յարդարեցին գե-
ղագրեցին ՚ի զարդս պայծառս և երերգելիս զքրիս-
տոնէից եկեղեցի։ Եւ ձգեցին ձգտեցին ղպատակս
ձեռացն աշխարհակալաց ինքնիշխան մատանցն ՚ի
տիեզերս եզերաց երկրի և ծագաց նորա։ Եւ մանր
բախտղ չոշափմամբ աջոյ՝[14] զեղջիւրս արքայից և
կայսերաց մեծաց՝ աւազակոյտ ազանց տոհմին վրաց
և խմբից հազրաց՝ քաջաց ձենաց և հայկականաց՝
արիապես և յաղթողաբար ըմբռնեալ կալան ըստ
ամբակումայ և զաքարիայ[15] կանուխ պատգամա-
գրաց։

Զ. Եւս և հիացուցանօղ համբաւ տերութեան
վերինն հարաղատաց երկոցունցն՝ մարմնացեալ մա-
տուցեալ ՚ի կերպ պատկերի դիմաց[16] քարտեզի
սպիտակերանգ ըղձալին դաշտի, հասին ՚ի խուժս և
՚ի սկիւթացիս։ Եւ[17] քառաբանակեան շրջանակու-
թիւք շուտաժիր շտապով յընթացս թևոց հողմավար
ամպոց՝ երագեցին և յառաջեցին. [18] մինչև գրաւե-
ցին պատանդեցին և ուռկանեցին ՚ի մի ծածկութիւ
պաշարման վարմի կայտառունակ ցանցի՝ զերս ցընդ-
մանբաժանման երկրի որդւոց աշխարհի։ Եւ փորա-
գրեցին՝ գեղեհսեցին՝ ձեռնաձուլեցին տապարատաշ
սրագործ անգրագիր արձան պատմաբանական և ան-
ջնջական յիշատակարան ՚ի փուխագոյն քարանց այ-
լայլականաց գեղազարդ և գեղեցկագիւտ գունոց
գոյութիւ։ Եւ միահաղոյն զըլորտս ամենից բոլորից
լրութիւ ՚ի պատուար ամուր և ՚ի ցանգ հրեղէն և
յաշտարակ հզօր ապաստանեցին, և բարձրագոյն
բերս բիւրուց բարեաց հեռաւոր երկրիս պտղաբե-
րեցին։

Եւ զնաղաղութիւն հաստատութիւ յամենեսին ա-
ւետարանեցին. և ձիրս ընծայից պայծառ պարգևաց
աղքանաղեան զարմիս բաշխեցին։ Եւ զհրաշալիսորհ
զարմանալան[19] զերջանկացն հանդիսարան՝ զմեծա-
նունն վկայարան սրբատունդ և երանուհի տիկնոջն
Սոփիայ՝ ևս քանզևս գեղեցկապանծ նոր պայծառու-
թիւք և ամրական դրութիւք նորոգապէս վայելչացու-

ցին. և զսայթաքեալն ի տատանմանէ դողմանն շարժուԹԵ վերին բարկուԹենն՝ պատկանապէս պատապարեցին. և անստուեր և անապական և անյաղԹական
[20] զՀշմարտուԹենն բան՝ ամենայն աղգաց ծանուցին։
[21] Այլ քանզի բանականապէս ողբայ պատմուԹիս զլաւան ի վատԹար կրօնս կորստական կամաց մոլորուԹենն Թէոդորի և դիոդորի յոյժ հակամիտեալ։ Համառօտեցից աստանօր զբանս իբր անվայելուչ ի շաւիղս երկուց ընԹացից՝ գովէստից և պարսաւանաց միատեսակ դիմօք հետևիլ։

Ի. Ի ժամանակս և ի դարս աւուրց տիեզերակալուԹԵ և արքայուԹԵ սոցա երկոցունց՝ Վասլի և Կոստանդեայ, որք ի մի նկատումն կամաց խորհրդոյ երկեակ մարմնով և միով սրտիւ կենցաղավարեցան։ Եւ որպէս զէուԹիւն երկուց տարազուց անձին և մարմնոյ ի մի կերպարան շարունակեցան։ Եւ զնմաստնականն նախասաց բան յանձինս գծագրեցին, եղբայր յեղբօրէ օգնեալ իբրև զբաղաք ամուր անկործան։ Եւ Հշմարտաբար միուԹԵ առանց այլայլման կացին անբաժին։ Եւ զարարչականն ԹելադրուԹԵ երկիւղագին սրտիւ պահեցին, ամենայն ԹագաւորուԹիւն յանձն Հատուածեալ՝ արմատով իւղով խլեսցի։ Այլ ԹեպետԵ և բազում սրտից տակուսելոյ՝ երկայնմտուԹԵ հետս հորդեցին, յաւէտ առաւել հիւսիսայնոցս արևելականաց տանս Թորգոմայ աղբիւրս ընորհագ կենաց անձրևաց ի դԹուԹԵց իւրեանց ցօղեցին։

Ը. Վանզի արք ոմանք երևելիք ի տոհմային պայազատուԹենէ, ի ցեղէ վեհից, ի զարմէ դիւցազանց, ի տանէ պետից, ի գնդէ գովելեաց, ի դասակարգէ քաջաց, ի շառաւիղէ հարազատուԹԵ
[22] արեանն մելքիսեդեկի, որոյ նախանկարն խորհուրդ տպաւորեցաւ յընտրեալն ի քանանէ և ի սիդոնէ, այսպէս ոչ ըստ ամենայն մասանց պատուելիք։ Այլ ըստ քրիստոսասանդն դաւանուԹԵ՝ անմահք և անհատասելք։ Որոց միոն ընտրեալ յոյ և հաւատարիմ ծառայ Ձէ, և կամակատար սրտի բարձրելոյն, որոյ անունն Ճանաչիւր ՊաւիԹ, հանգուցեալիկ ա-
ռաջնոյն՝ անուամբ և իրօք։ Այս ի ձեռն ձեռին մե-

ծուլթէ ՚ծուլթէն. [23] նախանկար հրաւիրանօք, ըստ յառաջ գուշակելոյ հոգւոյն քրի, առ ՚ի բարեպաշտիշտ և ՚ի պարկեշտակրօն ծնողացն իւրոց խրատեալ և դաստիարակեալ, լցեալ լինացեալ և ուղերձեալ, և իբր զեփրեմեան լերինն հոգիբնակալ հզօր դիտապետն՝ զերկրորդ սկիզբն երջանկաց, և զառաջինն կաճառից նահապետաց՝ զմարգարէածինն տեսանօղ՝ հաձոյ զբաւեալ մարդկան և ՚ի, վարուք մաքրուէ: Ապա ինչև ընծայեալ մատուցաւ առաքելական մասին կոչդուլթէ, վկայակին այցելուլթէ ՚ծախնամ տնտեսուլթէն, երկնաձիր և ՚ծատուր փառացն ժառանգուլթեան, ՚ըզ և երանելի ուխտին պայծառուլթէ, զգեստաւորեալ վայելչուլթէ՚ի պարկեշտ պատիւ եպիսկոպոսուլթէ: Այլ յաւուրս ոչ սակաւս այսքանեօք բիւրուք բարուլթէ բազմացեալ բերկրեալ և բարդեալ ՚ի ծագ աւարտմանն լրուլթէ հասակի իւրոյն կենաց, իբրև զցորեան հասեալ ՚ի ժամանակս հնձոց արմտեաց հաւաքման արդեանց համբարոց, հանգեաւ՚ի Քրիստոս: Ո՞րոյ երջանկի և առաքինւոյ զմաքուր ոսկերսին, ըղձական և հրեշտակական բազմապատիկ նուագերգուլթեամբ ամփոփեալ հաւաքեցին ՚ի քարապատուար շիրիմ անձկուլթեան յարկի, կարծրաձեղուն խորանի, նսեմամատուեր մլձուլթէ հողախշտի հանգըստի: ՚Ի ձեռն որոյ երկրապատեան և գետնաձածկոյթ վերարկուի՝ հնորհս բժշկուլթեան հրաշակերտս և հռչակելիս ընդ բազում տեղիս պարգևեալ տարաձեցաւ:

Թ. Ընդ զինի տիրահրաւէր հանգստեան նորա սրբանեալ ոմն պատանի՝ որդի դստեր համածին եղբօր նորա, ըստ հաւաստի ազգաբանուլթէ քաղցրածաղիկ ծառոյն բարեխիզ պտուղ, ՚ի նմին իսկ յերանելւոյ ուսեալ. և հրեշտակահանգիստ կարգօք հրահանգեալ, և ՚ի ձեռն ՚ծամերձ ձեռին նորա ձեռնադրեալ ՚ի քահանայուէ, և վանականաց ՚ի վերակացուլթէ: Որ նկարագրեաց իբր զտարացոյց գեղոյ պատկերի ձևոյ տեսակի՝ զնմանուլթէ նորին ՚ի յանձին գեղեցկապէս հետևեալ նախնեացն: Իսկ ՚ի դաստումն ընտրուլթէ վարժից՝ առաքելագիտ և մարգարէածանօթ և աւետարանաժառանգն դիտու-

թեանց և այլոց բազմաց [24] սուիեստիոյ, վայելչապէս համբուրիւ պատահեալ։

Ժ. Պատանօր՝ի սոյն ամանակի՝ եղբայր մեր սորա երջանկի և բարեպաշտուհոյ, ըստ պատահման իրիք հանդիպմանն՝ խոյս տուեալ և թիկունս փոխանակ դիմաց դարձուցեալ, Թողեալ լքեալ և արտակացեալ՝ի յարկէ բնակութենէ հայրենեացն իւրոց, ՚ի գաւառէն մոկաց [25], ՚ի լերանցն կորդուաց, ՚ի գնացս ընթացից բազմօրեայ հետոց սուրհանդակօրէն խաղացմամբ յառաջ երագեալ՚ի յարեգ կուսէ կողմանց հիւսիսոյ մինչև՚ի սպառուած ծայրիցն [26] ասիայ և սկզբանն իտալիայ, ՚ի կայանս նորոգն դաղմատիայ, յարքայարանն յունաց ազգացն եդովմայ դիմեալ հասանելը, ՚ի բուն բնակուի ծովածաւալ ջրափակ անդընդափոս ահագնապարիսպ բազմաբնակ քաղաքին և [27] անմարտնչելի ամրոցին սքանչելոյն Կոստանդնուպօլսի։ Ընդ այր երագամիտ, և ըստ կարգաբանութենէ խօսից անթարթափ լեզուոյ՝ յոյժ պատկանաւոր, իսկ ըստ ձեծայինն հոգելից իմաստութենն՝ յաւէտ պարարեալ, մատուցեալ՚ի յօգոստաբնակ պայծառապսակ պատկառատեսակին պաղատ ընծուորեր։

ԺԱ. Այժ նախ յորժամ տարաբաժաներ՚ի հայրենեացն, զտարաբնակութիւն օտարութենն յակովբոս զմոտաւ ածեալ. որ [28] ՚ի նեցուկ ցոյոյն միայն յեցեալ, ոչ ինչ բերելով Թոշակ մարդկային մարմնական կենաց ՚ի ծնողացն՝ բայց միայն զօրհնութենէ երկնաշնորհ և տիրապարգև՝ անդրանկարարն ձեռնադրութենէ. որովք յաւէտ առաւելութենէ անստուեր և անթարշամ փառօք կրկին պսակեցաւ, մեծաւ միջոցաւ գերազանց գտեալ քան զհոմաճինն։ Այսպէս և սորա անհոյնթ արարեալ զբազմածախ և զյոռնաշահ ինչս ստացուածոց գանձուց հայրենեացն, միայն [29]՚ի դրից դամբանէ շիրմի եղբօր հօրն իւրոյ դաւթի սրբազնապարդ և քառակարդ եպիսկոպոսի, զորոյ զգուշութենն քաղձալի [30] անուանն նախ նկարեցաք, անտի ողջունիւ բարձեալ ընդ ինքեան սուղ ինչ չափ գուշնակեայ հողոյ, և այնու շատացեալ անզուգական և անհամեմատ բերկրանօք [31] բնակեր՚ի սեիր, քան թէ

սիրեցեալ սերմն սափատայ՝ մաքուր մաշկեկաւ մեծին հեղհեղու ՚ի կատար ամբարձման գլխոյն կարմեղայ։ Ապրով հանգուցանպէս և հաւատարաբար ըստ օրինի նմանութեանն նորին՝ յայտանկատ աչաց տեսողայ պայծառ պանծանօք կարգաց յարդեցաւ։ Վանդին իբրև տեսին զնոսին պարգևաց անզգայականաց հրաշակերտ նշանաց՝ ինքնակալքն յուսնաց, որ ՚ի [32] նշխարաց հողոյ քաղաքեստն գանձարանի ածարեալ եղբօր հօրն նորա, նոյնժամայն ըստ ընդաբոյս բնածին բարի բարուցն բուսոյ՝ սրբասէր և երկիւղածամեծար սրտին իւրեանց ցանկութեանն, և ընտանի սովորութեանն որ առ սքս սպասահարկութեանն կատարեալ կամացն յօժարութեամբ անդէն վաղվաղակի անդադար սրտից բաղձանօք՝ զանընտել օտարականն՝ զհեռաւորն աշխարհայինն՝ զանմերձաւորն աչաց սիրելեաց՝ զանհպատուորն հարազատաց, իսկ և իսկ ՚ի նմին աշխարհս խաւսքն երկրագումարն և բիւրակաձառն առեալ ՚ի փառս բարձրութեան պարգևընկալ պանծանաց պատուոյ կարգեին։

ԺԲ. Ապա՝ իբրև այս ըստ սմին տեսակի մասին յանգեցաւ և յարմարեցաւ, և այլն տարաշխարհիկ՝ պատուաւոր և սպասաւոր և ծանօթ ընտելական կայսերացն երեսաց եղև, հարցման բանից համարձակութեամբ արժանի գտեալ. և զդարձուածսն անդէն ընդ նմին կարգի ՚ի ձահ փոխադրեաց։ Յիշատակեցաւ [33] նորոգեցաւ և պատճառն առաջին յանակընկալն կալն հանդիպութեանն, այլ և աւանդն զբ մաքուր ընծայիցն, զոր ՚ի յերկրէն իւրմէ ընդ իւր կրեալ բերեր։ Իբրև երկրորդ սկիզբն եղև իրին յայտնութեանն, և կրկին պատմեցաւ թէ յորմէ այսքան սքանչելիք նշանաց հրաշից գործեցան, արդ իբրև զբոսվանդակն բնաւէն լրութեամբ իւրով խմացեալ ծանեան, և ձեմարտեալ ստուգեցին [34] այսգոյն տեսութեամբ՝ եթէ եղբայր հօրն նորա է պատճառ այնր գովելոյ և պատուելոյ իրին, այնու ընդ նմա առաւել ՚ի փառ գթութեանն սիրոյ յորդեցան։ [35] Ապա ընդ նմին և զայս ևս հոգացին և գիտել խնդրեցին, եթէ ո՛վ ոք յընտրելոց հովուէ զտեղի բնակութեանն պաշտելի այնր հանգստի կենդանի մեռելոյ։ Իբրև ուսան յառնէն

Թէ [36] որդի քեռն իմոյ ընտրեալ իցէ ՚ի սոյն գործ պաշտման սպասու , ընծայս պարգևաց պայծառակա- նաց խոստացան շնորհել ՚ի պատան պիտոյից նորոգ- մանն հանդերձանաց խնկեալ ոսկերացն : Իսկ իբրև զարդարն և զաներկևանն ստուգապէս իսկութեամբ պատմեաց , Թէ չունին կարիս պիտոյից երկրաւոր ի- րի , նախ հարազատն իմ քեռորդի , և ապա հո- վուեալքն ՚ի նմանէ : Այլ Թէ կամք վեհիցդ իցէ , քննեցիք և ՚ի խոր խուզեցիք զինդիրս կարեաց նո- ցին տենչանաց :

ԺԳ· Իբրև կարի հոգեպէս տարփանօք սրտի՝ ըզ- կամն կայսերացն առ իրին անձուկ յեղյեղեաց , ա- պա [37] նամակս հրովարտակաց ինքնագիրս այրն հան- ձարեղ և ճարտարաբան՝ յերկոցունց կողմանց մե- քենաւորեաց . և ինքն հրեշտակ զոմն նամակակիր ՚ի սեպհական իւր հայրենական գաւառն առաքեաց : Այլ ըստ յաջողելոյ կամաց քաղցրուէ անեղին՝ մինչ դեռ Թագաւորքն յունաց ՚ի նոյն շաւիղ խորհրդոյ բարւոյ հանդիսացեալ մտաբերէին , դարձաւ անդ- րէն սուրհանդակն պատձենաբեր , ունելով գիր նկա- բեալ ՚ի դէմս երեսաց գոյութէ դիմաց քառատեսակ քարտենի , հաւաքեալ ՚ի ծոց իւր յիշատակարան բարեբուղխ բանից մեծի խորհրդոյ : Իբրև ծանեան զփափագ տարփանաց հոգևոր խնդրոյն , զի ոչ ըստ մարդկային բնաբարն բնութէ բարւոյ բաղձանաց՝ երկրաւոր ինչ նիւթ սիրեցին , այլ մանն փրկութէ անանց մեծութէ՝ ՚ի կենսակիրն կենդանադրութենէ անվաճառ և անդին գանձուն երկնային պարգև՝ անստուերափայլն լուսոյ անկապուտն կենաց՝ անստե- ղիւր և սրբակցորդն ստացուածոյ քեռեան՝ Յանին , գովեցին յարգեցին և դրուատեցին զշաւիղ խոր- հրդոյ մտաց խնդրողին : Այլ հաստատապէս սեռն ստուգութէ զծնունակ կամն անխոտորնակս զհայ- ցողին և սիրողի այնր բարձրութեան՝ հրատարա- կեցին :

ԺԴ· Այսպ փութաբար և վաղվաղակի կազմեցին և պատրաստեցին ոսկեկուռ ձուլածոյ քառատեսակ յօրինմամբ զձև տեսակի ածեանն խաչի : ՚Ի նմին կառուցեալ մանն հատուածոյ ՚ի կենսակիրն փայտէ

[38] տէրունեան փառացն քաղմականէ ։ Այս վասն ա-
ռաւել փառս ընծայելոյ նմին նշանի, զընաւին վկայս
կեցուցիչ մահու վշտացն Յիի՝ ընդ նմին պատկանու-
թիւ գեղազարդեցին, ուստի ձաշակեացն, և սփա-
ծաւ, և պսակեցաւ, և սեւեռապէս պնդմամբ մա-
ծուցաւ, և որով՝ի ծննդեանն աւուր տնանկաբար
վերասքողեցաւ ։ Ո՛ այս ամենայն մասունս ըղձականս
ընդ խաչին հիւսեալ միատարրեցին. և պատեհ պատ-
րաստութիւ՝ի ստեղն ծխոյ [39] բացուստ՝ի բաց՝ի
ծագս եղերացն՝ի ներքոյ ըռնկացն դրանց՝ երկբա-
ղիկ սենեկայն պարագրողաց՝ արձանացուցեալ՝ի
հանգիստ նշանին լուսոյ, առաւելապէս քաղձանս
յուսոյ ընդ նոյն խառնեցին ։ Այս ղեսպրման կենացն
բուրվառ այսպիսի կայծակամբքս՝ ընդ կնդրուկն
լցեալ՝ի ձեռն նորին իսկ յարդարողի այնր խորհրդ-
դոյ մեծին Անդլատի, պարգևս բարեաց աշխար-
հին հայոց կողմանցն արևելից լերանցն կորդուաց
գաւառին մնկաց վերառաքեցին ։ Որոյ իսկոյն իսկ
բարձեալ մեծագին և ոսկեթել վերարկուօք՝ պայ-
ծառ վարշամակօք և անկշռելի բերկրանօք՝ բերեալ
բնակեցոյց հուպ՝ի պատուական [40] վայրս հանգստա-
րանի հօր եղբօրն իւրոյ սքանչելագործ և կենդանա-
կան ոսկերացն ։ Որ և պատճառ իսկ [41] ժառանգու-
թիւ այսր նախ նա՛ ծանուցաւ ։

ԺԵ. Ընդ իբրև եկն եհաս այրն հնորհընկալ և
պարգևաբեր խաչունակ և նշանաբարձ փրկութենա-
կիր գովեալն գանձու, եգիտ բաղմեալ՝ի գահոյս տի-
րական ՅՈծառաքն աստիճանի հանդարտական հե-
զութե սրբամատոյցն աԹոռոյ՝ զորդի քեռն իւրոյ
ընտրելոյ. մեծաւ բարձրութե վսեմական գովութե՝
գերարփի հնորհիւ՝ [42] վեհագոյն գոլով քան զհօրն իւ-
րոյ հարազատ՝ և զհօր եղբայր նորին, անդէն՝ի
նմին ազգային և բնաբնակ լեռնահոլով և կարծրա-
խարխս գաւառին մնկաց մայեկաց մրգաց, ՛ի տեղի
հանգստեան հոգևնորոգ մարմնոյ հօր եղբօրն իւրոյ
երանեալն Պաւթի մեծի եպիսկոպոսի ։ Որ նորո-
գեաց զնշխար համբաւեալ ազգին՝ երկանունն և
բաղմանշոյլն յաւազանէ և՛ի կոչմանէ. ոստ տոհ-
մին, և շառաւիղ զարմին. ընտրեալն՝ի Թիւ հա-

մարոյ Հանդիսի դասու եպիսկոպոսաց։ Որոյ անուանն
ըստ յորջորջանաց կոչման վերստին ծննդեանն ա-
ւուր փրկութեանն, Յոտեփաննոս կարդացեալ, որ ըստ
ելեզականին՝ Պսակ առաձգին։ Զոր զի՝ հաւաս-
տի ըստ կոչմանն իւրոյ եղև պսակ պարծանաց՝ պան-
ծալի [43] ցանկալի ըղձալի բաղձալի գովելի և երանե-
լի վայրիցն աշխոյիկ։ Վասզի ոչ թերացոյց, քան-
զի լիացոյց. և ոչ պակասեցոյց, քան զի աճեցոյց
զպատրաստուածն նորոգման վայելից այնր բնակու-
թեանն։ Որ ի բնէ իսկզբանէ ի վաղուց հետէ ի հին
պատմութենէ և ի հարուստ զրուցաբանութենէ արանց
ծերունեաց և երիցագունից, ժառանգութեամբ կայից
դոյզն ապարանից գոյն ինչ շինուածոց նախագրե-
ցեալ էր իւրեանցն հաւուց հզօրացն հարց։

ԺԲ. Օ այս՝ սա վերստին ստեղծմամբ ի զարդ
պաճուճանաց զարմանագործեաց, և գրեթէ երկին
երկնի ի յերկրի վայելչապէս գեղով յօրինեաց։
Նա զկազմած պատշաճողութենէ հրաշակառոյց խո-
րանացն՝ [44] քրովբէաբնակն յարկաց՝ բարենշան կեր-
պիւ հիմնադրեաց։ Նա նմանասեր սրովբէագաւիթ
սրահին սիոնի սիրատենչակ տեսիւ տիրագրեաց։
Նա [45] համանման երկնաբերձ կայից կանգնեալ ամ-
բոցին, որ ի համար համբարոյ զինուցն օձառաց՝
սայրասուր սլաքաց՝ ոսկեկուռ նիզակաց՝ հաղարա-
ւոր վահանաց՝ յասպաւինութենէ պահեստի թիկանց,
բազմութենէ զինդաց գումարտակաց մարտկաց եբրայա-
կանաց արանց քաջաց որ ի Թալպիովթ, Թագադի-
տակ փառաւք պսակեաց։ Նա ըստ ամբարձման կա-
մարի վերնայարկին գնտի ձգման գմբեթի՝ ձկդրտա-
բար ձարտարապետեաց։ Նա գունակ խրախարար և
բազմահաւաք խորին խնձոյից՝ ըզ հարմնարանին՝
զի ճամբրն սրբասահման տենչալի տաձարն՝ ամենա-
րուեստ հիւթիւ յարդարեաց. և անդանօր համանդ-
ամայն զանդրանկացն բոյլ՝ ի միում խմբի բոլո-
րեաց։ Նա իբր քաղաք կենդանեաց շինեալ ՚ՈՅ,
խօսեալ ՚ՅԵՒ, մայր մանրուր որդւոց, հանդէպ տե-
սակի դիմաց օրիորդաց փեսային, երգօք պարողաց
առագաստասպասաց ընտրելականաց, անդրդուելի
արուեստաւորեաց։ Նա լայնատարած դրամբ անան-

ձուկ կայան բանակի բիւրաւոր զօրաց հրեշտակա-
կանաց գերվարագուրեաց։ Եւ ևս քան զևս՝ ան-
ստուեր փայլմամբ քան զմովսիսեան շինուած վրա-
նին վկայականի՝ զանգակագանչ՝ բեհեզազանգուած՝
մետաքսահիւս՝ սպիտակապատուաստ՝ [46] կարմրայար-
մար շաղաշարման զարիւնագեղ անձառն խորհուրդ
հանդերձակեաց։ Եւ իբր սարդենասեր անպահ
պահանգաց ընդհապատար արարուածոյ յարկի
դաւթեան համբակին ձեմարանօրէն արուեստիւ
սադրեաց։ Օրմոյն վերադրութի՝ վիմախարիսխ
արձանակառոյց կերպիւ առկայեաց։ Եւ իբր յա-
կանց վանեաց յեռելոց ձարտարագործ արուես-
տայարմար՝ բազմատեսակ երփնիւ նորոգեաց։ Եւ
զեղեկիելեան տեսլեանն երևոյթ անյօդն էուք՝ նոր
նմանուածք իբր զգայութի իրի արծարծեաց։ Եւ
իբր [47] զմիաստանի վերարկու գեղեցկատիպ յան-
գուածով զբովանդակն սկսեալ յարմարեաց։

Ժէ. Ի նոյն և զաներևոյթ հանդերձեալ բարեացն
ճանօթութի փառացն ապառնեաց՝ ի ներկայումն
աստ՝ ակներև տպիւ գծագրեաց։ Եւ իբր [48] զփայ-
լուած լուսածագ բոցոյ բորբոքման զարբամատոյց
տիեզերալոյսն տեղի ցանկեալ պարսպեաց։ Եւ զար-
տաքին որմոյն զարձանս [49] մաքրապար տեղւոյն բերկ-
րութեան՝ ձաւագայթանշոյլ բեհեզատիպ զգես-
տուքն պճնեաց։ Ոսկ զդիմաց դրանդեացն դիրս՝
աքանչելի քանդակագործեալ քառաշուրթն զարմա-
նազան՝ իբր զծաղկեղէնն զգեստուց հանդերձանս
սրբաբեհեզն պատմուճանի առագաստանուեր գեղա-
պանծ հարսինն՝ ի գլուխ ծայրից լուռե թեզանեաց
շրջապարուրեաց։ [50] Ոսկ զդրանցն երեսաց տիպ՝ նկա-
րակերտ յանգուածատաշեալ կարմրերփեան փայ-
տիւք՝ և փղաց ոսկերօք [51] սեռակոտոր այլայլակ գու-
նովք երանգոց՝ յարակից կայիւք ի պէսպէս մա-
սանց արհեստիւ կապեաց։ Ոսկ զմեջ գաւթի յա-
տակացն իբր զկոնք մի ապակեղէն ամենահարթ գոյիւ
անխորշ սպդուածք պատշաճ պատրաստեաց։ Ոսկ
զբարձրավանդակ սրբարանն դիտանոցի երկնատե-
սակ բարձրութեամբ բեմբին՝ դաբիրայօրէն յօրինմամբ
ըստ սարասի անհուպ և փայլեալ վերին եթերին՝ ի

ստորնամնոցս աստի մեկուսեաց։ Իսկ զվարագուրացն անջրպետարան իբր զպատրուակ անքոյթ տեսութիւնէ՝ ի պատիւ պատրաստուածիւնէ՝ ի պաշտօն զգուշութիւնէ խորհրդոյ մեծի, ի պատուական հիւթ պայծառ պաստառաց եգիպտացի դիպակակիտուած բազմատեսիլ [52] ոսկեփառ և հրակերպ՝ երկնաձև և երկվերարկու՝ շնորհազարդ շքով պաճուճեաց։ Իսկ զտիրաւանդ և զարարչատուր կտակիս պաշտամանն դորձի՝ սրբութիւնէ [53] սեղանոյն զսքանչելի զգեստն, իբր զնոր սրբութիւնէ ստուերին մաքրութիւնէ՝ և զփայլուածն աղօտականին աստ պայծառութիւնէ, և ձշմարտութիւն ստուերին, և զնոր լրութիւն նախնոյն թերութեանն, զվերընդունակն անբաւ բնութիւնէ տերունոյն մարմնոյ, ի զանազան թեելոց գունելոց երկնակերպ կապուտակատիպ յերևմացի կղզեաց ծովայնոց, ծիրանածուէն կերպասիւք պճնեաց։ [54] Իսկ զկապ պատուաճոյ գօտեացն, եթովպացի և բաբելոնեացի բազմագանձ ականց՝ բոցանշոյլ յակինթաց՝ գարնանագեղ զմբրըխատց, աստեղազարդ մարգարտաց, թխատիպ սաթացն կապուտակաց յերևմտից առ իբերս, ամենապատիկն համատակօք կրկնելովք զուգայարեաց։ Իւր որպէս զդէմոյ ոմն թագակալ հանդէպ ձակատոյ պայծառ պատկերի դրուատելի դիմաց դիտակի սրբութիւնէ սեղանոյն՝ մածուցեալ կապեաց։ Իսկ զդմբեթին վերամբարձութիւն որպէս կառուցումն ափան անդամոց՝ ցանկալի հասակի մարմնոյ զլխոյ գագաթան մեծ արքայուհւոյ, ի [55] կարծրակոփ քարանց քերելոց քուաքատակեաց։ Իսկ զդեղանկար ծաղկայօրինուորակ պատկերացն կենդանագիրս տեսակի զեղջն զստուերացեալ հինն ամանակացն [56] զանեբևոյթն աչաց ներկայիցս, իբր զերևոյթ յայտնի տեսակի ունողաց ընդոյ և զգայութիւնէ արգասաւորեաց։ Իւր ամենայնիւ զամենայնին յամենեցունց մասանց նիւթելոց, ի մի կերպարան տեսակի զօդեաց։ Իւր որպէս զարձանն եւթնատես վիմին զօրաբաբելի՝ յանդիման աչացն Ինի ուղղեաց։ Որպէս զտիցն ՚այ տեղւ ի վերայ հաւատոյ վիմին հաստատեաց։ Իւր իբր զընդարձակ ծոց արարածոց և երկրի արեգականն շրջադրութիւնէ՝ կանթեղաբոր-

բոլք ջահավառ զամբարանշոյլ լուսով փայլեցոյց. և դրեթէ բոցեղէն յեղանակեաց ՚ի մարմնի հողեղինի։

ԺԸ. Լակ զարտաքին գաւթացն յատակս և զդասատանայն իրախճանութիւնս, ըստ իւրաքանչիւր պատշաճ խորհրդոյ պայծառ պատկանեաց։ Եւ անկեաց հաստատեաց և մշտնջենաւոր հիմնեցոյց [57] խիտս բիւրաւորաց բուսոց ծնտառաց, ծառս դեղասաղարթս, ընորհաշառաւիղս, ամբարձուղէշս, հասատաստեղունս, մարդադարմանս, բազկաստածուս, աճունաձիւղս, վայելչատերևս, բարեբողբոջ բոյսս վարսաւոր փայտից, այլայլասեռ տարազոց մրգոց, համեղահամ դիւրամարքելիս կրից կոկորդաց։ Եւ ևս քան զևս յաճախեաց ՚ի ցեղից ցեղից ցանկալեաց ցցեալ ՚ի գետինս գիրապարարս՝ արգաւանդաղ հողս տենչալի վայրից, իբրև զծառան տէն և զմայրն լիբանանու լերինն ծուրայ՝ առատապէս պայծառազարդեաց։ Ցունկս բերրեաց բերողաց բարեաց, ծաղկընծիւղս՝ պտղածինս՝ արմատարիսխս՝ մրգամատոյցս պատուաստակիրս՝ պտղապարգեւս. անդս ամենուսնակս ջրահոսս և շուշանափայլս. սահմանս վտակաբերուս՝ ուղղապարարս՝ անձրևաճանուցդս՝ ցօղամատոյցս։ Երկիրք՝ զոր տէր ՅԱԾ ըստ մեծին մովսէսի գթուԹիք խնամոց իւրոց դարմանէ, հանապազ աչք տեսչուԹիք ողորմուԹեն ՅՈՎ քան զեր երեսաց նորա՝ ՚ի վերայ նորին, ՚ի մէկ ամին մինչև ցերկս տարւոյն՝ ՚ի գրգել տածել և յանձանձել։ Լրդ զայս ամենայն զպատճառ նիւԹոյ բանից պատմուԹեաս, նախայիշատակեալ մեծ եպիսկոպոսն պսակ սիոնի և ծառայն ՅՈՎ, [58] երկակի յորջորջմամբ անուանեալն ըստ բարբառոյ ձայնի եսաւայ և իսմայելի յանգեալ կատարեաց։ Վկանզի որպէս սողոմոնն զառաջին դաւԹի զինի հանգստեան հօրն իւրոյ վեհի՝ զանուանակիրն շինեաց ՅՈՎ տաճար՝ սրահին փրկուԹեն՝ տանն յուդայ և իսրայելի, նմանապէս և սա ընդ նմա զինոյն ՚ի նորս արծարծեաց զընորհ։

ԺԹ. Եւ իբրև զամենայն զայս այսպէս կարգեաց, և եդեմ երկրորդ՝ փառօք [59] առաջնոյն լուսանորոգեաց, ապա այնուհետև զընկալեալն ՚ի ՏՆԵ ընորհ

զիայան գործակից կենացն արդարութեան, ընչա-
նակն համբերութեան կամաւոր մահուն Յ֊ի, ըզ-
պատկերն պարկեշտութե անձանց Ձգնաւորաց, ըզ-
հաձուլթե կամաց ածուլթեն հօր, զգործի իրի բարձ-
րութե փառացն էմմանուէլի, զնշանն լուսոյ քեհան
խաչին, մեծաւ ահիւ և զգուշական երկիւղիւ բար-
ձեալ հանգուցին, յօրինեալ տեղի հրաշակառոյց
խորանի նաղելի յարկի նը Աարապետին. զոր յա-
ւուրս իւրոյ վանականութե սկսեալ, ի նմին կա-
տարեաց ընտրեալն յայտելութե մաքուր դիտողուե
սքն եպիսկոպոս։ Եւ սրբոյ և ընտրելոյ առաքելոյն
Աստեփաննոսի մարտիրոսարանի անուանն իւրոյ նո-
րոգ յիշատակ՝ ի հանգիստն գերեզմանաց նախնեաց
[60] մեռելոց ի հրաւէր խոստման անսուտն յարու-
թե, նպաստաւորեաց յառաջագոյն քան զյայտնիլ
սրբոյ խաչին գալստեան։ Այլ զԱարապետին տի-
րաբնակ և հոգիաշարդ տաղաւարն՝ ի խորհուրդ
յուսոյ աներկբայ դիտման խաչին գալստեան իբր
ընծայութե մաքրութե ուխտի նուիրեաց նախ քան
զաթոռոյն վերակացուե։ Ասն որոյ և ի գալուստ
ծագման փրկականն փայտի՝ իբր ի գուշակումն ա-
նուան խոստացեալն ընդրկի՝ ի նմին սեպհականե-
ցաւ, հանգուցեալ ի տաճար մեծի մարգարէին յով-
հաննու։ Այսպ զՅ֊ճածնին չքնաղ կազմուած սքան-
չելաշուք քնակութե[61] զուգամասն կրօնից բարե-
զարդն եպիսկոպոսութե կառուցեալ, սկիզբն արա-
րեալ ի սկզբան տերութե իւրում նախագահութեն։
Ասատի և հանձարեղ խորհրդածութե ի նոյն տա-
ճար վերագային պատրաստեաց նշանին սրբոյ՝ ի
յաւուր ուրբաթու մեծի պասեքին։ Օ֊ի յիշատակ
գովութե պաշտելի անուանդն երկոցունց վեհից Այա-
զնին և Յ֊ճածնին, ի միասին երկրպագեացին, համ-
բաւեալ զոմն ճնօղ, զոմն ճանուցօղ մարդացելոյ
միոյ ած յիսի քրի, Տօրն փառակից։

Ժ. Այսպ ի կողմանն աջոյ կայից հիւսիսոյ, ըստ ա-
ռաքողին ընթացից հետոց աջոլսկ հողմոյն, ունի
զԱաքեաւսն տիրապատիւս, և զԱուսաւորչին նը
դաւանարանն։ Այսպ ըստ հարաւոյ դիմաց դարու-
մայ՝ զերբայեցի ընտրեալ պատանին զմարտիրոսն

Աղբմբսեհ։ Եւ համբարձեալ վերադրեաց գերագոյն դրան երջանիկն առաքելոց ՚ի սեան ունողի խորանի՝ որ ՚ած ամօրն՝ ՚ի շինուած միջոցի որմոյն կառուցման՝ զսրբոյն ոսկերս [62] զԱկրտչի զարարչին Ջրով, և մաքրելոյն ՚ի նմանէ հոգւով։ Նախավկայն [63] զերկրորդն աբել, և նորոյս ադամայ զվերջատոյն ծնունդ երանեալ, որ եղև հրաւիրօղ մեռելոյն ՚ի նախնին ընդ դրունս մահից երկրին կենդանեացս։ Յակոբայ որդւոյն յովսեփայ որ կոչիւր արդար, և սակս [64] ննդական կենցաղակցութեն՝ եղբայր Յի։ Մեծի առաքելոյն Պետրէ։ Հղօրացն վկայից զընտրեալն Թոմանց։ Քառամսիցն որ ՚ի պոնտոսէ երկրին գամրացոց ՚ած զինուորացն։ Կոզմայի և զԴամիանոսի զնահատակացն։ Եւ [65] ըստ կայից հարանց ՚ի սեան խորանին՝ զած պատանեկին Աղբմբսեհի։ Աիպրիանոսի զկարքեդոնացւոյն որ յափրիկեայ ած և երանեալ եպիսկոպոսի և վկայի։ Եւ Յուստիանեայ կուսի խմաստնոյ՝ անապատի և մարտիրոսի։ Վերազնեայ վկայից ածաշունչ հոգ քահանայից փառաւորեալն Ղևոնդեանց։ Ասպէս զամենեսեան զսրբոցն պարս՝ ունի հաւաքեալ ընդ թևովք իւրովք իբր զմայր երանեալ ամենայն կենդանեաց՝ Տիրուհին և Ածածինն։

ԻԱ. Արդ ծագեայ նորանշոյլ փայլումն սրբոյ նշանին ՚ի մէջ լուսոյ ականն արևուս՝ ՚ի սահմանս քնարկութեն լերանց սիոնի, կողմանց հիւսիսոյ, յաւուրս ունողաց տանս վասպուրականի՝ եղբարց երից վեհից և հզօրաց հարազատաց, ՚ի յարենէ արքայից, ՚ի սերմանէ աքանչելեաց, ՚ի տանէ տերանց, ՚ի գաւազանէ հսկայից, ՚ի Թուոյ Թագաւորից, ՚ի քնութենէ արեաց, ՚ի յազգէ ազնուաց, ՚ի տոհմէ տիրողաց, ՚ի գլխաւորութենէ գեղեցկաց, ՚ի [66] զարմէ զօրեղաց, յերկրակալ զաւակաց, սկզբնաւորեալ յերևելի և յերանելի նախնեաց, ՚ի քեռն ասուրայ դստեր սեմայ որդւոյ Նոյի։ ՚Ի ծննդաբանութենէ նախապետութեն նեբրովթայ, որդւոյ քուշայ, զաւակի քամայ։ Որ անդուստ իսկ ՚ի շինել նախակործան և վաղասասանականն բրգին, պետ և գլխաւոր հրամանատար նոցա յաջողեալ, տիրեաց ՚ի սենեար և ՚ի քա-

զանէ, խառն ընդ բաբիլեան։ Ասաի և ասուր՝ եղբայր մեր նեբրովթայ՝ շինեաց հրամանաւ նեբրովթայ զասուր, յորմէ ասորիք մեծք և քաջագօտիք, մինչև եւթներորդն ի նմանէ նինոս, որ յիւր անուն փոխարկեալ նինուէ անուանեաց։

ԻԲ. Ընդ յայսքան հեռաւորութէ ամաց և կանխութէ աւուրց դարուց վաղընջուց, ի ստամբակ դառղութէ դիւցապաշտ ինքնակալութէ, ընտրեալ շառաւիղք ՚ած պաշտութէ սոքա երեքեան։ Ընուն կրտսերոյն զհաւոյն եդեալ Ենեքերիմ մակադրեալ՝ իսկ միջնոյն՝ Գորգէն, և նախնւոյն՝ Շոտ։ Այսոյ ի փրկագործն ծննդենէ աւազանին նորոգութեան՝ ՚ածութէն որդեգրութէ, անդրանկին՝ Ահակ, երկրորդին՝ Իսաւիկ, վերջնոյն՝ Յովհաննէս։ Յաղագս ընտրեալք և փառաւորեալք ի մի ամանակի արք բազմիք և ՚ածասէրք, խոհեմութէ հանճարոյ առաւել եալք, և ըստ պատահման դիմաց պատկերի տեսման երեսի յաւէտ ցանկալիք։ Ինչ ի սէր սրբոց, ի պատիւ ընտրելոց, ի յարգումն հեղոց, յընդունելութէ ուղղոց, ի զարդ եկեղեցեաց, ի պայծառութէ սրբութէ տեղեաց և քեհան նշանաց, ի սպաս մարտիրոսաց, անկշիռք և անզուգականք։

ԻԳ. Ոքա իսկ մեծաւ հաւատով առեալ ընդ ընտրեանս զգումարս և զկոյտս նախարարուէ սեպուհն ազատաց, ընդ առաջ խաղացին ՚ածեան խաչին, զորմէ պատմուեմս է։ Եւ վերբերեալ մեծաւ ընծայիւք՝ ի սահմանեալ և յուխտեալ տեղին ածէին, որ է ի ծործորս միջոցի լերանցն կորդուաց վիճակին մոկաց, և յանձանձեալ անչափ գրգանօք, ի [67] սրբոյ ուխտին տաճար հանգուցին։ Ի թիւս չափոյ քանակութէ համարոյ եղանակական շրջանակի, հոլովմանն առաւակի, որ ըստ ընթացման ամանակի այսմիկ նկատի, չորեքհարիւրորդի, երեսներորդի երկրորդի, յաբեթեական տոհմիս տումարի։ Եւ անդ գումարեցին խոնեցին ժողովս բազմութէ տօնողաց ազանց. հաչակեցին և աւանդեցին պաշտօն օրհնութէ կատարել աւուրց յաւուրս։ Եւ մատուցին ընծայեցին շուրջ զնովաւ ակումբ զբուրումն խնկոց ջահիւք վառեալովք՝ և ծխովք անուշիւք կնդրկի և կասիայի [68]

խառն ընդ երկրպագուաիս հոգւոյնմին պատարագ։ Եւ աղաղակեցին բերկրալից բերանով օրհնառաք բարբառով, ի շրթունս ընտիրս, ի լեզուս մաքուրս [69], ի հնչումն երգոց, ի տաւիղ օրհնութեանց, ի գոչումն ազդման, ի ձայն ցնծուքեան, ի քնար ընչաւոր, ի փող անձնաւոր, ի խնձոյս հոգեւոր, ի ծնծղայս մարմնեղէն, ի ծափս ձեռին, ի տրոփումն կայթելոյ կաքաւման ոտին, ասելով զհոգեպարգեւն և զյաճախունչն սաղմոս, Յուր երկիւղածայ քոյ նշան, զի ապրեսցին յերեսաց աղեղան։

ԻԴ. Եւ անդր քան զօրինակն գերազանցեաց Ճըշմարտուքին ի նշանս և ի սքանչելիս։ Արդէս զի վսեմապէս խնդութեամբ զեղեալ եպիսկոպոսն երջանիկ՝ ճնողօքն ածասիրովք և հարազատ եղբայրական համբակօքն, քնաւին ազգայնովքն սրբասիրովք, և բազմաթիւ պաշտօնեիւքն եկեղեցականովք, հանդերձ ռամկացն գնդովք, ըստ օրինի նորածին համբակաց հօտից, խայտացեալ առաւելապէս, քան թէ մեծն դաւիթ ի հանգչել ստուերագիծն տապանակին։ Վասնզի նա զսաստ [70] մահահրաւէր վերին բարկութեն կարկտաբեր ամպով որոտայր։ Իսկ նշանս այս ածբնկալ՝ զողորմութեամբ և զշնորհս և ստուգութեամբ յիւրումն բարձեալ քաջանկար տեսակի՝ առաջի երեսացն այ բերեալ զցնծուքն բիւրուց ազանց բաշխեալ աւետարանէ։ Եւ [71] զերաշխեպ վշտաց կեցուցիչն կրից՝ բոլորն իսկ խորհրդածութեամբ հաւաքեալ յինքեան՝ իբրև զգլուխ մարմնոյ անդամոց զտեսութեամբ ազդման՝ հինգ զգայուքն, առ ի յայտ առնելոյ թէ ոչ վայրապար ինչ գործ՝ կամ խառնախառնութ խորհրդածուքն ի վերայ խաչին կատարիւր։ Այլ տեսանողացն յառաջատես և նախագուշակ երգաբանութեամբ՝ որ զկենսատու չարչարանացն և զինքնաժառանգն փառաց ամենակալն յոր, պատմեալ վկայելին ըստ գուշակելոյ ի նոսա հոգւոյն քոյ։

ԻԵ. Այսպիսեաւ մեծ լինն հրաշազարդութ նշանս այս առաւելաւ ի խումբս և ի [72] հոյլս հոմանեւիցն։ Վասնզի որք ի բազում տեղիս բաշխեցան, և ի քառակուսեան եղերս աշխարհի սփռեալ տարածեցան, յատուկ միայնակ ի յաշտարակէ կենսատու փայտին

մանաւորեցան։ Իսկ ՅՃասատեղծս այս [73] բարելրու-
թե՛ նորոգիչ և կենդանարարն նշան, որպէս թէ զնաչն
իսկ խաչելութե՛ն՝ ելողին փառաւք՝ յինքեան ունելով,
զամենեցունց մտաց տեսութե՛ ի սոյն յանկուցեալ
միշտ պակուցանէ. և արեգակնօրէն նշուլիւք ան-
նուազ փայլուճն արձակէ։ Վանզի զնանձարուրան
խրթնածածկոյթս յիշատակ կորուսելոյ փառացն
ադամայ, և զմահկեղէնն ծառայական սփածանե-
լիս, փոխանակ տերևոյ մնկոյ Թզենոյն, որով նախա-
հայրն պատսպարեցաւ, ի պատկեր յօդուածոյ բար-
ձիցն վերբերելով ի հօրն օրհնակ՝ զորդւոցն դար-
շապարս օժանդակեաց։ Այս զիուշն դաժանաբոյսս
ընդ ծաղկածինն վայրից դրախտին։ Այս զարիւնե-
րանգն կարմիր ի տարացոյց խակութե՛ մտաց յան-
ցաւորին, և պատերազմական փրկչին մարտի նշա-
նակ։ Այս զդժնդակատեգն սևեռս, ի թելադրու-
թե՛ նահանջման անարգելն ձեռաց, որ ներհակ հրա-
մանի արարչին ձայնի յանդգնեալ ձգտեցաւ ի փայ-
տին պտուղ։ Այս զսպունգն դառնաթորմի, ընդ ա-
խորժելի քաղցր ճաշակմանն։ Այս զարկանելիս ըզ-
դեստու արարչին ծնողի ի շուք պատկառանաց պարա-
տաւորին մեղաց եւայի։ Ո այսոսիկ զսոսին ի միում
տեսակի մասին, իբր զգանձարան կենաց պարգևաց
փրկութե՛ ձրից [74] յիսնուն՝ իւր քառադրութե՛ ամ
բարձեալ բերէ։ Այլպէս զի ըստ էական ամենանկատ
տեսութե՛ աչացն ի յերթնամանեայ շուիղ գթու-
թե՛ի սեռս ստորիցս ստեղծականաց անաղօտական
ծագմամբ երգեսցի։

ԻԶ. Այս [75] արդ՝ զգիր ընթացից պատմութե՛ բա-
նիս աստուստ կինքեսցուք. և փոխառեալ այլաբա-
նեսցուք ի զանազան բարեբաստութե՛ս ներքողական
արհեստահիւսակ առաստացութե՛, պատեհ պատշա-
ճողութե՛, սկզբնաւորեալ ի պրակապատձէն պիտա-
ութե՛ ի պարս կարգի բանիս հոլովման, զի ի հա-
ւասարութե՛ հարթուե միամանեայ նկատման խառ-
նեալ միասցին։ Այս [76] արդ ահա սկսցուք զկնի գծա-
գրութե՛ գումարահոլով պատմաբանութե՛ս՝ խառ-
նել գուն ինչ գրութե՛ս համառօտագիր գրուատից,
նախ նմին իսկ կենդանարարն ՅՈնագրութե՛ ՅԾեան

Իսայեայն, և զկնի սորին՝ սրբոյ Տիրուհւոյն և Աստուածնին, ընծայ մատուցեալ պտուղ հաձուելեաց կամացն էութեան անձառն իսկութեան՝ զշնորհս ընծայից, բերկրալից շրթանց, ի հոտ անուշից։ Իսայեայ արդ՝ սկսանիմք ի մեջ առեալ զնուագեալն մեզ իմաստս քանի այժմ յայնցանէ, որք նախ քան զմեզ հոգւովն վարժեալ, և վերին իմաստութեանն կարապետեալ, նախակարգ յառաջադրութեանն զսոյն սքանչելի և խորին խորհուրդ՝ կանխահանդէս խմբիւ սքանչելի բանիւ ստնեցին։ Ասասի և մեք ըստ աղգման շնորհի մերում իմաստից՝ [77] ի վերնատուղէն բանից զօրութեանն, բացաձայնեսցուք երգողաբարբառ բարեբանութեամ, այս խաչանիշ նորոգ նշանի, նորոգանուագ նկարս բանի, ի կարգ գովեստի նորոգ ներբողի։

---

## Ծանօթութիւնք ի Պատմութենէ Իսայեայ։

1. Ի ձինուածք բնակութենէ ուխտին սրբութենէ։ Ի ձեռ. օրին. չիք ուխտին սրբութենէ։

2. Բազմավրդով սաստանութեամբ։ Կամեցեալ Պատմութեամս մեծացուցանել զյաղթողական տիեզերակալութեն կայսերացն Վասլի և Կոստանդեայ, առ որով դիպան անցք սորա Իսայեայ Ազարանից, անգուսա ի վերուստ առեալ ընդարձակել զհանգամանս տերութեան Յունաց՝ ըստ գրոց երկրի նոցա, ըստ ծագման ազգի, և ըստ բազմավրդով պատեբազմաց զոր ընդ այլևայլ ժողովուրդս մղեցին և տիրեցին նոցա, և աւանուաել և զնոցն Բուլղարս։ Ուր զսոյնան ասէ, հարաձգութենէ արեան զոր ինն էսաւայ, և զկնի գարձեալ, յարփայարանն յոանայ ազգացն էրովմայ, այլ և զբուն զկոստանդնուպոլիս Սէիր անուանէ։ (Համար Ժ. ժե։) ի Յաւանայ սերունդք գոլով Յունաց՝ որ ծնունդ էր Յաբեթի, և ոչ Սեմայ, զնաւրդ եդովմայեցիք կոչեցին։ Աւելորդ է կարծել թէ համաբարոյ գոլով Յունաց՝ եղբայրասէացք երբէք զեդովմ կամ զեսաւ, ի նորին անուն առակեցան։ Այլ կարի թշնամանք են Յունաց, և նախանձք թագաւորեալ քաղաքին, զորս մանաւանդ ի գովեստ առնուն ընթացք պատմութեան, և բարեբարս զնոսա առ այլ ազգս ցուցանեն, առաւել և առ հայս։ Այլ թուի զայդ կարծիս ունել ի գրելոցն յառաջին Մակաբայեցւոյն։ (Ժբ. 21.) ուր Դարեհ ազգայ ազարացւոց գրեալ առ Ոնիա քահանայապետ, ասէ՝ գտեալ ի հին մատեանս զն Սպարտացիք և Հրեաստանեայք եղբարք են՝ յարբահամէ։ Եւ զն ազարտացիք ականատեսք են ի մեջ Յունաց, ոչինչ ընդդէմ է զնոցայն ծագումն առ համօրէն յոյնս առորագրել պատմութեան։ Իսկ ասելն, որբոյն մխիցն արեռս, ցուցանէ զգևաստրան ի պատերազմողացն արևմտեայց, այսինքն զբուլղարս։ Զհետ այսր առացեալն, որ յաստբռնեն էրոպէէ, նկարագրէ զգիրս Յունաստանի, մանաւանդ Կոստանդնուպոլսի, որ ի հիւսիսի կայ Լիբիայ կամ Ավրիկայ, և ինքն

ակրե երիցունց Ծովուց՝ Սեաւ, և Միջերկրեայ : Իակ յայլորդն, ոա նելով զերծուէ զիպեալս զիմաց, զդիրս բուլղարաց ցուցանէ, եթէ ոչ եթէ ի հարաւակողմն յանատաանի ունիցի զդիրսն, ուր մանաւանդ յարև մուտս հիւսիսոյ կայ, այլ զի յարեւագս խիտ և բորբոքեալ մարտիցն եղև այն իբրև հարաւ յանատաանի. զոր եբրայական բառն ասէ ՆԷման, ի մեզ հարաւ Թարգմանեալ, և յոմանց ինջօրէայ կարդացեալ. որ այժմ կոչի ասէ՝ բուլղարք, այսինքն մեք այժմ զբուլղարն ըստ հայոյսն յարմարեալ ասեմք բոլորիցս, սակս բազմատարիկ ի նմա բերոցն :

3. Որ ըստ ոմանց ընդոստ : Ձեռ. օրինն. չեզ որ : զինի. որպէս ըստ եբրայեցւոյն. Ձեռ. օրինն. որ ըստ :

4. Երիւթանէիսբ բանականաբոյս : այլ տալ. բուսականաբոյս : Ա յս երկու ազգք հղօրք՝ Յունաց և բուլղարաց իբր երկու լերինք բանականք, բազմացեալք արամբք և քաջութեբ, անդադար ի գրգիռ մարտից կայցին ընդ միմեանս ընդդիմահարս, հարկանելով զերեսաս, բայց և ներհակէին, կրելով ի միմեանց. որպէս երբեմն աեիբ. եղովմայեցիքը, և հագար, իսմայէլացիք ընդ միմեանս հարան առ Թագաւորօքն իսրայէլի : ( ը. մնաց. ի : Սալմ. ձբ : ) Տեսանի բանիւս, զի երկու լերինս առաջ նօր ոչ է մարթի խմանալ զՎասիլ և զՅոաննդին եղբարսն, որք միասորհք էին, և ոչ ընդդիմահարք, հանգիպիցք՝ և. ոչ ներհակիցք. զորոց և ասէ զինի. Համար ը. ի : Ա յս մարթ յուզեալ ձգեցան ընդ երկուս ազգս զհարիւրամեայ ժամանակ, որպէս և ասէ, ի հարուած սուրբ և չերկայն ամանակս : Մինչև նոքայն ծովայնն, յորմէ խաղաս նուաճեալ զԼոյն ցամաքային, զբուլղարս. և այս եղև ի յետին ամ Վասլի կայսեր, գերի վարելով զորդիս Սամուէլի արքայի բուլղարաց. որ ընդ Թագաւորութբեն և զկեանս վախճանեաց : Ա յս ամենայն արձանագրեալ կան ի յոյն և ի հայ պատմագրսց :

5. Սկսեալ, զինուած ի ընդ ծով տարօղնէալ, մինչև, հանգուցեալ նոքան, պահասի ի ձեռ. օրինն :

6. Որպէս պանչերուէ բարուանիին : Ճնունդք Ռամանոսի կայսեր՝ Վասիլ և Կոստանդին. և երկոյն քառամեայ գոլով եկաց ի սերբութբեն ի Թուրն նեբ, ( յամին 976. ) Թագաւորեալ աւելի քան զամս յիսուն. ուստի իբր յուբերբորդ ամի սերբութբեն եղև փոխագրութբիւն սբց խաչին :

7. ի պատասարուբէ հպատակութբէ նոցա : այլ տալ. հպատկութբէ : Ա ր ի գիտելոյ Թէ յոր ժամանակ անկանիցի այս խաղաս խորտակումն և նուաճումն բուլղարաց, ի համար արկցուք զերևելի դիմեցմունս Վասլի ընդդէմ նոցա : Ըստ կեդրենոսի ի Թուրն նբ (989) զօր ժողովեաց Վասիլ ի վերայ բուլղարաց, ունելով և ի հայոց զԳրիգոր մագիստրոս սարմնացի. իակ Աստղիկ ասէ զայս ի Թուրն նոն, և Թէ յետ այնր Աշտ որդի Գրիգորի ի դարանակալութբէ Սամուէլի արքայի գերի ըմբռնեցաւ. և յայնմ պատճառէ հայր նորա Գրիգոր անհնարին միսեալ ի մարտ անկաւ. և զայս դնէ կեդրենոս առ նմով Թուականաւ : Ա ապա դարձեալ ըստ կեդրենոսի, ի Թուրն նբեր. (1000) զօր առաքեաց Վասիլ և ի նճ Թուրն անձամբ դիմեաց ի մարտ, յորում փախստեամբ ապրեցաւ Սամուէլ արքայ : Իակ ապա ըստ կեդրենոսի ի Թուրն նկբ. խաղաս խորտակեաց զբուլղարս. յորմէ մեռաւ և արքայ նոցա : Զայս Սամուէլ երեց գնէ ի Թուրն նբը. կամ նբեր. բայց և ի Թուրն նկբ նշանակէ՝ խաղաս նուաճեալ Վասլի զբուլղարս : ի լրումն յաղթութեցս յաղթանակաւ եմուտ Վասիլ ի Կոստանդնուպոլիս ըստ կեդրենոսի ի Թուրն նկբ. առաջի տանելով զկին Յովհաննու արքայի բուլղարաց, և զերկուս դստերս Սամուէլի արքայի նոցա : Ըստ նշանակեալ անցեցդ՝

երևելի մաքառումունք Վասլի ընդ Բուլղարս սկսեալ ՚ի նոյն Թուին, վերջին յաղթութենէն՝ զոր պատմուխս յիշատակ, կատարեցաւ ՚ի Թուին նկդ. այս է՝ ՚ի 989 ամէն մինչև ՚ի 1014: Ըստ առաջին յաղթութեցին ակնարկութեն առնէ և Յիշատակարան Աղօթիցն ըզր ՚ի նմոյ կամ նմոյ Թուին. բայց կատարեալ յաղթութենն անդք յետոյ են քան զգրել աղօթիցն:

8. Յիշեցաւս տրուէլիս: Աբծանս յիշատակայ և կոթողս կանգնեցին ՚ի զանազան տեղիս: անապատ երգ ասի, ոչ մրով գրեալը, այլ քանգակեալս. որով և անեղծական պահին: Յիշն այս և ՚ի Յիշատակարանի աղօթիցն:

9. Բնական բարոյիդ: Խնամոութենէ կայսերացս այլ ընդ այլ փոփոխեցան քնաւորական հանգամանիք երից: Ո՛չ այլաբանութենէ է ՚ի տեղւոջն, որպէս թէ զՀեշտասկրութենէ յոմանց ՚ի պարկեշտութենէ փոխեալ լիցեն. այլ ըստ յայնոցիկ բանիցն՝ արդարև զինական ընթացս հոսանաց գեղոց՝ ընդ այլ կողմն գնացուցին ըստ բերելոյ պատեհազնական հնարից: Զայդ ՚ի կիր արկեալ Վասլն պատմէ կեդրենոս երբ առ նմոյ Թուական նաև. զի զծոց գետոյն որ գնայր առ քաղաքաւ մոգլենոց՝ այլուր դարձուցեալ, փորեցին զՀնձունս պատասցն, և արկեալ խորոյկ կործանեցին անհնարին սասանմամբ. զոր ահա և պատմութենէս ասէ ՚ի կարգին, հրաշագործ տրտպատուրտ: և այլն: Ահա և այս անդք յետոյ են երբ 12 ամօք քան զգրութենէ Աղօթիցն:

10. Որպէս արարին: Առաւելութենէ է ասացեալս, յայտ առնել թէ յայնմ ժամանակի ոչ դոյր ՚ի Թագաւորս երկրի այլ իշխեցօղ հզօր երկու զյունացն:

Թ. Սրախացիր յաւետ հրճուանօք բերկրեալդ ի կանայս. որ [22] դժուարընդել դաստիարակաւն խաչի վարժեալ կրթեցար. որդւոյ քոյ կցորդակցութիք միատեսակն ժուժկալութիք կրելով զերաշխեպ վշտաց ծնիցելոյդ ի քէն՝ մշտաչարչարն մեռելութիք անձնատուր տօթով խարուկեալ. իբրև զորօջ անարատ քահանայական նուիրմամբ ի վերայ սիրոյ սեղանոյդ մատեար, ասրաբոյս և ստեպղիսակ գեղմնաբարձ մաքուր պատարագ. ի Հինաւօրական վարս ողջակիզեալ, քան թէ ի սրոյ հանդէս խողխողեալ : Ա՛ան այսօրիկ ի նուէր քոյ զենման հրեշտակացն պարք պաշտպանեալ, ընդ առաքելոցն գումար դասակցեալ, զմիայն արժանիդ պատուեալ գովելին որբ ածածին :

Ժ. Սրախացիր համայն տարփանօք բերկրեալդ ի կանայս. որ ի կոյս և յանարօր արգանդէ [23] բան բեղնաւորեցեր՝ ցաւոց անիծից արմատ օրհնութիք. հօրն ազամայ որդի բերկրութիք : Ա՛ան որոյ չնորհ ունելով քեզ օրհնեալքս ի յորդիդ քո փրկիչ աշխարհի, երանեմք քեզ որբ ածածին :

ԺԱ. Սրախացիր անբաւ բերկրանօք հարսն լուսոյ ոսկեզարդ զգեստուք պաճուճեալ. որ [24] յօրէնս երկրայինս աղցաւոր կրից՝ զերկնայինն ածեալ մատուցեր, և զանմահն նմանեալ մանգանգուած ապդի մարգկութես ի չափ հասակի գեղոյ գեղեցիկ զատեղն վայելուչ ի լիբանանէ մեզ պարգևեցեր : Ապա զպատկեր նախահօրն ի քէն ստացեալ՝ նորոգ հաստատեալ, գոհաբանեմք զքեզ տիրամայրդ :

ԺԲ. Սրախացիր յողջոյն նախընծայ երկնային աւետաւորին, տաճար սրբափայլ. որ [25] լուսով ածածկանաւ ուռճացեալ լցար, և երկրաւոր մարմնով երկնայնոյն աթոռ կազմեցար. և արեգակնապէս հոլովմամբ առ արուսեակն երագ ընթացար : Ա՛ան որոյ բացեալ զբերան պատասխան ամլածին որդւոյն, օրհներ զօրհնեալդ ի կանայս որբ ածածին : Կաև դու լցեր զտունն զաքարիայ բարբառուիլ գոհութիք,

յօրինակ հանրական եկեղեցւոյ, որ ի քո միշտ օրհնաբան. զի երանեն ահա յայնմհետէ քեզ ամենայն ազգք ըստ բանի ՅՃաղչացիկ քումմ դաւանութեամբ. սկզբնաւորը կուսից անարատութեամբ, ՚ի բերկրեալ լեզուս շրթանց զուարթնոց միշտ բարեբանեալ ՚ընդ ՅՃածածինն։

ԺԳ. Վանզի արդ եկեղեցի դասուց անդրանկաց [26] զ՚ի քէն մարմինն ՚ի բանէն անանձնատ համապատիւ հօր փառաւորէ յերից սրբասացս. առ որ հպատուր քո գոլով ահաւոր խորհրդոյդ տեսօղ՝ զանձառն ուրախութեամբ յաւէտ վայելես։ Օ ի զոր նոքա թևաւաքողելով դիմաց ծածկութեամբ [27] ՚ի բացուստ ակնարկեն, դու յաւէտ համարձակ նմին կամնաձիր մայր ցուցեալ ծանուցար. և ՚ի մէջ դաստակաց ձեռաց որպէս զմանուկ զծերն հինաւուրց գգուանօք ընկալար. եղեալ կառք անձնաւոր կայից բազմելոյն յաթոռ քրովբէից։ Վ ասն զի [28] ոչ ընդ քեզ միայն, այլ և ՚ի քեզ. ոչ միայն փարեցաւ բազմեալ, այլ և բնակեցաւ տաղաւարեալ. ոչ միայն միացաւ ՚ի զանգուած մարմնոյ, այլ և մարդացաւ՝ առեալ զկերպարան ՚ի քէն սկսելոյ. ոչ միայն մի զօդեցաւ քո յերկուց գոյութեց, այլ և ընկղմեցաւ յանապական անօսր էութեն մարմնոյն վերբերումն. ոչ միայն միջնորդաւ անձինն ընդ հողոյ միաւորեցաւ դիմակ տեսակօք, այլ եռամսեան խառնեալ էութեք միաւորեցաւ անշփոթելի։ Վ՚ի որդի մերովս բնութեք յաթոռ հօրն իւր աջոյ յերկնաւորացն միշտ պաշտպանեցաւ։

ԺԴ. Յաղագս որոյ և մեք երկրաւորքս զմատակարարդ և զսպասաւոր մեծս խորհրդոյ երանեմք ըղձական երգօք՝ [29] զանժամանակն էութեն երջանիկդ ծնօղ. որ զամենայնի և ամենեցուն պատկեալն հոգեշունչ երգօք՝ ՚ի քեզ ընկալար, ոչ ՚ի մանկ, այլ ՚ի լրութէ. ոչ հատամաբ, այլ հաստատութեք. ոչ բաժանաբար, այլ ամբողջապէս. ոչ փոփոխմամբ, այլ փոխատրութեք. ոչ ՚ի ծիրս սահմանի տեղւոյ, այլ ՚ի սենեակ լայնատարը ոգւոյ։ Վանզի զբերօղն ՚ի կշիռ ձեռին զերկիր և զերկին տարար յարգանդի. և ոչ միայն ՚ի տես նկատման աչաց նայեցար ՚ի

նա, այլ և չօշափմամբ ձեռացդ ծանեաւր. ոչ միայն ողջունեալ զանհուսն շրթանց, [30] այլ և ըմբռնեալ. ոչ միայն զննեալ զհատարակաչէն խորան մարդացեալ բանին, այլ և անուանեալ կոչմամբ Յն զՊետն այ. ոչ միայն ստեամբք մնուցեր զանժամանակն ըստ աւուրց, այլ և աձմամն հասակի զնոյն ընծայեցեր: [31] Օ՜ որ խոստովանի հանրական եկեղեցի զծնեալդ 'ի քէն ած Աշմարիտ՝ ընդ նախեզակ գոյակն միացեալ 'ի տեսուքէ իմաստից քննութէ մեր փակեալ: Յորոյ տիկն ապացուցի խաբօղն յակոբ ըմբռնեաց զմարտուցեալն ընդ իւր պնդապէս. և զանխուլ խորհրդով զածատեսն անուն ընկալաւ: Այս պէս և որ 'ի քէն ծնեալդ մարմին 'ի յարդանդ սըրբոյդ սենեկի ընդ ած խառնեցաւ. և խաբեալ զեդոմն՝ մարդկան Թշնամին՝ մարմնով գերազանց նմին բարձրացաւ. վասն որոյ ոչ տեսօղ այ՝ այլ Աշմարիտ ած անուանեալ, զամենեսեան յիսրայէլ անուն փոխադրեաց: Վակս որոյ լի բերանով զպաշտպանդ փրկութէ այսմ մեծս խորհրդոյ՝ երանեմք զտիրուհիդ աբ ածածին:

ԺԵ. Որոյ՝ [32] տեսչութէն այ նախագիծ՝ 'ի ծովէ քարն պատուական հրափայլ և սպիտակ մարգարտին մաքուր կերպարան գոյացեալ ցուցաւ: Վանդի արդարև դու ես ակն պատուական 'ի յաշխարհիս ծովէ ընտրութէ. որ զած այնի հրոյն տարար կերպարան: Ով սրբան մեծ է 'ի քեզդ աւարտեալ խորհուրդ սրբութի. զի թէ [33] առածք մարգարէիցն հոգեկիր յղացմամբ իսրայէլի ծնօղք ասացան, ապա դու որ զբանն ած անձնաւոր՝ հայրենի բնութէն հպատուոր՝ 'ի սենեկի քումմ մաքրականի մարմնապէս բացածանուցեր, զորպիսի արժանապատիւ գովութիս ոչ ընդունիցիս: Ով ընորհաշուք դեղով արփաւոր ծածկութիւ յանմատոյց գեղեցկուէն պաճոյճ փաղփաղեալ. ով համեստ հեզութէ, խոնարհ ամբծութէ, կերպասիւք լուսոյ 'ի հոգւոյն պարասքօղեցեալ. ով զարդուք երկնայնովք ոսկեզօծ սրբութէ, արծաթափայլ մաքրութէ, ականակապ պսակ քեզ փառաց զբարձրելոյն հովանի 'ի գլուխս ընկալեալ. [34] ով քաւեակ մանեկաւ նշուլափայլ մաքուր ուլանոյն

յեռմամբ, այ հոգւոյ և մարմնոյ խառնմամբ, ի մի էութիւն երիցն հիւսմամբ ի յորդւոյն լանջք որ քո ընդհօք առցեալ։

ԻԶ. Որհնեալդ միայն ի կանայս ըղձամբք [35] քաւ հանայուհւոյ մըր մարգարէին յովհաննու. փառաւոր և ի դասուց համաշարմ նմանացելոցս ցանկալի երգօք ներբողականս տաւղօք։ Օ ի թէ բանականս մարդոյ գոյութի պատկեր այ ի սկզբանն ստեղծաւ, և այսր աղագաւ ստեղծողին զընդհօս կալաւ, ապա և առաւել քեզ [36] պարտական եմք երկրպագութիւն ունել ընդհ տիրամայրդ, որ այ ի ծառայի կերպարան ստեղծմանն եղեր պատճառ. առ որ ի լրումն աւարտման մարգարէական կտակին հասանիւր, այն զոր ասէ, եղիցի ի վերայ առն ձեռն քո, և աջ քո ի վերայ որդւոյ մարդոյ ի քեզ խորհուրդսն։ Աջ և կարողութիւնն և բազուկն հօր միածինն ի քեզ հանգուցեալ և զամենայն որդիս մարդկան վկայս և երկրպագուս իւր զօրացուցեալ։ Այն նկարագիրն և կերպարանն հօր գոյութ ի քեզ բնակելովն, սրբութիւն և արդարութիւն լման աշխարհի ընձեռեալ։ Այս յիրաւի և արժանապէս հոգեշարժ քնարիւք զքեզ բարեհամբաւեմք որ ածածին։

ԻԷ. Ի մարդկային զարմէ [37] հրեշտակ երկնային. յեղձականաց սեռիցս անմահ սերովբէ. ի հողային նիւթոյ ոսկի սուրբոյ. ի ծովային բերմանց ընտրհալոյս մարգարիտ. ի յեսսեանն բուսոյ քաղցրապտուղ ծաղիկ. ի յաւուրց նախնեացն Ձիւռ օրհնութիւն. ցօղոյն հանդարտի ամպ անձրևաձիր. արևուն ծագման ակն արփիափայլ. մերկացելոյ այգոյն աստղ առաւօտի. [38] գիշերային մթոյն խօսնակ բերկրանաց. օրինի ստուերին տառ ձշմարտաձառ։ Վակս որոյ իբր զնիւթ գործօնեայ այսքանեաց բարեաց օրհնեալ ես դու ի կանայս. նախաստեղծին մերկացելոյ՝ փառք անկապտելի. վշտացելոյ անիծապարտ մօրն՝ սփոփիչ քաւութիւն. որդւոց նոցին խռովութիւն՝ խաղաղութիւն ձայնատու։ Այս արդ՝ որ բան բաղդատելով զանհամեմատ քո մեծութիւդ լիցի կարօղ գերահռչակել. արարչին մայր. անհասին ծնօղ. անբաւին գրկարան. ամենակալին յանձնանձիչ. փառաղարդո-

ղին զգեցուցիչ. վերօրհնելոյն գրգիչ: Ահա յաղագս այսոցիկ ըստ անսուտ քոյ բանի յիրաւի տացուք քեզ երանի մայրդ յոի:

ԺԸ. Ընդհրհելի դիտմամբ [39] տեսակ լուսալիր աջօք նկատեալ. [40] կտակ մակագիծ անեղծ պայմանաւ արձան հաստատեալ. [41] սահման յարակայ մեծուԹեան կցորդուԹե. երկուց միուԹենն անայլայլականի կապ պատկանակիր. վեհին պատկեր կերպիւ կշռորդեալ. [42] ԹեԹև պարզուի հիւԹիւ քաղկացեալ. տառ տարբերական տողիւ ձևացեալ. տումար տենչալի անսխալ դրոշմեալ. մատեան մեծուԹե ընտրհիւ նկարեալ. նամակ ընտրուե բանիւք բարդեցեալ. արձան անձնական իմաստիւք զօդեալ. կնիք մատանւոյ տերամբ կերպագրեալ: Օ գեստ լուսանիւԹ երկնից արքային. օԹոյ սրբուԹե անմահ բնակողին. յարկ վայելչուԹե անեղ շինողին. [43] առիւծ մարդկուԹե բանի անեղին. գործի մարմնուԹե վեհին բնուԹե. պատճառ պատշաճից անպատկառ ձգնուԹեց. օրինակ ուղղուԹե անայլայլակ վերիպուԹե. անպակաս ածելուԹե լըման ԹերուԹե. իսկու հի երկնային կենդանեաց գաւառին. մանակից շնորհնական հայրական գԹուԹեն. [44] անպարտակիրն ազգակցուԹե երկնից վերստին. անամմանակն արգանտի ծանուցօղ ծննդեան:

ԺԹ. Ոու գՀօրն լուսոյ զորդի հարազատ՝ ի ստորինս կոյս աշխարհի մայրենի կաԹամբ ջամբեալ դիեցուցեր. և որպես ԹևովՀ խնայական պահպանուԹե ղպարուհնակօղն պարփակեցեր: Այս [45] զկենցաղոյս ընԹացք ընդ լուսազարդ կենացն շաւիղ ձգեցեր. և ըստ նմանուԹե արագման օդային Թռչնոյ ի յանցաւորաց աստի փոխեցար. և ի մէջ դասուց հրեշտակաց ուՀնօղ այ յայտնեալ ծանուցար: Այս լուսարփի ամպով առ ի նոցանէ պատուեալ համբարձար. և հողեղէն հաստուած ի քրովբէից աղի հանգուցար. և ի կանանց ազանցն կերպիւ արուսեակին տեսակաւ տեսար. և զինեալ բնուԹե մարդկայնոյ յանձառաչնորհ խորհուրդ ծածկեցար. և [46] ի ստեղծողէն քո և համայնից հպատակօրէն ձևով պաշտեցար. և հաստողէն ծագաց աշխարհի մայրօրինակ ա-

նուամբ ձայնեցար. և մեղուցելոյ կնոջն առաջնոյ առանց յանցանաց զաւակ գովեցար. և ամենայն անբծաց ընտրուեցեր պսակ սրբուեցեր դու դատանեցար. և [47] իբրև զհանդարտ երինջ անարատ արարչաւանդ լծոյն մատուցար. և իբր յաւանակ կամաց անբաւելին ՚ածուեցեն հետևեցար. և ՚ի խորոց ծովէ աշխարհի շուշանական շաւղօք ամբարձար. և իբր ՚ի դժնեայ փշոց խստութեանց յաշխարհիս զբազմանց ծաղկեցար. և իբր ՚ի դառն արմատոյ երկրի քաղցրաձաշակ պտուղ յայտնեցար. [48] և երրորդութեն անտես Թաքնուեցեր խորհրդակից սիրոյ կոչեցար. և ծածուկ հաւաքման բանին իբր լուսատու ձորձով պատեցար. և [49] անքակ էին տերութեեր սահմանն սկսման վերակարգեցար. [50] և ՚ի սրբասնեալ միջոց քո ստեանց զանկեան ՚ի տաշխին ծրար Թագուցեր. և ՚ի կուսական քում բարուենակէ զանմահարարն ողկոյզ հասուցեր. և [51] միջնորդ կենաց երկոցունց սքանչելապէս համարձակեցար. և համոզիչ ՚ի խաղաղութեեր մրրկածուփ շարժմանց կացուցար. և խրախակից վերնոյն բարձրութեեր անկապտելի անուամբ պատուեցար:

Ժ. Ա՛րդ յայսքանս և ՚ի սոյնպիսիս, և յևս ընտրելական երգս բանահիւսից գերահռչակեալ ես վսեմական վարուց նախընթաց և յառաջաշաւիղ ՚ըզ ՚ածածինն: Ա՛ ասն զի որպէս երևեցաւն ՚ի քէն [52] միածինն անդրանիկ քննութեեն հօր՝ սկիզբն ասի հետևման խաչունակ մահկիւր Ադանց, այսպէս երանեալդ և բարեբանեալդ գերօրինակ ցուցման տեսակի ՚ածակրօն կարգաց ծագեցար: Ա՛և զանմատոյց հուրն կիզաչող [53] անասպական ծասքմամբ ծախեցաք. քև զաբագեալն ՚ի թևս օդայինս ՚ի քառընթաց կենդանիս տեսաք. քև զանկցորդն տեսականաց ՚ի մարդկային կերպ նկատեցաք. [54] քև զգովեալ բարձօղն մեղաց իբր զգառն ձաշակ ընկալաք. քև դատելոյն ՚ի չաբագործաց որպէս ՚այ ձչմարտի երկրպագեցաք. քև զանծանօթն հօր տերութիւն ազգակցապէս օրհնաբանեցաք. քև զմուրհակ պարտուց անիծիցն ՚ի յաւազանին ջուր ընկղմեցաք. քև զանտեսն աչաց հրեշտակաց տղայական տիւք գգուեցաք. քև զան-

սահման բանին քնուԹիւն ՚ի հասարակածին տիպ համբուրեցաք. քև զադամն նոր հոգեղէն ՚ի չափ հասակի առաջնոյն տեսաք. քև զարեգակն արդարուԹե կենցաղակից մեր կցորդ ստացաք. քև զանժամանակ բանին էուԹե սկսեալ ՚ի դաւԹայ պատմեցաք. քև զանհամեմատն մարդոյ պատկերի մեզ նմանատիպ գործով գրեցաք: Արդ՝ այսքանեաց սրբազնական մասանցս Ճառեցելոց դու միայնակ պատՃառ, անարատ կուսից նպատակ կրօնից՝ տիրամայր Ած ածին:

ԻԱ. Վանդի [55] ԹԷ չէր ՚ի քէն ամենալ ուղէշն երկնային, ոչ էր պղաբերեալ զանձաշակելին ՚ի շընԹանցն մեր հաղորդուԹ. և ԹԷ [56] չէր երևեալ հօրն արդարուԹե ՚ի յերկինից, չև էր սկսեալ ՃշմարտուԹեն ՚ի յերկրէ. և [57] ԹԷ չէր յղացեալ յանփորձականգ քումմ արգանդի, ոչ էր մարմնացեալ. և ԹԷ չէր յայտնեալ մերով բնուԹեաւ, ոչ էր շօշափեալ և ըմբռնեալ անհասն իմաստից. և ԹԷ չէր կրեալ ՚ի գիրկ բարձողաց հոգեղէն բաղկաց, ոչ էր ծանուցեալ. և ԹԷ չէր համբուրեալ երկրաւոր շընԹամբք, ոչ էր Ճառեցեալ. և ԹԷ չէր հետևեալ ՚ի մարդկան ընԹացս, ոչ էր քարոզեալ էակն ՚ի յէից. և ԹԷ չէր Թափեալ իւղն անապական ՚ի վէհագունէն, ոչ էր զմեզ օծեալ. և ԹԷ չէր խառնեալ զմերս ընդ իւրումն, ոչ էր մկրտեալ. և ԹԷ չէր խրախուսեալ մարդն ՚ի յերկնայնումն, ոչ ևս էր սրբեալ. և ԹԷ չէր խոնարհեալ բարձրն ՚ի յընտանի փառացն, ոչ էր վերացեալ ՚ի ստորնայնոցս առեցեալն:

ԻԲ. Այլ [58] մարմնացաւ, որքան մարդացաւ. նոյն և յայտնեցաւ, ըստ որում ծանուցաւ. աւետարանեցաւ, ուստի փառատրեցաւ. իսկ մաքրեցաւ, որպէս երգեցաւ. իսկ մկրտեցաւ, որ և վկայեցաւ. նոյն իսկ պատմեցաւ, որպէս Ճառեցաւ [59]. իսկ տնանկացաւ, որով Ճոխացաւ. իսկ հնազանդեցաւ, որով պաշտեցաւ. իսկ երկրպագեցաւ, որով խոցեցաւ. կենդանացաւ, որով Թաղեցաւ. իսկ պատուեցաւ, որով պատժեցաւ. իսկ ամաչեցոյց, որով պատկառեաց. իսկ բերկրեցոյց, որով տրտմեցաւ. իսկ զգեցոյց, որով մերկացաւ. իսկ ողջացոյց, որով բևեռե-

ցաւ. իսկ կանգնեցաւ, որով վտանգեցաւ. և [60] սլաց ցաւ որպէս վէրնայիկն. Թռեաւ որպէս հոգեղէն. ծածկեցաւ որպէս զանքնին. փախեաւ որպէս զանհաս. 'ի յամպս երկնից եղ զգնացս. գովեցաւ որպէս միածին. բոսորաբուղխ կայլակօք ներկեաւ. անկից վիրացն խոցով հարցաքննեցաւ. 'ի վէրից անմահ հրեշտակացն հաւատացաւ. յաղթօղ մրցման և մարտի փառաւորեցաւ. դատաւոր արդարակշիռ յամաց վերապատմեցաւ: [61] Կանգնի 'ի քէն հիմնադրեաց զսկիզբն մարդեղութեանն անեղն իսկութեի. և յընտրեալ անպատում ընորհէ զայս ամենայն անփոխանորդելի պարգևական ձիրս ընկալաք: Այս քեւ ամենայն այս պատրաստութիւն բարեբաստութեան բազմերանեան յուսոյ հրաւանաց մեզ հանդերձեցաւ: Այս զամ փառս երանական լուսոյ նշուլից վերնոց և նեղքնոց ծածուկ խորհրդոց բազմադուխտ պայծառ յօրինման նոր արարածոց անձառ շինուածոյ՝ եկեղեցւոյ, 'ի քէն ծնիցելոյ կերպիս մերոյ և բարձրացելոյ անուանն յոի ծնկովք կրկնելովք մատուցանեմք: Լուսոյ և քեզ բերկրեցելոյդ զսուրբ կանն օրհնաբանութեի բանիս երկրորդեմք:

Ի Գ. Որհնեալ ես դու 'ի կանայս, [62] գլուխ նոցին պանծանաց, և պայծառ սլակ: Պսակ կուսութեան մաքուր հարսնութեի. պսակ ընտրութեի անփոխ գովութեի. պսակ անեղծութեի լուսոյ նմանութեի. պսակ ընորհանորոգ էին ծնելութեի. պսակ երանական բանին հօր մայրութեի. [63] պսակ՝ որ պանծանաց կենացն բարձրութեի. պսակ պայծառափառ վարուց իմաստութեի. պսակ տիրապատուաստ երկնահանճարն գիտութեի. պսակ պիտանական եկեղեցւոյ գեղեցկութեի. պսակ պաշտելութեի սիոնի նորոյ զարդարման. պսակ յոգնանկար յարփիչ եօթանց փայլատակման. պսակ առաքնորդական վերնոցն ազգակցութեի. պսակ անբծութեի շաւղացն արդարութեի:

Ի Դ. Արդ՝ ամենեցուն [64] վերակարգելոց Թուոյս այսոցիկ բնակարան բաղձալի, և երանելի, և ընդունարան ընտրական կամաց անքաւելին զքեզ խոստովանիմք երկրաւոր ծնունդքս ստորաստեղծականն ադամայ. որոց անհամար և անթիւ ազանց ամրական

պահպանական պարիսպ կառուցար : Վանդի յարժանահայց և յամենազօր քոյ բարեխօսութիւդ միշտ ապաւինեալ մնամք ՚ի հաստատութիւե , խնամեալք և հանգուցեալք ընդ հովանեաւ պաշտպանութեան մերոյ պատուարի Ջեր ածածնիդ : Պատուար պահպանչն ՚ի զանազան մաքրազարդ ականց յարմարեալ . պատուար հրապարփակ անմատոյց ընդդիմողացն հինից . պատուար բոցանշոյլ անհուպ և անհաս մատուցման դժնեայ դժրողաց . պատուար ամենահրաշ ըստ եղելութեան , որ աղխեալ զմեզ քո՝ Աչդրատապատումն գրեայ . պատուար շքեղապարիսպ ըստ դասութեայ , որոյ հիմն անշարժութիե ՚ի բարձրելոյն հաստատեցաւ . պատուար ամրակառոյց քաղաքին վերնոյ ըստ պօղոսի , որում զհանուրս բնակիչս արարեր : Վանդի զածծ ծնար ՚ի մարմնի , և զծնունդս մարմնաւոր սիոնի որդիս արարեր վերնումն Հոգևորի : Որոյ աղագաւ օրհնեցաւ արդարդ քոյ կուսութիւն ՚ի շրթունս նոցին , և խոստովանեցար յամենեցունց մարմնաւրան և տաճար հօր խոկակցին :

ԻԵ . Որով արդարապէս ՚ի քեզ ընծայեալ զբան պատմողին ,[65] եղեր մեր օգնական և տուն ապաւինի յուղխից հեղեղաց յաւուր անձկութե . մաքրուե կուսից և սկզբնաշաւիղ դասուց երջանկաց . մայր հիմնադրութե հաստատութե եկեղեցւոյ , և ծնօղ անապատ բանին ՚այ : Օ քեզ յաւէտ օրհնութիե միշտ պսակեմք ՚ի նուիրեալ տեղիս սրբութե քումմ տաճարի , և ՚ի թևս պահպանութե լայնատարած քումդ մաղթանաց ապաւինելով , զձեռս մեր ՚ի սմա տարած ձեմք . և անեղկեցայ յուսով հաւատամք ապրել : Արդ աղաչեմք[66] ընկալ զերդաբան օրհնուե մերում լեզուի . և հաձեալ տացես սմա զձիրս շնորհաց սիոնի և բեթղեհէմի : Ուսոի արժանասցուք ընդունել մանն փրկութե յաւուր դալստեան մեծի յայտնութե փառաց անեղծի , փրկչին անմահի , քումդ միածնի , միոյն ՚այ , ՚ին Յաի : Այս իբր զպատճառ սկզբնաշաւիղ այսքանեաց բարեաց՝ ՚ի սոյն կամարի գեղապճնելոյ զքեզ պատուեսցուք անժամանակ էին բարձրացեալ ծնօղ :

Լոյսն վերստին ի վերոյ գրոյ անուան էոյ։

Պերազմանց [67] չափոյ կշռման երկրային բնութիւնէ, և քրովբէականն նախադասութիւնէ եղեալ վեհական. սրբուհի պայծառ առագաստ փրկչին Յիսուի, և նոր ծնունդ իսկ տեսաւորիչ վասն մեր. ծնունդ կրկնեսցի արժանապատիւ քումդ պատկերի. հայցեա վասն մեր առ ծնեալդ ի քէն ամէն ի մարմնի։

Պոպէից [68] յոգնաթիւ մասանց բերկրութիւն. ազգաց և ազանց արմատ օրհնութեան. ի ծագմանէ փառացն երկնայնոց անստուեր նշոյլ տարփալի շողեալ ի ստորինս տեղի. անորիշ հպմամբ մերձաւոր անմատոյց լուսոյ, անձառ խոստմամբ ապառնեացն յուսոյ՝ ի մահու պարտեացն զերծի զառ քեզ ասացատան ծառայքս քումդ որդւոյ։

Ի յերկրաւոր նիւթոյ մարմնաւոր վարուցն՝ [69] երկնայնոցն կրօնիւ եղեր հպատոր. մարիամ առիթ տեսութեան նոցին զանգնելին որդւոյն կերպարան։ Աստի տեսին զանկեանն սկսեալ, և երանեցին զարմատդ և զպատձառ. յորմէ և մեք հայցեմք զնորոգութիւնն կենաց, և պաշտպան զհրամարդ ձեռնտուութիւն։

Վկայաւորեալ [70] այսօր ի քեզ զնմանալին փառաւոր մեծութիւն. որ սլացեալ հասեր ի բարձունս երկնից. իբր անընդունակ ապականութիւնէ և մահու լուծման՝ մարմին. յորմէ պատկառեաց ամենայն պարտիքն մահու. և ցուցար բնակիչ արժանապատիւ կենդանեաց երկրին՝ ընդ կենակից ընդ տիրամայրն. արգահատեա միշտ զողորմութիւն որոց պանդխտիմք ի վիճս նեղութեն։

Ընծայ հրաւանաց [71] անթիւ խրախութեամբ ածային անկեան խոստմանց ի բուրաստանս անդաստանաց տիրական անկոյն. որոյ ստեղունք շառաւիղացն երկնային հնարիւ գերազանց. անդր մուծցես զքո դաւանաղքս ընդ տիրուհի մայրդ քոյ։

Ոտեմք ի քէն [72] աղերսիւ բանի, որ ես քաղցրալուր գրաւ աշխարհի. միայն երանեալ և բարեբանեալ, հօրն հաճութեամբ հովանաւորեալ. որդւոյն

ծնօղ. հոգւոյն վերընդունօղ. երկորդութեան փառացն տարօղ. վերանկարեա զառ յաւազանին առնախատ արգանդէ զկարդացեալս անուն'ի դիր մատենի վերնում դպրոցիդ: Այս[73] զերգագրութի սակաւամանսնեայ այսր գովեստի արձան հաստատեա միշտ անկործան սրբոյդ առաջի. ընծայեալ մարմնոյս զմրաշարս գիծ, և զգայական ընչոյս զպատկեր բանիս: Օ ի լբը'ի գոյից երկուց զուգելոց'ի մի խառնուրդ միոյ կենդանւոյ, միշտ փառաւորեսցիս դուսուվին օրհնութիւք, որպէս անեղծ պաշտօնեիցդ օրհնաբանութեամբ: Վերևս'ի ձեռն զօրեղ քոյին հայցուածոյ լեցի մեզ անդատապարտ համարձակութիւն յատենի մեծ և ահաւոր ծը դատաւորին: Այս զոցուք արժանի անբիծ վարուք, և ուղիղ դաւանութեամբ՝ հաւատոյն հաստատութիւն հանդիսիլ և անդանօր ընծայիւք բանից քումդ երանութեան. փառաւորել ընդ քեզ և ընդ քոյն յանդիման դիմաց պաշտելն և պսակելն քում ածափայլ և լուսանշոյլ մեծ պայծառութեդ զէութի անքակ և անքըննելի ծը երկորդութէն'ի միում երրութեե և արարչութեան: Որում վայելչական պատիւ, և գովեստ անդադար երգոց այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Յեղափոխիչը պատասխանուոյ Սրբին ընծայական գրոյ երջանկի և ընդհանուր Տէառն Պետիանոսի, Յերեսաց Նորին Հոգիաբուղխն վարդապետի:

ՏՆՈՐՀԱՁՈՒՐ էին[74] և հոգւոյ նորա ընդունակ, ընտրեալդ և ներանձնացեալդ այցելու: Ըստ հայցման հաճութեե բարեսէր կամաց երջանկիդ, և գրութեե նամակի ձերում պատճենի, յօրինեալ շարադրեցի[75] զպատմութեն գովեստ, և զձառքս ներբողենի: Կարեալ հաստատեալ'ի գեղ պատկերի դիմաց սուրբ հոգեստի սպիտակափայլ լուսափառ դաշտի քարտենիդ: Ստրակեալ յընթացս սորա ասպարիսի զշրթունս գրչիս, անշունչ խօսողիս, անքայլ ընթացողիս, անձայն հնչողիս, անդուլ պատմողիս, և

անապատաքեալն քարոզչիս։ Եւ[76] արձանացուցի սմին անձինջ յիշատակ զանուն տենչալի ձերում հոչման՝ որ Յատենիոս՝ լերինդ մնակաց հզօր դիտապետ։ Որպէս զի ինձանգես յարակայ՝ ի սոյն համառօտագիծ մատենի յաւուրս անթիւս և յամս հազարաւորս իմով սակաւատանեայ իմաստիւ։ Եւս գրիգոր՝ յետին վարժապետաց և կրսեր բանասիրաց, որդի դստեր եղբօր հօր Ներսիսի հոգեզարդ և մտավարժ փիլիսոփայի, և ըստ վարուց մաքրութեանն կրօնից գովելոյ և հռչակելոյ։ Եւ ընծայեցի քումդ եկեղեցեայց զայս նուէր բարեաց քանից ցանկալեաց։ Յորոյ պտուղ վայելեսցես ախորժ բերկրանաց Ձաշակմամբ յամեալ և յարակայեալ՝ի հոգևոր հրձուանս աղօթից։ Եւ ընկալեալ խառնեսցես՝ի յոքնահամբար զարդս ամենագեղս[77] երկնային զանձուդ՝ զտարազ տեսակի տառիդ։ Եւ զոյն և յիշատակեսցես զանուն իմ տրուպ՝ի գաւիթ սիրոյ անձկութեանդ սրտիդ սենեկի, միշտ նորոգ մտածեալ զմեզ՝ի ձերումդ՝ որ խորանի ճաճաբնակի հանդէպ սեղանոյդ արարչընկալի, զիս և զեղբայրն իմ զանդրանիկ զՅովհաննէս ցանկալի անուն՝ի միում կարգի, որ գիտականն է և հանճարեղ իմաստասէր քան զիս առաւել՝ի յամենայնի։ Եւ յամենայնի կեցցեն մեր անձինք ընդ քեզ. որպէս և քոյդ ոգի միացեալ ընդ մեզ[78] միշնորդաւ էութեան՝ի մի քրոյ ընտրութեանդ հալոցի, անբաժին տեսմամբ և անորիշ սրտիցս ընչով, և անայլայլակ խորհրդով, և անանջրպետ կամաք խարսխեալ, հաստատեալ և հիմնաւորեալ խորհրդով՝ի Քրիստոս՝ի որ մեր։ Որում փառք յաւիտեանս. Ամէն։

Արդ քանզի[79] անընդել գոլով տեսութիւն քաղձալի վայրիցդ և սրբոց խորանացդ, զթերին լրութեան և զպակասն ամենայն յարմարման գրութեդ աղերսեմ ընդհատել։ Եւ ինձ տառապելոյս օգնեա աղօթիւք, որ յարաժամ դեգերիմ յընթերնուն.[80] իսկ գործոյ և ոչ փոքր ինչ ժամանակ սահմանեալ որոշեմ։

## Ծանօթութիւն ի ներբող Աշտիշոյ։

1. Ի սոյն կարգ։ Զոյգ ժամանակաւ ընդ գովեասի սկզբ խաչին՝ յօ բինեալ և զգովեստ Տիրուհւոյն, որպէս ի Վահագնեան ցուցաւ, զհետ այնր կարգէ անընդհատ. իբր դիպուր խորհուրդ ունելով երկոցունցն, ըստ որում և ի Պատմութենէն ասաց. Համար ԺԵ. խաչն իբր ծառուցօղ Քրի, և Տիրուհին՝ որպէս ծնօղ։ Իակ թէ յինչ պատճառէ, յոյր ինդրոյ, և ընդ յօրինեցաւ այս գովեստ, ասացեալ է ամենայնն ի Վահագնեան։

2. Դասուց երջանիցն։ Ի նախաշաւիղ գովեստիս՝ կամեցեալ սկզբ վար դապետին խոստովանել զմեծ գժուարութիւն յանձնառեալ գործոյն, կազմէ զձեռնարկութենէ յորում կրկին ապացոյցք փակին, այսինքն ի նմանէ, և ի բաղդատութենէ։ Ընդ հրեշտակս և ընդ մարդ կշռելով զկարողութենէ գովասանելոյ զԱՅ և զԱծամայրն, ասէ նախ՝ թէ որպէս դասք հրեշտակաց չարաչարեցոյ անուն Աստուծոյ զմեծութենէ նո րա, զարմանալի են, փառաւորեալն ինա անգադար, սակայն արժանա պէս ըստ բնութենէն գովաբանել զԱծ անկարաման, այնպէս զնա Աճա ծինն ոչ ոք ի մարդկանէ պատուել կարող է արժանաւոր գովեսիս։ Կամ այսպէս. զոր օրինակ զԱծ հրեշտակք միայն կարող են պատուա բանել չափաւորապէ, նոյնպէս զնա Աճածինն նոքին հրեշտակք ևւեթ ու նին գովասանել չափով, և ոչ երկրածին ոք մարդ։ Երկրորդ, բաղդա տական մտաք, եթէ հրեշտակք ասէ՝ անմարմինք, գերազանցեալք քան զմարդ՝ հաղիւ ազօտաբար օրհնաբանեն զԱծ, ապա զնոյն ինքն զԱճա մայրն՝ որ զանհան Ած յինքն կրեաց, զնոյդ իշխեսցեն գովաբանել նոքին հրեշտակք, թող թէ մարդ երկրաւոր ևն. որպէս թէ առա ւել մեծ իցէ՝ արժանաւորապէս գովաբանել զԱծածինն՝ քան եթէ զԱծ։

Սակայն ըստ երկուց ևս եղանակացդ՝ դուցէ ապրակուսելի թուիցի հեռևուսին ձեռնարկութենէն. քանզի ըստ նմանութենէն խնայեալ, հաւա սարութենի իմն երևի դնել ընդ Ած և ընդ Աճածինն. իակ ըստ բաղդա տութենէն՝ առաւելութիւն ինչ ակնարկիցէ արդեօք յԱճածինն՝ քան յԱծ։

Այլ ուշ եդեալ կարգի բանիցն, ի յայտ գայ անօսր զօրութենի ձեռ նարկութենէն։ Քանզի զհրեշտակային ճանաչողութիւն որ առ Ած՝ ոչ բաւան դակապէս առնու նաև ըստ երանական տեսութենէն, այլ զայն որ յա րածոյն է, ի գործոյն ևս վերառեալ, որ և երեկոյեան կոչի յարձաբա նից. ըստ որում և ասէ. Պարձառ խոստովանութիւն հնարեն հասպելին՝ զհաս պոտածոյս առնան գոյութենէ։ Ապա զոր օրինակ ճանաչողութիւն Աստ ի գործոց կարի սաղև է քան զճանաչողութիւնն ըստ զնութենէ և երանական, նոյնպէս գովասանութենէն զհետ եկեալ այնմ երեկոյեան ճանաչման կա րի նուազ է քան զգովասանութենէն վայելչական ձոյսին հոգենէն։

Այլև զոր կոյսն զմսատ ածէ ասասնօր՝ ոչ իբր լոկ ստեղծուած՝ ըստ արարածական կատարելութենէն ևւեթ, այլ ըստ ձեռնարկութենէն գերազան ցութենէն, ասելով. Զոյն որ զանհան հրեղինաց ի հողեղէն յարէն պարտանա ղեաց։ Զմարմարանն անպէսին։ Զարարչին անհան պնօրենութեան զանգնին ծնօղ ևն։ Ապա ըստ ասացելոցս՝ ծայրք նմանութենէն կամ՝ բաղդատութեանն լինին Աճ՝ իբր արարիչ ոչնչի ի գործոյն ճանաչի, և ոչ Աստ՝ ըստ ո րում Աճածինն։ Եւ ըստ այսմիկ ուղիղ զօրէ ձեռնարկութենէն ի նման ութ, ասել թէ որպէս հրեշտակք երևելոցեան ճանաչմամբ իւրեանց չ հա

բեն արժանապէս ճանաչել և գովասանել զԵուքեին ետծայեին, այնպէս նոքին ճանաչմամբ չէն կարօղ ճանաչել արժանապէս և օրհնաբանել զԱծածնին. որովհետեւ յերկաքանչիւրն գլխաւոր նպատակ ճանաչմանն՝ է Աստուծոյ, և առ խնամալոյ Թէ զինչ է Աստուած, հարկ է խնամալ Թէ զինչ է Աստ:

Այնօրինակ ուղիղ ընթանալ ձեռնարկութեանս նաև ըստ բաղդատու-Թեան: Վասն զի եթէ հրեշտակք երեկոյեան ճանաչմամբն անհաս են յԵուքեին Աշ, և առաւել անհաս մնան առ Աստուածպաշտական խոկու-Թեին, յորում քաց ի ճանաչմանէ Եուքեին ոչ և Երրորդութեէ ետծայեին անճառիս՝ փակի և անհասանելի խորհրդ Մարդեղութեան. զի Աստուծին՝ խնամի Մայր բանին Աշ անբակասելի միաւորեցելոյ խակապէս ընդ մարդկայնութեամ բնութեէ. որ յանհունս տարակոյս է յետծութեէն: Եւ զի ծայրագոյն կրթք են այդ, ծայրագոյն և գՃանաչութիւն պահանջէ. և զի գործ է պարզաբար անբաւական սիրոյ և հաճոյիցն Աշ, նմին կրթ և ոչ յէական ճանաչմանն Աշ փակի ըստ ինքեան, այլ յառանձին յայտնութեէ խնամի ըստ ոչ կամեցոյն: Ապա ուրեմն առաւել կինչ գոյ խնամ-նաղ յԱստուծին կրթ այսպիսի, քան յԱստ կրթ արարիչ ծանաւցեալ և ըստ էութեէն երևեալ. և այնպէս եթէ հրեշտակք արարչական ճա-նաչմամբն ևեթ անկարասան զինքն Աշ գիտեալ և գովել, առաւել ևս զնոսկութեէ Աստուծոյ ճանաչել և գովել արժանապէս բաւական ոչ են: Եւ եթէ հրեշտակք անկարօղք յայդ են, այնուհետեւ մարդ հողեղէն ինչ կրթք կարօղ լինել:

Ապատիսի է համառօտ սեռաւէ նախաշաւիղ բանիցն. մինչև յայն՝ ուր խրախոյս առնու ասել. Բայց սակայն երջանիկ բանս որպես պերճանիկ և այլն:

Ի պարզաբանել մեր զմեծին սեղման՝ առաւել ևս ծանիցին ասա-ցեալքս: Համբերն Ժողովք ասէ՝ երանելեացն, որովք խնամոյ զնորին ասկս, որպ բացայայտէ զինի, պատուաբանին բէաբէղոն, բազմազան գովասանական բանիւք պսպղեալոյն, զաւաչելն ծագօղն կենաց ամենայն արարածոց, ևս և անդադարիչ և անշնչոյ՝ որոց կեալ համարի պահպան-նաեին ի գոլ իւրեանց: Զայն գովասանութեէ առնեն հրեշտակք՝ ոչ յօդաւոր բանիւք բարբառոյ, որպես մարդիկ, այլ ի միոջ բանից ըշխոյաչ նոսիչ, հիւսամամբ զանազան խնամալի ըղձմանց հոգւոյ կամ մտացն. և զոր օրինակ ղպայական սկսա և կիզք շարժին ի հնչմանէ փողոց, տաւտայ և քնարաց, նոյնպէս հրեշտակք յետծային ճանաչմանէն շարժին յերգեցութեն օրհնելոյ, և ցնծութեէ վերադրօաւպէն, գերագոյն օրինակաւ կամ ի վեր քան զնուբանցն կարգ փափաքեն գովել զԱծ. և պատճառ կամ նիւթ օրհնաբանելոյ զամենասուրբ սերութեին՝ առնուն զգոյութեէ կամ զե-զանութեէ արարածոց, սեռանելով ի չափաւոր կատարելութեէն նոցա զանչափ կատարելութեէ արարչին, զնմանատութեէն, զկարողութեէն, զգա-րութեէն, զնախախնամութեէն են: Զոր ցուցանէ և բանն ասացեալ առ Յովբ. (ԼԸ. 7.) * Յորժամ եղեն առաւօտք ծերք, ամենայն հրեշտակք առաւօտից օրհնէցին զնս մեծաձայն ||: ընդ եղանութեէ առաւօտից խնամի և բազմից արարածոց, զի ամենեքեան հետք են կատարելութեէն Աշ, և առնէք օրհնելոյ զնա:

3. Յոյժ անպէսպէս: Թէպէտ և հոգի անմիւթ են հրեշտակք, զօրէն հրոյ անօսր, կերպ ի սէրն Աշ, երագութիք մտօք և ի կատարել զանն նոյ, քնակութիք, որպես և քնութիք վերադրոյնք. անհղձակապ, ըստ որում անմարմնութիք են, ոչ ի հակառակաց բաղադրեալք. և նշոյլ երկրորդ, ի կարգի խնայականաց՝ երկրորդք զկին Աշ, ի նմանէ անընդմիջաբար լուսաւորեալք: Սակայն ի վերայ այսր ամենայնի՝ յոյժ աղօտ սեռաւէք

քեզին առ ամենաբարի բնութեի բանին ԱՅ յօրհնաբանելն զնա. ետծու-
թեին օրհնաբանեալ ի նոցանէ՝ կարի հեռաւորութեբ ծածկի ի նոցանէ
ըստ պայծառ Ճանաչմանն: Ահաւասիկ ըստ նախ ասացելոցն ի Լծ. 2.
խօսի տէրնս զՃանաչմանէ հրեշտակաց՝ որ վերացական ասի և ի գործոյն
ԱՅ, և ոչ ըստ երանակալին՝ որով դէմ յանդիման և պայծառ Ճա-
նաչեն զէութեին ետծոյին: Իսկ որդ՝ եթէ հրեշտակք այնչափ դերազան-
ցեալք քան զմարդ՝ անհաս են առ բնութեին ոյ վերացական Ճանաչմանբ
իւրեանց, որով և անբաւականք յարժանի գովութեի նորա, ապա ո՛վ
ոք ջնբ Աստծոյին՝ զպարտնէութիւն յարդանդի իւրում զանհասանելին
զայն՝ կարիցէ պատուել յարմարական երգով ի ճահ գովչաբից, վայելչա-
կան դովեսից ևն: Ջնա՝ ասեմ, որ առեալքն դիտեցուց վնէրակրէն
հրեշտակաց, զբանն Աջ՝ որ յապագեալ գիտութեբ ընու զմիտս հրեշ-
տակաց:

4. Ջճնմարտն ճգին: Սրտի զուարճանաց երկնից արքային. զի սրբ-
բանեալ արգանդ կուսին ոչ միայն մարմնաւոր եղև որդւոյն ոյ, այլև
տեղի հաստութեի: Ջհառնաբանն՝ Անօթ խառնուածեն կամ կազմուածեն
անմահական սեռանոյ մարմնոյ և արեան վրկչին: Ջնպատակն խոստովի:
Նախատիպ ետծահաճոյ և անլուծանելի կուսութեի է ոբ Տիրամայրն:
Ջօրէնսն երանութի: Ի ոբ կոյս տուաւ ապացոյց յաբխնեից երանու-
թեան՝ որ կատարի միանալոյն ԱՅ. զի յարգանդի նորա միաւորելով
ետծութեին ընդ մարդկային բնութեանն, ցուցաւ թէ հնար է և մարդոյ
միանալ ընդ Աստ յերանութե: Կամ, եղև նա օրինակ թէ ի՛նչ յաջողէ
երանութեանն ասացումն, այսինքն է՝ խոնարհութեամբ և մաքրու-
թեամբ: Ջհաբնաբանն: Աբ Տիրամայրն եղև տեղի հարմանալոյ կամ
միաւորելոյ Որդւոյն ոյ իբր փեսայ՝ ընդ մարդկութեանն իբր ընդ հար-
սին, և կամ՝ ընդ համօրէն եկեղեցւոյ: անթամանգիան, առանց ժա-
մանակի, առանց լուծանելոյ բնաւ միաւորութեանն՝ և ոչ մահուամբ,
ընդ հակառակն մարմնական փեսայութե՝ որ ի մեռանելն դադարէ:
Եւ ահա զայսքան գերագոյն շնորհաց ընդունայն, այս է՝ զարարչեն
անքննելի անօրէնութեէն ծնօղն, որ անհասութբեն ծածկեալ կայ յա-
մենեցունց, և ոչ նոքին օրհնաբանքն Աստծութե հրեշտակք՝ էշխեն ասէ
պատուաբանել որպէս արժանն է, թող թէ մարդ երկրաւոր ի կշիռս
բանից բերանոյ՝ եթէ ձայնիւս, եթէ գրով:

5. Մարդն անխոցել: Ըստ առաքելոյ (ես. կորն. բ. 15.) * Հոգևո-
րըն քննէ զամենայն, և ինքն յոչմէքէ ոչ քննի || Մարդն հոգևորն՝
կամ հոգևորեալ լուսով շնորհաց ոբ Հոգւոյն՝ ոչ է Ճանաչելի կամ
պատմելի ի շնչաւոր մարդոյ, ոչ ոք կարէ լծով խնամել և ծանուցանել
մարդկօրէն լուսով կամ զգայութբեն զլինելակ առն հոգեկրի: Ապա ո՛վ
ոք ի մարդկանէ կարիցէ մտօք զննել և չրթամբք Ճառել զնա՝ որ ոչ լոկ
շնորհօք յինքն ընկալաւ զնծ, այլ երօրէն գՂբոնէ բանին, խնա՛ ի Թանձ
լսողեան, զկատարեալ բանն Աստ յղացաւ մարմնովն յանգանդի: Ապա
է միւս ևս հզօր ձեռնարկութեի, բաղդատութբեն որպէս ասէ՝ ի փոքունէն
առ մեծն:

6. Յայս խորհուրդ: Հրեշտակք գիտեին ապաքէն ի յայսմնէութենէն
Աստ զմարգեղութեէն խորհուրդ, այլ ոչ ըստ ամենայն հանդամանաց,
զորս խնայեալ հետ զնեաւ յորժամ կատարեին ի վերայ եկեղեցւոյ,
հիանային ընդ անձառ մեծութեի խորհրդոյն: Ապ՝ եթէ նոքա հիաց-
մանբ սեռանեին զայս գործ ահեղ՝ թէ ի յայսմնէն Աստ, և թէ ի կա-
տարման իրացն, ապա ևս անհասանելի է այն ի մարդկանս պատմուէ:
Ապա է երրորդ ձեռնարկութեի, առեալ ի փոքուց իրացն. եթէ ասէ՝
հրեշտակք կարօտացան ուսանել հետ զնեաւ զայս խորհուրդ, և միշտ

*հիանան , եւս առաւել անիմաց և անձառելի է մարդկային բանից :*

7 • Սակայն երբեմնէ : Սակայն խրախոյս առնում երբեմն զդաւսանու-
*թեամ , ոչ հայհոյել ոչ յանբաւականութեանէ իմ , և ոչ յանարժանութեան .*
*ոչ եթէ զվայելչականն չափել գովեսս , այլ զպաշտանս սրտի մաստուց-*
*նել նմա՝ որչափ կարեմս , ընծայ օրհնութեան • յորում ոչ ամենութեան*
*իրացն խնդրի , քան թէ յօժարութեան կամացն : Խոստ պէսութիւն , ընծայ*
*ի յայտնութեան կամ ի ցոյց փառաց Աստուծոյ : Եւ յայդ համարձակիմ,*
*գիտելով զի և ըստ սովորութեան՝ երկիւղ եւ անկենդանէ՝ առանց լեզուոյ*
*պատմեն զփառս Աստ ընդարձակութեան իւրեանց և բարերարութեան սպա-*
*ծառութեան : Ջինչ մեծ՝ եթէ և բանաւորս ես երգեցից նուազ ձայնիւ*
*զփառս Տիրոջն :*

8 • Յանդրէն դոյզ : Աստ ոչ այնչափ զդարձն յեգիպտոսէ ակնարկէ՝
*քան որ ի դերութենէն բաբելոնի • զի զայս ցուցանեն բառքն՝ անդրէն , յե-*
*տիոսին , և փաթգբէլ , այսինքն գերեալ ի հայրենեաց , և անուն յոյ-*
*դոյ • յորոց անուն կոչեին դարձեալքն ի բաբելոնէ , և ոչ դարձեալքն*
*յեգիպտոսէ : Յայնմ դարձի ժողովրդեն տեսին զփառսն Աստ ի նո-*
*բահրաս տաճարին , և օրհնէցին զԱծ : Աստ ևս այժմ յերկեալ որդւոյն*
*ըզ մարմնաւորութենէ ի կուսէն , որով եղև դարձ գերութենէ հոգւոց ,*
*հարկ իսկ է զձայն ցնծութենէ հնչեցուցանել մեզ զդայականացս՝ կից ընդ*
*անմարմնոցն : Քանզի և երկիրս երկնից հաւասար եղև՝ զՏէրն յինքեան*
*կրեալ • վասն որոյ իրախոյս առնումք պարակից լինել մեք մարմնաւորքս*
*ընդ անմարմնոցն , և կատարել հոգևոր ցնծութենէ ոտնս տարեկանս՝ սակս*
*փայլման կամ երևման փրկչին , յերեքեւիս՝ պէսպէսից , առ մեզ երեւելիքս*
*կամ առ մարմնաւորքս , կամ երևելապար կատարելով զոտնս երեւելի*
*անօրհնութեց փրկչին , որք յաշխարհի գործեցան : Ի յիմնաւիսն՝ ծածկ-*
*նեցելոց • առ անմարմինն հրեշտակս , կամ անեւրևութեաբար ոտնս և օրհ-*
*նութիս առնելով ծածուկ խորհրդոց մարդեղութենէ : Կամ այսպէս •*
*մարմնով կատարելով ոտնս զգալի հանդիպից և օրհնութեց , և հոգւով*
*զծածկեալ խորհուրդսն քննելով : Աստ այսպէս ասա երկրաւորս եկեղեցի՝*
*հոգևոր տարփանաբ ձայնակցեալ ընդ երկնաւորացն , քեզ ով Աստուած՝*
*երգեցցուք այժմ ձայն սքեսաց , այսինքն օրհնաւաք , սրբութենէ և մաքուր*
*հոգւով ընծայեալ , հակառակ աշխարհական երգոց :*

9 • Ջի ինն մարճարեն : Ջմարմնացեալն ի քէն զԱրդին Աստ իակա-
*պես էութենէն և գոյացաբար տարար յանձուկ արգանդի քոյ , և ոչ լոկ*
*ընտիօք եւ նեստորի : Ջայն՝ զոր երկին և երկիր և ծով և անդունդք*
*տանել ոչ կարէին • զորմէ և յոյնք առակաբ ծանցոյց՝ առ ի զանեաւսուն*
*խնամոսութենէն Աստ , որ ի ինքն Արդին , հուշակելի առնել ասելով ի բե-*
*բանոց անդնդոց , թէ չունիմ զնա • և զայնէ , յի ի բերանոյ այլոյ կամ*
*ծովու , թէ չէ ընդ ինև : (Յոբ • իբ • 14 :) Արդար ձայնակից է և Յով*
*հանիէս ի յայտն • (ի • 11 •) թէ երկին և երկիր սասանմամբ փախեան*
*յերեսաց նորա :*

10 • Լեառն աբդահոսնակ : Դուն ես լեառն ոսկով , քարի՝ յորմէ հատու-
*ւէնն փոքրիկ , և եղեալ զերկիրս սերութենէ՝ յօրինակ ծնեցելոց ի քէն Քրի*
*Տն , որպես ցուցաս ի սեսեանն եղելոյ առ Նաբուգոդոնոսոր , զոր մեկ*
*նեալ դանիէլ մարգարէ : (իբ • 35 • 44 :)*

11 • Աւգ արէեսակիբէն : Աստ ասի առաջին ժամին՝ յորում երեսք
*երկնից լուծանան , և սկսանի ծագումն արեւու • որպ և որբ կոչին՝ սկիզբն*
*ծագմանն Քրի յերկիր :*

12 • Հաբան սբէոսհի : Սբ կոչին միօրինակ կոչն հարան՝ եթէ Հօր ես ,
*եթէ Հոգւոյն սրբ • նմանապես գուսարս ասի երկոցունս ևս • զի երկա-*
*քանչիւր կոչումն առ Ած նոյն է , ի ընդհանս ունելով զպատճառ կոչ-*

մանն. վասն ղև հոգի հաւատացեալ ըստ որում արքարար ընդհօքն լինի հաղորդակից բնութեն Աշ, ասի գուսար կամ որդի. և ըստ որում սիրոնէն և խոստմամբ միաւորեալ ընդ Աշ, կոչի հարսն: Աչյպես ա՝ մինայն հաւատացեալք կի եկեղեցի անուանեալ են առ Աշ և ուսար կամ գուսար, և հարսն, ըստ առաքելոյ. (ը. կորն. ը. 17. 18: ժո. 2: Եփես. ե. 25: Յայտն. ժը. 7. 8. 9. ին. 2. 9:) Եւ ըստ անդրադարձութեն Աշ կամ ոը երրորդութեին բոլոր ասի առ արդարն և Հայր, և փեսայ. ղև պատճառք կոչմանն՝ ընդհօք և սէր՝ նոյն է յերկին անձինս ևս: Եւ զինչ այլ, նա ինքն ոը Կոյան՝ որ ըստ մարմնոյ ծննդեանն է ճշմարիտ մայր Որդւոյն միածնի, ըստ ընդհայնն՝ է և ասի Գուսար և Հարսն Որդւոյն:

13. Բնաւորութ արթանաւոր: Խոնարհութեն կամ նուաստանալոյ բանին Աշ արժանի բնակարան է ոը Կոյան, ոչ եթե ըստ հաւատարութե՝ ուր անբաս արժանիք պահանջին առ աստիճան Աշանայրութե. այլ չափով ըստ հաւնմատութե, և բաղդատելով առ այլս, զի ոչ ոք ի կանանց երկրս զքը կոյան գտաս արժանաւոր: Եւ գարձեալ, արժանաւոր ասէ՝ առ խոնարհութեն բանին. երկրս զի այն ծայրագոյն խոնարհութեն կատարեցաս ի յոյժ խոնարհ կոյան, ըստ բանին, ես յո՞ հանդիսայց՝ եթե ոչ ի հեզս և ի խոնարհս:

14. Տնեսաղարն մարիոյ: Մարիննայն՝ որ ածեցական է երկրս առնուկ, յորում անգամք և հեզք՝ են որպէս ասաք և սաղարթ կի աերև: Աչյն մարմին ասի ածուինն, այսինքն Աշ վասն միաւորութեն չանձն բանն: Կի, մարթ է առնուլ ուրոյն՝ ի միջին զի խմնալով. յր մարմնոյն և ածութեն խառնարան, միաւորիչ, յօգտարան երկոցունցն: Խաղաթան. տեղի յորում կատարեցաս օծումն մարդկութեն՝ միաւորմամբ ածութեն՝ յորմէ և Քր անուն եդաս:

15. Աննէրէ լրախնուինք: Զայս մարթ է յարել կամ առ ծնանիլն. այսինքն նախ քան զծնանել բանին կատարեալ լուծեք ածութեն. և կի առ պահինն. այսինքն պահեալ էիր լի ամենայն կատարելութե սրբութե, կամ անբծութե՝ հոգւոյ և մարմնոյ: Ի հրեշտակական թեւոցն ասէ՝ պահպանեալ էիր, երկրս զսպականակ ոսխոյն՝ վերածածկեալ ի քերով բեից. և այս՝ յառաջ քան զմարմնանալ ի քէն Աշ բանին: Ո՛չ առ ասանոյ կարէր արասել զհոգիդ, ոչ մարդ՝ զմարմինդ. մինչ զի գուս միայն յամենայն մարդկանէ ի քեզ յանկուցեր զնաձուեթի երրեակ Աձուեն՝ հրաշագործել ի քեզ զանբնեղի զմորհուրդն ևն:

16. Յօգտաւոր մարեով: Կա ինքն Որդի՝ որ էին անժամանակ, մարմնոյն կազմեցեալ ի մասանց ծնաս ի քէն ժամանակաս: Բայց ակիզբն ունի, ըստ գոլոյ էութեն կամ ըստ անձինն սկիզբն ունի զԱշ հայր յառաջ քան զարուսեակ, այս է՝ ի յաւիտենից, նախ քան զամենայն ժամանակ: Կամ, ըստ խորհրդոյ մարգեղութեն առգի սկիզբն ունել. այսինքն թէպէտ ի ժամանակի կատարեցաս այն, բայց նախ քան զարուսեակ սահմանեալ էր: Աւասի նա ինքն Որդին՝ խրով գիտութե և սահմանելով և ներգործելով զյօգտաւոր մարմինն ինձ, այսինքն անհատ, եղեալ կան՝ խառնեաց կամ միաւորեաց անբաժանելի ընդ իւրում ածութեն: Զմիակ կամ զանհատ մարմինն ասէ՝ միաւորեալ, ընդդէմ ոմանց թիւրելոց որք համարին զընդհանուր մարդկութեն առեալ որդւոյն ասց, առ ի զգալոն փրկելոյ:

17. Աբահամեանց զհոռոմն: Իբրև ծնեալ ի Մարիամայ յայդէ գաթե, սեպհականեաց՝ լինքն ասացաւ զաթոռ գաւթե՝ ոչ ըստ մարմնաւոր աշխարհական ակնկալութե, զի ոչ այնպէս սիրեաց Գաւիթ զոր աշխարհի, այլ ըստ երկնաւոր իշխանութե՝ որում օրինակ էր գա-

դաւորութիւն Դաւթի. և այս է Թագաւորէն Քրիստոսի վերայ ամենայն հաւատացելոց. որոց առաջնորդեաց ի տաճարն երկնից, որ ի վերայ կամ կազմեալ նոցա ոտ Ճանապարհի, այսինքն ուղղ կամ շաւիղ իբր կամուրջ ընդ խաչն. որ և նմին Քրիստոսի եղև մուտք ի փառս Թագաւորութեան իւրոյ: Ի տապգիրս ինչ դնի վերնակաւ ոտիւք Ճանապարհի: Ա յսու օրինակ կաւ զնորան ադամեան մարմնոյն՝ զկործանեալն ի մահ և յապականութեան, նորոգեաց և կանգնեաց յանձն իւր, ըստ ոմանցն խոստացելոյ ի Քրիստոս * Յետ այսորիկ դարձայց և շինեցից || ևն: ( Գործ. ԺԵ. 16:)

18. Էրին խնկարան: Դու իբրև բուրեալ ոյ՝ փոխանակ խնկոց անուշ հնոյ զանհամեմատ սրբութեան բուրեցեր ի հաճոյս նորա: Վարուք ի մանկութեանդ ընդ ամենայն ընդհանուր ընդ պարգեւաց լցեալ. հեղուիք աբ յանդիսանալ, ամբացեալ անշարժելի յամենայն յուզմանց կրից. առաքինութիք, արիութիք սրտի կատարեալ անմեղկելի. փաղչրուիք ի գիթալ և յողորմել յորդ և զեղուն:

19. Յորդոյն էս խնամոյ: Քրիստոս հրաշափառ վերացման յերկինս՝ ոչ պէտք էին հրեշտակաց. անկ էր այն խնամոյ միակ Որդւոյդ Քրիստ. նա հոգացաւ, ամբարձ զքեզ ի վերին դաւաթն երկնից լուսոպէս, պայծառ և արագընթաց իբրև զոյս. և դու Թևօք ՌՆՆուսիք հոգւոյն, Թևնիւ ընթացիք որ ի հոգւոյն սիրդ, կամ ձրիւք Թևնիւսիքն որ ի քուսիկ փառաւորեալ հոգւոյ զեղեալ ի մարմինդ. կամ, իբրև Թևնիւսիքն հոգևորաւ սլացեալ երեր ի հանգիստ խնամոյն օրհնեանցն: Ա նդ զնայեալ մնաս աներեւոյթ բարեացն՝ յորս ոչ միտք հասանէն, ոչ զգայութիք կալցեն նկատել, ըստ բանին * Զոր ակն ոչ եսաս || ևն. (ա. կոր. Բ. 9:) դու զնոյնս անչնոպէս հոգիագիրնես. անընդհատ, դեմ յանդիման ի քեզ ընկալեալ. կիր անչ փոխանակ մարմնոյ առեալ, խնամի՝ նաև մարմնոյդ, որպէս և հոգւով ընկալար. և այնպէս ընկալար, մինչև զբովանդակ լուսիքն փառացն Ա յ քեզ իբրև սեպհական ժառանգեցեր. զի որպէս Ա ծամայր փառաւորեցար, որում յատուկ են փառք Ա ծորդւոյն:

20. Մ ոտուրդ ֆայլոճ: Ա ննուազ և միշտ անաղօտ նշոյլ ես ոճծայնին լուսոյն. որով և երջ արարչին ոտոտիսնուիք, որպէս նշոյլ արևուս ունի ամենայն արեգակնայինն՝ զլերմանալն, զերագուծալն, զիմաստնացումն ևն. նոյնպէս և դու զոճծայնիսն՝ զսրբուծալն, զգիտուծալն, և առանձինն զանհամեմատ կուսուծալն ընդ անհամեմատ ծնողուէ, որ սեպհական է Ա յ Հօր: Կամ, ոտոտիսնուիք արարչէն՝ մարդ է խնամեալ ոստ զանապատելէն սրբուծալն՝ որ յատուկ Ա յ է. այսպէս և ի նէ Կոյսն եղև անապատելի սրբուծալն շնորհաց, միշտ մաքուր, յար պայծառափայլ ի յղուծէն մինչև յերանելն երկնից. ի նմա շնորհքն միացան ընդ փառաց: Սակս այսու մաքրուծեն՝ զանձելի արուեստիս խնամատուծեն Ա յ զնեծ ոք դասիս կամ զգործ փառատոր ընդ ֆոտոտ յեղանակիցեր ասէ, այսինքն փոխանակիցեր. փոխանակ նոտալ երկրատոր մարդուծեն՝ զԱ ծամայրուն ընկալար. փոխանակ մարդ որդւոյ՝ զԱ ծորդին ոստոգար: Կամ, փոխանակ փոքր կուսուծեն մարմնոյդ՝ զերկրպագն ծնողուծեն ընկալար. որով եղեալ մայր Ա ծնարիս՝ որդի գգուեցեր քեզ զնոնուկ առանց հօր մարդ կայնոյ, ի գիրկս քարձեալ, և ի համբոյր շրնծանց ողջագուրեալ զանչ պատագրելին Ա ծ ի քէն մարդացաւն: Եւ քոյով միկնորգուք եղբայր մեզ զԱրդին Ա յ և ժառանգակից, գթած, ի վեր քան զանկատուծեն ունել, և զԱ ծ աբբա հայր ոտոյնել, կարգալ համարձակ: Ա բբա հայր, ոչ խնամի իրրև երկու այլ և այլ բառ, այլ մի է, հայր՝ Թարգմանուծեն գողով եբրայականին աբբա: Լուսոյ զգուշալն է խնամոյ՝ մեծ հայր կամ պատ. որպէս Թէ Ա ծ հայր գոլով Հայր Քրիստ, առ մեզ լինիցի մեծ

հայր կամ պապ: Օտար է այդպիսի նշանակուել և անյարմար՝ ոչ միայն ըստ բառին, այլև ըստ պատշաճ վարդապետութեան. ապա թէ ոչ ըստ այդմ հաւատացեալքն առելի էին Թոմային քան Աւետ հօր. և ինքն Քրիստոս ոչ եդեալ խոկով՝ միով անուամբ Հայր ասաց իւր և մեզ զՀայրն Աստ: (Յոհան. ի. 17:) Աւելի ազօթելովն ի պարտիզին՝ գրեթէ Մարկոս ասացեալ, *Աբբա հայր, ամենայն ինչ քեզ հնարաւոր է || : (Ժէ. 36:)

21· Ի ընդհանուր անէնից: Մաքուր լեզուաց և ըստ ընդհանուց միայն վայել է տալ քեզ երանի, իբրև զեռայեան՝ որ երկնաւոր կայծակամբ ընտրեալ պրեկաւ. (Եսայ. ը. 6. 7.) որ և զքեզ գուշակեաց ծաղիւիւ յեռեայ, ի տանէն Յեսսեայ շառաւիղեալ, և բերոյ պտղոյն կենաց՝ զՔրիստ: Վերագոյն (համար ի.) զՔրիստ օրհնակաց ի ծառիկ ծնեալ ի հայրական ծոցոյ, և այլոր ևս նոյնպէս Քեռի առեալ է յօրինակ՝ իբր յղացեալ յարգանդէ կուսին: Որ ի երուսէ: Մարմնով ի ջրից տարերաց կազմեալ իբրու զմեզ, անհաղորդ բնաւ մեռացեր ախտից առհասարակ հոգածնելոցս, ոչ եղեն ի քեզ բնակիչք համապետք կարիք, ախտք կամ կիրք բնականք, ընդաբոյսք, ի ծնէ ընդ մեզ գոյացեալք, այլ մարմնով իբրև քերթուած վարեցար՝ հրաւիրեալ, լցեալ լուսով. վասն որոյ և արիւնն վերին՝ տեղի անմատչելի մարմնաւորաց, եղև քեզ սեպհական:

22· Դիտաւորընդդէմ դասպիտական: Խաչն, կամ վշտամբերութիւնն վասն Աւետ, որ մեզ ախտաւորացս կարեւոր տուաւ ի դատախտակութիւն կամ ի վարժուն ծածկաշուութիւն, (ըստ ասացելոյն ի Գաւ. Խաչին. համաստ խե.) քեզ և վիճակեցաւ անախտ կուսիդ, ոչ ի կրթուութիւն վարուց, այլ ի կցորդակցուութիւն վշտաց ծնեալդ ի քէն Տն և փրկչէն. նա՝ իբրև գառն պատարագեալ արեամբ, և դու իբրև որոջ հոգեւանջ կրակ ծանօք ի սեղան մկրտենի սիրոյդ կենդանուբ խարուկեալ ևն: Ընդպատճառ բացախոսուութիւն այսր հաւատածոյ ուղիս գառնել ի կատարած ծանօթութեանց ներբողենիս:

23· Բան բեղնաւորէդբ: Բան աստուածօր մարթ է առնուլ եթէ զբանն Աւետ՝ զՈրդին, և եթէ անորոշ զբանական ծնունդ կամ արգիւնս, քեզ նաւորեալ յանաբոյ արգանդ, այսինքն ոչ մշակեալ մարդկային ներգործութեամբ: Եւ յաջորդն, արմատ օրհնութեան, որդի բերկրութեան. պատշաճի և սէր կուսին, և քեզ, եթէ զնա իմանայցեմք բառիւն բան:

24· Յօրինս երկայինս: Զերկինայինն Աւետ զորդին՝ զգեցուցանելով կրաման մարմնով, ներքոյ արկեր զնա սովորութեան երկրաւոր պետականց կրից՝ քաղցի, ծարաւոյ, քնոյ, խոնջման, անդեամն, աճմանն, ցաւակրութեան, և այլոց բնաւոր անպարապաւելի կրից: Եւ զանձանձն. զնա որ ոչ միայն ծածուածք անմահն էր, այլև ըստ ունակութեան կրից՝ ոչ էր ա մենայնիւ նման նմանակիր մարդկանն. զի այլոցն ախտից է կրելն և ի հարկէ, իսկ Քրիստ կամաւ, ուստի զնմանին մարդկան բնութեան մարմնոյն և ունակութեան կրից, բայց զանձնանին ըստ բանագաւութեան և ըստ անդամելի չարժմանց, դու իբրև տունկ վայելուչ ի լերանէ գրահանին ածեցուցեալ ի չուի հաստակի մեզ պարգեւեցեր. որով զպատիկը, զնմանութեան անմեղութեան նախահօրն ի քէն նորոգեալ ստացաք ի Քրիստ, այնուզի յառաջ չէ մեզուցեալ անբնագատաս էին բնաւոր կիրք քաղցոյ, ծարաւոյ, քնոյ են:

25· Լռաւոյ ածականաս: Լռյար բովանդակ լուսոյ ոչ զգալեաւ, որպէս սահմանն սողոմոնի փառաքն Աւետ, այլ բուն ածական լուսոյն՝ որ ի Հօրէն լուսոյ. և զնա ի քեզ կրելով, աբէգաինաղես, նման արեգական փառաձեռս ընթացար առ արուսեակին Յովհաննէս, առ ամպածին որդի՝ յղացեալն յամենայն եղելոսաբեմէ. որ զեռ յարգանդին գոլով եթող զքեզ

բան պատուէրէ մըն, և ետ նմա բարեաւէտ ղօրհնէսլն ի կանոյս։ Ասն ղն Հոգին Ըբ որպէս զմայրն ելից, նոյնպէս զմանուկն յորովայնի նորա ցնծութ[ե]ամբ. և նա՝ որ լինելոց էր ձայն բարեաւետ Քրի, ապար ղե մայրն լինելոյն ենթեան և ձայն, և բերան։ Ասլև դու Տէրոանոյր, գո ՀուԹ[ե] Աէծացուսցէին՝ լցուցեր զառունն Ջաքարիայ, յօրինակ հանրականն, որով զառուն ցուցեր իբրև օրինակ հանրական եկեղեցւոյ։ Կամ, օրհ նուԹ[ե]դ էառուր, ուսուցեր զօրինակ՝ որով հանրական եկեղեցի օրհնիցէ զԱ[ծ] զմեծարան քո, և քեզ տայցէ զբանին. որպէս և առնեն ամե նայն ազգք հաւատացելոց՝ ըստ քումդ դաւանութ[ե]ն, այսինքն յայտարա լուԹ[ե]ն՝ որ ազգեցեալ ՀԱՀ։ Սկբնաբար, առաջին պահօղ մաքրուե կուսից. կամ նախասիրդ անարատ կուսանաց, բարեբանեալ միշտ ո[չ] միայն ի մարդկային ազգէ, այլև ի էնդռս ղրնանդ զուարԹնոց հրեշտա կաց։ Որպէս ԹԷ ոչ շաւացեալ էրանելոցս Գրիգորի՝ լեզուօք և շբր Թամբք առ հաւատակ մարդկան, զնոյնս և ի հրեշտական առեղծանէ, զնմանալն զնոցա ըղձիցն շարժմունս այլաբանելով։

26. Ջի էնն մաբինն։ Եկեղեցի կամ ժողով դասուց հրեշտակաց՝ զառ ի քէն ծնեալ մարմնին կամ զմարդկային բնուԹ[ե]ն՝ որ անանձնա ւոելն, անբաժանելի է ի Բանէն ԱՀ, կամ յանձնէ որդւոյն, փառա ւորէ երկրպրեան օրհնուԹ[ե]ամբ, որպէս համաչափիս Հօր ԱՀ։ Վասն զի ի փառաւորելն ընդ Հօր նաև զՈրդի՝ ո[չ] է բաժանեալ ի նմանէ մարդկութ[ե]ն. ուստի և այս փառաւորի ՀՈրդին՝ ո[չ] վասն իւր, այլ վասն միաւորեցելոյ բանին։ Զայս ահաւոր խորհուրդ մերձաւոր գոլով և դու Տէրոանոյր, ոմ քանի անձառելի է ուրախութ[ե]ն յոր վայելես՝ որ պէս Մայր այնպիսւոմ փառաւորեցելոյ։

27. Ի բացոսպ աֆաբինն։ Հրեշտակք իւրեանց Ճանաչմամբն՝ եԹէ բնականաս, եԹէ երանականաս՝ որպէս ի հետասանէ նկատեն զնմին ԱՀ, ձձայնն էուԹ[ե]ն հասու լինել ոչ կարեն. զոր և օրինակին նոքա ի տեսլեան էսայեայ. (իզ 2.) երկու Թևօք ծածկելով զերեսս իւրեանց։ Եւ ահա այնմ դու ընտանեբար կաՀն եառւր. և որպէս մանուկ ընկալ լոյ ի գիրկս քո ՀՀնասոյր. որ իշ ձծուԹ[ե]ն օրինակեցաս ի ծեր հնացեալ սակս նախայաւիտեան գոլոյն։ Ասյսպէս հինասւոյց կոչեցաս Ա[ծ] առակաս ի տեսլեան Դանիէլի, և երանելիս Գրիգոր ընծայե որդ ւոյ՝ վասն ընդհանուր բանի ձծուԹ[ե]ն, ԹԷպէտև ի տեսլեան անդ կոչն Որդի մարդոյ։ (Դան. իզ. 9. 13։)

28. Ո՛չ ընդ էնդ ֆայն։ Եղեր դու կառք հոգւոյ Որդւոյն՝ բազմելոյ ի քերովբէս. բայց այնպէս՝ զի ոչ միայն եղև նա ընդ քեզ իբրև մեր ձաւոր կամ օգնական կամ բարեկամ, այլև ի էնդ, ծննդեամբ իբրև որդի, սիրով իբրև փեսայ, հնորհօք իբրև Ա[ծ]։ Ոչ միայն ֆաբէցաս, ի պիրկս ընկալեալ, ի ծոնկս բազմեալ գգուանօք, այլև բնաՀէցաս, յարգանդդ ենտանեալ իբրև ի տաղաւարի օԹևանեալ։ Ոչ միայն միա ցաս ի պանգուանդ մարմոյ. զԹանձր մարմնի ևԹե ընկալեալ, այլև ֆարշա ցաս, առեալ նաև զՀոգի բանական, որով լինի մարդ կատարեալ, հա կառակ ապոլինարեայց ազանդոյն՝ որք ասէին՝ զմարմին անՀոգի առեալ Քրի. և այն է կերպարան ի էնն ախնէլոյ, բնուԹ[ե]ն մարդկային ի քէն սկսեալ ծննդեամբն. կամ, կերպարան անՀատ մարդոյ ի քէն սկսելոյ։ Ոչ միայն մի զօրեցաս կամ շաղկապեցաս Քրի յերկոսս գոյուԹ[ե]ս. այսինքն յաձուԹ[ե]ն և ի բանական Հոգւոյն, այլև ֆարշոյն վերբերուածս, ապաս քին Թանձր տեսակ մարմնոյն՝ Համայն զգայուԹ[ե]ք և անդամօք ընկնէ ցաս, ի ներքուստ սերտ միաւորեցաս, խառնս գրաւեցաս՝ որպէս ընկերզ մեան ի ջուրս, յանապական յանօսր էուԹ[ե]ն ձծուԹ[ե]ն։ Զայս բան յա ւելուս, զի մի կարծեսցի ԹԷ ձծուԹ[ե]ն այնպէս միաւորեցաս ընդ բանա

կան հոգւոյն՝ ընդ անհիւթի և խնամալի բնութեանն, որպէս թէ նիւ թական մանն մարմինն՝ զատուցեալ ինոյ, այլ զի և այն խակապէս միա ւորեցաւ: Ընդհակառակն ոչ կարէ զչիմնաւորութիւն նշանակել. զի ոչ միայն առ սեղեաւս խակ անչափնելի ասէ զմիաւորութիւնն, այլև բառքն անապական, անօսր, ի բաց տանին զամենայն կարծիս չիմնաւորութեան. զի մարմին յօդաւոր՝ թանձրամիս՝ զնաւոդ փոփոխիլի յանհիւթի և յանեղծ բնութիւն. ապա թէ ոչ՝ ոչ միւն անեղծ ինոյ, և ոչ միւսն մարմին: Ի բացատրութիւն այ սոցիկ կնքէ. ոչ միայն ասէ՝ մէնորդաս անչինն, այսինքն միշնորդութիւն բա նական հոգւոյն՝ միաւորեցաւ ընդ հողոյ, ընդ հողեղէն մարմնոյն, դիմակ փեսաւօք, իւրաքանչիւր յատուկ սեռակօք, պահելով զիւրաքանչիւր յատկութիւս, այլ երաժան խառնեալ էութիւք. այսինքն երկուակ որոշ էա կութիւք կամ իրօք շաղկապեալ միաւորեցաւ առանց շփոթման կամ այլայլութեան, այսինքն ձեռնութիւն, հոգւով և մարմնով միացեալ, մի որ դի պատուեցաւ ընդալմէ Հօր՝ հանդերձ մերով կատարեալ բնութիւն: Զանազան հատուածովքդ զգուշացաւ ՚ի վարդապետն մի այնպէս կարծել թէ Աստուն ոչ առեալ էրկի կամ զմարմին սուկ, կամ զհոգի լոկ, և կամ զերկուսան էս՝ բայց ուրոյն և որիշ յիրերաց, որպէս յայլ և այլ մարդ ասի միանալ Աստ, և ոչ զի զմարմին ասի առեալ միշնորդաս հոգւոյն՝ կարծիցի թէ միշնորդաբար եւեթ էրկ ըստ նմա միաւորեալ, այլ թէ յերկոյն էս անընդմիջապար եղև բաղկացուած Քրիստոսի անձին: Տես և գլխի. համար ԺԷ:

29. Զանդամանան էութիւն: Էութիւն իմանի ասա ՚ի Թանձրացեալն, քր էն, էակ: Երանելոյն ասէ՝ զքեզ զծնօղդ անժամանակ էին. որ պամենայ նի, զպատկառելն՝ զմատուցօրէսն հոգւոյդ երկոփք յաւիտենից գործս, յաւիտենից ժամանակի, յաւիտենից տեղիս, և ամենեցունց, յաւիտենից բա նաւորաց՝ ՚ի հրեշտակաց և ՚ի մարդկանէ, ընկալար ՚ի քեզ. ոչ ՚ի ժամանէ, ոչ եթէ զմանն ինչ մարմնոյն տալով նմա, որպէս ազատիլ կոյն յեւոյ, այլ ՚ի էրոութիւն, զորոյ մարմինն կատարեալ: Ո՛չ հապճամբ, ոչ եթէ մանն մանն առ սակաւ սակաւ ձեւացուցանելով, այլ հապճապուութիւն, այլ բուն ծնողական օրինօք կազմելով: Կամ, ոչ հատուածբ, առժամանակ մի կցորդեալ ընդ ՚ձծուածն, և յետոյ անկատեալ, այլ հատատուն մշտնջենաւոր առմամբ: Ո՛չ բաժանաբաբ, բաժանելով ընդ հայր և ընդ մայր, այլ ամբողջապէս, զամբողջ մարմինն ՚ի քէն միայնոյ կազմելով: Կամ, ոչ բաժանաբար զմարմինն միայն ՚ի քեզ կրելով. այլ զբեզ ամբողջ Աստ և Մարդ կատարեալ: Ո՛չ փոխանամբ, փոփոխելով ՚ձծուածն և կի մարդ կութիւն, այլ փոխապրութիւն, փոփոխակի տալով միմեանց զյատուկս իրե բաց ըստ միաւորութեան կամ ՚ի Թանձրացեալն. որպէս զի ասել Աստ է մարդն, Մարդն է Աստ. Աստնահն մահկանացու, մահկանացուն կեն դանարար ևն: Ո՛չ ՚ի ծերս, ընկալար զնա ՚ի քեզ ոչ լոկ իբրև առիթ փեալ սահմանեալ յանձուկ տալի անդ, այլ իբրև ՚ի սեռեկի նմանապէր ոգոյ, յընդարձակութեան ոգւոյդ. ոչ լոկ մարմնապես յղանալով զնա յարգանդիդ, այլև հոգեպես ՚ի սրտի առանելով. նա եղև քեզ ծնունդ և արգանդ, և սիրոյ. հաւատալովդ ծնար զնա, և նա ինքն իւրով հա ճելոյն ծնաւ ՚ի քէն. ուստի մինչև նորա ՚ի լոյս եկեալ, և մինչև քո զնա դիեցուցեալ կաթամբ, խանգակաւ էիք առ միմեանս սիրով:

30. Այլև ըմբռնեալ: Ո՛չ սոսկ համբուրիւ խանդաղատեցար յանհալելին ըմբռանդ, զոր օտարք ևս կարէին առնել, այլև իբր զո յատուկ սուա ցուած՝ ըմբռնեալ առ քեզ ոնկերը: Ո՛չ գնդա զնեալ, ձեռամբ շօշա փելով ՚ի պատերն, ՚ի հանգուցանելն, ՚ի զգեցուցանելն զհատուրաքաղն խո բան, զքահանան մարմինն՝ որ կազմեալ էր ՚ի նմանութիւնն հատատակաց մարմնոց մարդկան. զայն՝ զոր և գայեակք առնեն ծառայաբար, այլև

անուանէալ, մայրական իշխանութիւնն զԲՆԱՆ ԱՅ անուանեցեր Յիսուս. Որպէսզի ոչ նոր անուն եդեր զնովիկն, որ սիրական իշխանութեան է նշանակ, և հրամայողն. և ոչ ԱՅ է սեպհական անուն կոչել Ծառայից իւրոց, զոր ի նոյն ինքն ՅԱԾորդին արարեր զայն: Զանգամանաւ նային ըսա ասուբց: Ըստ ձեռնարէն խնամի սովորաբար անժամանակն. բայց աստանօր մարթ է առնուլ և ըստ մարմնոյն. իբրև թէ՝ զայն որ ժամանակի ոչ կարօտեր՝ թուով աւուրց մնանել և աձել, այլ կարօղ էր ի վեր քան զժամանակ առնուլ զկատարելութեան հասակի, որպէս ՅԱԴամ ա բոր և ՅԵսայ, զայն ասեմ առեալք դիեցուցեր մնուցեր, և առ սա կաւ սակաւ յաձուսն ընծայեցեր:

31. Զոր խոպովանի: Կրկնակի մարթ է ընթեռնուլ զբանս: Մի, զբառան ՅԱ՝ ձգնաբէպ խնամալով ուղղական ինդիր այսպէս: Հանրական եկեղեցի զծնեալդ ի քէն խոստովանի ՅԱ՝ զՔրիստոս: և ըստ այսմ նախեղակ ոչ խնամի նախ եղեալ, այլ՝ նախ քան զեղերլութիւն, այն որ նախ է քան զեղեալքս, որ է անժամանակ: Երկրորդ, զնոյն բառան առնուլ հայցական ինդիր այսպէս: Հանրական եկեղեցի զծնեալդ ի քէն զՅԱծն ՅՀրիստոս՝ խոստովանի ընդ նախեղակ գոյին ի ծագել, այսինքն խոստովանի միաւորեալ ընդ նախասահեղծ ազատային բնութեան կամ, ընդ հողեղէն գոյացութեան որ նախածին եւս ասի: (Գով. Աստ. Համար ԺԲ:) Ըստ երկաքանչիւր ընթերցուածոյ եւս յորմարին բանիւն. և ամենայնին ծածկեալ և անհաս ի մերմէ քննութենէ. այլ հաւատով միայն դասանեալ յընդհանրական եկեղեցւոյ: Որում փոքր ապացոյց տուաւ ի Յակոբ նահապետ, յորժամ ընդ հրեշտակին մարտուցեալ, սլինգ կալաւ զնա, և զաղանի խորհրդով կոչեցաւ Իսրայէլ, այսինքն ՅԱծապէս, և յաղթող գտաւ եաւոյ: Ղոյնպէս և ի էն ծնեալ մարմին, կամ մարդն՝ ընդ ԱՅ խառնեցաւ սերտ ներքին միաւորութեամբ, և ոչ լոկ արտաքին ըմբռնմամբ. և նովին մարմնով յաղթող եղեալ ատտա նային, ոչ սխուակաբար տեսող ՅԱ, այլ իսկապէս ԱՅ անուանեցաւ ինքն, և զամենեսեան զհաւատացեալս իւր ՅԱծառեսս արար և կոչեաց, նոր Իսրայէլ ի Քրիստոս:

32. Որոյ՝ պէսլոնէն ՅԱ: Շարադրութեան պարզելի է: Որոյ նախագիծ՝ գուցաբ սեսչութեան ՅԱ: Սրբոյ կուսիդ նախանկար օրինակ կամ պատկեր գուցաբ նախանշանմանութեամբն ՅԱ՝ նաև ի բնական նիւթքս, այն է՝ ի ծովէ մարդարէին, ապիպակ ըստ գունով՝ յարացոյց սրբութեանն, և հրաֆայէլ, կարմրանիւ փայլեալ ի շող արեւուս: Ասյպէս և գուն ի յաչխարհիս ծովէ ընտրեալ ի ծով արեւուս՝ ի բովանդակ տարածութենէ աշխարհի կին ազգի մարդկան ընտրեալ երևեցար ամենիս ամն՝ ընդունակ ՅԱծային հրոյն:

33. Աստածպ մարգարէին. Փոխանունուն է առածպ ասել փոխանակ խօսողաց զառածան: Եթէ մարգարէքն առածիւք կամ պատգամօքն իւրեանց իբր հոգևոր յղացմամբ կոչեցան ծնօղք կամ հարք Իսրայէլի, քեզ զո՞ր անուն վայելչական չունիցիմք ընծայել, որ զբուն զանՀնատուր բանին ԱՅ՝ զհամագոյակիցն հօր ԱՅ, մարթասպէս, մարմնով ծնեալ յարգանդ քոյ ցուցեր, յայտնեցեր: Մարգարէքն զբան հրամանացն ՅԱ, կամ զնորհրդոց յայտնութենէ միայն ընկալեալք յոգւոյ Իսրայէլ առածս ՅԱն. որով ոչ միայն հաւատացելոց լսողաց եղեր ծնօղ, այլև նմին իսկ խօսեցելոյ բանին: Որ ընդհաշուք քոյոյ գեղջդ, որ յանմաթոյն, յաձային գեղեցկութենէն ի քեզ ծաւալեալ: Որ հեզութեդ, և անբծու-

թեզ, և համայն երկնային պարգևացն, որով ի դլուխ քո պակ փա-
ռաց ընկալար զհոգևանի՝ զմեծութեի բարձրելոյն :

34. Ո՞ՂՀառեալ Տանէաս : Քառամանեակ է զարդ պարանոցի և լան-
ջաց՝ (կերասանագոյ.) կազմեալ յականց և յոսկւոյ, երբեմն ի մանրիկ
փայլուն գնդից. զոր ուլունս ասեմք, (այսինքն հիլոն կամ պօն-
ճուխ.) լանջքդ եղե ով Տիրամայր, բովանդակ ընդհատարդեցան ի
յորգւոյն, որ ի լանջս քո և ի պարանոցդ պնդեալ զարդարեաց զքեզ
երբև քառամանեակ կազմեալ յեռմամբ ուլանց. (հիլոնից.) և այս
եղև ասէ, հոգաոյ, և Տաբեոյ խառնմամբ, սերտ միաւորութեբ ձեռնեի,
և բանական հոգւոյն, և մարդկային մարմնոյն : Ի մ էռնէ երիցն հիս-
նամբ. որով երեքին զօգեցան ի մի գոյացութեի անհատացեալ կամ
անձնաւորս : Էռնէիան ասա եդեալ է փոխանակ գոյացութեի լսացելոյ
անձնաւորական գոլոին : Իակ վերագոյն (համար ժէ.) առեալ է
փոխանակ երի կամ գոյի նաև ոչ լսացելոյ, բաղմաւորական ասելով,
էռաման խառնեալ էռնէ : Ազնարեի է ըստ Ճշմարիտ վարդապետուե
ասել ի քեզ երիս կատարեալ էռնեից կամ բնութեից. վի հոգին բանա-
կան և մարմինն անլսացեալ մասունք են մարդկութեանն : Ուստի ոչ
յայս միտս խօսի ես վարդապետաս ասա և վերադոյն, որպէս և ի մեկն.
երդոց. ե. 11. այլ նկատէ միայն զորոշ զանազանութեի երացն՝ որ յան-
ձին քեզի. ըստ որում որպէս Ազնութեին զանազանեալ է ի բանական
հոգւոյն, նոյնպէս հոգին՝ ի մարմնոյն : Քանզի այսու մտօք ի կիր ա-
ռնին և այլք ի վարդապետաց : Գրիգորը ծաբաւան ի ա. Թղթին առ
կղեդոնիոս՝ երկու ասէ ի քե զհոգի և զմարմին : Ժողոին Տոլետոց ի
սահմիա արարեալ յամին 688. հաստատէ՝ ուղղութեբ ասել ի քե երիս
դոյացութեից : Երանելին Բեռնարդոս նոյնպէս խօսի ի բանն ե. ի
հակման ծննդեան. * Յայսմ անօրինակ զուգահառնութեբ՝ երրորդու-
թեի է ի գոյացութեից, և միութեի յանձին : || Ջայս առնու և մեծն Աւ-
գերտ, յիմծաբանութեեն. գլուխ ի. գլ. ժա. * Դարձեալ, ի երրոր-
դութեի որով նորոգիսք ի շնորհս, այսինքն եռակի գոյացութեի որ ի քե,
որ է Ազնութեին, հոգին և մարմինն : || Սակայն այս եղանակ խօսելոյ ի
խորհուրդ մարդեղութեբ՝ որ սահմանուց միայն է ասացեալ ըստ բերելոյ
բանից նոցա, ոչ է ըստ Ճշգրիտ բացատրութեբ, և ոչ ընտրելի քան զոր-
վորական եղանակն՝ որով բնութեի կամ էութեի իմանի կատարեալն յիւրում
կարգի, և երկու ասի ի քե :

35. Քահանայութեան մօր : Ի տպագիրս լինչ ոչ գոյ մօր, բայց գոյ
յայլում, և բանն պահանջէ : Դու միայն դատանեցար Ճշմարտապէս
օրհնեալ ի կանայս, ուր այլք ևս ասացան երբեմն այնպիսի, որպէս
յայել և յոտգիթ, բայց պիտակաբար և առ մարդիկ՝ ըստ մանաւոր
լինչ երից : Եւ յայդպիսի օրհնաբանութեի վայելուչ էին շնորհք քա-
հանայութեան միջ որ լցեալ հոգւով սքով, մայր էր մարգարէին զոր գեո
յարգանդին ասներ Յովհաննու : Փառաւոր ե ի դասուց : Տպագիրքս
լինչ ընդ անցելոյն ընթեռնուն զդասուցն. այլ ոչ ի դէպ : Փառաւո-
րեալ ես նաև ի դասուց համագի մեր նմանեցաս, այսինքն ի կարգի
արանց. որպէս թե՝ ոչ միայն ի կանայս օրհնեալ ես, այլև յարս. կի՛,
ոչ միայն դասք կանանց օրհնեն զքեզ, այլև արանց. ոչ է կարծելի՝ թե
յօրհնել Եղիսաբեթի զքո կոյսն՝ Ջաքարիաս չեղև ձայնակից ի սրտ,
լեզուին կապեալ գոլով յայնժամ. որպէս յարձակիլ անդ՝ խնդրն բաղ-
բառեցաւ, Օրհնեալ Տր Աստ խորհելի, ընդ որով և Տիրամայրն ի-
մանի :

36. Պարտապան եմ երէրպոռնէ : Ոչ լոկ օրհնութեբ կամ ներբողս,
այլ գերագոյն մեծարանօք հոգւոյ և մարմնոյ պարտապան եմք ընդհ

ունել քեզ. զի եթէ մարդոյ ի պատկեր ոչ առեղծմանն Հոգւոյ պարարիք լինել, ոչըսափ և ուր դու ինքն եղեր պատճառ, զի Աճ ի պատկեր մարդոյ ծառայի առեղծանիցն, որով լցաւ աստուած մարդապրեական. (Սաղ. հե՛. 18.) * Եղիցի ձեռն քո ի վերայ առն || ևն: Վասն զի աջ և բազուկն հոր միածին Որդին եղև ի մարդն հանգուցեալ յարգանդի քումմ. որով եղև որդի մարդոյ, և զամենայն մարդիկ զօրացոյց իւր վիպոյս և երկրպագուս:

37. Հրեշտակ երկնային: Բնութեաբ ի մարդկան ազգէ, այլ ըստ անմարմնական վարուց՝ երկնային հրեշտակ: Որպէս և յեղծանելի քնութեաբ գոլով, անմահ սերմովբ ես՝ ըստ սիրոյն վառման որ չկարծիլ ոչ գիտեր: Նոքա քնութեաբ են երկնային և անմահ, այլ դու գերագոյն ևս՝ կամաւ, և յերկրի գոլով: Ի յաւուրց նախնեացն: Տպագիրք սովորաբար ընթեռնուն ի յաւուրց. մին ևեթ ի հաւուց: Յառաջին ժամանակաց նախահարցն՝ դու միայն ակնկալեալ և մնացեալ Հոր օրհնութեաբ (ըստ եսայ. կե. 8:) Անէծքն տարածեալ յամենայն երկրագործութիւնս ադամայ՝ ի քեզ միայն ոչ ազդեցին: Մերկացեալ այգոյն: Ի տալագիրս ինչ գնեն՝ այգւոյն սիալ է, և չկարծեն ընդ այգի բառին: Մերձեցեալ այգոյն կիմ առաւօտուն վիպոյութեաբ, դու ես աստղ կամ արուսեակ յաւաղնեցաց: Դիտեա յայսոսիկ բանս, զի զազգսն յանուանցն ընծայելոց Քրիստոս ընծայէ և մերն. և այս՝ զի անուանք փոխաբերեալք կարեն պատշաճել զանազանից ըստ իւրաքանչիւր յարմարութեաբ. Եւս առաւել զի գերազանցութեաբ Տէր ոչ օտար են ի Մօրէ նորա:

38: Դիւրաչարժն մխոյ: Մինչդեռ ազգ մարդկան կայր ի մեռեալն անհաւատութեաբ, և մեղայ, և Թանձր անգիտութեաբ և սխրութեաբ, դու իբրև խօսնակ կամ աքաղաղ զուարթաբար եղեր, ազգ առնելով զծագումն արեգական արդարութեաբ: Կոյնպէս առաւերական հին օրինացն՝ եղեր փառ ճշմարտաձառ, մատեան յայտնիչ ճշմարիտ մտաց կամ խորհրդոց նոցա. օրինակաց և ձևոց հնոյն խորհուրդքն ի քեզ և ի քէն ճըշմարտեալ ծանուցան. կամ որ ինչ առ այլս հրեից՝ նաև առ մարգարէս անգամ աղօտ էր՝ առաւերաբար գիտացեալ, քեզ բացերև էր յիմանալ և ի ճառել այլոց: Վաղ այսորիկ դու միայն օրհնեալ ես իբր պէտն գործոց նէայ, իբրև ընդունակ և կրօղ կիմ գործի այսքան մեծամեծ պարգևաց. որով մերկացելոց նահապօրն եղեր իբր փառք ծածկիչ և անկողոպտելի. վշտացելոց մօրն՝ սփոփիչ և քաւիչ բարձոյ անիծիցն. և խոովեալ որդւոց նոցա՝ աւետաստու խաղաղութեաբ:

39. Տէսակ լուսաւէր: Աչքուն կամ միտառես հայեցմամբ ճանչին լուսաւորը աչացն՝ դու նկատեալ պէսակ, պատկեր կամ գեղեցկութեաբ: Յաւիտենական ակն ամենահայեաց՝ միշտ առաջն նկատեաց զպատկեր քո՝ լի գեղով հնորհաց, առանց իրիք արատոյ, որով գեղոյ քումմ ցանկացաւ՝ առնել զքեզ ի մայրութեաբ Որդւոյն իր: Եւս, տեսակ կամ պատկեր նկատեալ իբրև սկզբնատիպ որդւոյն ծնելոյ. զի որպէս ըստ հոգւոյ հնորհաց՝ մայրդ ի պատկեր որդւոյդ գեղեցկացար, նոյնպէս ըստ մարմնոյ և ըստ բարուց՝ ի քո պատկեր կերպացաւ որդիդ. և յերկոսին առն ճանչին եղև նկարիչ ամենարուեստ: Զքառն լուսաւէրք՝ մեկնեցաք ածական ալգն, այսինքն ամենալուսաւոր աչքք. բայց մարթի և այլ յայտել ի փեսան, այսինքն պատկեր լի լուսով, միշտ պայծառ:

40. Կապակ մանգիծ: Իբրև գիր կտակի մեկագրեալ, այսինքն հաստատութեաբ գրեալ, կամ յայտնապես և արտաքոյ գրեալ, հակառակ մարդկային կտակի՝ որ ծածկապես գրի և ինքով փակի: Աճ հայր եւ Թող զժառանգութիւնն որդւոցն իւրոց՝ քոյով մատակարարութեաբ. զքեզ կարգեաց ինամակալ և բաշխիչ ամենայն նպաստից, հնորհաց և փա-

ռաց առ փրկեալն. զայն ինչ զոր որդիդ քո առնէ ի փրկութենէ մարդկան իշխանաբար, դու զնոյն առնես բարեխօսութիւբ: Եւս, փրկիչն որդի քո ի խաչին եւս աւանդեաց զքեզ կասկ յայտարարօղ վերջին կամաց իւրոց. յանձն յոյհաննու քեզ որդեացդյդ զամենայն հաւատացեալս: Եւ այս՝ անեղդ պայմանաւ, անդադրձ որշմանբ կամ դաշտբ, որպէս օրէն է կասկի՝ պահել անջնջելի: արիւն, գիր կամ մուրհակ վաճառական, որ երբև արձան կանգնեալ անշարժ կայ:

41. Սահման յարակայ: Անփոփոխելի կամ մշտակայ սահման՝ որով մեծութեին ճշմարիտ կցորդեցաւ ընդ մարդոյն Քրիստոս. այս միայեալ միշտ մնայ անփոփոխ, նոյնպէս և սահմանն միութեան: Կամ, վերջին սահման և ծայր՝ որով ընդ մեծութենանն ոչ կարէ կցորդիլ սուկ սահմանն. զի Աստուածն Եր[illegible]ոց գոյութենէն է: Երկուց բնութեցն ճշմարտութեան առ Աստուածն: Երկուց բնութեցն ճշմարտութեան և մարդկայնոյն անայլայլելի միաւորութենէն կապ կամ յօդ յարմարական, վայելչական: Խնամ, կապ ոչ սեռական ի նեղբռաս միաւորիչ, կամ արարչական նեղգործութեբ, այլ ըստ մասնակարարչոյն զմարգկութենէն որ անդէն առեալ եղեւ յաստծութենէն: Վէհին պապիեր: Աստուծեն պատկեր՝ ոչ լոկ ըստ բանական բնութենէն և ըստ հնարհաց, այլ յատուկ՝ ըստ Աստմայրութեան, որով եղեւ պատկերակից Հօր Աստ, որպէս ունելով զԱստ, Որդոյն պատկեր՝ արիւնակից լինելոյն, Հոգւոյն պատկեր՝ գործակից նմին և զեալ ի կազմութենէ քառակ մարմնոյն: Համեմատ աստծամայրական պատկերակցութեն՝ իմանի և այն որ հնարհացն է, և փառաց երանութեան. որով ոչ միայն լինքն հանգուցեալ բարձրացաւ ի պատկեր էր, այլ և այլոցն ի նոյն պատկեր հաստատելոյ եղեւ պատճառ, կարգեալ գանձապետ հնարհաց, տիրուհի արքայութենէն երկնից, օրհնաբանելի յամենայն արարածոց. գերագոյն և քան զոր վասն Եսթերայ ասեր Աստուածն. * ի միասին է իմ և քո հրամանս: Զհաւասար թագաւորութենէս իմոյ զկնութենէ: || ( Եսթ. ԺԵ. 13. ԺԶ. 13: ) Բայց յայտ պատկերակցութենէ կերպիւ-կնոջդ ըստ ասենելոց արարած բնութենանն կշռեալ, չափաւորեալ: Աստմայրութենէն՝ երբև ասուձան ինչ գոլոյ անկշռելի է և անհուն. և որպէս վարդապետք ասեն՝ հնար է ասեղնաստեղ Աստ զաշխարհ մեծագոյն և լայագոյն, բայց ոչ զԱստմայր ումն բարձրագոյն: Սակայն ըստ արգանդ գործոյն չափով է հաղորդական սակս չափաւորութենէ ընդունողին:

42. Թեղեա պարզութենէ: Պարզ և անօար երբ հոգեղէն և անմարմին, թեպետև բնութեբ թանձր նիւթով բազկացեալ: Տառ պարբերական: Գրուած շրջաբերական, ընդհանուր առ ամենեսին առանձինն, վերծանելի: Տղին, ուղիղ շարիւ ձևացեալ, ճարտար գծագրեալ, ունօղ կարգաւոր բանից և ուսմանց: Աչեւ կամի. ըստ ամենայն հասակի ուղղութեբ՝ եղեր երբև գրուած ճարտարագիծ, վերծանելի յամենեցունց՝ յօրինակ իւրաքանչիւր հասակի և կարգի. յորում մանկունք ուսանին զհանգարտութենէ, աղջկունք զհամեստութենէ, կանայք զժուժկալութենէ, արք զարհուրելի ձևն: Տոմար փենչալի: Երբև ժամանակագրական կարգաւոր գրուած՝ ի ցոյցս եղանակաց, ամսոց, աւուրց, ծանից և պահոց. որպէս և ի նբ կոյս ցուցան սահմանեալ ժամանակք Քրիստ գալստեանն, վախճան հին օրինաց և սկիզբն նորոյն, անօրհնութենէ Քրիստ, ձև: Եւս, երբ տումար հաւատոյ, յորում անախալ գրուածքս ամենայն ճշմարտութենէ: Մապիան մեծութիւն. գիրք յիշատակաց, կամ գիւան ճշմարիտ թագաւորութեն, յորում ոչ մրով այլ ընդերիս նկարեալ կան մեծամեծ գործք խնամատութենէն Աստ, կարողութենէն, բարութենէն և այլն: Նամակ ընթերութենէ: Թուղթ ընտիր թագաւորական՝ երբ հրովարտակ կի

կնդակ, յորում կարգեալ կան բանք հրամանաց և վճռոց Աւ. և մանաւանդ յորում անճառելի բանն Աձ բարձեցաւ ընդ մարդկային բանիւն, և եղև բան կրկին, բան ներքին. բան արտաքին: Աբեյան անյնա նան: Աբեան հոգևոր՝ ձայնին խնամոյին Հարատարութեաբ քանդակեալ: Կամ, յորում խնամոք ձայնին խորհրդոց նշանակեալ կան իբրև ի յիշատակի: Կնիք մատանոյ: Դու ես իբրև կնիք մատանւոյն՝ որ ի ձեռին Աւ: Տերամբ, քաջիւ որդւով քով տալարարեալ. զի որդի՝ կնիք և նման նմանի է մերն: Զքեզ՝ի կիր առնու Աձ իբրև կնիք ի վճիռս իւր վասն հաստատելոց:

43. Աբրի մարդիարնէ: Բուն պատճառ արարողական մարդկային բնութեան՝ զոր ընկալաւ բանն անեղական: Աստ մարդիարնէ տիրապետ պնդութեան նշանակէ, և ոչ զեղանիլն մարդ. որ զկնի ասի. Գործի մարդ ճուարնէ, այսինքն մարմնանալոյ, վկային բնութեանն, ձայնին բնութեանն, գործի կիմ նպատակիչ ձայնին բնութեան միաւորելոյ ընդ մարմնոյն կամ ընդ մարդկութեան: Եւ ասի գործի միաւորութեան՝ իբրև պատրաստիչ քնական մարմնոյն. իսկ թէ ինչ՞ մարթ ասել զնա՝ գործի առ ի միաւորել զայն ընդ ձայնութեան, հաւանին ասելոք յաձապանից. և այլք սովորաբար համարին՝ ոչ իրական ազդմամբ նպաստ եղեալ յայն, այլ բարոյապէս միայն՝ վարիքեալով և հայցելով: Պապճառ պապչանիչ: Պատճառ կամ նեղգործող արժանաւոր գործոց ձայնապաշտութեան: Ան պապճառ, անպատկառելի կամ պանծալի ձգնութեանց վասն Աւ: Օրէնաւ ողղարնէ, ուղիղ վարդապետութեան և վարուց առանց իւրաքանչյոր: Ընպաճառ, միշտ յաձումն ընդհայց յատկեալ առանց պակասելոյ, որով ի քեզ լնացեալ, զմեր թերութիւն լցուցանես: Մտանիւթ ընդհանուր: Ամրակս այլոց ձայնին կատարելութեանց մանաւանդ ես ընդհօք, նմանապէս և հայրական գթութեան, լինելով և դու գթութեանց մայր. որպէս Աձ գթայ ի մեզ իբրև հայր, նոյնպէս դու իբրև մայր:

44. Անպարպաիբն ազգակցուարնէ: Ձայնին անտես ազգակցութեան Հօր և Որդւոյ՝ դու վերսին էրինիլ, ծնող եղեր՝ երկրորդ անգամ ծնանելով զորդի ըստ մարդկային բնութեան: Կամ, ազգակցութեն Աւ ընդ մարդոյ՝ որ անպարտականն է և ընդհօք, և մեզօք խափանեալ, դու վերսին ծնող եղեր՝ ծնանելով զքաւիչն մեզոյ և զորդեգրօղն, այլև քով բարեխոսութեաբ յորդիութեան զմարդիկ կոչելով ոյ: Կամ, այնմ անպարտ և անցաւ ազգակցութեն՝ որով նախ որդի առացար զբեզ ա նանց երկանց, վերսին բազում երկանիք առացօղ եղեր ի ժամ չարչարանացն. յատկութեան եղեալ մայր սիրոյ, յերկրորդութեան՝ մայր ցաւոց: Անոմանաին արգանդի. անժամանակ ծոցոյն Հօր, այսինքն ծնողական մտացն՝ յորմէ ծնաւ բանն ձե յաւիտենական, դու ծանուցօղ ծներ եղեր. քոյով ծնանելովդ մարմնով զՄարդին ոյ ժամանակաւ, յայսմանեցաւ անժամանակ ծնունդ նորա ի Հօրէ, որ ծածկեալն էր. զի որ ի քէնդ ծնաւ, ոչ եթէ նորոգ ինչ եղև Որդի ոյ, այլ էր իսկ յատկեալ մէ. և զի ոչ ի մարդոյ ումեքէ, սակս ուրեմն առ ի յԱՀ անժամանակաբար: Եւ գարձեալ, կուսութեաբ ծնանելովդ զնա, երևեցուցեր զսա նախատարր ծնունդն հօր. որով քոյդ ծնողութեի եղև պատկեր ձայնին հայրական ծնդեանն:

45. Զկենդաղոյս ընդոգ: Զմարմնաւոր զաշխարհի ընթացսն ձգեցեր, ուղղեցեր ի ճանապարհ երկնաւոր կենացն. մարմնոյ թանձրութեի ոչ խափանեաց զընդացս քո ընդ երկինս, այլ իբր արագաթև թռչնոյ՝ փոխեցար յերկրաւորացս առասի, դասանեալ ի հրեշտակական դասուցն՝ ուշով Աւ: Հոգեղէն հասատուած կամ արարած գոլով քո, ի Հրոմ էնէր աղի հանգուցեալ՝ իբրև հոգեղէն և անմարմին: Բառն աղի, իբր

եղականն աղէտ բառին՝ նշանակէ լար, թել քնարի· յորմէ և կարգ· շար· ուսոյ ասա խմանի՝ ի կարգի քրովբէից հանգեաւր· հիացումն մեծ կարգեալ բոլոր երկնային քահանայապետութեցն· զի մարմնականգ յանմարմնոյ դասի վերաբազմէցար: Եւ ի կանանց ազանց, յաղգէ կա֊նանց տեսար անգ արուսնկին փեսակաս, ըստ նմանութեէ արեգական· ըն֊տր իբրև զարեգական երևեալ, (ըստ երգոց·ը·9·) և այն եղև նշան մեծ ի զարմացումն հրեշտակաց, տեսանել յերկինս կին մի՝ արևեալ զնուբև զարեգական: (Յայտն·ժբ·1:) Վասնզի յազգէ արանց տե֊սեալ էին նոքա զքո արեգակնասէս ամբարձեալ յերկինս անդր, բայց յազգէ կանանց ոչ ևս տեսեալ էին: Զննելի բնութեէ մարդկոյնոյ· այս֊ինքն մարդկայնով: Ըօշափելի թանձր մարդկային մարմնով ծածկեցար յանձառապնդի խորհուրդ, ոչ միայն ըստ անմահ և հրաշափառ յարու֊թեանն, այլև զի բազում ինչ ի փառաց քոց ծածկեալ էր ի հրեշտա֊կացն տեսութեէ:

46· Ի սպեղծողէն փո: Ջայս և զյաջորդան մարթի ի խմանալ մինչդեռ յաշխարհի էր Տիրամայրն· ուր հպատակ եղև նմա Քն իբրև որդի, և նորա մայր ծանուցեալ էր ըզ Կոյսն· ևն: Սակայն ըստ կարգի բանիցս լաւ ևս հայելն ի ժամանակ փոխմանն յերկինս· յորժամ էջ Քն յերկ֊նից ընդ առաջ մօր իւրոյ, և որդիական մեծարանօք յուղարկաւորէր զնա, պատուասիրեալ ի բովանդակ երկնաքաղաքացեացն իբրև Մայր աստղծոյնն, և յամենայն ծնողացն Եւայէ մի միայն զաւակ՝ անհաղորդ ոչ միայն կամաւոր յանցանաց, այլև ակզբնականն արատոյ՝ որ Եւայէ պատճառաւորեալ: Եւայ կին առաջին մեղուցեալ, և սա կին վերջնո֊ւն անմեղանչելի· Եւայէ զընութեէն առեալ, և ոչ զմեղն, այլ զանմե֊ղութեէն ժառանգեալ զոր նա կորոյս· և ոչ նմա միայն, այլև ամենայն անէծից, արդարոց ընտրութեէն և հաճոյանալոյ առաջի ԱՅ պակ մաք֊րութեէ դաւանեալ: ԱՅսոքիսի դաւանեցար ամ Տիրամայր՝ ոչ միայն յերկրի, այլև յերկինս ի դասուց հրեշտակաց: և այնպէս ծանիցիս փառաւորեալ ընդ ամենայն յաւիտեանս:

47· Ի էբն վհանդաբդ: Գերագոյն սրբութեէ չնորհացն որ ի քեզ, ճո֊խութեէ պարգեւացն, անզուգական մեծութեէ Աճմայրութեէն, որ֊դարձ յանհամեմատ բարձրութեէ փառաց վերացուցիչն զքեզ, այլ ոչ նուազեցուցիչն ոչ զնուազարհութեէն ոգւոյդ, և ոչ զշանս գործական առա֊քինութեէ: Իբր կարօտ հոգւոյ մարզից՝ եղեր հրա հանգարտ երկինք ի տանել զարարչաւանդ լուծ ճածային օրինաց՝ հնոյն և նորոյս, կամաւ յանձն առեալ և զոր չէիրն պարտական, զսրբութեէ քառանօրեայ և զպլշի: Եւ էիր յաճախակ, ցածուն խոնարհութեամբ, և համբերատար ժուժկալութեէ՝ որպէս յատանակ անխոտոր զհետ երթայ մօր իւրում, նոյնպէս խորհրդոց և հաճոյից տեսչութեէն ոչ անվրէպ հետևեցար, և և յանոտանելիսն և ի ցաւելիս: Որպէս ի կուսութեէ ծնանել զԱրքին ոչ՝ հնազանդեալ ասացեր, Եղիցի, նոյնպէս ի հրամայելն փախչել Աեգիպտոս, ի տեսանելն զորդիդ քո անարգեալ, հալածեալ, մատ֊նեալ, ի խաչն կախեալ և մեռեալ, յայսմ ամենայնի առ ճածային կամն դէտևին կալեալ անմոռնչ զհետ գնայիր, իբրև անտուն և֊զեալ առաջի ԱՅ, ոչ մայր երևեալ, այլ աղախին: Եւ ի խորոց: ԱՅսոս օրինակաւ՝ յայնժամ կեանս աշխարհի, ի խիստ ի փշալից զաղաղնեաս կենցաղականս, ի գառնարտասո ախտաւորութեէնս մարդ֊կան, դու միայն իբրև շուշան պայծառ ի մանկութեէ, իբրև ծաղիկ անէ֊ծից փրթեալ, իբրև պտուղ անուշաճաշակ ցուցար յամենայն կրօնս և յամենայն ժամանակի:

48· Եւ էբրդրդոնէն անպէս: ԱՆհաս և թագուն խորհրդոց ամենաքո

երրորդութենէն՝ իբրև խորհրդակից կամ գիտցողակից պէտս կրնայ ըլլալ. որ պէս առ մարդկայինքս՝ կամելով առն Թագաւորի զիւր սիրելի զորմն մեծասաիւս փառաւորել, խորհրդական Թագաւորի զնա վերակոչէ: Ա յսպէս և դու յաճախելի գերահրաշ սիրոյն առ քեզ՝ կոչեցար խորհրդածդ նեղբին խորոց ոչ երրորդութենէն. քեզ յայտնեաց Աստ յերկրի, և առաւել ևս այժմ յայտնի յերկինս՝ ոչ միայն զպատնիս Աստուծոյ, այլև զխորհուրդս տեսչութենէն յարարածս. իբրև քոյով խորհրդակցութիւ կամելով վարիլ, զոր օրինակ ի վարչութեն խորհրդեանցն վասն երբեմն խորհրդով մտնելոյ. մանաւանդ Թէ որպէս նա ինքն Աստ յերկրի ասա վարէր քո բանիւդ, ոչ հրաժարէ նաև յերկինս նոյնօրինակ մեծարել զքեզ: Եւ ծածուկ հաւատոյն: Լսեմ ի գործիական հոլով հաւաքմանէ. այսինքն գաղտնի կամ աներևոյթ ժողովմանէ կամ անփոփ մանէ բանին ոյ՝ ընդ մարմնոյ միաւորելոյն յարդանդի քոյմ, դու ինքն իբրև լուսաւոր ձողոյ կամ զգեստով պատեցար. որպէս Թէ ասել, առեցաւն մարդկութենէն եղև ծածկոյթ Աստուածութենէն, և բոլորն միացեալ՝ եղև ծածկոյթ քո: Մարթ է առնուլ և այսպէս. վասն գաղտնապէս ամփոփելոյ բանին մարմնաւորութեամբն՝ դու ընդոհաղիդ զգեստոս յառաջագոյն պատեցար:

49. Աչառ էին: Անքակտելի, անեղծ և անայլայլական տէրութեան էին Աստ դու՝ ինքն եղեր էակ կամ միշնորդ նորոգ ի ին սկսանելոյ, այնու զի յառաջն Տէր էր արարածոց միայն, բայց քո ծնանելովդն զմարդին մարմնացեալ, եղև այժմ Տէր նաև Աստ մարդացելոյ, որով և կոչի Աստ քեզ, Գլուխ քեզ: Եւ ինքն քե՛ ի սաղմոսն ասացեալս յիւրոց գիմաց՝ Տէր կոչէ զԱստ: Աչլազգ ևս, ծնանելովդ զքե՛ Աստ, եղեր միշնորդ՝ զի նոյն էն իբր մարմնացեալ սկսանիցի ունել զանեղծ և զանվախճան Տէրութիւն՝ ի վերայ ամենայն արարածոց, ըստ այնմ * Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի: || Կամ, եթէ պէրուիէ առցի յատուկ ըստ առ՝ ի մարդկանէ պաշտամանն, այսմ տեղութեն սկսանելոյ միշնորդ խնամի Տիրանոյնն, զի Աստոյն փրկագործութե զգալատարեալն և զօտարացեալս դարձոյց ի պաշտօն Աստ. և ուր առ մարդիկ իբր խոսխանեալ ին էր և անծանօթ՝ աէրութենէն Աստ, վերսին ծանուցաւ:

50. Եւ՝ ի սբբանէալ: Զանկեան, զանչափ կամ զանժամանակն Աստ՝ որ կայր ամփոփեալ՝ ի մարմնի իբրև ի ծրար տաշխին կամ տաշխին, (ըստ բանին երբ. ա. 12) դու առ տեսեմբք քո և առ լանջք սնդեալ Թաքուցեր. որպէս Թէ ասել. ոչ միայն զաստուածութենէն խորհուրդս ի յոգւոջ ունելիր Թաքուն, այլև զմարմնոյն գալանիսն, զերանակ ծնունդեանն, և զայլ ինչ որ զնորա մարմնոյն գործէին, ի սրտիդ ծածկեալ ունէիր. և ի գիւցազանել քո զնա կամեմբք, դու զնոյն խորհուրդսն կերակրելիր հոգւով ըստ այնմ. * Եւ մարիամ զամենայն զբանս զայսոսիկ պահէր, և խելամուտ լինէր ի սրտի իւրում: (Ղուկ. բ. 19. 50:

51. Մէնծոդ կենաց: Երկաքանչիւր կենաց՝ որ այժմուս, և որ հանդերձելոցն, համարձակ միշնորդ եղեր՝ իբրև Մայր աստղոն կենաց: Այո՛, միշնորդ մարդկային կենաց ասծոդոյն, և մերոյ ընդհօք կենացն՝ որ ի Հաշտմանէ անմահական ողկուզին հասուցելոյ ի քէն: Կամ, կենացն՝ որ մարմնոյ, և որ հոգւոյ, որ ընդհաց, և որ փառաց: Խրա նակէց վերնոյն: Սեղանակից վերնոյ բարձրեալն Աբբայի պատուհասցար, անհապաղելի անոռամբ, մայրական անուամբ՝ որ անբաժանելի է և անմնա հանդիսելի. որով իբր իրաւամբք կաս միշտ սեղանակից Աստ, ուր այլ աբ դաբք լինին յուրախութե ան կոչեցեալք ծառայաբար: Եթէ առ երկ

բաւորքս գերադոյն վառք համարեալ են սեղանակից կարգիլ Թագաւորի , զոր գաւթի շնորհաց Ա՛ստուածեայ , և որդւոյն բերրելեայ , և ընդ որ եղկելին համառ ուռուցեալ պարծէր՝ յամենայն իշխանաց իւր միայն գնալ՝ ի Ճաշ Եսթերայ . ( ը՛. Թագ . Ի՛. 7 : ԺԶ. Թագ . ը՛. 7 : Եսթեր . Է . 12 :) Ապա զնոքդ անձառելի վառք իցեն՝ սեղանակից երկ նաւոր Աքքային սահմանիլ մայրական անկորուստ իրաւունքք : Յայս բան՝ ի ներքս կայ ինդիրն մեծ՝ հաւանեալ առ ծնաբան վարդապետս , Թէ որ կոյսն նոյնն իսկ Աճմայրութիւն սահմանեալ էր յերանութիւն փառաց , և այնր իրաւունքք՝ կորեր ժառանգել զիառն , Թէ և վկային՝ ի միջն արժանիք հաճոյարար ընդհաց :

52. Մ՛նծքին անդրանիկ բնաւինն հօր : Ապա բառք՝ կամ բոլոր յարին առ երևեալն՝ ի փեն , իր մարմնացեալն՝ ի քէն՝ միածինդ , անդրանիկդ , որ և է բնաւթեանն հօր , բնաւթիակից . և կամ զատաբար միածինն առ երևեալն . այսինքն ծնեալն՝ ի քէն միածին . իսկ անդրանիկ առ յայնորդն , այսինքն որ՝ ի քէն միածին է , նոյն անդրանիկ ծնեալ բնաւթէ հօր ոչ : Ապրդ՝ որպէս նա խոստովանեալ է սիրելն և առաքինորդ եղէկ գործովք , եղէկ բանիւք՝ բովանդակ խաչակրօն վարուց , նոյնպէս և դու նախընթացդ վսեմական վարուց , ծագեցուր , պայծառացար ասէ՝ գերօրինակ ցուցման եւն : Բառն գերօրինակ , առաւել իբր գոյական իմանի . այսինքն գերազանց օրինակ առ՝ ի ցուցանել զհանգամանս ձեռակրօն կարգաց : Կամ , իբր ածական , գերազոյն և առաւել քան զցուցումն կամ քան զպարտուցեալ ձեռակրօն կարգաց ծանուցար դու . օրինակիք այլոց ոչ վառահելի են մեզ առ նմանողութիւն , իսկ քոյդ գերազանցեալ մեսց քան զկար նմանելոյ :

53. Անաղաման ծաղմամբ : Ճարտասանական առատութիւն զընդգծման միանց՝ ի մի կապէ . զի որպէս անմատոյց հուրն կիզանող ծախի , զնաթդ ծառքի , և որպէս ծախեալն և ծառքեալն անառական մեսց : Փոխաբերեալ հակառակաձայն բառիւդ՝ զանհասանելի մեծուն իրացն յայս առնէ . այսինքն զքանն ձեռ զանմատչելին իբրև հուր ծախիչ՝ ոչ ասէ , քոյով ծնանելով զնա՝ ի մարմին՝ ծախեցաք ծառքելով՝ ի խորհուրդ սըղ Հաղորդութեն : Ծառքուածն , այսինքն ծամելն ասի յաղագս պատահմանց հացին , բայց ընծայի Քրի՝ որ խորհրդաբար կոչ ընդ պատահմանքն : Ջարագեալն՝ ի ընս : Քոյով միշնորդութէ զԱ՛ որ ամենահաս զօրութեն և հրամանաւ առակաւ ասի Թուչել գնալ՝ ի Թևս հողմոց , սեռաք՝ ի փառընթաց կենդանին , նառեալ՝ ի չէշ և յաւանակ : Օսար է՝ փառընթաց կենդանին խմնալ զքառակերպեան քերովբէս : Զի նառեալ Ա՛յ՝ ի քերովբէս՝ յար և նման է արագելոյն՝ ի Թևս հողմոց , և՝ ի միւսմ բանի ասի . սալմ . * Եվ՝ ի քերովբէս , և Թռեաւ սլաց յաւ || ևն . և զի նառելոյն Քրի՝ ի քառակերպեան քերովբէս՝ որ ըստ ծնօրհեն խմնի , ոչ եթէ ներ կոյսն եղև միշնորդ , Թող , զի և բառն փառընթաց ոչ նշանակէ քառակերպեան :

54. Քի վճռվեաւ : Զնա որ քաւիչ և բարձող մեղաց մեր էր՝ իբրև քահանայ , մեք իբրև պատարագեալ գառն՝ Ճաշակեցաք : Յովհաննէս կարապետ քարոզեաց զնա գառն գովեալ , և մեք հաւատացեալ ընկալաք : Իսկ չարագործքդ գառեցին զնա մահու պարտ . մեք նոցա ընդդէմ , որպէս Ա՛յ Ճշմարտի երկրպագեցաք : Զանձանօնն հօր . որ յառաջն անձանօթ էր՝ ի մարդկանէ իբրև Աստ , և առաւել իբրև Հայր , մեք ազգակցացաք , այնչափ յայտնի ծանեաք՝ մինչև ընտանեբար իբրև որդիք օրհնեցաք զնա : Զանպէսն ասլաց : Զանմերձենալին կամ զանհասն մեսց հրեշտակաց՝ մեք գգուեցաք իբրև մանուկ եղեալ վասն մեր : Զանտահմսն բանին բնաւինէ , ի թանձրացեալն խոս , այսինքն զբուն զնակական

բանն Աֆ հաւրուբեցաք ի հասարակաց մերում մարմնի, զոր վերադոյն, համար ԺԲ. ասաց հասարակաւքն : Աստէն յառաջին դէմն՝ գործեցաք, համբուրեցաք, ևն, նշանակէ՝ եղև մեզ գործելի, համբուրելի . որպէս և երջանիկ գործեցաւ, համբուրեցաւ յայնցանէ որք կենակիցք գոյն : Զպատճառ նոր հոգեղէն , այսինքն զկազմեալն հոգւոյն սէյ զորութիւ, ըստ առաք. (ա. կորն. ԺԵ. 45 :) * երկրորդ մարդ հոգի կենդանացաւ || : Զնա սեւեաք ասէ՝ ի լոյ հասակի աւազնոյն՝ երեսնամեայ, երիտասարդացեալ : Բանին էութիւ, նմա՛ ի Թանձրանալն , զանժամանակ էակ բանն՝ պոփչոյ յոյ ազգաբանելոցք սկսեալ, սկզբնաւորել մարդկային ծննդեամբ ի գալոյ , յոյ յայզէ գալոյ, և ոչ եթէ՝ ի ժամանակէ անտի գալոյ սկսեալ, և ի յոր կոյն վերջացեալ : Յայսոսիկ ի վեցեակ հաւաւածս՝ ի շար արկանէ զասպիճանս մարդկային կենցաղոյն ՝քոյ : Իբրև տղայ գործեալ, իբրև մանուկ ոզջացուցեալ, իբրև երիտասարդ յարբունս հասեալ . և ապա ընդ մարդկիկ կենցաղակից եղեալ և յամենեցունց որպէս գալոյ ծանուցեալ. և բովանդակ կենացն ապարտաձք՝ իբրև մարդոյ ուրուք ի պատմելն առեալք բանիք և գործք : Ընդ այսոսիկ մարդկավայելուչ գնացս ձանապարհորդել անհաս և անժամանակ բանին ոյ՝ ի վէր ե քան զամենայն միտս և ըզհրաշս , և քան զնզձս փափաքանաց : Եւ ո՞ այսմ ամենայնի՝ բայց Տէ՛ն ձայնակ պաՀաՀա՜ ես ասէ, ծնանելովդ մարմնապէս զԱրգին Աֆ. զի մարդկութեն լինելով պատձառ , ասի նոյնպէս պատձառ հեռանացն մարդկացնոց : Աֆարաք էոաւոց : Զայս իբրև ուրոյն հաստատ առեալ, խնամի . մէ անտրտունջ կուսից : Կամ ընդ յաջորդն յարել, այսինքն մարքուր կուսանաց՝ զոր նպատակ կամ նախասիրալ կրօնից :

55. Թէ չէր ի փեն ածեալ: Եթէ ոչ ի քէն վերաբուսեալ էր տունկն՝ որ երինային է ըստ ձծուքեն , ոչ արդեօք բերէր զայն պատուղն՝ որ ան ձաշակելին էր ի հաղորդութեն շլեցանց մերոց . այսինքն ոչ երբէք ձաշակելի լինէր մեզ՝ անձաշակելի բանն Աֆ : Գիտելի է առհասարակ յաղագս շարակարգելոյ պայմանաւ ասացելոց բանիցդ , որով ասի՝ եթէ չէր ի քէն ածեցեալ, ոչ էր պաղաբերեալ. կամ՝ թէ ոչ ի քէն յղացեալ էր, ոչ էր մարմնացեալ. կամ՝ եթէ ոչ էր խառնեալ զմերս , ոչ էր միաւեալ ևն : Այսոքիկ և այսպիսիք ոչ խնային արձակաբար , որպէս թէ ըստ ինքեան և պարզապէս չէր մարմ կատարիլ նոցա առանց խորհրդոյ մարդեղութեն , և թէ այնմ խորհրդոյ հարկ էր կատարիլ ի նոր կոյսն : Այլ խնային ըստ վճռելոյ յաւիտենական սահմանին Աֆ, որ ինքնիշխան բարութեն կէտ եդեալ էր՝ մարդեղութեն խորհրդով կատարել զայն ամենայն պարգևս , և թէ Մարդեղութեն ծննդեամբ ի սէյ կուսէն ունիցի զնաւարութիւն : Եւ ահա ըստ այսու անշրջելի սահմանին Աֆ, եթէ արդարև ոչ ի սէյ կուսէն յղացեալ էր Բզին ոյ, ոչ մարմնանայր , ոչ ջշալփիւր , ոչ ձաշակիւր , ոչ քարոզիւր , ոչ սըր քէր զՀէ, ոչ մկրաէր , ոչ օծանէր , ևն :

56. Թէ չէր երեսեալ: Ի սպասէն առեալ բանս, (ՀԲ. 14.) անդ նախ ասէ՝ Ձշմարտաւի յերկրէ բուսեալ, և ապա յերկնից արգասրութեն երևեալ . իսկ սատանօր փոխել զկարգդ՝ Թուի Թէ չյարմարի նաև դիտատրութեն բանիցն . զի յուցանել կամի՝ Թէ բարիքն ամենայն սահմանեալ էին միջնորդութեն սէյ կուսին . ուստի ըստ կարգի ասել՝ ի գեպ էր . եթէ չէր սկսեալ Ձշմարտութեն ի յերկրէ , ոչ երևեալ էր հօրն արգասրութիւն ի յերկնից : Վասն որոյ առ ի յարմարութեն խնամոցին , միայն Թէ ի վերնոյնաց գրոցդ չեիցէ այլապէս, զբաւն արդարութեն ուր նիմք խնամել՝ արդար կամ հաւատոյ կամք . որոշութեն , այսպիսի մտօք . եթէ արդար կամք Հօրն չէր հաստատեալ ի վերայ քո , Ձշմարտութիւնն

ՔՇ ոչ էր բառնալ յերկրէ ։ Կամ, զշուկայն ՌՆ՝ փոխադրել ՚ի յա-
ջորդ մանն, ընթեռնուլով ։ Եւ չէր երևեալ հօրն արդարութեն, թէ չև
էր սկսեալ Ճշմարտութենն ՚ի յերկրէ ։

57. ԹՒ չէր յղացեալ։ Եթէ յանփորձ կամ ՚ի կուսական արգանդի
քումն ոչ էր յղացեալ Որդին այ, ոչ ևս մարմնանայր. վասն զի սահ-
մանեալ էր զի ՚ի քէն և կուսութենէ լինիցի մարմնաւորութիւնն ։ ԹՒ չէր
կրեալ։ Եթէ ոչ էր բարձեալ ՚ի գերկրս հողեղէնս, ոչ էր ծանուցեալ լինել
մարդ Թանձր մարմնով ։ ԹՒ չէր համբուրեալ, զպալն համբոյրն զառա-
ւել ընտանի հպատակութեն ծնանի. եթէ չէր ասէ՝ գործանօք համբու-
րեալ, ու էր ճառելոյ իբրև քաղցր, սիրելի ։ ԹՒ չէր հեգնեալ. եթէ
չէր շրջեալ յերկրի ընդ մարդկան, ու էր փարոշեալ. զի ոչ ոք զնա ճա-
նաչէր, և ոչ վկայեալ լինէր. որպէս ընդ հակառակն՝ զկենցաղակցու-
թեն ընդ Քեզ՝ առնուին առաքեալքն ՚ի վկայութեն ։ Կամ, զասէնն՝ ոչ
էր քարոզեալ ևս ՚ի չէնոյս, մարթ է խնամել ՚ի զպալն արարածոցս. զի
շրջելով Քեզ յերկրի, զիարձ առին զօրուն նորա ծով և ցամաք, օդք,
ստնկք ևն։ ԹՒ չէր խոչեալ, իւր ածուելեն յօծութեն մարդկութեն
Քեզ, ու էր օծեալ և զմեզ հնորհօք ։ ԹՒ չէր խոտնեալ, միաւորեալ
զՔեզ բնութեն ընդ իւրում ածուելեն, ոչ էր ՏԻրեալ, կամ զմեզ հնոր-
հօք աւազանին. և կամ ինքն ոչ լինէր սկսեալ ՚ի Յովհաննէ ։ ԹՒ չէր
խրախուսեալ Մարդն ։ Ընդհանուր առեալ զՔրդն, խնամի. եթէ ազգ
մարդկան չէր զօրացեալ յերկինսին մարմնակիցն իւր, կամ հաւատովք
մարդեղութեն զօրացեալ ՀԱԾ, ոչ ևս սրբեալ էր ՚ի մեղացն և յանհա-
ւատութէ ։ Իսկ Մարդ առեալ զանհաւատն, կամ զայս մարդ Քեզ, խնամի.
եթէ այս մարդ ոչ էր իրախուսեալ ընդ երկինսին ածուելեն միաւորե-
լով, ոչ ևս սրբեր զմեզ իւրովք գործովք, զի մարդկութէ ինքն առան-
ձին չէ արդարացուցիչ և հնորհաւոր, այլ ընդ բանին միաւորելովն ։
ԹՒ չէր խոնարհեալ։ Եթէ յընտանի փառաց իւրոց ոչ էր խոնարհեալ
բարձրն, ծածկելով զայն, և ոչ կորուսանելով, ըլ անփառունակ բնու-
թէ մերով, յայտ է թէ մարդկութենն առեալ ՚ի առղնայնոցս՝ ոչ բարձ-
րանայր յածականն փառակցութէ ։

58. Բայց մարթասցաս ։ Բայց արդ ասէ՝ ըլ սահմանելոյ կանայն ԱՀ,
խակատեաս մարմնացաս ՚ի քէն Որդին, որպէս մարթասցաս. որչափ և մար-
դացաս խակ. այսինքն այնպէս զՃշմարիտ առ մարմին, որպէս և զհոգի
բանական՝ որով լինի մարդ կատարեալ. զի անհնարին բանին ՅՅ միաւո-
րիլ ընդ նիւթեղէն մարմնոյ՝ առաւել անպատկան կարծէ՝ քան ընդ բա-
նական անհնարին հոգւոյ. վասն այն հաւասար ասէ՝ առեալ զմարմին, որ-
պէս և զհոգի. և յայլ խօսս իսկ բազում անգամ կևց վարի, մարմնա-
ցաս, մարդացաս ։ Նոյն և յայսինչոցս ՚ի ժամանակի ծննդեամբ, ըստ ո-
րում ծանուցաս յառաջագոյն մարգարէիւք և ակնպէս նմանութիւք ։
Աբեթպանեցաս առ նը Կոյսն և առ հովիւսն ՚ի ծննդեանն գիշերի.
ոսպէս խոտորբեցաս, ՚ի նմին ՚ի սղղ Կուսէն ՚ի տան զաքարիայ, և ՚ի
հրեշտակացն փառատրոցման յերկինս, և ՚ի հովուացն նոցունց փառա-
բանակցաս ։ Իսկ Տէրեցաս, քառասնօրեայ ընծայմամբն ՚ի տաճարին՝
ըստ օրինական սրբութէ երբ կատարս, որպէս երգեցաս, ՚ի տաղ. Ժ. 5.
* Տէր ՚ի տաճար նը իւրում ։ Եւ դարձեալ. (Մաղաք, Գ. 1.)
* Յանկարծակի եկեսցէ ՚ի տաճար իւր տէր զոր դուքն խնդրէք ։ Իսկ
Տէրեցաս, ՚ի յորդանան՝ խառն ընդ մեղաւորս երբև նման նոցա. բայց և
վկայեցաս, երկինսին ձայնիւն, Հոգւովն սղղ ալաւնակերպ լինմամբ, և
քարոզութէ Յովհաննու ։ Նոյն իսկ պատմեցաս. Համբառեալ քարոզե-
ցաս յետ սկզբանէնն, որպէս ճառեցաս, յառաջագոյն ՚ի մարգարէիցն.
ըստ որում Աննդրեաս պատմէր Սիմոնի, և փիլիպպոս՝ Նաթանայելի ա-

աչք գտեալ գՅՈ ըստ Ճառելոյ մարգարէին : (Յովհ. ԺԲ. 41. 45 :)

59 : Իսկ պանդխտաւս, կամաւ յանձն էառ զաղքատութիւն, վարեցաւ աղքատաբար . որով Ճոխացաւս, որոյ վասն Ճոխացաւս տիրողութիւ՛ ի վերայ ամենայնի, կամ այնու որով Ճոխացաւն՝ անանկացաւս, այսինքն մարգկայնութիւս : Յայսմանէ բանս որով ունի նշանակել կրկնակի, այսինքն այնու որով, կամ որոյ վասն, պատճառական մուտք ըստ պահանջելոյ խնամատիին : Իսկ հնազանդեցաւս, Հօր ՅՈ, և ծնողացն, և աներկար դատողացն . որով պաշտեցաւս . պաշտօն ծառայութիւ՛ ընկալաւս ի հրեշտակաց և ի մարգկանէ : Իսկ կրկին մուտք, այսինքն մարգկութիւն որով հնազանդեցաւ՝ պաշտեցաւս . կամ վասն հնազանդելոյն պաշտեցաւս : Իսկ երկբայութիւնս մարմնոյն, որով խոցեցաւս, կամ վասն խոցելոյն երկրպագեցաւս : Իսկ ամաչելոյն, զասատանայ և զպաշտօնեայս նորա՝ նովին մարմնոյ նովին, կամ նախասահանքն՝ որով պոպխոռեաց, ամաչեաց, զամօթ յանձն առ : Կամ, յանձնառութիւ՛ ամօթոյն ամաչելոյդ զքեզնամիան : Ընդ հանրականն բերելոյն զկնդականի հաւատացեալսն, և զարդարոյն հոգիս, որով ինքն նախ պրպտեցաւս : կամ, վասն որամելոյն բերկրեցոյց, զուարճացոյց : Աստէս վասն մերկանալոյն զգեցոյց, վասն բևեռելոյն ողջացոյց ևն :

60 . Սլաշաս որպէս վերնայի : Յայսմանէ խմացեալ զԲՒՒ ըստ ձեռնարկեն, յայտնական է և յատուկ . իբրև զի ձեռնարկէն է խակապէս վերնայոյն, հոգեղէն, անքնին, անհաս : Բայց զի ասացեալքս հայրն ի համարձակութեան Քրի, ըստ այսմ առ մարգկութեին խմացեալ, նմանական է, ըստ նմանութեե և ոչ յատուկ . այսինքն թեթևութիւ՛ փառացն և զօրութիւ՛ վերացաւս Թռուաւ յերկինս՝ որպէս թէ վերնային էր և հոգեղէն, ծածկեցաւս ամպովք իբրև անշնչելի աչաց, և յական թօթափել սրացաւս իբրև անհասանելի : Իսկ ի բանն գովեցաւս որպէս պծնդին, յատկաբար նշանակէ՝ որպէսն՝ ևս և ըստ մարգկութեե մատծեալ . վասն զի մարգկութիւն ոչ է այլ որդի, այլ նոյն միածին բանն : Բոսորաբոսոզն, կարմրացայտ կայլակօք արեան ներկեաս, այսինքն նեռիկեալ սեաւս ի հրեշտակաց, զարմանալով նոցա ընդ կարմրութե ձորձոյն՝ ըստ ես. կէ. 1, ոք և վասն բացեալ վերացն հարցանելին . * Ընդէ՞ն են վերքդ այդոքիկ ի մէջ ձեռաց քոց || : (Զաքար. ԺԳ. 6 :) Աչսու օրինակաւս նաև վերկին հրեշտակաց ծանուցաւս իբրև յաղթօղ, և դասուսուր արդարակիւս . ևն : Բանքս ձեռացեալ են ըստ մարգարէութե՛ն եսայեայ . իսկ յասելն՝ ի հրեշտակաց հաւաքացաւս, Թռուի զառաքելոյն բան ի կիր առնուլ, * Հաւաստարիմ եղև յաշխարհի || . (ՌԱ. տիմ. Գ. 16 :) իբրև Թէ ոչ միայն առ մարգիկ յերկրի, այլև առ հրեշտական յերկինս :

61 . Քանդի ի ֆէն հիճապէնաց : Շաշկապէ փանդի ոչ զանցելոց բանից զպատճառն յայտ առնել կամի, այլ զկնի եկելոցն : Աստ՝ քանզի, կիսկ ոլովհետև ի քէն հիմնադրեաց զմարմնանալոյն անառեսուլ անեղն Աստ, և յանպատում շնորհէ անտի մարդեղութեեանն արժանացաք այսքան ձրի պարգեաց, և քոյովդ միշնորդաս պատրաստեցան մեզ այս երանեալ կան յատոյ բերկրական արգասիք, վասն այսոցիկ զամենայն փառս և զօրհնութիւս յաղագս լուսաւորուե հրեշտակաց և մարդկան ի ծածուկ խորհուրդն Աստ, որովք նոր արարած հրաշակերտեաց զեկեղեցի, մանուանեմք ծնրադրութիւ՛ մարմնոյ և հոգւոյ՝ ծնեցելոյն ի քէն մարմանակցին մերում՝ նոյն և բարձրացելոյ անուան նորա : Յետ բանդակելոյ կարգաւ զնորհուրդս անառեսուե նորա մինչև ի վերացումին յերկինս, ոչ այլ բան մնայ ասել, բայց յերկինս և յերկրի հրեշտակաց և մարդկան օրհնել զնա, մեծացուցանել, երկրպագել զոր օրինակ և առաքեալքն տեսեալ զհամբարձումն նորա, երկրպագել միայն փութա

ցան, և յերուսաղէմ օրհնել և գովել զԱՅԾ ի տաճարին. ուստի և մեք գործցուք յօրհնութիւն քո:

62. Գլուխ նորին պանծանաց: Ա՛յնպէս դու միայն օրհնեալ ես ի կանայս, զի բովանդակ ազգի նոցա պանծալի գլուխ ես, և պատկ. որպէս և Ովդիթ քո՝ գլուխ պատից ազգի. եթէ պրէ՛ի վրէն պարծիլն, և կապ նոյք նոյնպէս ի քեզ: Պաւէ կոտորուիլ. լռութիւն կամ կատարելութիւն կուսութեան, իբրև նախկին կոյս ծածանուէր, նահատիպ ամենայն կուսից: Մա՛ռաբ հարանուիլ. որ այն կուսութիւն է անպիտան հարմնութիւն առ Աստ, պիտոյ ընդ նմա ոգեխառնել. կամ, զի լու ևս քան զամենանուրն կապ լսոյ է որդիս ծնանել երկնից: Ա՛յլազգ ևս, մարթի է ուրոյն առնուլ զայս ի վերայ օրինաւոր հարանութեան. այսինքն դու պատկ մարգուր հարսանից երկրաւորաց, նախասիրեալ նոցա քոյով անշուշտ կենակցութիւք ընդ Յովսեփայ: Պաւէ ընդրուի՛ր, պատկ ոսկի ընտրեալ, որոյ գովուի անթերչ է, այսինքն ընտրականութեանն կամ ազնուութեանն ոչ է ի փորձոյ հրոյ՝ երբև զոսկի խառնեալ. զի և այլ արդարք ոսկի պատկ եղեն, բայց անցեալք ընդ փորձ հրոյ և ջրոյ: Պաւէ անեղծանե՛ի, անեղծանելի անթամանաւելի ըստ նմանութեան լուսոյ: Պատկ շնորհօք նորակերտեալ, Եւին ծնեալ ի՛ն, որ միայն ծնողին Աստ վայելչական է, կամ, որ կնիք է ծնելոյ ձեռն նայ: Պատկ երանական, երանեալ յամենայն մարդկանէ, կամ որ պերանութեանն կինքն բերի, բանին հօր մայրութե՛ն, մօր բանին վայելչական:

63. Պաւէ սո՛ւրբ պանծանաց: Պատկ արքայական պանծալի, կենացն բարեբե՛րութիւն, գերազանց վարուց առաքինութեան, կամ առաքինեացն որոց քաջ ըաքականութեան յերկինս է: Պատկ պայծառատիպայ վարուց խմաստութե՛ն. յորում փայլէ հոգևոր կենացն խնամուն: Պատկ պերապապուսպ, յօրինեալ յերկնաւոր ձարտարապետէն, երկնահանճարն գիտութե՛ն. յորում սեանակ ձեռագործ հանճարոյ և գիտութեան. կամ, որ սեանդէ զնծայութիւն գիտութեան: Պատկ պիտանի կամ կարևոր առ ի գեղեցկացուցանել զեկեղեցի. գո՛ւ միայն յամենայն սէր բառական ես ի վայելուչ ընդհանուր եկեղեցւոյ. ուր այլք սէրն՝ են պարծանք այսմ և այնմ առանձին եկեղեցւոյ: Պատկ պաղնէտե՛ն, պաշտելի, յարգելի, առ ի զարդարել զնորա Սիոն՝ զարքայական վրէն: Ջերկրաւորն սիոն զարդարէր՝ ո՛չ պատկն բերաբերեալ, այլ Դաւթի կրողն ի գլուխ զձագն մեղքոյ. (ը. Թագ. ժը. 30.) իսկ գո՛ւ Թագուհի նորոյս սիոնի ի միասին ընդ Որդւոյ քումբ պատկ վայելչուե՛ս ես: Պատկ յոգնանիւթ, բազմագոյն կերպեաւ ո՛չ միմին երանգօք, այլ յարբէից եօթանոց, յեօթնի լուսաւորեալ գեղեցկարուեստ փայլատակեալ, յեօթնալոյս պարգեւաց Հոգւոյն սէր շողշողեալ: Պատկ աստ՛ղնորդիչ վերնոյն ապաւինո՛ւե՛ն, թէ և երկրաւոր գործով գո՛ւ, բայց երկնից կարգեալ իսկուն, զորես իրաւամբք ազգակից միանոյ առնել զվերինս և զներքինս: Պատկ անբիծո՛ւե՛ն, գլխովին անարատ, անբիծ. շուշանի արբարո՛ւե՛ն, յորում անսխալ նշմարին ճանապարհք սրբութե՛ն և ճշմարիտ կարգաց. ո՛չ պատկ միայն ես առ ի զարդ, այլև կանոն առ ամենայն ուղղութե՛ն:

64. Վէրաբերեալ Ռուտոյ: Ա՛հաւասիկ այսմ ամենայնի նախակարգեալ զանազան պարգեւաց, գերազանցութե՛ց, բարեբարութե՛ն՝ զոր Թուով բանից շարեցի, և ո՛չ եթէ բովանդակապէս չափեցի, խոստովանիմք զքեզ արժանաւոր ընկալարան, և ամենայնիս ի քեզ ընդունող կամ մաց Աստուածոյ. և պարտապան իակ եմք, վասն զի անհամար ազգաց ազանուծնոց՝ գո՛ւ եղար պարիսպ ամրական. և ի քո ամենազօր բա րեխոսութե՛ն ապաւինեալք, խնամն մեզ և հանգիստ գտանեմք ընդ հովանեաւ ամենայն պատուարիդ: Պատուոյ աչ՛նայօրէն, գեղեցկապէս յօրինեալ յականջ հոգևորաց, ըստ առաքեան յայտն. (ի՛ա.) հրապար-

գոհ, հրով ճաշուքեն շրջապատեալ, որով և անմահագոյց սատանայական հինից, մեղաց և ախտից : Բռնանդոյն, միշտ լուսաւորեալ, որով գազան նաճաճուկ նենգօղք չկարեն հուպ երևել : ամենահրաշ, հրաշալի կերտուածով յօրինեալ, և ամենեցուն հիանալի, յիշատակեալ յեզեկիէլ էն, որ վակեալ ասաց զնուա քո առ մարդ, միայն Տն ԱՅ մտանելի : (Եզեկ. ԺԸ. 5. 6. խե. 1. 2 :) Պատուար շրջապարիսպ, շուրջ յամենայն կողմանց ի հոգի և ի մարմին պարսպեալ, ընդ ամենայն ժամանակս ի յղութէ անտի մինչև ի վախճանն երջանիկ ամբակումեալ, անտրելի հանգոյն արատոյ և ապականութենէ. որոյ հիմն անշարժութենի ի բարձրեալն՝ ըստ գաւթայ. * Եւ ինքն հիմունս սրկ նմա բարձրեալն || (Սաղմ. ՁԷ. 6 :) Եւ փաղաքին Ելիսէ, արքայութենն ըստ պօղոսի. (Եբրայ. Ժե. 22.) այնպիսի պատուար ես ամուր, զի քով պաշտպանութիւ արարեր զամենեսին այնմ արժանաւոր լնակիչս. վասն զի զձնշմարիտն Աւծ ծնանելով ի մարմնի, իբր ևրաւանք ևին զծնունդս երկրաւոր սիոնէի կամ զինուորեալ եկեղեցւոյ ծնաւ յորդիս արքայութենէ : Խրամ և պատշարձ ևին էր զի եթէ Աւրքայն երկնից վրն պաշտի անդ իբրև քո որդի, նոյն և թագաւորեալքն ընդ նմա՝ որդիք քո իցեն և ժանաչիցին : Եւ այսորիկ աղագաւ արդարդ ես կոտոռնի, մարքուր և անախտական կուսութենիդ օրհնեցաւ և օրհնի ի շրթանց ամենեցուն, զի թէ և անզաւակ առ ախտաւոր ծնունդ, բայց բեղնաւոր եղև անհամար որդւոց մարքրականաց. և այսպիսի գաւանեալ ես, վասն զի մարմնաւոր և ծնօղ խոտովանեալ ես իսկակից Որդւոյն Հօր Աւծ :

65. Ջբան պարմանին : Ճշմարտապէս ուրեմն ի ֆեղ ընծայեալ, առ քեզ պատշաճեցուցեալ զան գրողին, խոտովանիմբ թէ դու եղեր մեզ օգնական և յարկ ապաւինի ընդդէմ փորձութեց յաւուրս նեղութ թէ, ըստ սաղմ. (Ը. 3. 4. ԼՈ. 7. 8 : խե. 2 :) Ով մատրունի Տոսիոյ, մարքրիչդ կուսից յօրինական պատուոյ՝ որով անդրդի կեանքն պիղծ հանարեալ էր, այլև ի քաղաքական բամբասանաց՝ որ իբր փայտ չոր և անպիտան աշխարհն անգունէ զկոյսն. քանզի ցուցաբ ի քում կուսութենդ՝ թէ դեբազանց և սրդէծնութենէ ընդունակ է : Սկիբնաշարիդ, առաջին յետ Քրիստ՝ համօրէն երանելեաց. և մայր հիմնադրութենի, մայր՝ որպէս զբէ խոյն եկեղեցւոյ, նոյնպէս սկսանելոյ նորոյ եկեղեցւոյս, յորում դու ևիքն եղեր նախկին հաստատեալ յաւետարանել հրեշտակին, և քոյով անշարժելի հաստատվք հաստատեցեր զքրիստոս հիմունս եկեղեցւոյ՝ զսատանանեաւն առ չարչարանօք փրկչին :

66. Ընդհակ պերգաբան : Ապաւինեալք ի Թիւս պահպանութենէ քո, միշտ կանխեմք ի նուիրեալ տեղն տաճարի քո օրհնել և մեծացուցանել, և այժմ ընդհակ աղաչեմք զներբուղական զայս օրհնութիւնն՝ որչափ մեր լեզուս տալ կարող էր. հայցելով միանգամայն՝ զի տացես մեզ, որ նուիրեալ այսմ տաճարի զձիրս կամ զղօրութենէ տաճարացն որ յերուսաղէմ և ի լեհեղհէմ. որով զի սրբեալք և արդարացեալք, արժանի գտանիցեմք մեռն փրկութենէ ընդունել ի փառաւոր յայտնութենէ միածնի քո : Իակ այժմ զքեզ երբև զօրաւոր և մեծ պատճառ այսքանեաց բարեաց՝ յայսմ գեղեցկազարդ տաճարի փառաւորեացդ, ոմ գերամբ բարձեալդ ծնօղ անժամանակ Էիմն, որդւոյն ես :

## ՚ի գանձ սբ Աշխանին :

Յաղագս այսր գանձի՝ Թէև չունիմք հաւաստել թէ զրդ ընդ Ներբողենն ևցէ յօրինեալ, իբր զի չիք նշանակ ի յիշատակագիր նամակին

առ Սահմանու· բայց զի յաւելու ասաւ զնմի՝ պերճաբանէ սակաւասա-
նեայ այսր գովչիսի, առաւել զմեծ ներքինեանն յայտ առնէ, քան թէ
զսակաւ բանին՝ որ ասաւ. և ապաչէն ի կարգին զնմանէ ասացեալն
ցին իբրև արձան գրեալքն իւր և խնասաքն, ընդարձակ Ճառի է յայտ
արարումն: Մանաւանդ թէ ոչ իբրև քարտզական Գանձ թուի արա-
քեալ զայս, քանզի ոչ գանձ բանիւ սկանչի, և ոչ վաստրատուին առնէ
հայցատածովք վասն զանազան կարգաց, զոր օրինակ առնէ յայլ երից
Գանձան:

67· Ձափոյ կլոման: Գերազանցեալ, առաւելեալ յոյժ քան զչափ
և զհամեմատութեն երկրաւոր բնութեն. ոչ մի ինչ մարդկային մեծութեն
կարէ ի կշիռ գալ ընդ քոյոմդ: Եւ ոչ այսքան միայն, այլ նաև փրկիչ
էնականն նախափառութեն, հրեշտակային ծայրագեալ նախատառութեն
վեհագոյն էս. գերադունի գաստն ասին Քերովբէք, այլ վերոյ քան
զնոսայն է քոյդ: Անհամեմատ առաւելութեն շնորհայ և փառաց, և
առաւել անզուգական չափ Աջմայրութեն՝ կացուցանէ քեզ դաս
ուրոյն, ի վայր քան զԱջ միայն, և ի վեր քան զամենայն որ չէ Աջ:
Պայծառ առափաս: Դու ոչ միայն յոսանալով զքո, այլև խանդակաթո
միաբորբ առագաստ էս նորա, յորում նախ հաճեցաւ բնակել իբրև
որդի, և միշտ բնակէ իբրև փեսայ: Նորոգ իսկ պեսաորիչ· դու ինքն ի
տես վեսայիդ քո մնանես և երանես՝ ընդունել շնորհս վասն մեր: Ծանոթ
երիվեոյն· մարմնոյ ծնրադրութեբ յարգելիք զպատկառելի քո պատկեր,
որ առաւել պատուոյ արժանի է քան զամենայն թագաւորաց:

68· Յոխանիս մասանց: Բազմաթիւս մասանց տիեզերաց՝ դու բերկրու-
թեն, ուրախութեն էս· զի անվճռապատ թշնաւութեն նոցա՝ արմատ օրհ-
նութեն երևեցար· անտառէր նշոյլ յերկրի՝ ի ծագմանէ ֆառոյն երկնոյ-
նոյ, յաճախային էական լուսոյն Ճառագայթեալ· բայց անորիւ հոմանք,
անգաման անմեկնելի կցորդութեբ միշտ մերձ կացեր առ լոյսն՝ որ մեզ
անմատոյց: Աստ կամի· յայտերեին լուսոյ ԱՀԳ ծագեալ քո, ոչ բնաւ
զատար ի նմանէ, ոչ բնաւ ալօտացար· գոլով ընդս հաղորդեալ՝ ան-
նուազ մնացեր իբր ինքնալոյս· ուր հրեշտակական բնութենքն իբրև լոյս
առելծեալք, ոմանք խաւարեցան: անճառ խոսմամբ: Աստ կամ յան-
ցեալն ընդդէմ, իբր ասէ, թեպէտ և մեզ անմատոյց է լոյսն՝ որում
գու ես մերձաւոր, բայց ի խոսանանէն Աստ գոյ և մեզ յոյս յատաս-
նիան. կիմ, յոր գուն հուպ ես, մեզ յոյս ոտ յատգոյն: Եւ կիմ յարե-
լով ի յաջորդ խնգրուածն՝ խնամեի՝ յուսով ապառնի խոսատացելոցն
զերծոյ զմեզ ի պարահաց մնհոս:

69· Երկնայնոցն լրծնէ: Ի մարմնական աղցատոր վարուց՝ որ յատուկ
են հողեղէն կազմածոց, ազատացեալ գու գվնասէն՝ երկնային հրեշտա-
կական բարուց գասոյ հաղորդ նաև ի բնաւոր կիրս, անցանկութ գոլով,
անկարօտ մարմնական կարեաց, անախտ, միշտ երկնընթաց, ճաճախորհ,
աշխատհատեաց: Որով եղեր և առիթ կամ պատճառ փեսուրէ նոցին,
առանեղծ ձգ զանձնէն որդւոյն Երբպարան, զանձն Աջ միացեալ ի զինեալ
մարմնի, որ ըստ ճաճուրէն անձնեալ է. և այնու տեսին կամ խնացան՝
զանձնէն պնեալ, զանակիզն և զանժամանակն Աջ ընդ ժամանակաւ
անկեալ:

70· Ասօղ ի ԵՂ զիմանալին: Ի վերափոխմանն ժամանակ հայր
բանս. և եթէ յատկապէս ստգի այսօրդ, այսինքն յայսմ աւուր, սաց
կարծել թէ յաւուր փոխման կամ վասն այնր աւուր եցէ յօրինեալ,
բայց մարթի է և անորոշ առնուլ փոխանակ ասելոյ՝ այժմ: Բովան-
դակեալ ահա ի քեզ զնճծուրէն նմանալի բարեացն՝ որում ընդունա-
կան է լուկ ստեղծուած ոք, ոչ հոգւով միայն փառազարդեցար, այլև

մարմնով սլացար բարձրացար ի բարձունս երկնից, իբրև մարմին՝ որ անշուշտ գոլով յամենայն արատից, եղեր ևս անընդունակ ապականութեան. զի թէ և բան անեսուանելի ինչ խոնարհեցար ի քուն մահու, բայց պարտիք մահու՝ լուծումն, փոուի, ամաչելով ամաչեաց ի քէն. որով ցուցար երկնի և երկրի թէ դու միայն ընդ Որդւոյ քումմ արժանաւոր բնակիչ ես երկնից՝ որ անմահ կենդանեացն է բնիկ գաւառ: Ո՛վ Տիրա մայր, զինչ այլ պանդխտեալքս յայսմ նահանգ վայրի ակնուելիք, բայց զողորմութեանդ մեզ հայցել և առնուլ:

ղ։ Աղիխ խրախուսիչ: Աղեխ անհամար են զարմանութիւնք անվախճան խոստմանցն ետծայնող, յորս վայելես ի բնաբոպանս, ի դրախտին երանութեանդ փերեան փնոյն, ծառոյն կենաց՝ որ նա ինքն Տէրն է. և որոյ պտղոյնսփ, ճիւղք կամ տատք շառաւիղեալք ի վեր են քան զհասուցանել երկրաւորացս: Ծառ կենացն ասացեալ ըստ բանի յայտնութեանն. (բ. ղ.) հոգևորապէս յայտ առնէ զնոյն ինքն ԱՃ, կամ զէութեանն ետծայնի՝ երանացուցիչ սրբոց յերկինս. որ իբրև առնէ ամենապէս զուն՝ ունի վայելմունս ամենազանս ըստ անհամար կատարելութեանն, զորս ի ծայրագոյն լուսոյ իւրմէ բովանդակէ. զորովք մարդկային և հասուցանել ոչ յայն կատարելութեան ժամանել կարօղ է, և ոչ ի նոր բնին վայելուչին՝ բայց որչափ ձրի պարգևէ որոց կամի ԱՃ: Եւ ահա այնոցիկ անհամար վայելմանց՝ գոլ ևս ասէ ունօղ:

ղ։ Աղբիւր բանի: Հայցեմք ի քէն աղերսալից՝ մաղթողական բանիս, կամ ընծայիւք բանից. որ ինքնին փաղցրալոյր ես. և միանգամայն գթած աչեաբդ, յապահովութեան ապգի մարդկան, առհասարակ շնորհեալ առ ի ԱՆՀ յընդունելութեան ամենայնի՝ որոց կարօտիմք: Աղբիւրս ասի ակերակէս՝ խնդրուածք արարեալ հանդերձ իրաւացի պատճառաբանութեամբ: Ի պաղատելդ իմում առ քեզ ասէ՝ ոչ կարօտիմ յերկար թանձելոյ կամ ժուռելոյ. շատ է՝ զքեզ ինքնդ յանդիման քեզ կացուցանել. գոյ ի բնի քաղցրալուր, և միանգամայն առ ի ԱՆՀ մեզ շնորհեալ առհասարակ, առատ և պաշտպան: Որ անհամեմատ պարգևօք և փառօք ճոխացոյցն զքեզ, որ գերասահճան ձրիւք ԱՆՃանայրուելոյ անգր ընկալաւ, որով զքնաւ հաւատացեալս յորդիութեանդ քո վերագրեաց, որում Հայր ԱՃ՝ հովանի, որում Որդին ԱՃ՝ որդեացեալ, զորով Հոգին նը վարեալ. և գու համակ երջանկութեանդ փառօն պարօք, նամբիւք գերագոյն երջանկութեանն պարփակեալ ներքոյ և արտաքոյ. զոր վերագոյն (համար իզ.) ասաց՝ սեպհականել զանեղծին փառաց ճոխութեան: Աւդ՝ այսքան անկշռելի մեծութեանդ իբր հաւատոյդ տահմանեցաց զքեզ ԱՃ առհասարակ մերում փրկութեան, և համայն պիտոյից ինձ մակալ և լցուցիչ. և եցոյց թէ կատարել զքո վասն մեր զհայցուածոյ փոքր է առ այլոյք անզուգական պարգևօքն, ոչ անառս առնէ զայն, այլ իբր պարտս իմն համարի իւր: Եւ ահա սոյն այս է՝ զոր իրաւացի պատճառս համարիմք մերոց աղաչանաց: Մինչ զի համարձակիմ ասել, վերանկարեալ զառ յաւուրանէն: Ջմկրտութենեն անուն Գրիգոր, որ գրոշմեցաւ ի մատնի քրիստոնէութեանդ, գու վերատին գծագրեա ի գիր ընտրելոցն: Մայր փրկեցելոցն գոլով քո, ունիս իշխանութեան խնդրել զհամար նոցա: Երջանկականն առեան իբր քոյով ձեռամբ հնձել հաձի պանուանս ընտրելոցն. և Պատառոն Քո հայր ի քո բերան. առանց քո ձեռին ոչ զոք ընդունի, և ը քո ձեռն՝ զամենեսին: Հանպա, հնչեա զանուն իմ ով պրաւականդ մերոյ փրկութեանդ:

ղՅ. Ջերգագրութիւն ոսկաւանանոյ: Ջգրութեանդ գովասանական բանիցս՝ որ առ քոյդ արժանաւորութեանդ կարի սակաւք են, ընկալ. հաստատեա յանդիման քո իբրև արձան կենդանի՝ ի գծիցն և յիմաստից բազ-

կացեալ զօրէն մարմնոյ և հոգւոյ· և սովիմբ միշտ վառաւորեսցես , որպէս և անեղծ պաշտօնեիցդ հրեշտակաց օրհնաբանութիւն : Ո՛վ ինչ յերկնաւոր , թէ անհերքելի քոյով հայցուածովը պարզերես կացեալք յանգիման երկնային դասուցորէն , արժանի լինիցիմք և յայնժամ ընծայս բանից մատուցանել· և ընդ քո ամենապայծառ մեծութիւդ հրաշացեալք , վառաբանակից քեզ լինիցիմք՝ օրհնել զանչնչելն ևս երրորդութիւն յաւիտեանս :

74· Ընդհայիր էին : Զձիշտսակագիրս ունիմք ՚ի միում ընդոր օրինակի՝ գրեալ ՚ի թուին պժգ : Այդ , որպէս և յայլ ձեռ· գնի· ընդհայիր , առանց էին :

75· Զպապմուէն ··· պճառաս : Ա՛յսպէս ձեռ· տպ· պապմուէս ··· պճառաս· և ընդորելի է բազմաւորական գնել վասն երկուց գովեստիցն ՚ի ՚ի Խաչն , և ՚ի ՚ի Աճածինն : Նկարեալ· Զմուղձն կամ զքարտէզն՝ յոր գրեալ էին ճառքն , նմանեցուցանէ ապիտակագէսին գաշտի , յորում գրչաւ նկարին բանքն , իսկ գրիչն երբեմն ձի ընդ ձեռամբ հեծելոյն՝ ընթանալ յընդարձակումն անդ՝ առանց ձայնի , առանց ոտից· պատմէ , քարտզի անձայն՝ բայց միշտ և անխոտոր : Ուր ձեռ· օրինն· առանց սէլի գրէ , հնչուի , պապմուի , փարուլի :

76· Աբէհամոսոյ ախն : Ա՛յսպէս և ձեռ· իսկ այլ տպ· ՚ի ախն : Եթէ ՚ի նախդիրն չկայ զանց արարեալ սակս յառաջելոյ բային՝ աբէհամոսոյ , իանի որական հոլով , այսինքն այսմ գրուածոյ եղի զանուն քո անչինչ յիշատակ· և տեսանելոյ արդեամբք ՚ի գլուխ երեալ վարիաքանաց նորա և գիտաւորումն· զի ահա աւելի քան ուրթ հարիւր ամք են՝ զի կայ մնայ անուն Մոկացւոյ Դիտապետին Սահմանոսի· և առանց այսր գուցէ խափան մնայր անյիշատակ : Լաւ է ՚ի գիրս դրոշմել զանուն գովելի՝ քան ՚ի մահարձանս քարաքաց , կամ յերեսս ապարանից :

77· Երինային գանձուդ : Յանձն առնէ յաւանդ պահել զգրուածքս ՚ի գանձարանի սրբազան սպասուցն և զարդուց եկեղեցւոյ , զի հոգևոր բարեաց առասպելութիւնք Տնօրից առաւել պատուական են քան զլաստերս և զաշտանակս· և զի ՚ի գանձասան եկեղեցւոյ անկասկած և պահին , և ոչ անյայտանան յանծանօթ վայրս , և յանձնաչոյզ ձեռս· և զարձեալ՝ զի այնու պատճառանօք վաստակաւորքն Ճառից գրութիւն ընդունին մնան յիշատակի յօրհնութիւնս եկեղեցւոյ :

78· Մինչդրաս էրէ բանի : Թէպէտ և մարմնով ՚ի բացեայ կամք , այլ հոգւով զմիանալն փափաքելիք նպաստիւք բանաւոր կցորդութիւն· բան խնամութիւն և միահոգի պարապումն ՚ի գիրս՝ լցցի մեզ ոգի շաղկապէ· յայսմ կրթուն երբեմն ՚ի քրոյն ընտրեալ զօգեցիցիմք , երբ անբաժանին փեսամբ , որպէս թէ միշտ սեռանիցեմք զմիմեանս , միով հնչով , միով կամք հաստատեալք ՚ի Քրս :

79· Աբնդրել գուլվախեսուիք : ձեռ· օրինն· փեսուիեան : Բանիւս ՚ի գերիս եբանեն կարծիքն՝ որ համարեր թէ սքս Գրիգոր առաջնակ գըլսաւ հանգիսի փոխադրումն սէյ Խաչին Աղաթանից· քանզի և կողմանցն իսկ և խորանացն անուս ասէ զանձն : Ա՛յլև ՚ի տեզս սասի ցուցաք ՚ի Նախադրումն Պատմութիւն Խաչին Աղաթանից , թէ այլոց ուրուք վարդապետի յաւելուածս արարեալ լինէ ՚ի պատմականս անդ· որպէս և ինքն երկնիկ Նարեկացին տայ համարձակումն՝ ընդ զուսկան գրուէ : յարմարման գրուիէ : այսպէս 2 ձեռ· օրինն· իսկ տպ· յարմարան : Բայց սակայն գործ էր՝ ըստ բանի և ըստ կամաց նարեկացւոյն՝ զյաղմապատկեան առնել յաւելուած , և ոչ զաւելորդ և զկարկատուն :

80· Իսկ գործոյ Ե ՚ն ֆոյր : ձեռ· օրինն· իսկ գործ· և մարթի է պար-

զել. գործ ոչ որոշեմ լինձ և ոչ զկոքը ժամանակ : Ա՛յլ ես հարցանել ցանկալի զերանելն անձինն , զո՞ր գործ խնայեցեք արդեօք . ո՞չ ահա առն վարդապետի սեղհական և իբր միակ գործ է՝ յարաժամ զեգերումն յընթեռնուլ . որ մարմնասիրհացն նեթե յանգուցածուել համարեալ է , և ի բամբասանս ևս ձգեալ իբր իշամեղուս՝ յայլոցն վատասկոց կերա կրեալ : Ա՛յս եթե յաղագս այլոց Ճգնողական գործոց ասիցէ՝ ոչ սահ մանեալ ժամանակ ինչ , յիրաւի է ասել . վասն զի ջունելը ջաւի սահ մանեալ , այլ միշտ զոր կարելն առնելը . և խոնարհ հոգւոյն ոչ գործ թուելը զոր առնելն՝ առ այնու զոր առնելը յօժարելը . վասն որոյ ժա մանակ պակասելը նմա՝ և ոչ եթե գործ : Ա՛յլ ի կնիք բանիցս՝ զնա ինքն զերջանիկ զՀայրս մեր աղաչեսցուք՝ զարթուցանել ի մեզ եւրովքն աղօթիւք զայսպիսի միտս յորդորականս . քանզի թուի խրատս ինն ազդել առակաւ անձինն յայլ վարդապետս , զի ժրաջանք լինիցին գնոյն ի մի այսոցիկ պարապմանց՝ կամ յընթերցուածս , կամ ի գործնական վարս . զի մի առանց այսոցիկ զրաչան գաւազանաւորք երևեսցին :

Ի կատարած ծանօթութենցն՝ որ ի ներքոյ սըշ Ա՛ծածնին , պատշաճ թուեցաւ յարել զառանձինն բացախօսութիւնն զաշխատասիրեալն մեր յատաչնէ , և զոսպագրեալն յատարս աղօթամատոյց Մատենին . ուրանօր և զպատճառսն նախալեկուցեալ՝ ի՛ր վասն յատճախութե բա նից , և ոչ համառօտաբար ըստ լուծմանցն օրինակի ընթացեալ յայնմ . զոր և ոչ աւելորդ վարկանիմ երկրորդել յայսմ վայրի : Ա՛ռաջին պատ ճառ , զի էր մեր նախայօժար գիտաւորութիւն յաղբատս մտոց մերոց՝ մնանաւորք բանիւք ընծայաբեր լինել ի յիշատակ ամենապատիկ վըշ տաց և ցաւոց մեծի Տէրունւոյն : Երկրորդ պատճառ ծանիցի խորհուն խնամոյ առաջնոյ նարեկեան բանահիւսութենն . յորում երջանիկ վարդապետն ըստ իւրումն սովորութե , մանաւանդ ի վեր ևս քան զսո վորականն , զծածուկ գիտութիւն անձնական ցաւոց Ա՛ծամօրն՝ թաքուն խորհրդով ի կարճառօտ բանս բովանդակէ . մինչ զի ի ներքս ի խուն խնամոյն յատեալ քննութեամբ , թուիմ յիս ինքն զպաղդատարար սր քայի ապշութիւնն մտացն կրել դողութե , իբր համառօտագիծ նշա նագիրս նկատեալ յորմ ապաքանիցին՝ առանց կարօղ լինելոյ մտաւորա բար ընթեռնուլ : (Դանիէլի . Ե . 5 . 25 .) Որով ի թարգմանութիւնն խնամոյն պէտս ունել գոգոյս դանիէլեան հոգւոյն , թէ ոչ զառ ի յատաչնոց ձեռագրեալոց արանցն երկասիրութիւնս ունիմք օժանդակ . որք զգաղանի խորս մերսիրոտական ցաւոց Ա՛ծամօրն՝ ըստ կարի մեզ լուսաբանեցին : Ա՛պաքէն զնոցա ամենեցուն զընդարձակ ճառս վար դապետականս՝ ի մի չոյս բան սքանչելարուեստ համառօտ երջանիկ մերս վարդապետ . հաւաստաբանեալ մեզ զնահութե ցաւոց Ա՛ծամօրն , զպատճառս նոցա և զօրինական , զառաջութենն , զերկարութին , զժուժ կալութենն , զարդիւնս փառացն՝ որ ի նոցանէն ներգործեալ , և միանդամայն ասել՝ զամենայն զվշտագին և զուրախարար հանգամանս ցա ւոցն . մինչ զի յիրաւի է ինքեան , սակաւ ասաց , այլ բովանդակ ասաց :

Օ՜ն եկ այսուհետև ի ներքս ի լուծմունս քանիցն մնացորդ երկիւղիս . վասնզայնեալք ի նոյն ինքն յԱ՛ծամայրն՝ քանալ մեզ զծածուկս խորհրդոյն ցաւոց . զի որ կրեացն՝ նոյն քայլ և զվարգմանեն գիտէ : Եւ մեզ առ առնօր ընդարձակեսցին խղճք , քան բանք . ինձ՝ որ ասեմս , և ձեզ՝ որք ընթեռնուքդ . զի ի ճառս ցաւոց՝ առաւել սրատես են սիրտք՝ քան միաք :

# ԲԱՑԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ի ԲԱՆ ՀԱՏՈՒՂԻՆ ԵԲ ԱՃԱԾԻՆ։

Խրախայիր յաւէտ հրճուանօք քերկրեալդ ի կանայս։ Որ դժուարընդել դաստիարակաւն խաչի վարժեալ կրթեցար, որդւոյ քո կցորդակցութեամբ, միատեսակն ժուժկալութիւք, կրելով զերաշխեպ վըշտաց ծնիցելոյդ ի քէն ետն, մշտաչարչարն մեռելութեամբ, անձնատուչոր տօթով խարուկեալ։ Իբրև զորոջ անարատ՝ քահանայական նուիրմամբ ի վերայ սիրոյ սեղանոյդ մատեար՝ ասրաբոյս և ստեազիսակ՝ գեղծնաբարձ մաքուր պատարագ. ի Հգնաւորական վարս ողջակիզեալ, քան թէ ի սրոյ հանդէս խողխողեալ։ Ո՛ան այսորիկ ի նուէր քո զենման՝ հրեշտակայն պարք պաշտպանեալ, ընդ առաքելոյն գումար դասակցեալ, զմիայն արժանիդ պատուեալ գովելին՝ ՏԲ ԱՃԱԾԻՆ։

Ա. Ըստ բազմադէմ շնորհաց Հոգւոյն՝ խաղացելոյ յանձին զուարթանուն մերս Հռետորի, յիրաւի և կոչմանցն զանազանութեանէ անուանակիր գոլ՝ ամենայն ոք զնա խոստովանեացի։ Վասն զի եթէ զվարդապետականն ասես, թէ զհովուականն, եթէ զյաջողութեացն, կամ զթարգմանութենն, և որ այլն ևս թուեցեալքն յառաքելոյ, (ա. կորնթ. ժբ. 8. 9. 10. 28. 29.) յոլովագունիցն յայնցանէ արժանացեալ և անուանք՝ և իւրաքանչիւր ինչ ի գլուխ հայաստացեալոյ եկեղեցւոյ։

Այլ ինձ ՚ի յայժմու առաջադրեալ բանիս տեսութիւն՝ ոչ ինչ տարադէպ թուի՝ երաժիշտ հոգենուագ զնա անուանել, և կամ՝ նկարիչ հոգենկար. մանաւանդ թէ երկոքումբք ևս պատուեալ տիրապէս. վասն զի երգէ նկարելով, և նկարէ երգելով։ Ուր ոչ զգողմնացի երգիչս է տեսանել՝ ՚ի հռչակ արուեստաշխի քաջափառութենէն. և ոչ զթրակացին որիվոս՝ քնարաձայր երգովքն զառաստպելեալ ըմբս ստեղծանելով, և ոչ զապելէսն կովացի՝ ՚ի խառնուրդն երանգոց անահտականն պատկերելի ՚ի մնոտիս տաժանեալ։ Այլ զի՞նչ, հրեշտակ ՚ի մարմնի՝ քնար զարտին առեալ տաղաւղի, երգել՝ քաջ հնչեցուցանել ՚ի լեզուս ազգաց՝ զերկնից իսկութիւնն զանհամեմատ փառացն գովեստս ձայնիւ, և զառ ՚ի սրտէ՛ն պատկառելին տեսակ պատկերի անզուգականն մեծութենէ տիրածին կուսին՝ ըստ տալնելոյ բանեղէն գեղոյ՝ ՚ի տես նկատման նուաստահայեաց մերոց աչաց՝ չքնաղ կերպագրել։ Եւ ահա ՚ի հրաշատիպ նորայիս հիւսուածոյ՝ մի և այս նուագ ճանաչէ։

## Լսրախոսիչք յաւէտ հրճուանօք բերկրեալք ՚ի կանայս։

Բ. Օ՛յժ առաւելեալն ՚ի կիրս հոգւոյն զարթուցանել հնարի՝ խրախուսիչն ասելով. ոչ սոսկ ուրախ լինել, այլ գլխովին պատարուն ունել զսիրտն խնդութենէն շարժմամբ, անխառն ամենևին ՚ի մասնէ տրտմականացն. զի այս է խրախանալ։ Եւ զայն ոչ վայրապար՝ ՚ի սրտին ևեթ կրելով, այլ յաւէտ հրճուանօք. ՚ի դէմն երեսացն՝ ՚ի ձգումն ձեռին՝ ՚ի շարժուած անձինն արտաբերել զներգոյացեալն ՚ի սրտի զուրախութիւն. զի ըստ առաքեալն՝ և ցայտմունք իւր. և հրատին բորբոքելոյ՝ բնաւորեալ է կայծականացն թօթափումն։ Իսկ այսպիսւոյ ամենապատիկ ուրախութենէ ոմ այլ ոք տիրապէս արժանի՝ բայց դուն միայն ասէ՝ Բերկրեալ ՚ի կանայս։ Զի այլոց կանանց տրտմութիւն եղաւ ՚ի վերայ, և ցաւք, և հեծութիւնք, և ընդ արամբ նուաճութիւն. դուն միայն անպարտական այսմ ամենայնէ, ՚ի քեզ բերկրեալ, և այլոցն ամենեցուն բերկրեցուցիչ յիրաւի ճանաչիս։

Իակ արդ՝ զոր խրախամտութեանէ պատճառս տալ ունիցիս ոմն երանելի՝ ամէն սաւ· արդեօք զառ ի ծննդենէն զբազմազեղ շնորհացն լնուն, արդեօք զդաբրիէլեան աւետեացն մեծարանս, զծածամայրութենէն արդեօք, միթէ զծննդեան կուսական, կամ որ այլ ևս գերազանցութենէ են մասունք՝ նորուն ծածանողութենէն վայելչականք ։

## Որ դժուարընդդէմ դասախարակաւն խաչէն վարձեալ երևելոյ ։

Գ· Լաբէ, նոր զարմանս. նորանշանս իմն հնչեցուցանես ո՞ ծածկինդ զրիդորիէ. զինչ այլափոխութիւն իցէ կերպարանաց բանիդ, յառաջագոյն զուրախականն սկզբնաւորեալ նուագ, անդէն առ նմին զկարի արտմականան յաճախել, խաչ, միածնի սուգ. վիշտս անփարատելիս, մեռելութիւն անմահ. անձին տոչորումն, ողջակիզումն միանգամայն և զենումն ։ Խաչի զինչ միաբանութիւն ընդ խրախութեն կայցէ. որպիսի ինչ էցեն հըրճուանք մեր սգաւորի՝ ընդ որդւոյ մահակից եղելոյ ։ Ո՛չ զոք ի ճարտար երեցողացն՝ լուաք ընդ խնդականան ի ներքս ածել խառնել զարտմականան. և ոչ զայն ոք ի պատկերագործաց, որ ի դծագրութեի շքեղաշուքն հանդիսի թագընկալութե մեծի արքայի՝ զվաղամեռիկ եղելոյ միածնի արքայորդւոյն զաշխարհումն առ նմին նկարիցէ ։

Մարմնական ճարտարացն՝ ասէ, արդարև այդ զդուշալի· այլ հոգեպէս երդողացս՝ ոչ նոր ինչ, կամ պարսաւելի· զի ուր ցաւք՝ փառաց լինին պատճառք, և մահ՝ յաղթանակ կանգնէ ի վերայ մահու, անդանօր յիշատակ ցաւոցն և մահուն՝ մեծի խնդութե է արարող ։ Ո՛չ նա ինքն ածամօրն որդի՝ իւր փառս զնաչն առնայնէր ։ ( Յովհան. ժբ. 23 ։ Կոչ. ընծայ. երես. 236 ։ ) Ո՛չ առ յիշատակէ խաչին պարծանաց՝ զնոցուածոցն վէրս անկից պահէր ի փառաւորեալն մարմնի՝ մինչև յիւրաքանչն աձոռ յերկինս ։ Զնարդ և պօղոսի չգտեալ յամենայն հրաշակերտս երկրի այլ ինչ նիւթ պանծանաց, զնաչիւն թևածէր ։ ( գաղատ. գ· 14 ։ ) Ապա արդարապէս և կարի առաւելութիւն նմին իսկ ածամօրն՝ պակ փառաց և խնդութե առիթ զնաչն է համարելն. որպէս յաջորդոքն յայտնեսցի ։ Վ՚ որոյ երգեմ՝ գոչեմ, կրկին երկորդեալ զնախընծայ ըղձաձայնութե. խրախոյժ յաւէտ հրճուանօք բերկրեալք ի հնայս ։ Վ՚ասն զի

## Դժուարընդդէմ դասախարակաւն խաչէն վարձեալ երևելոյ ։

Դ· Դասախարակ՝ խնամածու է մանկանց ի մարմնական կենցաղս՝ միանգամայն և ի հոգեկանս ։ Ապաքէն հոգեվարժ դասախարակութենէ ինչ առ ի մարդկանէ չունէր պէտս կոյսն սրբասուն, որ էրն անդստին ի տղայութենէ՝ վարուք յաղթել բարութենէ լեալ, առաքինութեամբ հպարել ։ Զինչ ապա. վճռակեցաւ նմա ընդ այնպէսեաւ լինել դաստիարակաւ, յորմէ այլք խոր-

շին՝ մերժին, զերեսս դարձուցեալ. վասն զի գՅոասբընդել է, ՚ի ժժուարինս և ՚ի ցաւելիս ընդելացուցիչ և վարժիչ. վասն որոյ և ժժուարաւ առ ՚ի մարդկանէ ընդելական: Խաչն՝ որ յամենայնոյն թիկանց ընկեցիկն էր իբրև ժժուարակրելի, միայն զԼիկոնս մատաղ կուսին եգիտ իբ ասպնջական. ՚ի նմա հանգեաւ, մանաւանդ թէ հրաւիրեցաւ սիրողապէս ընդ ածամայրութեն: Վասն զի ոչ միայն ՚ի մարգարէիցն տեղեկացեալ դիտէր զմեսիային ապագայ վշտամբեր կեանսն, այլ և յաւետել հրեշտակին զնորա կոչումն ՚ի մայրութէ մեսիայի, ոչինչ է յերկուանալի՝ թէ ընդ այլ յայտնութենցն ծանեաւ որոշաբար և զնաչակիր կենացն խորհուրդ. որպէս և մայրական պաշտամանն վայել իակ էր դիտել. այն զի՝ կոյս ածէ մատ լուեալ ՚ի հրեշտակէն զԳաբրիէլ ՚ի վերայ տանն յակոբայ՝ և զիրկել ժողովրդեանն, յայտ է թէ զիրկադործութեանն յեղանակ ոչ մարմնապէս իմանայր՝ սրով և աղեղամբ, այլ իրաւամբք և արդարութէ: Դժպատեհ լինի թուլ կարծել, թէ ՚ի հինսն յաւետարանել հրեշտակին զնունդ սամիսոնի՝ յայտնեալ իցէ և զերինակ վարուց նորա կրկին երևմամբ մօրն և հօրն. (Դատաւ. ժԳ. 5. 14:) իսկ ՚ի նոր աւետարանութէ առ ՚ի կոյսն՝ լուեալ իցէ զհանդամանս ծնելոյն: Ապա դիտէր, և դարձեալ դիտաց զնաչէն պատրաստութէ աւետարանելոյ որդւոյն. յանձն առ՝ ընկալաւ զմայրութէին. ընդ նմին և զնաչակցութէին. անդէն բղխեաց սէրն մայրենի, զոյգ նմին և ցաւն. և մինչև էր որդւոյն զիորձ առեալ վշտացն, մայրն զնոզական աղէտսն ճաշակեաց. նմանաբար կրեալ մօրն սամիսոնի, որում յառաջքան զորդին հրամայեցաւ զուսումնասիրութէ պարտն վճարել՝ ժուժկալութէ ՚ի գինւոյ և ՚ի ցբոյ: (Դատաւ. ժԳ. 4:)

Կամիցիս գիտել զարձեալ զնաչէն դաստիարակութէին առ մատաղամայրն մարիամ. փութա՛ մուտ ՚ի տաճարն առ ալևորն Հոգեկիր սիմէոնն. տես զնորա օրհնաբան լեզուն՝ սուսեր ածամուխս պատրաստեաց Հոգին. * Ընդ քո իակ անձն (ասէ) անցցէ սուր: ‖ (Ղուկ. Բ. 35:) Դիմանաց ձայնն ընդ լսելիս կուսին, և եղև ՚ի սրտին սուր հատու ՚ի վերս Հոգւոյն: Դիտեն վիշտք յառաջատեսք՝ և նախ քան զիորձ իրացն տագնապել զսիրտ, և առնել՝ որպէս սենեքա ասէր, յառաջ քան զշուառութէին՝ թշուառ: Աբրահամու հարիւրաւոր ամաց յառաջ ծանուցեալ ՚ի Թմրութենն զգալոց տառապանս իւրոյ զաւակին, ՚ի տագնապ ընկառնէր ծերունին, և ընդ դիշերոյն՝ խաւար զաչն պաշարէր, և ահ զսիրտն հայրականամ: (Ծննդ. ԺԵ. 12. 13:) Իակ արդ՝ զոր վերս կարծիցեմք ներդործեալ զկուսական սրտիսն ՚ի սիմէոնեան սրոյ անտի. ապաքէն սաստիկս և անհնարինս, և օր ըստ օրէ զայրացեալ՝ ըստ իբրաքանչիւր վշտաց որդւոյն ՚ի պլուխս ելանելոյ. որովք երեանամեայ ժամանակաւ վարժեալ հրահանդէր յուսումն արիւնագին մատենի քառակողմեան խաչին: Վասն զի որդւոյ նուիրելոյ ՚ի

ցաւս՝ այնպիսի իակ վայել էր մայր վշտամբեր . և որ հանդիսա-
կից լինելոց էր ընդ ածորդւոյն ի նորոգումն աշխարհի, ա-
րիականի ունէր պէտս կրթականութեան :

## Որդւոյ ոռ էղբդաչյուեամբ :

Ե . Օ հաղորդութենն ի վիշտս՝ սփոփանս լինի վշտակցացն
ասացին իմաստունք՝ յորժամ ընդ օտարս լցէ . բայց ընդ որդ-
ւոյ՝ կրկին տանջանք են . և ըստ միակ որդւոյ՝ սաստիկ ևս . իսկ ըստ
միամօր որդւոյ անմեղի՝ անսփոփելի են ցաւքն : Ահա քեզ նպա-
տակ՝ և պատճառ ցաւոց ածամօրն՝ սաստկութենն , և անբժշկ-
ութենն : Որդի՝ որ միակ միխիթարութիւն է ծնողաց ի վիշտս ,
նոյն դարձաւ սէր կուսին ի տանջանս : Ո՛վ աղէտից . մայր՝
որոյ դորով սրտին ոչ ժուժայր ի տեսանել անդամ զանասուն
ոք ցաւած , յիւր իակ որդին միածին և անպարտ՝ նախ առա-
ջին տեսանէր զայն դժնդակութիւնս , զոր յայլ ոք օտար բնաւ
չէր տեսեալ : Գալարէին աղիքն առ կակիծ սրտին, այլ ոչ նե-
րէր հաւատարմութեն թողուլ քանել զորդին միայնակ ի տան-
ջանս : Վ ասն որոյ կցորդիւր նմա մարմնոյն, և սրտիւն , և ա-
ջքն . կցորդէր ի կիրսն , կցորդէր և ի դիտաւորութիւն կրիցն .
այնչափ համակարիք դառեալ իւրում միածնի , մինչև հայելն
կազմեցաւ նորա բազմաչարչար անձինն , ի սիրտ իւր կերպա-
րանեալ զամենայն զնորա տաժանական կիրս . որով լինել նոցա
մի պատկեր՝ և մի նմանութիւն, որպէս ի բնութիւն նոյնպէս ի
չարչարանս . տիրապոյն ևս յանձն սահմանելով զառաքելա-
կանն . * Ջչարչարանս քոյ ի մարմնի իմում կրեմ : ‖ ( Գա-
ղատ . ՚ի . ՚ի : ) Վ ասն այսորիկ ճշմարտութիւն կոչեաց զնա ե-
րանելին հերոնիմոս՝ նահապահիպ ֆե . և նմա միայնոյ իակութիւն
պատկանադրի ասացեալն , ըմպել զբաժակ չարչարանաց վրկ-
չին . որ յայլ մարտիրոսս նմանութիւն իմանի , իբր հաղորդեալք
քոյ ի դիտաւորութիւն կրիցն՝ այլ ոչ ի նոյնութիւնն . ըստ քոյ
և վասն քոյ տանջեալք , այլ ոչ ընդ-քոյ տիրապէս : Իակ ածա-
մօրն չարչարանք՝ ամենայնիւ միաբուն է քոյ չարչարանացն. և
սիրտ նորա՝ արիւնաներկեալ նովին իակ քոյական արեամբն .
որով ստուերականն ճշդրտեցաւ օրինադրուն , այն՝ որ ի սրբու-
թիւն բորոտին՝ յօրինակ ախտացելոյ բնութես մեզոք , հրամա-
նատրէր առնուլ երկուս հաւս սպեա՝ անարատս , զմին սպանա-
նել , և զմիւսն զկենդանի՝ թաթաւել յարիւն սպանելոյն :
( Ղեւտ . ժ՚ի . 4 . 5 . 6 : ) Ապաքէն ոչ զենաւ մարիամ յիւրումն
մարմնի , բայց ծիրանազգեստեալ ներկաւ արեամբն քոյ զե-
նելոյ ի սրբութիւնն մեզոց : Ա՛յլ յառաջակայսն ճեպեսցի՛
բանս :

## Ա՝ապաւէն ձուձկալութեամբ։

Զ. Ա՛չ ըստ մարմնոյ միայն կրից որդւոյն զուգակցորդ հանդիսանայր մայրն դորովական, այլ նովին հոգւով որով որդին՝ հաւասարեալ ժուժկալէր ։ Կամաւորաբար յանձն առ որդին զչարչարանսն, նոյն յանձնառութեի և ՚ի մայրն ։ Կայր որդին ՚ի չարչարանսն և ՚ի խաչին՝ անմռունչ, անտրտունջ. ոչ ժուժայինն օտարքն ՚ի նմանէ. բազմութեի կանանց իբրև զեղերամարս զՀետ ընթանային կոծովք աղիողորմ. (Ղուկ. իէ. 27։) ժողովուրդք ՚ի տեսիլն միայն աղետացեալք, ընդ անձինս ոգորէին կրծոցն բաղխմամբ. (անդ. 48։) Իսկ մայրն զի՞նչ. կայր առ խաչին ։ Մխիթ արձանն լռեկ անդգայ. կայր մարմնովին անդողդոջ. կայր աչօքն անբթիթիթ. կայր լեզուաւն անբարբառ. կայր լսելեօք ամենալուր. հոգւով անխառով, մտօք անտրտունջ, արիութեամբ՝ անմեղկելի. կայր առ խաչին, զի և որդին ՚ի խաչին ։

Զի՞ կաս, զի՞ գործես ՚ի ցաւագին տեսարանիս մայրդ վշտալից. երթ խոյս տուր ՚ի տուն քո աղքատին, և գործեա՛ քեզ աւաղան արտասուաց առ դիւրանալ սրտիդ ։ Եւ զնմին ասէ. ահա՛ որ՛ն իմ ածընկալ տապանակաւ մարմնոյն ՚ի բացի կայ ՚ի դլուխ լերինս մածեալ ՚ի խաչի, և ես առ անին զանձինս դիւրաւթիւն խնդրից եմ. քա՛ւ յինէն. բազմահամբերս որդւոյ ոչ լինիմ մայր անժուժկալ. այլ զուգակցապէս ժուժկալեալ, ընդ՛ զպակասութի նեղութեանց իմոյն Յի՛ւ յիմ՛ն սրտի ։ Տեսանեմ զնորա զամենակիր համբերութիւնն յայ հօրէ՝ իբրև յանապատ դատաւորէ. յաշակերտացն՝ իբրև յանհաւատարիմ երկչոտաց. ՚ի յուդայէ՝ իբր ՚ի գող մատնչէ. ՚ի պետրոսէ՝ իբրև յանծանօթ ուրացողէ. ՚ի հրէից՝ իբրև ՚ի նախանձալից արիւնարբուաց. ՚ի հեթանոսաց՝ իբրև ՚ի դիտութի՛ դատողաց. ՚ի քրիստոնէից՝ իբրև ՚ի դիտութի՛ անարգողաց ։ Ապա համբերեցի՛ և ՚ի մօրէս՝ իբրև ՚ի ծայրագոյն վշտացելոյ, և ես ՚ի նմանէ՝ իբրև ՚ի ծայրագոյնս կրողէ ։ Կայ մեա՛ ուրեմն՝ արձանացիր ՚ի լեառնդ գնւսոյ՝ մայր ո՛ր ։

## Արեւով վէրաշնչող վշտաց ծնիցելոյդ ՚ի *էն տն ։

Է. Ոչ միանգամ՝ ՚ի զննին կայցեն հանդիսի չարչարանաց, թէպէտ և ցաւել ցաւիցին ընդ չարչարեալն, այլ ո՛չ ամենեքին իբրև զչարչարեալն. թէև վշտակիցք, այլ ո՛չ նոյնավշտաք հանդիսին ։ Միայն ծնողական գիտոց է այս բանս ճարտարութիւն, և կամ սիրոյ՝ որ կապիկն է ծնողականին, զկիրս ցաւոցն՝ յորդւոց անտի յինքեանս վերաբերել, և իբր իւրացուցանել նոյնութի՛ն, քանիմ կցորդութեամբ ։ Եւ ահա այս ա՛ի ՚ի ներքին պատճառաց անտի՝ գոլիմն ծնողական, որով ածամայրն առ չարչարանօք վրկչին ո՛չ այնչափ վշտակից ճա-

նաչնւը , քան թէ կրողական բուն իսկ ցաւոց տէրունեան կրկին : վ ասն զի որ չարչարիւրն , ի նմանէ ծնեալ էր . ի նմանէ միայն՝ առանց հօր . ի նմանէ՝ անցաւ և անախտ . ի նմանէ՝ անդրանիկ և միածին . ի նմանէ յառաջ քան զմարմնով յղու-թիւնն՝ ծանուցեալ , հաւանեալ և յղացեալ ի միտս կամա-ւոր հաճութիւն , դիտելով թէ ոչ իւր է : Եւ ոչ միայն այս-պիսի ծնեալ ի նմանէ հոգեպէս և մարմնապէս , այլև անհա-մեմատ գթովք և խնամօք մնուցեալ և աճեցուցեալ յարբունս հասակի , իբրև միակ դանձ սրտի , կամ լաւ ևս ասել , իբրև սիրտ իւրոյ սրտին , և կեանք հոգւոյն , և խորհուրդ մտացն , և լոյս աչացն , ոչ ինքեան միայն անյագ ըղձալի , այլ և ամենե-ցուն բարեսիրաց՝ տեսլեամբ ցանկալի , վարուքն օրինակ , վարդապետութիւք առաջնորդ , աքանչելեօքն բարերար համօրէն աղգին : Եւ ահա զորդի մի այսպիսի տեսանէ , ոմ անբմբերե-լի տեսիլ , տեսանէ անպարտ մատնեալ ի ձեռս անօրինաց՝ բայց իբրև իրաւամբք . մատնեալ ի հարուածս , ի ձաղանս , ի նախատինս , ի վէրս համաճարակս , ի թուք երեսաց , ի խայթուածս դլխոյ , ի պատառուածս ձեռաց և ոտից , ի խաչ անարդութեան ընկերութիւք աւազակաց :

Ա յսմ ամենայնի ականատես կացեալ և ականջալուր , ոչ մարմնապէս միայն՝ ի զգայութիւնն ևեթ բերելով , այլ մտա-ւորապէս ի խորհուրդս սրտին կշռեալ զամենայն , զնւբաքան-չիւր մասանց կրկին զհանգամանս առնոյր ի միտ , մանր որո-ճայր՝ խնամայր զդառնութիւն եղէգ արտաքին տանջանացն , և եղէգ ներքին ցաւոց որդւոյն . ոչ միայն մարմնականացն , այլև հոգևորացն՝ որով փրկիչն դժնդակ ևս քան զմարմնոյ ցաւսն՝ հոգւոյն տագնապէր , թախծեալ անհնարին ընդ մեղս ածասպանութեանն , ընդ կորուստ սպանողացն , ընդ թողա-նալ իւր ի հօրէ , ընդ կորուստ անբաւից ի մարդկանէ՝ և հաւատացելոց իսկ , որք անմասն ի նորայն կրկէ՝ և անարդուք հանդերձեալ էին երևել : Ա յս կրկին տեսութիւն աչաց և մտաց տիրամօրն՝ միաբանեալ ընդ մայրենի զթոյն՝ զինչ այլ ներգործէր ի սիրտն դորովական , բայց իբր երկաթի զրչաց նմանութիւք՝ զամենայն զկիրս ցաւոց որդւոյն ի մայրն քանդա-կել : Զի երկոքին այս՝ սէր , և ճանաչումն՝ ինքնին բնութեամբ են նմանեցուցիչ և միաւորական . և եթէ պիտակաբար ար-դարանայ արիստոտէլի առաստացութիւնն , Աէտն էմանալէ՝ էա-նի ամենայն , բայց աստանօր իրօրէն տեսանի ճշմարտութիւնն , որով մայրն ի գործարան մտացն՝ հալոցաւ սիրոյն փոխակեր-պեալ , լինի ամենայնիւ որ ինչ որդին՝ համակ ցաւ :

Ո՛վ աղէտք անբմբերելի . դժնդակ էր նմա և դոյզն ցաւ որդւոյն . հարուած ասղան ևեթ ի մարմնի որդւոյն՝ իբրև զկոցումն տիգի այնպէս աստկանայր ի սիրտ մօրն . որպէս ասէր ոմն յերանաշնորհ վարդապետաց . և զինչ ապա ազեղ-ցին ի նմա տանջանքն դժնդակք և բազմապատիկք : Մէյ մէյ ի վշտաց որդւոյն՝ անդրէն հնչէր արձադանք կսկծանաց յանձն

մօրն . ցաւք՝ որք յորդին մարմնաւորք էին , ՚ի մայրն ՚ի հոգ-
եւոր փոխարկէին . և որք յիւրաքանչիւր անդամն և ՚ի զգայու-
թիւնս որդւոյն բաժանաբար կային ցաւքն , համախուռն ՚ի
միակ սիրտ մօրն իբր ՚ի քրայս ժողովէին , այնչափ սաստկա-
գոյնս՝ որչափ ուժգին ևս դիտէ ներգործել զօրութիւնն միա-
յեալ քան զզրուեալն ։

Ը . Արդարև տիրեաց բովանդակ սրտի նորա ցաւոցն բըռ-
նութիւն . և ըստ դրեցելոյնն՝ եղև նմա եղբօրորդին իւր ծռոր
ապաւէն . ( երգոց . ա . 12 . ) ոչ ևս յանուշել զհոտոտելեան ,
այլ ՚ի դառնացուցանել զբիմն հոգւոյն . և հանդչէ նա ՚ի մէջ
ափանցն , ՚ի սրտին գործարանի խաչիւն հանդերձ . մինչև եթէ
էր տեսանել զնորա զսիրուն , բայց որ աչք ժուժային , ոչ էր
մարթ ՚ի վերայ կալ հաւաստեաւ . արդեօք խաչ էր մեղէին ,
կամ սպանդ արիւնաւոր , կամ գերեզման որդւոյն ։ Ապաքէն
մտտեան կազմեցաւ նմա որդին , զրեալ նեղբոյ և արտաքոյ
ողբս և վայս . ( եղեկիէլ . ք . 9 ։ ) որ թէպէտ և զառաջինն
քաղցրացաւ ՚ի բերանին , անցաւ և անտրտում ծնանելով զնա ,
բայց ահա ՚ի կատարածիս դառնացաւ որովայնն կուսական ,
( եղեկ . է . 3 ։ յայտն . ժ . 10 ։ ) բազմապատիկ տոկոսեօք հա-
տուցեալ զերկուսնն . մանաւանդ թէ որպէս բանիս կարդ է
ասել , կրկնակի եղեալ մայր ցաւոց՝ որդւոյն վշտաց , ըստ քաջ
խնայ կշռուելեան խնաստնոյ ուրումն , որ դուէ հիացմամբ .
* Ո՛ դաղտնի կրկին մայրութիւն ածային , որով ցաւոցն դառ-
նութիւք կոյսն ածամայրն կրկին ծնաւ զքն ածն . այնչափ ցա-
ւոցն խստութիւն զմայրն ևս գտանէ , և առնէ ։ ‖ Ա յսպէս ա-
հա ՚ի նսեմանալ արեգականն արդարութիւն , և լուսինն մա-
րիամ լինի բոլորովին արիւն . ( յայտն . ղ . 12 ։ ) և սուր ար-
դարութիւն ևս հօր՝ զարթուցեալ ՚ի վերայ հովուին քրի , ( զա-
քար . ժգ . 7 . ) հարկանէ միանգամայն զմայր առ մանկան .
( ծննդ . լբ . 11 . ) որ քան զամենայն հարուածս դժնդակն է
և դառնամահ ։ վ ասն այսորիկ իրաւացի քննութիւք բարձրա-
ձայնեալ գոչէ փողն լամբրոնեան . ( Ճառ Համբարձ . երես .
68 . 69 . ) Խոցեցաւ ասէ՝ ՚ի նախատանացն սայրասուր սուր-
բօք . բերան նորա կափուցեալ տատանէր յանձառ խոնար-
հութիւն որդւոյն . և դէմքն սուգ զգեցեալ մեծին տուելոք ։
Եւ զայս ոչ վայրապար բանիւ լոկով ասէր երանելիս , այլ ՚ի
փորձոյ անձինն՝ ըստ փոքու իւր կրից զնորա զմեծամեծսն չա-
փեալ գուշակէր . վասն զի եթէ յանձն իւր այնչափ աղդէին
կիրքն տէրունականք , մինչև աղաղակել . ( մեկն . սաղմ . ճղթ .
7 . ) * Թաւալեցայ յորժամ առ քեզ ակնարկեմ՝ ով վասն
իմ ապտակեալ , ‖ ապա աստի ՚ի միտ առնոյր՝ թէ որ անչա-
փութիւն ցաւոց յորդեաց զեղաւ ՚ի սիրտն մայրենի ։

Թ . Լսակ արդ՝ եթէ այսչափ անհնարինս խմացաք զաղէտս
տիրամօրն առ որդին , զինչ ապա զզրուցն առ մայրն խնամա-

լե էջ. առ որս սքանչելի հարաղատուԹիւն զամենայն ինչ փո-
խադարձ և հաղորդական արար՝ եԹէ զուրախականն, և եԹէ
զտրտմականն: Ապաքէն խիստ ևս քան զտանջանս խաչին
ծանրացան յորդին աղէտք մօրն, որչափ զի առաւելապատիկ
սիրէր զնայրն քան զնա մարմին ըստ բնականացն: Զայն կա-
րեկցուԹիւն որդւոյն քաջ տեսանէր մայրն. տեսանէր՝ և կրկին
ևս աղէկիզեր իբրև ընդ նոր ինչ ցաւս՝ յիւրմէ ներդործեալ
յորդին. և որդին դարձեալ ցաւս ընդ այնր ցաւոցն մօրն փո-
խանակեալ աղետանայր. երկոցունց առ միմեանս կարեկցու-
Ժիւն, և ոչ միութիւն միխիԹարուԹիւն, այլ յաւելուած ցաւոց. ա-
րինակ իմն իբրև երկուց ժայռից ՚ի ծովու սեպացելոց, ընդ
որս բաղխելով մրրկածին ալեացն, անդրէն խառնվեալք՝ մեծ
ևս ծփանս ՚ի տեղւոջն կացուցանեն: Այլ ՚ի վերայ այսր ամե-
նայնի՝ մայրն սգալից իբրև արբեալ ցաւոցն բաժակաւ, ոչ
իւրութիւն՝ և ոչ որդւոյն աղետից տեղն տայ հրաժարեալ. տան-
ջի՝ և տանջին, և առ խաչին ժուժկալէ, զի առաւել տանջեացի,
զի բոլորապտուղ ողջակիզի որդւոյն՝ զամենածախ հուր ցաւոցն
մատուացէ՝ ՚ի կատարեալ նուիրագործուԹիւն անձին և որդ-
ւոյն:

Ժ. Ազդաբէն այս խորը ցաւոց տիրամօրն՝ անհնարինք առ
խմանալ, և անճառք ՚ի յայտել, ոչ մարդկեղէն լեզուի ևեԹ,
այլև հրեշտակայնոյն, որպէս ոմն յածազգեստիցն Ճշգրտա-
բանեաց. միայն Ձեր գիտելի և Ճառելի: Բայց անհաւատալի
ևս կարծեցեալ լինիցի արդեօք, ԹէՀ ոչ յառաջատեսութիւնն
այ հոգացեալ էր օրինակս կանխագիտելոյս՝ որպէս սակս կու-
սական մայրուԹեան նորա, նոյնպէս և վասն մայրական նա-
հատակուԹեանն: ՚Ի բազմաց անտի յառաջ անցցէ այրա-
սիրոն շամունէ, եօԹնաԹիւ ոգւովքն բարդաւաճեալ աշխար-
հի, և երկնից. (ը. մակաբ. է:) որ ՚ի նուիրութիւն իւրոցն զա-
ւակաց՝ առաւել Ճշգրիտ օրինակեաց զնծամօրն նուիրագոր-
ծուԹի. և շարժեաց զնմանտնոցն զիտոս ՚ի հիացումն, և ըզ-
դրիչս ՚ի զարմանագրել զգովելիս: Նաղելիս իմն խօսի զնմանէ
ՅաճաբանՆն Գրիգոր. (՚ի Ճառն իբ.) յորմէ սակաւս ինչ ՚ի
յայնորդոյ ԹողուածՔ յիշատակել: Այլ երանելի հայրապետն
յովհան՝ ըստ իւրումն ոսկիաբուղխ գրչի տուղէ բանս ականա-
կապս երբեակ Ճառիւք զմակաբայեցւոց. յորոց զյոլովագու-
նիւքն աստանօր զանց արարեալ, յօգեցուԹ զասացեալն ՚ի
Ճառ. ա:* Արի հայիր՝ ԹէՀ նոքա (այսինքն որդիքն) խոշ-
տանգեալ լինէին, այլ հայեաց յայն, (՚ի մայրն.) որ յիւ-
րաքանչիւրսն խստագոյնս կրէր ցաւս, և յիւրաքանչիւրս վերա-
ւորիւր... Բազում անգամ տեսեալ մօր զորդի ՚ի ջերմն տա-
պացեալ, զամենայն տառապանս յանձն առնուլ՝ զի ՚ի մարմնոյ
նորա յինքն զհուր խօԹուԹիւնն փոխադրեսցէ. այսպէս գժո-
խըմբերագոյն համարիմ մայրք զվիշտս որդւոց քան զիւրեանց
ըսրիս... ՚ի տանջանս որդւոցն ծանրագոյն ևս չարչարիւր

մայրն քան զորդիս, և մեծ ևս էր մարտիրոսութիւն ՚ի մայրն՝ քան յորդիս ... մուռացաւ զերկուսիս ծննդեանն. արհամար֊հեաց զընութիւնն. անտես արար զհասակն ... Ջեօթն մար֊տիրոս կրեալս ՚ի միոջէ արգանդէ ոչ բնաւ դիտացի, որոց ինքնին մայրն ընկեր լեալ էցէ մարտիրոսութեանն. և ոչ իբր մի մարտիրոս յաւելուլ ՚ի նոսա, այլ փոխանակ բազմաց ։ Վե֊ զի որդիքն՝ եօթն ևեթ մարտիրոսք էին. իսկ մայրին մօրն ՚ի նոսա յօդեալ, մի միայն մայրին էր. այլ կրկին եօթն մարտի֊րոսաց ընայր զտեղի. զի յիւրաքանչիւրն զնոսա մարտիրոսուին կրեաց. և զի զնոսա այնպիսիս արար, ծնաւ մեզ զկատարեալ ժողով մարտիրոսաց ։ Եօթն ծնաւ որդիս, բայց և ոչ զմին եր֊կրի, զամենեսին՝ երկնից ծնաւ, մանաւանդ լիէ արքային եր֊կնից ։ ‖ Եւ դարձեալ ՚ի ձառն ը ։ * Եւ զորօրինակ քարա֊ժայռ ծովու զդիմեցումն ալեացն յինքն ընկալեալ, մնայ ան֊շարժ, և զնոսա ՚ի փրփուր լուծեալ, ՚ի բաց դարձուցանէ, նմանապէս և սիրտ մօրս իբր վէմ ծովու՝ յինքն զյարձակումն ալեաց ցաւոցն ընկալեալ, եկաց անշարժ. և զյարձակմունսն հաստատուն և խնաստալից խորհրդով ՚ի բաց ցրուեաց ։ ‖ Միաձայնս այսոցիկ՝ բայց կանխագոյն ևս ձառագրեաց երա֊նելին կիպրիանոս կարքեդոնացի. (՚ի դիրս յղ. յորդորանաց մարտիրոսութեան. դլ. ժը ։) ասէ. * Մայրն սքանչելի, որ ոչ կանացի տկարութիւնն մեղկեալ, և ոչ բազմապատիկ անզա֊ւակութիւնն դրդուեալ, զմահ որդւոցն՝ յօժարակամ տեսա֊նէր. ոչ տանջանս՝ այլ փառս վարկուցեալ. այսպիսի մեծ նա֊հատակութիւն ընծայեալ ՚ի զօրութիւնէ աչացն, որպիսի որդիքն ընծայեցին խոշտանգանօք և կրիւք անդամոցն ... Աղաչէր (դկրսեր որդին.) բայց որպէս վայել էր մօր մարտիրոսաց, որպէս վայել էր յիշատակողի օրինացն՝ և ՚ի, որպէս վայել էր զորդիսն սիրողի՝ ոչ մեղկաղէտ, այլ արիաբար ... Ա֊յ֊նու համարիէր զանձն՝ մայր եօթանց լինել մարտիրոսաց, եթէ վիճակէր նմա զեօթանեսին որդիսն առաւել ՚ի ծնանել, քան աշխարհն ։ Վասն որոյ սպառազինեալ զնա և զօրացուցեալ, և երանագոյն ևս ծննդեամբ ծնեալ զորդին, ասէր. Ողորմեայ ինձ որդեակ իմ ... Գովութիւն մեծ էր մօրն ՚ի յորդորմունս քաջութեանն. բայց մեծագոյն ևս՝ յերկիւղին ՚ի, և ՚ի ճշմար֊տութեան հաւատոցն. զի ոչ յանձն՝ և ոչ յորդին ձգէր զմե֊ծարանս վեցեցուսնց նահատակելոցն ‖ ։

Ջուգաբան նմին գրեաց և ՚ի ծննդեանն օգոստինոս. (՚ի բանն. յ.) ասէ. * Ուսցին կանայք յայնչափ համբերութիւն և յան֊պատմելի քաջութիւն մօրն, որ գիտացեալն էր զարմանել զոր֊դիս իւր. գիտաց ստանալ՝ զորս ոչն երկնչէր կորուսանել։ Ն֊ա֊քա յիւրաքանչիւր անձինս զգալով, նա տեսանելով զամենե֊սին՝ չարչարիւր. մայր լեալ եօթն մարտիրոսաց, եօթնպատիկ մարտիրոս, չմեկնեալ յորդւոցն՝ ՚ի զնին կալով, և յաւելեալ յորդիսն՝ մեռանելով։ Տեսանէր զամենեսին, սիրէր զամենե֊սին, կրէր յաչսն՝ զոր ամենեքին նոքա ՚ի մարմնի. և ոչ միայն

զարհուրէր, այլ յորդոր ևս մատուցանէր ‖ : Եւ զկնի զարձեալ. (ի բանն. յա:) *Լուաք, ականջօք տեսաք սրտիւ զնայրն՝ որ փափաքէր նախաւախճան լինել որդւոյն ի կենաց աստի, կարի հակառակաբար ցանկացեալ սովորութեամբ մարդկան. զի ամենայն մարդ վաղադոյն քան զորդիսն կամի կարճել ի կենաց աստի, և ոչ զկնի դնալ. իսկ սա ըղճանայր յետոյ մեռանել. զի ոչ եթէ կորուսանէր զորդիսն, այլ յառաջ առաքէր. և ոչ հայէր ի կեանսն՝ զոր վախճանէին, այլ զոր սկսանէին ... փոքր էր լինելն նորա ականատես. այլ յաւէտ աքանչացաք ընդ լինելն յորդորիչ. առաւել բարգաւաճ առաքինութիւնք, քան զաւակօք. տեսեալ զպատերազմօղն՝ յորս ամենեսին ինքն պատերազմէր. և ի յաղթել ամենեցուն՝ ինքն լինէր յաղթական : Մի միայն կին, մի միայն մայր՝ զնարդ մեզ յանդիմանն երևեցուցանէ զմի մայր եբ եկեղեցի, որ ամենայն ուրեք յորդորէ զորդիս իւր մեռանել վասն անուան նորա, յորմէ յղացաւ և ծնաւ զնոսա ‖ : Յայս յաւելուլ և մեզ արժան է. մի միայն այս մայր զնարդ գեղեցիկ նկարագրէ զձեռամօրն զնահատակութիւն, միանգամայն և զարիւնթիւն, ըստ յարմարութեան՝ և ոչ հաւասարութիւն. զի եթէ նա աչօքն նահատակեալ, սա ձեռամայրս՝ և աչօքն և մտօք. նա եօթնպատիկ մարտիրոս, սա բիւրապատիկ վկայութիւն՝ որդւոցն որ նախամեծար է քան զբիւր որդիս. նա յորդորիչ միայն նահատակելոցն, սա նախայօժար և ինքնանուէր. նա յօտարաց տեսանէր զորդիսն խոշտանգեալ, սա յազգայնոցն և յերեսաւորելոց. նմա ազգն ողջոյն գովաբան և սգակից, սմա՝ ազգն թշնամանադիր, և սգակից առաւել անզգայ արարածքն՝ քան բանաւորքն : Զի ևս երկայնեմ. նա մխիթարեալ, մահակից որդւոցն լինելով. իսկ սա անճաշակ և յայսմ մխիթարութէ : Վասն զի կայր և կրէր

## Ա՛ղաւաղուղարն Մեռելութիւն :

ԺԱ. Ո՞վ ինչ են աքանչելիքս՝ լալոյ յաւէտ արժանի. զնարդ որ միշտն չարչարի, մեռեալ ասիցի. զի որ չարչարին՝ կենդանի է, և որ մեռեալն, ոչ զդայ չարչարանաց : Իսկ սա միշտ չարչարի, և միանգամայն մեռանի. ապա ուրեմն ի մահուն՝ կեանք, որ հրաշափառադոյնն է ի աքանչելիս : Ո՛չ այլաբանական ինչ կամ ըստ աւելորդութէ է ասացեալս, այլ կարի հաւաստութէ. վասն զի առհասարակ վարդապետաց միաբանութէ հաստատեալ է բանս, վկայեալ և ի մեր իսկ մտաց, թէ ցաւք տիրամօրն առաւել մահառիթք էին քան զհրոյ և զրոյ բռնութէ : Ապա կենդանի ի նոյնս տոկալ ոչինչ էր ընդհատ՝ քան թէ զմահ ընդ կեանս լծորդել : Մանաւանդ զի՝ որպէս ոմն յերաշնաշունորհացն ճշմարտէ, եթէ էր հնար զցաւս ածամօրն մասնաւորել յամենայն մարդիկ, ամենեցուն առ հասարակ անդէն տապնապ մահու ի վերայ հասանէր. ապա ուրեմն ի միում կենդանութենն՝ կրէր մահուանս անհամարս. իբր յանձն

իւր ձշդրտեալ զասացածն Թագէոսի խնաստասիրի. Ընդ մահ և ընդ կեանս չիք խոիր. մանաւանդ և զառաքելականն տպաւորադոյն ևս կատարելով, յամենայն ժամ զմահն յի՛ն կրեալ։ (ը. կորնթ. դ. 10. 11։)

Արդարև տեսարան սքանչելեացն ե՛յ կարգեցաւ տիրամայրն, յորում զամենևին ղհակառակն միաբանեաց հղօրն. զկուսու-Թի՛ն ընդ մայրու-Թի՛ն. զաղխտաւորու-Թի՛ն ընդ քաջասրտու-Թեան, զանհամեմատ բարձրու-Թի՛ն ընդ ցածուն նուաստու-Թ. սոյնպէս զմահ դառն՝ ը անհրաժեշտ կենդանու-Թ. առաւելահրաշ ևս այսու երևեալ քան զմորենւոյ վառելոյն անկիզելի մնալ։ *Ծրա-բլիցՙ ոք (ասէր սողոմոն. առակ. դ. 27.) հուր ի դոգ, և ըզհանդերձն ոչ այրեցէ ‖։ Ա յո՛ բնական օրինաք ո՛չ բնաւ այդ մարթելի. բայց ահա աստանօր հուր անձնատուրոր ծրարեալ ի սիրտ տիրամօրն, և զմարմնոյն հանդերձ ոչ այրեաց. զի երկորումբք միանդամայն հաւաստեացի ասացեալն. *Ես սպանանեմ, և ես կեցուցանեմ ‖։ (ը. օրին. լը. 39։) Վասն որոյ և յայսմ ի սոյն կարօղ էր տիրամայրն երգել լալագին, Աւաղ ընդ իս ՚ի ՚ծծաՙեծս հղօրն։ Արար արար արդարև ընդ նա հղօրն՝ զաղգակցու-Թի՛ն ինչ կենաց ընդ մահու՝ ի հանդէս իւրոյ ամենաՙպակ ամենևին՝ պարառու-Թը ամենայն ցաւոց. վասն զի ճաշակեաց ի մահուանէ զայն՝ որ դառնու-Թենն էր, և ոչ որ դիւրու-Թեն։ Ամենայն վշտաւեաց և տառապելոցՙ միակ յետին մխիթարու-Թի՛ մահն է. որ թէև ցաւեցուցանէ, բայց և զայլ ցաւս յանդգայու-Թիւն դարձուցանէ. վախճան ածէ կենայնՙ բայց և վշտայն. ահաւորադոյն է ի չարիս բնու-Թե, այլ ունի և զայս բարի բնու-Թե. և չարչարեալքն յանողորմու-Թի՛ բռնաւորացՙ միայն ի մահուանէ ողորմու-Թի՛ գտանեն։ Իսկ առ նը կուսիւն ոչ այպէս. կրէր զտագնապ մահուն, ցաւէր առ ի մահ, մեռա՛լ կայր յանձին դեղարդն մահու, այլ ոչ բառնայրՙ ոչ զկեանն, և ոչ զվիշտն. և ուր յայլ մարտիրոսս բազում անդամ աքանչելագործէր ած՝ առ ի չգալոյ նոցա զցաւն, ի նը տիրամայրն արարՙ զի զդայեկ բովանդակ։ Ալ զայս իմանայր ոք արդեօք ի մերձակայ եղելոցն օտարաց. ապաքէն և ոչ ոք։ Վասն զի կայր նա

## Աչքնապուղոյ պօՀով խօսուՀելոյ։

ԺԲ. Օ որ օրինակ ամենայն ածապարդև հրաշակերտուիք տիրամօրն ի ներքոյ կայնն ծածկեալք ի յոգւոյնՙ ըստ ասացելոյնՙ (սաղմ. խդ. 14.) նոյն օրինակ և մայրական ցաւոցն սաստկու-Թի՛ յանձն ժողովեալ տոչորէր կիզուն անհնարին, բայց առանց ծուխ Թանձրու-Թե արտաքս երևեցուցանելոյ։ Խնամոտ բնու-Թիս՝ իբր համայնից բժշկապետ՝ ճարտարեաց ամենայն ցաւագնելոց դարմանս բնաւորականս՝ ի բառնալ կամ ի նուազեցուցանել զցաւն. տուեալ աչաց զարտասուս,

բերանով՝ զհառաչումն, լեզուի՝ զողջս, ձեռաց՝ զկոծումն, ա-
կանջաց՝ զմխիթարութեն բանս: Իսկ արդ՝ առ ցաւս տիրամօրն
դարմանատրեաց ինչ արդեօք Ճարտարութիւն բնութե. բնաւ և
ոչ ամենևին: Ամենայն զգայարանք նորա եղեն ժիրաժիր պաշ-
տօնեայք զցաւսն ի նեղջս ժողովելոյ, այլ ոչ արտաքս ցրելոյ.
կամակարք ի յառնուլ, և ձիշդք ի տալ: Որ ի նմա արտա-
սուաց հեղեղք առ խաչին չարչարանօք. անամպ էր երկին և
անանձրև. զայլոց կանանցն զողբումն յիշատակէ դիր. (ղուկ.
իգ. 27:) Իսկ զքո կուսին պարզաբար ցուցեալ, թէ Կայր առ
խաչին: Ընթեռնում թէ կայր, և ոչ ընթեռնումթէ լայր, ա-
զաղաւեմ և ես ընդ երանելւոյն ամբրոսիոսի, (դիրք յղ. մա-
հուան վաղենտինիանոսի, հատուած. 39:) Իսկ եթէ ցօղէր ար-
տօսր ցաւադին՝ երդեաց հոդենուազ մերս հոմերոս, բայց զինչ
իցէ այն ցօղ առ հնոց ցաւոց նորա. ցօղէր արդեօք պարկեշտ
արտասուս, զի ցուցցէ՝ թէ ցաւէր, և ոչ թէ որչափ ցաւէր.
զի կամէր երևել մայր խաչեցելոյն, այլ ոչ անարի: Վասն որոյ
ոչ հառաչանս էր լսել ի նմանէ, ոչ կականումն, ոչ կոծ ան-
ձինն, ոչ ողբարկութեց բարբառս, և ոչ յումեքէ առ նա մխի-
թարութեն ինչ դիւրութեի: * Ո՞վ մխիթարեացէ զքեզ դուստր
սիոնի. զի ծանրացաւ բաժակ բեկման քո. իսկ ո՞վ իցէ՝ որ
բժշկիցէ զքեզ‖: (Ողբոց. բ. 14:) Արտասուք, հառաչումն,
և որ այլն ևս, միջակային ցաւոց են դարմանք. իսկ անընատել
վշտաց՝ պատշաճին զարմանք. չափաւոր են վիշտքն՝ որք տան
խօսել լեզուաւ և աչօք. իսկ անչափն փակեալ կնքէ զբերկոսին,
անխօսութեի ի լեզուի, երաշտութեի յաչս: Ի՛ր կապեցան ձար-
տար լեզուք բարեկամացն յոբայ՝ եօթնօրեայ անխօսութէբ, ա-
պաքէն վիրաւքն յոբայ. զի տեսանէին զանհնարին հարուածսն
և զմեծամեծս յոյժ: (Յոբ. բ. 13.) Ապա վիշտք անհնարինք
լռութէբ յաւէտ պատուին. զի և ոչ քաջարուեստն տիմանեթէս
զհայրական աղէտս ագամեմնոնի ի սուգ խփիգենեայ դստերն՝
այլազգ մարթացաւ բերել ի նկար, քան թէ քող սևաթոյր
դերեսաքն արկեալ: Նմանաբար և ոչ սիրոյն նկարիչ յովհան-
նէս զմայրենի աղէտս տիրամօրն կարողացաւ մեզ նկարա-
դրել, բայց ասացեալ լոկ, թէ կայր առ խաչին:

Նա՝ թէև վշտաց սաստկագունից օրէն էր և ընտանի՝ զհա-
ռաչանօք գալ, և ղողբովք և զկոծովք, բայց սէր տիրամօրն ոչ
օրէն, ոչ պատշաճ: Համեստուհին կուսական, սրտին արիութէի,
համբերութէին լայնատարած, կամաւորական նուիրումն պատա-
րագի որդւոյն՝ այս ամենայն կանգնեալ կային առ սրտին իբրև
ամբարտակք և պարիսպք ամրակառոյցք, և իբր վահանս և
դրունս եղեալ առ յոյն. ընդ որս զարկուցեալ ալեաց ծովա-
ցեալ ցաւոցն, անդրէն յինքեանս ի սիրտն խորտակէին՝ ըստ
ասացելումն առ յոբ. (լբ. 10. 11:) Յաշխարհաժողով բազ-
մութէնն միջն կայր ցաւադին, զի մայր էր. այլ ոչ կոծ, զի կոյս
էր. արտասուք յաչսն, զի մարմին էր. այլ ոչ ողբումն, զի ա-
բի էր. կրկեր զամենայն, զի զգայուն էր. բայց անմռունչ, զի

համբերող էր. որդւոյն արեամբն ներկեալ, ղի համարիւն էր. այլ անտրտունջ, ղի կամաւոր էր: Կամաւոր էր նուէրն, կամաւոր ցաւն, կամաւոր և սաստկութի ցաւոցն. ղի իւր ինքեան էին ցաւքն, և ոչ ինքն՝ ցաւոցն, իշխան նոցա, և ոչ իշխեցեալ. վասն որոյ և ոչ թեթևութեն լինէր ի խնդիր բնաւորական ղեղոքն, թէ և հնարաւոր էր նոքօք դիւրանալ, թէ և կուսական անձինն ոչ անպատշաճ լինէ էին. այլ ինքնակամ հաճութեբն ի հոգւոյն ամիոփեալ արդելոյր զեռանդն ցաւոցն, ղի առաւել ցաւեցի. զզայութեիան զնմ արձակէր ի դիւտ նոր ցաւոց՝ և ոչ մխիթարութեան. և արիագոյն ևս յինքն ընոյր զգրեալսն գրիդորի Նճաբանի ի դէմս շամուենայ. (Ճառ. իբ:)

* Ո՛չ դէսս արձակեցից, ոչ հանդերձս պատառեցից, ոչ զմարմինս ցետեցից, ոչ կոծ եդից, ոչ ողբակիցս շարժեցից, ոչ ընդ խաւար մտից՝ առ ի զօդն ունելոյ ինձ սգակից, ոչ մխիթարչաց ակնկալեցից, ոչ հայ տրտմութեն եդից առաջն. ղի այսոքիկ՝ անարի և փորձոդի մարգ են պատշաճող... Զարտասուս խափանելով, զմայրենի սիրոյս զհաւաստիսն ցուցանեմ ‖: Եւ զնաքդ ոմ մայր ցաւալից, արդարև մայր ցաւոց, մխիթ առ քեզ համարիցիս աւանդեալ զեզեկիէլեան պատգամն. (իբ. 16:)

* Ահաւասիկ ես բառնամ ի քէն զցանկալիս աչաց քոց, և ոչ կոծեսցիս, և ոչ լայցես, և ոչ ելցէ արտօսր ի քէն: * Զայն՝ որ յածուստ անտի սպառնալիք էին պատուհասի, կամաւորակ յանձն ընդունէր տիրամայրն. որով յիրաւի արդեօք ի զարմացումն զտեսօղսն զարթուցանէր. ոչ և առ տիկնոջ ումեմն դիպեալ պատմէ հերոդոտոս. առ որ ժողովեալ կարևոր մեծութեացն ի կոծ առն նորա օտարամահ եղելոյ ի կրկէս ասպարիզն, և ոչ տեսեալ ի նմա արտասուաց իմնունս, հարցանէին. Ո՞ր են արտասուք: Եւ նա տայր պատասխանի. ի ներքս պահեմ, զի բովանդակ զցաւն ի սրտի ունիցիմ: Իսկ մեզ մի ընդ չարտասուել տիրամօրն լոկ զարմանալ, այլ ընդ սաստկութի անըմբերելի ցաւոցն, որով սիրտն դորովական յեռանդն հալեալ տոչորիւր երբև ի խարուկի. և այն՝ փօխով, որ զառ ի յարեդանէ զաստիկ տապն նշանակէ. յայտ արարեալ, թէ բովանդակ ծնողական աղէտիցն այրեցումն՝ յարեդանէ արդարութե ի քէ՛ ներգործեալ լինէր ի հոգի տիրամօրն. որով այնչափ առաւելեալ դառն քան զամենայն մարտիրոսս, որչափ զի նոցայն տանջանք առ մարմնովքն միայն քերէին, հոգւով մխիթարեալք յայ. իսկ առ տիրամայրն՝ համօրէն ի հոգին ժողովէին վիշտքն. որ առաւել են քան զմարմնաւորսն՝ որչափ հոգի քան զմարմին: Վասն որոյ կարօղ էր զերեմիայինն առնուլ ողբս. * Սիրտ իմ՝ դեղաւ յիս, և ես զտայ դառնացեալ‖: (Ողբոց. ա. 20:) Արդարև դառնացար, վասն զի կամեցար: Վասն զի

## Լէքէ զրոջ անարատ՝ քահանայական նուէրդամբ ի վերայ սիրոյ սեղանոյդ Տարեալ։

ԺԳ. Աչնարատ՝ ոչ բացբարձմամբ միայն, անկցորդ դոլով ի մեղաց, այլ և դրութիւն, յինքն դլխաւորելով զամենայն սրբութիւն։ Որոջ այսպիսի՝ ոչ ակամայ յայլմէ ձգեալ ի զենումն, այլ անձնակամ ինքնանուէր մատուցեալ։ Ապա միանդամայն մատուցեալ և մատուցօղ, պատարագ և քահանայ. զի այնպիսւոյ պատարագի՝ այդպիսի իսկ վայել էր քահանայ, որ՝ անմեղ և անարատ։ Իսկ ուրանօր մատեաւ և մատոյց. ի վերայ սիրոյ սեղանոյդ։ Սեղան զոր արդեօք խմասցուք, զսէրն՝ եթէ ըզսիրան։ Եւս զսիրան խմանալ ախորժեմ. խակ զսէրն՝ սուբ կոչեմ, եթէ զպատարագն զենմամբ համարիցիս. և հուր, եթէ այրմամբ։ Բայց զորոյ արդեօք ասիցէ զսէր և զսիրտ, զմօրն՝ եթէ զորդւոյն։ Այլ մի զանբաժանելիսն բաժանեսցուք. անոքոչաբար եղ երանելիս, զի հարազատութեն կապով երկոցունց մի էր սիրտ, մի սէր, մի պատարագ։

Եւ արդ՝ ահա տեսանեմ բացեալ առաջի մեր զաղբիւր անդղնդոց ցաւոց տիրամօրն. որ ոչ յօժարեսցի միջամուխ ի ներքս արշաւել, ահա կանդուն և չափ խորութիւն և լայնութիւն նորա Սէրն. եթէ զսէրն չափել կարօղացար, հասեալ ես յահն ծովուս, և ընդ հետս անդնդոցս շրջեցար։ (յոբ. ԺԸ. 16։) Բայց ով այդմ բաւական իցէ. սերովբէք ի սիրոյ անուանակոչեալք՝ անհաս են մարեմեան սիրոյն. և զի գործիցեն հրեշտակք աստրինք. մանաւանդ ես ակն ունիցի մարդ իբրև զիս անճաշակ ի սիրոյ, որ միայն ճաշակողացն է դիտելի և խօսելի։ Այլ արդ՝ թէև անմերձք իցեմք ի յատակ անդր, առ եզերօքն բերել ոչ ինչ է յանդգնութի, ի ճաշակողաց սիրոյն ձեռնկալեալք։

Զսէրն մայր ցաւոց ասել՝ յամենեցունց է խոստովանեալ. վասն զի հրոյ օրինակաւ ի մի ձուլեալ զսիրօքն և զսիրեցեալն, մի միտս և մի կամս բացակատարէ առ նոսա, որպէս ի բանին՝ նոյնպէս ի չարին. որպէս յօգտակարսն, նմանապէս ի վնասակարս, յուրախալիսն՝ համայն և ի տրտմականս։ Ամենի իրի զնմանութենին՝ գործ և պատճառ սիրոյ ասացին խմաստասէրք. զի սէր կամ նմանս գտանէ, և կամ նմանս գործէ։ Զբոյոց տար սիրողին՝ թէ ի հուր արկաւ սիրեցեալդ. անդէնն և ինքն տոչորի՝ թէև ի զովի կամ ի սառնամանիս կայցէ. կամ թէ աղքատութեն պատահեալ սիրելոյն, անդէնն և սիրօղն աղքատանայ, թէպէտ և բազմագանձ ունիցի զարկեղն. կամ թէ քաղցու մաշեալ, անդէնն և ինքն սովի, թէպէտ առ մեծահաց սեղանով բազմեալ ճաշիցէ։ Չիւանդացեալ սիրելոյն, առ նմին յոգւոց ելանի սիրօղն. լուր նմին իսկ սիրոյ քարոզողին. *Ո՞ հիւանդանայ, և ոչ ես հիւանդանամ. ո՞ գայթակղի, և ոչ ես տապանամ‖։ (Բ. կորն. ԺԱ. 29։) Ճշմարտութեբ արդեօք

խնաստուն[եա]ն առաջինք՝ զսէրն ֆոյր բռնաւոր անուանադրեցին. ընդ բռնաւորն ասել՝ հաւանիմ. բայց մի[թէ] փոքրիկ. մանաւանդ [թէ] նա է մեծն և առաջին բռնաւոր: Ո՞ր ոք ի բռնաւորաց աշխարհի առանց գործեաց զոք տանջել զօրացաւ. ո՞ան դիտաբար զոք յամենայն ընչից կողոպտեաց. ո՛վ ոք ըստ պիւթագորեան հոգեզնացութ[եա]ն զհոգի ի մարմնոյ ի մարմին փոխադրեաց. ո՛վ ոք ի վերայ իւր իսկ անձինն բռնացաւ: Եւ ահա զայս ամենայն գործէ գեղեցկանուն բռնաւորս այս՝ սէր. աներկա[թ] տանջէ. անբռնադատ մերկացուցանէ. զհոգի սիրողին տարագնաց տանի ի սիրեցեալն. մինչև ասել պղատոնի. Հոգի անդ է առաւել՝ ուր սիրէ, քան ուր հոգևորէ. որպէս և այլով բանիւ ասէր, Սէրն է եռանդն հոգւոյ՝ որ յիւրում մարմնի մեռեալ, և յօտարինն կենդանի: Եւ բռնանայ սա նախ ի վերայ անձինն, և ապա առ օտարս. կամին պատուհասել զնիւթոյն, հան ի նմանէ զսիրելին, և դահիճք այլ ոչ ևս պիտոյ են. սէրն լինի նմա և սուր, և դահիճ, և կախաղան: Այս եղև լուծումն պղատոնական խնդրոյն, [թէ] սիրողն ո՞ր պատիժ իցէ դժնդակ. և ասացաւ, բառնալ զսիրելին: Եւ [թէ] զսաստիկն կամիցիմք ասել, սա ինքն է բռնաւորաց բռնաւոր, այլոյ ամենայնի բռնաւորու[թ]ե գոլով սկզբնաւո[թ]ե: Ապաքէն բռնանայ կայնի ի հաբէլ, այլ ի սիրոյ վրէժխնդրու[թ]ե. բռնանայ փարաւոն առ իսրայէլ, այլ ի սիրոյ իշխանու[թ]ե. բռնանան մեծատունք յաղքատս, այլ ի սիրոյ արծաթոյն: Համաշխարհական ատեանն պարսից և բաբելացւոց ոչ անխորհրդաբար հայէր այր ընդ ընկեր, հաւանական ցուցեալ միտս ընդ ատենախօսութ[եա]ն զօրաբանելի, [թէ] սէր կանանց բռնադոյն է քան զթագաւորս և քան զամ զօրաւորս: (ա. եղրաս. ղ:) Զայս ամենայն ակնարկեալ մեծխմատն սաղվիանոս, վարանեալ շրջէր դատանել անուն՝ սիրոյն պատշաճող, և ասէր. *Ո՛ սէր՝ զինչ կռչեցից զքեզ՝ անգիտանամ, բարի արդեօք, եթէ չար, քաղցր՝ եթէ դառն, անուշակ՝ [թէ] անախորժ. վասն զի այնպէս լի ես երկոքումբք, մինչև [թ]ուխս լինել երկոքին իսկ ‖:

ԺԳ. Իսկ արդ՝ եթէ ըստ ասացելոցս՝ պարզաբար սէրն է պատճառ պարզաբար ցաւոյ, ապա սէրն սաստիկ՝ սաստկագունին, և բազմապատիկն՝ բազմագունից ցաւոց է պատճառ: Բնդ դարձուցանք այսուհետև զբանս ի սէր սիրամօրն առաձորդին. զոր մի յորժամ աչք լսես, միաւորական կարծիցես, այլ երեքկին, և իւրաքանչիւր յիւրում կարդի ծայրացեալ. այս է՝ սէր բնաւորական, բանական, և դերբնական: Բնաւորականաւն շարժիւր իբրև մայր առ որդի. բանականաւն՝ իբրև հարն անանստ առ փեսայ. դերբնականաւն՝ իբրև արարած առ արարիչ: Երբեակ այս սիրով շարժէր անձնն կուսական ի խորոց անտի հոգւոյն: (Աւակաց. Ը. 21.) և ընկլուզանէր յերբեակ անդունդս ցաւոց. առ որս [թէ]պէտ և զպարտու[թ]է անհասու[թ]ե մեր խոստովանիմք ըստ միտս բանին. (անդ.

18.) * Երեք են՝ զորս անհնարին է ինձ իմանալ ‖, բայց զաւետ քննութեին հատուցանել՝ յանձն առեալ եմք։

Չտադնապ բնաւորական սիրոյ ածամոլն՝ ի նախադրեալոդ ըստ բերելոյ բանին կշռադատեցաք սակաւուք. բայց և ասացաւոր բնախօսել ոչինչ է աւելորդ. վասն զի ընդարձակութիւն իրացս տայ մեզ միշտ խօսել, և ոչ երբէք ըստ բաւականին։ Զբնաւորական զայս սէր՝ զկարևորն և զբոնաւոր՝ ամենայն ծնօղ ընթեռնու դրեալ անջինջ յիւրում սրտի, թէև անդիր՝ կամ անբան ևս իցէ։ Վասն զի անվրէպ օրինօք բնութեե տեսանեմք յամենայն կենդանիս զոյդ ընդ ծնողսե զաւակին՝ և զծնունդ իւն զթոյ և սիրոյ. մինչև արդարուքե ասել կարծեմ, թէ ամենայն ծնօղ միշտ երկուորեակս ծնանի, մի՝ զաւակն, և միւս՝ դուքն և սէր. և երկրորդս այս այնպէս համակից և անբաժանելի է ի ծնողէն, մինչ զի թէ և առաջինն այն յոլովակի օտարանայ ի ծնողէն, կորնչի, և մեռանի, սակայն սէրն առ ծոցին է միշտ, ոչ օտարանայ, ոչ կորնչի, և ոչ մեռանի՝ բայց եթէ ընդ ծնողին։ Այս դուքն է՝ որ զիւր ծնօղն զօրացուցանէ, և ընդ նմա զհամաձինն իւր՝ զզաւակն դարմանօք սնուցանէ։ Սակայն սոյն սա է և դահճի իւրոյ ծնողին, յորժամ զաւակն չարի ինչ պատահեալ ցնասիցի. և սոյն այս է բռնաւորն, որում և ոչ գաղանաց դժնդակութիւն ժուժէ տոկալ։ Ընդ որ հայեցեալ երանելի ոսկեբերանն, շարժէ զոսկենկարն զիւր գրիչ հիացմամբ ընդ արիութեին շամունեայ. (Ճառ ա. ի վերայ մակաբ։) * Արհամարհեաց զքնութիւնն, զբնաւորն զայն, զքնութիւնն՝ որ և գաղանաց անդամ սոցոր է յաղթել. զի բազումք ի գաղանաց դժուարորսալիք՝ սիրովն և աղեկիզութէ առ զաւակն այնպէս ըմբռնին, անփոյթ զիւրեանցն ապարեալ փրկութէ, մինչև անզգուշաբար յորսողաց ձեռս անկանին։ Ձիք ի կենդանեաց այնպէս տկար, որ ձագուն չպաշտպանիցէ. չիք այնպիսի հանդարտ, որ անզաւակեալ յորդոյն՝ չգրգռեացի։ Սակայն նա (շամունէ) երգէ զբնաւորութէն՝ որ զօրացեալն է ի բանաւոր մարդիկ և յանբան անասունս ‖։ Զսոյն առաւել ևս զքէ տիրամօրէն ասացեալ խմասջիր. և մեք ի դրելոց՝ զանգրեալ ցաւս նորա խմաստասիրեացուք։

Ո՞վ ոք խստասիրտ և անգամանդեայ իբրև զվարաւոն, որ հինեակ հարուածոցքն կափեալ, կայր անընդոստ իբրև սալ դարբնաց. այլ տասներորդիւն՝ մահուամբ անդրանկին լուծաւ հեղաւ իբրև զմոմ։ Իբրև զարդարն յոր՝ անընկճելի ի վշտաց՝ զայլ ոք ի մարդկանէ ոչ եռես աշխարհ. որ առ դոյժ կորըստեան ամենայն ստացուածոցն՝ հանդարտեալ նստէր ի բազմականին. այլ իբրև հարուած զաւակացն առ նա դուժեցաւ, ի վեր վազէր արի նահատակն, զպատմուճանն պատառէր՝ զվացուցանել զտապ ծնողական աղէտիցն. (ա. 20։) Եւ որ ուրախութէն էր իւրոց հնազանդելոց. (ի. 22.) ընդ համբարուս և ընդ ջայլամանս եղբայրացեալ, (Ը. 29. ողբմագլին հառաչէր. * Աչք իմ ի վերայ որդւոց հալեցան ‖։ (ԺԶ. 5։)

Զինչ և զյակոբայ ասիցեմք զբաղմորդի նահապետին, որ ընդ հրեշտակին բռնամարտիկ լեալ ժուժկալէր. այլ ընդ պակասումն յովսեփայ միայնոյ՝ զկարիս սգոյն՝ ի դերեզմանն անդր ընդ իւր ձգել խոստանայր. (ծննդ. լէ. 35:) Եւ՝ ի խնդրել դարձեալ եղբարցն զբենիամին, բաքէ՝ թշդայր ալևորն, զլաւսան խառնակէր, զնուաղութիւն երկուց կամ երից որդւոցն՝ իբրև անզաւակուն յերկոտասանեցունցն իակ համարեալ, աղաղակէր. * Զիս անորդի արարիք ... բայց ես որպէս անզաւակեցայ ‖: (խբ. 36: խդ. 14:) Եւ չէն ինչ զարմանք. վասն զի *նորա ոդին կախեալ կայ զդորա ոգւոյ: (խդ. 30:) Ապա եթէ զդաւիթ հարցանիցես՝ զայր պատերազմող՝ ի մանկուէ, առիւծուց պատառօղ, բռնաւորաց խորտակիչ, ոչ ևս՝ ի ճակատամարտի տեսանի նա, և ոչ՝ ի յաղթանակ հանդիսի, այլ առանկեան ուրեք վերնայարկի իւրոյ՝ իբրև զվանեալ ոք զօղեալ նստի յողբս լալեաց. հալածեալ՝ և ոչ՝ ի թշնամւոյ, այլ՝ ի հայրական գիծոյն. կրկնէ և երեքկնէ. Որդեակ իմ աբեսաղոմ, աբեսաղոմ որդեակ իմ. ոդբայ զհայրանենգն, զապըստամբն, և զապստամբեցուցիչ: Ո՛չ այնչափ կսկիծեցոյց զնա ապստամբութիւն որդւոյն, որչափ գութին հայրենի: Բռնաւոր էր նաբուգոդոնոսոր, և առաւել բռնաւոր. բայց քաջ գիտէր զծնողական սիրոյն բռնաւորութիւն դժնդակ քան զևւրն լինել. վասն որոյ զայն առնոյր իւր դահճ՝ ի պատուհասել զերդմնազանցութիւնն սեդեկիայ, զնորա զորդիսն յանդիման աչացն ըսպանանել: (ֆ. թագաւ. իե. 7:)

Զինչ և առ սուգ միածնի զսիրոյն բռնաւորութիւնն ասել ոք կարիցէ: Վ այեաց յեփթայէ քաջազօրն՝ անխորտակելի անձնն, տեսեալ զմիամօր զևւր դուստր իբրև որոջ պատարագելի. և մինչև զհանդերձն պատառեալ՝ սիրտն պատառեցաւ. ընկճեցեր զիս ասէ, այն՝ որ ընկճեայն էր զամենացաւոցն բռնութիւն: (Դատաւ. ժա. 35:) Դեռևսթենէս ճարտարաբան՝ որ իմաստասիրութենն օրինօք խրատեալ էր յաղթական լինել բնաւրեական կրից, ոչ կարաց՝ ի չափու ունել զևւր թախծուն ընդ մահ միածնին. դարձեալ խրատեցաւ աղղեալ՝ ի բարեկամացն. այլ պատասխանեաց իբրև որդէսէր՝ և ոչ իմաստասէր. Ընդ մահ միածնի անհնար է ցաւոց՝ ի միջոցին կալ: Թողում յիշատակել զբարեպաշտուհին սբիւղա, որ ընդ թաքուստ իւրոյ ալեքսիանոսին՝ ողբովք ընոյր զնշխանական ապարանսն, և սգովք՝ զքաղաքամայրն Հռոմ: (Վաքք Հարց. երես. 306:) Այս բռնաւորուն է՝ որ ահաբեկեալ զևմաստասէրն Թաղէս, հրաժարեցոյց յամուսնուէ. լաւ համարեալ անորդի մեռանել՝ քան որդեկոտոր կեալ. ոչ կամեցաւ զանուշակ սէրն՝ որ այնչափ դառնութեց է շռեմարան: Վասն որոյ և մարգարէքն սէք՝ ի ցոյցս յետին թշուառութեց ոչ զայլ ինչ յեղեղէին. բայց զկոծ սիրելւոյ միածնի, և զաշխար անդրանկան. յայտ իմն արարեալ, թէ՝ ի մարդկային աղէտս՝ այն է յետին: (Եբեմ. ղ. 26: Ամովս. ը. 10: Զաքար. ժբ. 10):

ԺԵ. Այլ իմ աստանօր բնականն միտք, կարճի լեզու և դրիչ, զմտաւ ածեալ ՚ի դրելոցս՝ զինչ արդեօք ՚ի սիրտ տիրամօրն ներգործեաց սէրն մայրենի, զոր տաղնապ, զոր դժնդակուն, զոր կսկիծ աղէկոտոր. այն սէր՝ առ որով հասարակածին ծնողացն գուրթ համեմատեալ, իբր ձրագ է աղօտ՝ առ արեգակնային բոց, ջուր գաղջ առ յորդեառանդն, կաթիլ՝ առ հեղեղ, մանաւանդ թէ նկարեալ հուր՝ առ տարբրականն: Օրինօք բնութեանն այս համեմատուի պահի, զի ծնողական աղէտիցն չափ՝ է գութն, և զթոյն չափ՝ ծնողութենին. ապա ծնողութի՝ որ յանչափս առաւելու քան զհասարակական մարդկութես, ըստ նմին համեմատութեան ունի լծորդ զսէրն, ըստ նմին և զաղէտն: Ինձ ոչ են կամք երկայնաբանել աստանօր յաղագս առաւելութեց Ածամայրութեան. որք կամիցինն՝ ունին այլուր դտանել համառօտեալ: (Հիւսեակ բարեբանութեց. գլ. ՚ի. եր. 46:) Այլ այսչափ ինչ զդեմ յասացեալոց, թէ ծնողուի սէյ կուսին գոլով ածամայրական, ապա և սէրն նմին հետևակ՝ էր ածսիրական. որով ածամայրն նաև ընդաբոյս զթովքն ձգիւր առ քո ածն իբրև առ իւր որդի. ապա և ցաւն՝ սիրոյն հետևակ էր ածակիր. զոր ածածին ոք միայն տանել կարօղ էր, և ոչ այլ ոք մարդածին: Վասն որոյ եթէ հարիւրապետն առ խաչին՝ ՚ի քաջութէ անտի խաչեցելոյն ուղիղ խմաստասիրեաց, թէ արդարև այ որդի էր սա, (մարկ. ժե. 39.) նոյնպէս ՚ի կրելոց անտի ցաւոց կուսին ուղիղ խմաստասիրել կարօղ էր, թէ արդարև այ մայր է սա: Բայց չգիտեմ, զնարդ յոչկամաց ՚ի խորս մխեցաք. անդրէն առ եղերն ամփոփեսցուք:

Ապաքէն բնական մայրութէն տիրամօրն էր գործ ՚ի բնակա նացս կարգէ, բայց ներգործեալ յարարչապետէ բնութէ ՚ի հոգւոյն սէյ. և գործ՝ զոր ած ինքնին արդիւնացուցանէ, կատարելագոյն է՝ քան զոր բնութէին գոյացուցանէ. ապա ածա գործ մայրութէի կուսին՝ և ՚ի պատճառին կողմանէ գերազանց էր յոյժ քան զբնապէս մայրութէիան: Եւ զինչ ասեի. ապա և համաբնականն այն գութ և սէր մայրենի՝ առաւելապատիկ էր ՚ի նը կոյսն՝ քան յամ ծնօղս. զի որ զգոն տայ, ասեն իմաստասէրք, համեմատ նմին տայ և զհետևակս գոլոյ: Եւ զնաթրդ մայրենի միայն կոչեմ զսէր տիրամօրն, զոր հայրենի ևս ասել արժան էր. վասն զի յանհայր ծնողութէ իւրում գրաւեաց միացոյց զսէրն, որ յայլ ծնօղս բաժանեալ է ընդ հայր և ընդ մայր. վայ թէպէտ ծնաւ իբրև մայր, բայց սիրէր իբրև մայր և հայր: Յայլ ծնօղս՝ որպ բաժինք են սիրոյ, նոյնպէս և ծնողական ցաւոց. ՚ի նը կոյսն միացաւ սէրն ծնողական, ը նմին և ցաւն. և ուր զադամայ ասացաւ, ոչ բարւոք լինել միայնութէն, այլ օգնականի ունել պէտս ՚ի ծնունդ և ՚ի հոգս զաւակաց, (ծնն. ը. 18.) բաբէ, սէյ կուսին պահեցաւ միայնութէի ՚ի ծնանել, ՚ի սիրել, և ՚ի ցաւիլ:

Կամիս և զայլ պատճառս առաւելութէ այսր սիրոյ, ահա

ամենակատար նմանութենն ի բնութեէ, և ի սէրն: Ամենայն ծնօղ արտադրէ զնոր նման ըստ տեսակին, այլ բազում անգամ խառն յանհնմանութենէ անհատին. յորովհետև դեղեցկին զոգեղ զաւակագործէ, քաջառողջն զցաւագար, անձնեայն զանաւագ, ուժաւորն զանոյժ, հեղաբարոյն զցասմնոտ, մտացին զանհանճար. և միով բանիւ, աքիւլէս զվերսխոս. որով զաւակն յաւէտ որդիացեալ կարծի, քան որդի. և յայսմ անհնմանութենէ բազում իւիք մնայլ առնու սէրն ծնողական, որ միշտ նմանութենէ է խնդրօղ: Վ բիպակ այդպիսի՝ օտար էր բնաւ ի կուսական ծննդենէն. վասն զի ոչ ոք ի ճարտարաց աշխարհի այնպէս ճշդեալ ծրագրեաց զկենդանագրութենի մարդոյ կերպարանաց, որպէս Հոդին սրբ ճարտարապետ այնր ծնունդեան՝ տպացոյց ի կուսածին որդին զնմանութենի կոյս մօրն ամենայն ըստ կերպարանաց՝ ըստ դրից կազմութենէ, և ըստ բարուցն. որոց լոկ տեսութենի բաւական էր և առ անծանօթս՝ գիտել թէ սա մայր է, և նա՝ որդի:

Զուգակցորդ այսմիկ և նմանութենի սիրոյն խնամի: Է՛ տեսանել յորովհետև ի ծնողաց, որոց արգանդ ծննդական, բայց սէրն՝ անծնունդ պատահէ. ծնանին որդի, այլ ոչ ծնանին սիրօղ, հարաղատս ի բնութենէ, այլ խորհրդ ի սէր՝ իբրև զօտաբանծինս. որով սէրն ծնողական ոչ գտանէ իւր ճարակ յարծարծումն: Այլ առ սիրամայրն ոչ այդպէս. որպէս որդի ծնաւ ամենայնիւ համաբնութենի, նոյնպէս ամենայնիւ սիրաց կից. սիրոք նոցա իբրև երկու լարք ի մի քնար. ի հնչել միոյն՝ ձայնատու էր և միւսն. ոչինչ ազդումն սիրոյ լինէր ի մայրն, որում ոչ անդրէն հնչելին արձագանք սիրոյ որդւոյն. և յայն դարձադարձ սիրոյ՝ զոր բորբոք ծնողական դիմոց կարծիցես լեալ ի տիրամայրն ընդ երեսնամեայ ժամանակս: Կա դարձեալ, ամենայորդոր խնամակալութենի մօրն առ որդին, և փափրեղի հպատակութենէն որդւոյն առ մայրն՝ զինչ այլ ինչ էին, բայց կրկին փութք կայծակնաբորբոք՝ միաւորեալք, ի բարձրացուցանել զոց ծնողական դիմոցն. որոնք ըստ յառաջել աւուրց՝ մանաւանդ ի և ժամուց՝ զօրանայր սաստկանայր բռնութենի սիրոյն ի սիրտն կուսական, և լինէր մայր արդարև սիրոյ, որդի ունելով միածին յարդանդէ, և բազմածին ի սիրոյ:

ԺԶ. Եթէ արդ, կրկնեա յուշիդ զնախաճաւաելն յաղագս բռնաւորութենէ սիրոյն, և ծնողական սիրոյն. և կշռեա՝ եթէ հասու իցեն քո միտք, որոց բռնաւորութենէ տարաւ մայր այսպիսի սիրապատար; տեսեալ զորդին սիրասնունդ ի ձեռս ածատեաց մարդոյ՝ իբր դառն ի ձեռս դայլոց, անպարտ մատնեալ, աւազակաբար կապեալ, ընդ քարշ ածեալ, զուր չարախօսեալ, յարիւն ձաղկեալ: Փոխան բժշկութեանցն վէրք, ընդ լուսատուս թզոյն՝ թուք նախատանաց, ընդ վարդապետութենեանցն՝ դաւաղան եղեգան, փոխան թագաւորութենեանն՝

պատկ վշանիւթ, փոխանակ ովսաննայիին՝ խաչեցի՛, փոխան յաւանակին՝ խաչ, փոխան կերակրողութեանցն յանապատին՝ քացախ ընդ լեղւոյ, ընդ մեռելոցն յարութեան՝ մահ անարդամահ։ Աղաղակէ ոսկեբերան վասն շամունեայ. (Ճառ ա։) * Զիարդ ոչ յապշուի հարկանելը՝ ի տեսանել զնւրբաքանչիւրն զանազան և կարծրադոյն տանջանաց մանր սպանեալ. զնարդ ոչ վէրք ղոգին ... զի թէպէտ և խօսէր, սակայն մայր էր. թէպէտ և բարեպաշտ էր, այլ մարմին ունէր. թէպէտ զուարթամիտ էր, բայց կին էր ... Ահեղափ հոսանս արեան տեսեալ նորա ոչ յօտար մարմնոյ՝ այլ յորդւոյն բղխեալ, զինչ ոչ կրեաց, զոր սրտի ամբոխուածն ոչ ընկալաւ։ * Եւ դարձեալ. (Ճառ իբ։) * Ո՛չ զայնպիսի հնոց բորբոքեաց բաբելոնեան բռնաւորն, զորպիսի հնոց՝ մօրն վառեաց այս բռնաւոր. զի անդ լուցկիք էին հրոյն՝ նաւթ, ձիւթ, բուրդ, վուշ. իսկ աստ՝ բնութիւն, երկունք ծննդեան, զաւակացն սէր, մանկանցն միաշունչութիւն։ Ո՛չ այնչափ նոքա ի հուրն ընկեցեալք այրէին, որչափ սա կիզանէր առ սէր զաւակացն ||։

Իսկ արդ՝ եթէ զամունեայ այսչափ, զինչ զարիրամօրէն ունկնիւք խորհիլ և ասել. ես հիանամ բնաւ, և ոչ խանգամ. վասն որոյ կնիք դնեմ բանիցս զոսկեբերանին դարձեալ խրատաւութիւն։ (Ճառ ա.) * Զայսոսիկ մի վայրապար լուիցուք, այլ իւրաքանչիւր ի լսողացդ զամենայն զցաւալի անցքս առաքեցեն յորդիս իւրեանց. կերպարանեսցեն անձանց զփարելի դէմն, և զսիրելին յորդւոց առաջի նկարեալ, համարիցին ըստնոսա անցանել այնց չարչարանաց. և յայնժամ քաջ ծանիցեն զասացելոցս զօրուն. նա՝ և ոչ այնպէս ծանիցեն. զի բնական աղէտք ոչ զբանիւք դան. ուստի ցանկ միայն փորձն ||։ Արդ՝ ժամ է այսուհետև զբանական սիրոյն անդնդովքն զեղերիլ։

ԺԷ. Բանաւոր մարդ ոչ արժանապէս զսիրոյն ժառանգէր զանուն, եթէ բնաւորականաւն և եթ վարէր սիրով, որ և անբանից է հասարակ. և ոչ մարդկապէս ընկերակցութիւնն յիւրումն ակաստանի ունայր սիրապէս, եթէ չէր ի միջի յօդ շաղկապիչ անհարազատացն մարմնով։ Զայն յօդ հոգացաւ մարդկութիւնս, արտայայտեալ երկրորդ ծնունդ սիրոյ՝ զսէրն բանականն, այնչափ զնաղ քան զբնաւորականն՝ որչափ զի այն բնութեան է, և սա՝ կամաց. այն ի բնական և ի տօրէն բարիս յածեալ, և սա՝ յիմանալիսն և ի դերազանցս՝ յարժանին և ի դովելին. վայ առաջինն՝ ծնողին է, և երկրորդս՝ մարդոյ։ Ահա է սէրն բարեկամական, կամ բարեկամութիւն անուանեալ որով մարդ զմարդ սիրէ ոչ իբրև զիւր ինչ, այլ իբրև զինքն, կամ ոչ ինն նորա։ Ամենագովելին մարիամ ոչ միայարկ ունէր զսիրոն՝ շատանալ միայն ծնողական սիրովն առ միածին իւր յն, այլ էր ի նմա միջնատուն՝ լցեալ բարեկամականն սիրով առ նոյն ինքն յն իբր յիւր իսկ անձն, կամ իբր այն՝ թէ ինքն իցէ յն։ Եթէ

զայս զնորա սէր ՚ի բաղդատութիւն ձգեմ ընդ այլ մարդկան բարեկամութիւնս, լսեմք յանպատուհասն գտատասանէ. վասն զի այլոց բարեկամութիւնք կամ կեղծիք են, կի ցուրտք, կամ աւժամայնք, կամ կիսակատարք, ՚ի չաջողուածան՝ և ոչ ՚ի միջոս. կի միակողմանիք՝ զի սիրէ, և ոչ սիրի· որովք բարեկամութեանն անուն բաղում անգամ յումպետս բռնաբարի: Նբ թէև յայսոցիկ արատոց մնկնեալ իցէ, առ չափաւոր մարդիկ ևեթ վայլատակէ՝ և ՚ի չափաւոր բարիս. առ որս յորովայնկն առաւել է բարեկամութիւն՝ քան զնիւթ բարեկամութեան:

Իսկ առ ամենօրհնեալն մարիամ ոչպէս. ամենայն հանդամանօք բարեկամական սիրոյ գումարեալ կայցէ. անհամեմատ արժանաւորութիւն յորդին ըստ բնական և ըստ գերբնական կատարելութեանցն. և ՚ի մայրն՝ պայծառափայլ ծանօթութիւն այնր արժանաւորութեան. յորմէ և համեմատ խղճ կամելոյ նմա զամենայն գովելի բարիս, և ըստ ըղձին՝ կատարումն արդեամբք գործոց ըստ պիտելոյն և ըստ ժամանակին: Նոյնպէս ըստ անդրադարձութեան, որդին քաջածանօթ գոլով արժանեաց մօրն՝ և նորա սիրոյն, սէր ընդ սիրոյ նմին փոխադարձէր, և գործ ընդ գործոյ. համախորհուրդք միանգամ, համակամք, համագործք. աչք աչաց դիպչին, և սիրտ՝ սրտի. խորհուրդք մօրն՝ միշտ զորդւոյն յածին, և ՚ի նոյն տեսանէր՝ զի և որդւոյն խորհուրդք զմարբն յածին. ոչ այնպէս զուգաւոր են աչք միոյ մարմնոյ, որպէս երկոցունց նոցա միաք ՚ի մի խորհուրդ: Ջոր կամէր որդին, կամէր մայրն. յոր նա չհամձէր, չհամձէր և մայրն. խնդալիքք միանգամ, ցաւակիցք իրերաց, հաղորդակիցք ամենայն բարեաց: Վ ասն այսորիկ որ մայրա բարն սիրէր, դարձեալ հարնապէս զանսորժելի ձայնն քաղցրացուցանէր: * Խանդակաթ եմ սիրով ‖: Ո՛չ ևս սիրելի զնա անուանէր, այլ բուն իսկ սէր, ասէ. * Եթէ յառնիցէք, զարթուսջիք զսէրն ‖: (Երգոց. ը. 5. 7:) Եւ զինչ առ նա վճռայայեալն իւր որդի· իբր կշռամբանօք իմն անդրադարձէ. * Ես ննջեմ, և սիրտ իմ արթուն կայ ‖: (Ե. 2:) Թէև ննջիցեմ ասէ մարմնով, այլ սէր հսկող է. վասն որոյ * դիր զիս իբրև զկնիք ՚ի վերայ սրտի քո ... վասն զի հզօր է իբրև զմահ սէր ... ջուրք բազումք ոչ կարեն շիջուցանել զսէր ‖: (ը. 6. 7:)

Իսկ արդ՝ եթէ աղեքսանդրի կարծեցեալ բարեկամութիւնն համարձակեցոյց զնա՝ իւր գանձս համարել զբարեկամն, հարցեալ թէ ուր են քո գանձք. և նա ասէր. առ բարեկամն: Ջինչ ապա ունէր սէրդ սիրապատարն մարիամ վասն իւրոյ անչափ սիրելւոյն. և այն զի ոչ գիտէր աղեքսանդր ճշդրտել վասն բարեկամացն՝ թէ նոքին ևս համարիցին իւրեանց գանձ զաղեքսանդր. բայց ընդ նբ կոյսն և ընդ յն ամենայնն փոխանակաւ էր՝ և սէրն, և ճանաչումն սիրոյն, որով սա զնա, և նա զսա միմեանց գանձս ունէին և ասէին:

Իբրև պսակաւոր նահատակս բարեկամութե, կամ թէ ա-

սել. իբրև աքանչելիս բարեկամական սիրոյ համարեցաւ աշ-
խարհ զյուիլեաթան ոմն ընդ դաւթի, ղգամոն ղոմն ընդ պիւ-
թիայ, ղոմն աղեքսանդր ընդ հեփեստիոնի, զայլ ոմն ովբեստէս
ընդ պիլադեայ. առ որս հասարակաց էր ամենայն՝ անձն և
ինչք, փառք և անփառութիւն, կեանք և մահ: Այլ զինչ է մա-
բաս առ սկայիւ, և սոցայս սէր առ սիրոնիս մարիամու. եթէ
չափաւոր լաւութիւն արանցն այնչափ զօրացաւ դերել զբարե-
կամութիւն նոցա, զիա՞րդ ապա անհամեմատ լաւութիւն Յի՛ն և
Մարիամու: Սիրոյն բարբառ առ նոսա զնոյնութիւն քարոզէր.
աղեքսանդր վասն հեփեստիոնեայ՝ թէ և դա աղեքսանդր է.
ովբեստէս երդուեալ, թէ ես եմ պիլադէս և պիլադէս դար-
ձեալ, ես եմ ովբեստէս: Ապա Հշմարտադոյնս և տիրամայրն
յըմբռնման զիշերին՝ ի հարցուած խնդրողացն զի՞ կարօղ էր
ասել, ես եմ Յի՛. զի ուր սէրն խօսի, արդար խօսի:

ԺԲ. Այս այն լինէր նմա արդարև սիտիանս մեծ, եթէ ինքն
փոխանակիւր ընդ յի՛ յըմբռնումն, ի՛ ձաղանս, ի՛ հարուածս
և յայլն ամենայն. այլ սակայն աճապարեաց նա՝ ըմբռնեցաւ
ընդ ձեռամբ Հշնամեացն, և մարիամ ընդ ձեռամբ սիրոյն.
երկոքին տանջեալք անդորրմ յանողոքել բռնաւորացդ. նա
ի՛ սպառազէն հրէիցն, և սա յանզէն սիրոյն: Այ ահա՛ բա-
ւական էջ ի՛ բան ձգել զսորայն բռնաւորութիւն. զի առ չափ
սիրոյն ասացաք զչափ ցաւոցն, զսէրն քննեցաք, այլ ոչ չափե-
ցաք. ապա և ցաւն ինայ անչափելի ի՛ միջի, և չափելի այնմ՝
որում եղեւն տանելի. բայց ի յօրինակաց ծանօթից մեզ
սակաւուք խնաստասիրել:

Ո՛չ ժուժայր վեհանձնն դաւթի ընդ մահ իւրում յոլով-
թանու. զոչէր լալագին: * Ցա՛ւ է ինձ ի վերայ քո եղբայր իմ
յոնաթան. զեղեցկացա՛ր ինձ յոյժ. զարմանալի եղև սէր քո
ինձ քան զսէր կանանց ‖: (Բ. Թագ. Ա. 26:) Մոռացաւ
դարձեալ զարքայական զիւր վսեմութիւն ընդ անպարտ անկումն
ուխտակցի իւրոյ աբեննեոյ. զկնի հետևէր մթազգեաց
դաղաղացն. զնուագ տաղացն ի լալիս փոխեալ՝ ողբս յօրիւ.
նէր առ դերեզմանին (Բ. Թագ. Բ. 32. 33. 34.) Ապա զոր
փեռեկուսն սրտի, զոր ողբս անմռունչս ի տիրամայրն կարծիս
ցես: Կրեաց և բողոքիցն տէր ի բռնուէ անտի բարեկամական
սիրոյն, առ դերեզմանին զսիրեցեալն արտասուելով ղղազար.
որով զկենսակայլակ ցօղն՝ տեսողացն տայր նշանակ, խնա-
նալ՝ թէ որչափ սիրէր զնա: (Յովհան. ԺԱ. 35. 56:) եթէ
նոքա յարտասուացն զսէրն կշռէին, ապա մեր ի հակառակէն
խնաստասիրեալ, ի սիրոյն կշռեցուք՝ թէ քանի՞ ցաւէր տիրա-
մայրն, որչափ մորմոքէր, որչափ արտօսր զըտիւն ցօղէր:

Քաջիկ ևս արդեօք քան զմեզ տեղեկացաւ օգոստինոս այսմ
բռնութե՛ն, (մինչ ի խաւար մոլորութենն դանդաղէր.) ունե-
լով ուսումնակից ոմն զիւր համահաստակ, ընդ որում անօրէն
բարեկամութե՛ն միացեալ, միայն մահուամբ նորա որոշեցաւ.

առ որ զանձին իւրոյ կիրս խոստովանեալ առաջի ՅՀ, ասէ. (ՃԻ. գիրք խոստովան. գլ. Ճ։) * Ցաւալիք մի-ձագնեցաւ սիրտ իմ. և ամենայն յոր և հայէի՝ մահ էր. և էր ինձ հայրենիքն՝ տանջանք, և տուն հօր իմոյ՝ թշուառութիւն անհնարին. և որով իւիք ընդ նմա կցորդեալն էի, առանց նորա՝ ի դժնդակ վիշտս դարձաւ։ Աչք իմ՝ ամենայն ուրեք զնա խնդրէին, և ոչ ոք տայր ինձ. և ատէի զամենայն, զի զնա չունէին ... Ինձ քաղցր էր միայն լալիւնն, և լինէր փոխանակ բարեկամին իմոյ՝ի սիրտ իմ։ Ահա հոգւոյս ‖։ Եւ դարձեալ. (գլ. Ճ։) * Այսպէս էի յայնմ ժամանակի. լայն դառնապէս, և հանդչէի՝ի դառնութե. եղուկ էի, և սիրելի ունէի ինձ զայն եղկելի կեանս քան զբարեկամին իմ... էր յիս անհնարին տաղտկութիւն կենաց, և երկիւղ մեռանելոյ ... զարմանք էր ինձ ընդ կեալ այլոց մահկանացուաց. զի նա՝ զոր իբր անմեռ սիրէի, մեռեալ էր. և առաւել ընդ կեալ անձինս զարմանայի՝ ի մեռանել այնմ, որում էի միս ինքն։ Բարւոք ասաց ոմն զիւրմէ բարեկամէ, Հատոր հոգւոյ իմոյ։ Վա՛ան զի իմացայ զհոգի իմ և զնորա լինել իբրև մի հոգի երկուս մարմինս. վա՛ն որոյ՝ի զարհուրանս էր ինձ կեանքն. զի ոչ կիսակատար կամէի կեալ ‖։ Այսպիսաբար ախտակրիւր օդոստինոս առ մարդ, առ որ առաւել էր բարեկամէին քան զնորա արժանիս. և ախտակրութիւնն՝ առաւել քան զբարեկամութիւնն. և զի ոչ բռնակատաւ մահուամբ տանջեալ էր նա, և ոչ յանդիման աչացն անհնչացեալ։ Զինչ ապա զնոյ կուսիկն ունիմք խմանալ զդառնութիւն ցաւոցն, որում ամենայնիւ հակառակքն պատահեցան։ Եւ՝ի վերայ այսոցիկ՝ յաջողեաց օդոստինոսի մխիթարութիւնն՝ որ յարտասուաց անտի էր. իսկ ցաւադին տիրամօրն և այդ պակասեաց։ Նա անյոյս էր դիւրել իւիք բարեկամին մեռելոյ. իսկ սա կարօղ գոլով բազում իւիք դիւրութի տալ իւրում միածնի, ոչ ոք ներէր, ոչ ոք համարձակեցուցանէր։ Աղեքսանդրի մխիթարութի մեծ համարեցաւ՝ զնոյր զվիրաւոր բարեկամ աբբունի փակեղամբն պատել։ Այլ տիրամօրն ոչ թողաւ՝ զոնէ արիւնաղանդ քրտանցն թաշկինակ մատուցանել։ Եւ կարի արդարապէս. վասն զի զնոյ էր եղեալ՝ի սեղան ծն, որում չէր օրէն զանգանիլ մեղու մխիթարութեան։ (գլուխ. Ճ. 11. 12։) Ցայսմայր յեղերս բանական սիրոյն հետազօտեալ, յայլ կողմն դարձցուք։

ԺԹ. Պաքէն զօրաւոր էր՝ի տիրամայրն՝ սէրն ծնողական. զօրագոյն սէրն բանական. այլ քան զերկոսին բռնագոյն՝ սէրն գերբնական և ածային։ Յառաջնումն՝ի բնութէ վարեալ, յերկրորդումն՝ի բանէն, յերրորդումն՝ի շնորհաց. և զի ամենիմաստ կոյսն առաւել բանաւորութիւնն շարժիւր՝ քան՝ի բնութէ, և յաւէտ՝ի շնորհաց՝ քան՝ի բանաւորութէ, նմին իբր սէրն՝ որ՝ի շնորհաց, այնչափ բռնագոյն էր, որչափ ազդողական են շնորհք քան զբան և զբնութիւն։ Սա այն սէր է՝ որ՝ի սիրտ արդարոյն բռնացեալ, յաղթական լի-

նէր ամենայն սիրոյ՝ ծնողականին, և մարդկայնոյն. բաժանէ լով զհայր յորդւոյ, և զորդի ՚ի հօրէ, զմայր ՚ի դստերէ, և զդուստր ՚ի մօրէ: (ղուկ. ժբ. 53:) Այն հուր է երկնառաք, որ զամենայն հնոց դժնդակ՝ բորբոքեալ ՚ի բնութիւն կամ ՚ի մարդկանէ. մաշէր՝ լուծանէր, յաձիւն դարձուցանէր, որպէս ՚ի բոլոր իսկ յաձասէր նահատակացն հոյլս է տեսանել: Այլ դու հայեաց ՚ի շամունէ, մանաւանդ լուր զոր զնմանէ հրաշաբանէ բերանն ոսկի. (Ճառ բ:) * Աղդ էր տեսանել (ասէ) երբեակ հուր, այն՝ զոր բռնաւորն բորբոքեր. այն՝ զոր բնութիւնն լուցանէր. և այն՝ զոր հոգին նը վառէր ...բայց ածպաշտութիւնն յաղթական լինէր. բնութիւն ընդ շնորհաց մարտնչէր, և զիրցանակն շնորհն տանէր. բարեպաշտութիւնն դեր ՚ի վերոյ լինէր մայրական դիտոցն. և հուր զհուր յաղթէր՝ հոգևորն զբնականն, զոր դժնդակութիւն բռնաւորին վառեաց: ‖

Սովիմբ հրազինեալ նախամարտիկն այն քեհան նահատակ, զամենայն որ ինչ յերկինս և յերկրի դժնդակք՝ և կամ հաձելի, յասպարէզ կարգայր, յարձակ խաղայր, առ ամենայն խրախուսէր առիւծաբար, հակա, թէ նեղութիւք իցեն՝ ասէ, թէ հալածանք, սով՝ թէ մերկութիւն, վնաս՝ թէ սուր՝ անցցեն ՚ի հանդէս. և եթէ սոքա փոքունք, առցեն նիզակակից զմահ և զկեանս, զհրեշտակս և զնշխանութիւնս, զորկանս և զհանդերձեալն. և եթէ այլ ինչ նոր արարած խիստ քան զդժոխս ապրեւեսուակել կարասցեն. ոչ երկիւղ ցուցանեմ, ոչ թիկանց շրջուիմ, ոչ երեսաց ողջբուիմ, ոչ ձեռին դադարուիմ. մեկնեացեն զնս ՚ի մարմնոյ, այլ ոչ ՚ի սիրոյն քէն. թէ և մեռանիմ, այլ զամենայնն մեռուցանեմ, զի սիրոյն անմահ եմ: (հռոմ. ը. 35:)

Լուար զնորահասանս քաղաքն նահատակին: Իսկ եթէ առ չափաւոր արդարս այնչափ զօրանայր ածսիրութիւնն, մինչև զամենայն իսկ զաշխարհն դժոխարակիրս յաչս դնել, մանաւանդ թէ հեշտնկալս և ուրախարարս դործել. զտատասկ՝ ծաղկիս համարել, զտանջանսն՝ փափկութիւս, զորդւոց մահ՝ նոր ծնունդս ասել, և զառ ՚ի ծնողաց բաժանումն՝ իբր հարսանիս: Ապա զնաթրդ զբիշ սիրամօրէն մեայ խմանալ, յորում ոչ լոկ ածսիրութիւն, այլ դևսովին սէրն ած անսորոշելի բնակեցաւ. այնուիկ ածասէր, որով ածամայր. որով և եղև հրջ արաբչին աաաչնութիւնէ. ածդիտութիւնն բերովբէ, այլ ածսիրութիւնն զսրով բեխիւք դերազանցեալ, որպէս և շնորհացն լիութիւք: Ապաբէն այն խորք ածայնոյ սիրոյն իբր յաւէտ խորայատակ՝ ունէր յինքն ընկղուզանել զնորս երկեակ սիրոյն՝ ծնողականին, և բանականին, զամենայն որ ՚ի նոցանէն վիշտս և տագնապս՝ յուրախութիւն յեղաշրջելով. և արդարև այդպէս իսկ վճարէին իբրն, եթէ սիրեցեալն՝ որ չարչարեցաւն և յաւերժացանէր, լինէր մարդ սոսկ:

Ի. Բայց ահա աստանօր է տագնապ, աստ աղէտ, յայսմ կիզուածն անհնարին. զի որ չարչարիւրն, ած էր ի մարմնի. նա ինքն՝ զոր ածային սիրոյն սիրէր իբր բարի ծայրագոյն, իբրև արարիչ իւր, իբր ամենապարգեւող իւր, իբր տէր և պահապան իւր, իբր առաջին և վերջին իւր, նոյն նա աւասիկ անարգի, տանջի, դառնամահ մեռանի: Եւ զինչ ապա. ած ամենայն միսիթարութեան՝ լինի նմա ի ցաւս ոգետանջս, ասել՝ Ձմար տագոյն ևս քան զնոյեան. * Դառնացոյց զիս բաւականն յոյժ: ‖ (Հռութ. ա. 20:) Եւ որ ակնկալութիւն այնուհետև այլոց ցաւոց սփոփանս մատուցանելոյ. եթէ կարօղ ինչ էր զդաւթին առնուլ քաջալերս. * Ո՛չ կամէր միսիթարել անձն իմ. յիշեցի զած, և ուրախ եղէ:* (սաղմ. հդ. 3:) Իսկ սա թէ յիշէր զած իբր, զմիւսն զառ ի դաւթայ ասացեալն կրկէր. * Եղեն լինձ արտասուք իմ կերակուր ի տուէ և ի գիշերի. և այն զի ասէին ցիս (խորհուրդք իմ) զօրհնանապազ, թէ ուր է ած քո: ‖ Ահա ի ձեռս անօրինաց, ի ձեռնակապս, յատենի, իբր խաչիլ, ի խաչն: * Ջայս որպէս յիշէի՝ տառապէր յիս անձն իմ: ‖ (սաղ. խա. 4. 5.)

Եւ ահա ո՛չ ևս ի նոր սիրամայրն հուր զհուր շիջուցանէր, այլ յաւէտ ևս սաստկացուցանէր. խորք ծնողական աղէ- սիցն խրախոյս արկանէին առ խորս բանական ցաւոցն՝ ի ձայն սահանաց ածային սիրոյն. և անձնն կուսական նաւու օրինակաւ ի պտոյտս անդնդային երբադարձս ալէկոծեալ, աղաղակէր. * Ամենայն զբօսանք քո և ալիք քո անցին ի վե- րայ իմ: ‖ (սաղմ. խա. 8:) Ո՛չ ևս ի նմա շնորհն ընդ բնու- թեն մարտնչէր. այլ երեքին՝ բնութէն, բան, և շնորհ՝ դաշնա- ւորք միմեանց՝ համահաւանք՝ մարտակիցք՝ իբրև առաջս երիս համագունդ յարձակէին յանձն կուսական. միաբան գոչէին. Այս ՝ն, որ զարհեաւ ի վերայ հովուին քոյ. (դատաւ. է. 20:) հարկանէին, վէրս դնէին, և ո՛չ զմի մասն հոգւոյն թո- ղեալ անվիրաւոր. մասն զդայական ի ծնողական սիրոյն հա- րեալ, բանն՝ ի բանական սիրոյն, վերին մասնն ի շնորհաց:

ԻԱ. Խակարդ՝ յերեցունց անպարտելեացս ճակատու ուր է յաղթեալն և անկեալն, ուր նաւաբեկութիւնն յանդնդախոր պտոյտս ցաւոցն. Կայր առ խաչին: Ո՛վ ամենայաղթ վիրաւոր, ով անխորտակելի շինուած: Երեցունցն ձեռք ի նա, և ձեռք նորա յերեսին. յերեցունցն հարեալ, և երեցունցն յաղթեր. ին, շնորհօքն, ածսիրութիւնն: Ա՛յն շնորհ որ դաշնաւոր էր բնութէն և բանին ի չարչարել, նոյն դաշնաւոր էր և կուսին ի զօրացուցանել և ի յաղթել. զի ի նմանէ իակ էր՝ որ ասացն. * Ես հարկանեմ, և բժշկեմ: ‖ (ը. օրին. լը. 39: և նա բա- նայր նմա * Ճանապարհ անխափան, և դաշտ ծաղկաբեր ի պտուտից բռնութենն: (ինաստ. ժի. 7:) Ապա ուրեմն շնորհն ինքն ընդ ինքն մարտնչէր, և մնայր յաղթօղ և յաղթեալ, մա-

նաւանդ թէ յերկաքանչիւրն յաղթօղ։ Ա՛յ՝ կարի ճշմարիտ, եթէ ղեկարդն տեղեկութիւք քննեսցուք ըստ փանաքի մերս հա֊ սողութեան։

Ապաքէն մի յանհասանելեաց անտի ցաւոց տիրամօրն՝ այս խորհուրդ է, զի՝ ի մանկն վերին՝ որով առ ած հայէր, պա֊ տերազմ յուզէր անհնարին։ Աչք ածութեն եռանդնեալ՝ ի տի֊ բակիր անձնն՝ բռնադատէր զնա՝ ի ցաւս և՝ ի կիզումն ընդ չարչարանս որդւոյն, զի ած էր անարդեալ՝ ի մարմնի. բայց նոյն սէր դարձեալ ստիպէր զնա՝ ի հաճութիւն չարչարանացն, ՝ի կամիլ՝ յօժարիլ՝ ի խնդալ։ Ահա պատերազմ յերկինս։ Լուեալ յանիրաւի ղդատիլն, մաշէր՝ ի սիրոյն. բայց ակնար֊ կեալ՝ ի վճիռ իրաւանցն հօր, ձեռնադրէր սիրոյն։ Տեսեալ զնոր փառաց յանարգութիւն անչափ, զաչսն մխաղնէր սէրն. այլ զջնջել անարդանացն այ այնու դիտելով, սիրոյն աչանայր։ Ածապանութիւն էին յանցանքն, անդիւտ կորստեան գործն, աւաղէր առ սիրոյն. բայց զի վրկանակ էր կենաց աշխարհի, սիրոյն ձեռամբ՝ ի սեղան անդր հանէր։ Ո՛վ անհրաժեշտ դի֊ մանարտութիւնս, յորում կարի հակառակքն՝ անհակառակա֊ բար զոյդ ընթանային. ցաւ անչափ, և յօժարութիւն սրտա֊ ռուչ. տրտմութիւն խոր, և ուրախութիւն բարձր. կսկիծ անդար֊ մանելի, և սփոփումն հեշտական. երկոքին ևս պատարուն, ապա թէ ոչ՝ հզօրն զտկարն վանէր. երկոքին ևս անհրաժարե֊ լիք, զի ածսիրութիւնէն էին հրամանք։ Ահա ոչ զկնի երեմիայի տեսլեանն՝ յերկուս կողովս, այլ՝ ի մի կողով՝ ի մի թուղ տե֊ սանելի զժանտն և զքաղցր. անդստին՝ ի միոյ ականէ անտի ածսիրութեան՝ բղխէր քաղցրութիւնն մխիթարութեան, և դառնութիւնն ցաւոց, անխառն միմեանց, անխափան իրերաց։

Անօրինակ են իրքս, ոչ ուրուք յածասէր նահատակելոցն յայսպիսի երևեալ հանդէս. զի թէ զաբրահամ ասես, եթէ զշամունէ, կամ զայլս՝ ի նմանակիր սքց, ոչ նման ինչ ասես, թուղ թէ հաւասար. զի առ նոսա ընդ մէջ այլոյ և այլոյ էր պատերազմն, չնորհաց ընդ բնութե, ածսիրութե ընդ որդեսիրու֊ թե. վասն որոյ երկնաւորն՝ ի վերայ երկրաւորին զյաղթանակն կանդնէր։ Բայց՝ ի հանդէս ածամօրն՝ երկոքին՝ ի չնորհի անդ սաստկացան՝ և պատերազմն, և յաղթութիւնն։ Ապա յերկինս անտի էր յեղանակ պատերազմիս, ՝ի բուն իսկ հայրական սի֊ րոյն բերեալ զօրինակն. քան զի իբր ած հայր սիրէր զորդի, ոչ կամէր զնորա անարգանան. այլ զի նա փոխանակ էր պար֊ տեաց մարդկութե՝ և աշխարհի փրկանք, նովին սիրով կամէր, հրամայէր, մատնէր, թէպէտ անվիշտ և անյեղլի գոլով բնու֊ թիւն, ոչ յինքն էր դիմամարտութիւնն, այլ՝ ի կամեցեալսն։ Յայնմ սիրոյ գաղափարեաց որդին, անտի գաղափարէր և մայրն. այլ երկոցունցն ցաւելի ունելով բնութիւն, վշտա֊ նային անչափ, յօժարէին կամակար։

ԻԲ. Արդարև ճահոդապէս առ նա երգեաց մերս զրիդոր երանելին. էբէ՝ զհանգարպ երինջ անարած՝ արարչաւանդ լծոյն չափուցար. և էբէ զչաւանակ էշոյ անբասին՝ ածուրէն հեգնէցար: Զի՝ ի տապի անդ ածսիրութեն՝ ջեռաւ նախանձու արդարութեանն այ, տեսեալ զհօր կամն՝ ի պահանջումն մեղացն վրիժու: Չրհայք յատենի անիրաւութե, այլ նա յատեան իրաւանցն այ հաւանողապէս ազաղակէր, խաչեայ: Աշխարհի փրկանս հայր զորդի առաքրէր. յանձն առնու մայրն՝ միաձայնեալ ընդ հօրն ասել. * Եղաւ զսիրելին անձին իմոյ՝ ի ձեռս թշնամեաց իւրոց: ‖ (Երեմ. ժբ. ղ:) Եւ եթէ դէպք ինչ իրացն բերէին, ոչինչ յետնեալ քան զհրեշտակն գոհանէր՝ ի զօրացուցանել զորդին՝ ի տագնապս պարտիլին: Քաջախորհուրդ ևս քան զկին ոմն լակեդեմոնացի ունէր ասել, որ վասն որդւոյն անկեղ էր՝ ի պատերազմի՝ առնաբար բարբառեցաւ: Յայդ իսկ ծնայ զնա, զի սակս հայրենեացն մեռանել մի զանգիտիցէ: Իսկ տիրամայրն զի՞նչ. յայդ իսկ ծնայ զմիածինդ իմ, զի սակս աշխարհի փրկութե ախորժեացէ մեռանել, և ես ըզ նմա: Վայելուչ էր ինձ տաղէ երանելի ոսկեբերանն յաղագս շամունեայ. (Ճառ ը:) * Ժամ է առ մայրը քաջ պատերազմողացս անցանել, որ՝ ի միում մարմնի բազում անգամ մեռաւ, մանաւանդ թէ բազում անգամ զենաւ, բայց և ոչ միանգամ ցաւեաց. առ մայրն ասեմ, որ անվէր՝ միանգամայն և բազմավէր . . . : Ընայր ապա վերջին՝ ի պատերազմին եօթներորդն, որ զանձայն քնար մարերրոսացն կատարելոցն էր: Զի՞նչ ապա, ընկճեցաւ արդեօք՝ ի մտաղութե հասակին. միթէ ցաւեաց ինչ, տեսանելով զընչնարս բնութեանն բարձեալ: Ապաքէն նա ինքն զմանուկն՝ ի մահ անդր ստիպէր, թէ ոչ ձեռօք՝ բայց խրատուքն. մի զթիւ պսակացն նուաղեցուցաներ որդեակ իմ. լեր եղբարցդ որպէս ծննդեանն՝ նոյնպէս և ուղղութեանցն ընկեր. գործոցն կցորդութե նմանեաց կցորդութե բնութեանն, ցոյց գքեզ զնելոցդ՝ և՝ ի մարտի եղբայր: Եօթներորդ ինձ՝ ի բնութե ծնար որդի. եօթներորդ ինձ կամք ծնանիցիր մարտիրոս. մի լեցի՝ թէ եօթն որդւոց՝ իսկ վեց մարտիրոսաց կոչեցիմ մայր: ‖ Զայսպիսի նուիրական ունէր կամս այն երանուհի, վասն զի որպէս նա ինքն ոսկեբերան ասէ գործեալ. (Ճառ. բ.) * Ցուցանել կամէր բռնաւորին՝ թէ ճշմարիտ մայր է որդւոցն, և նորա ճշմարիտ որդիք հարազատք, ոչ սակս բնոսնութեան բնութեանն, այլ վասն կցորդութեան առաքինութեանն: ‖ Ապա քանիպատիկ ևս տիրամայրն, որ ոչ միում կամ ոմանց, այլ բոլորիցն իսկ երկնաւորաց և երկրաւորաց ցուցանել կամէր, թէ մայր է՝ ոչ լոկ անցաւ ծննդեանն՝ ի բեմզնեհէմ, այլ և ցաւագին ծննդեանն՝ ի դողգոթա. ցուցանել՝ թէ դուստր է կամակատար հօրն երկնաւորի, ոչ միայն ընդունելով զառ՝ ի նմանէ ծնեալն ածորդի, այլ և անդրիչն վերընծայելովն. ոչ կամէր նուազեցուցանել զդումարտակ քաջութեան որդւոյն, ոչ

կամէր՝ թէ հրաշագործողին իցէ մայր՝ և ոչ խաչելելոյն . բնու-
թիւն մայր՝ և արիւնթիւն ճշմարիտ մայր կամէր երևել : Զա-
ղեքսանդրի զքաջութիւնն՝ մայր նորա ոլիմպիադա յանձին երևե-
ցուցանէր , քաջալանջ ընդ առաջ սուսերաւորացն դիմելով :
Գիտաց երկիւղ մարդկային քաղցրացուցանել զմարմնին որդւոց
՝ի քէմն ծնողաց : Արբակայ՝ զկոտորակս մարմնոյ որդւոյն ընձե-
ւիս ընկալեալ յաժդահակայ բռնաւորէ , խորովեցան ա-
զիքն . այլ երկիւղն ետ պատասխանի . Առ արքայի՝ ամենայն
ընթերիք վայելուչ են : Զի՞նչ ապա սէրն ածային ՝ի տիրամայրն
տայր բարբառել . շատ էր նմա գիտել , թէ բազուկն՝ որ կա-
պէր զնորն խահակ , սուրն՝ որ ՝ի վերայ խաղայր , հուր ցաւոցն՝
որ բարձրանայր ծառանայր , առ ՝ի յերկնից արքայէն պատ-
րաստեալ գային . այնուհետև համբուրելն էին նմա կա-
պանքն , սուրն՝ ընդդրկելի , հուրն՝ պայծառ ջահ . և ճշդրտա-
գոյն և ա ՝ի նա յանդ եղանէլին ասացեալքն ոսկեբերանին զա-
մուենայ . ( ճառ . ք . ) * Ո՛չզհուր տանջանաց համարէր տե-
սանել , այլ զջահ հարսանեաց : Ո՛չ այնպէս խնդայ մայր՝ յոր-
ժամ զորդիսն վանն հարսանեաց պաճուճիցէ , որպէս ցնծայր
նա ՝ի տեսանելն զնոսա չարչարեալս . և որպէս թէ միւսոյն պատ-
մուճան փեսայութեան զգեցուցանէր , և միւսում պսակ յօրի-
նէր , այլում զառագաստ հարսանեաց կազմէր , այնպէս խընդ-
դայր նա , տեսեալ զմին ՝ի կաթսայ անդր դիմել , զմիս ՝ի
տապակն , զայլ ոք զլխատեալ : Ամենայն ինչ ծխով և հո-
տով լցեալ կայր , այլ նա ամենայն զդայարանօքն համար-
ձակ ճանաչէր զորդիսն , աչօք զնոսա նկատեալ . ականջօք
զբանն լուեալ , ռնգամիւք զծուխ մարմնոցն ընկալեալ , զա-
նոյշն՝ և զդաժանն , դաժան առ անհաւատսն . իսկ ՝այ՝ և նմա
անուշահոտ քան զամենայն , զայն ծուխ՝ որ զօդ նեղմացոյց ,
այլ զմիտս կենդանի ոչ ևս . վասն զի կայր հաստատուն և ան-
շարժ , համբերութիւն տարեալ զամենայն զգործեցեալսն : ‖

ԻԳ. Ա՛հաւոր տեսիլն՝ որ ՝ի գողգոթա , բաւականացաւ
զիշխանս լուսաւորացն անդնդոյ մխադնել , այլ զմիտս և զըզ-
գայարանս տիրամօրն ոչ ևս . Հայէր յամենակիրն իւր որդի
իրը ՝ի փեսայ համապայծառ զարդարեալ . փուշքն՝ իրը պսակ
ականակապ . արեանն կայլակք՝ յակինթք բազմախայլ . մարմնոյն
մերկութի պատմուճան բեհեղեայ . վէրքն արիւնաբուխ՝ կի-
տուածք ծիրանւոյ . խաչն՝ գահոյք . քացախն՝ օշարակ նռնե-
նեաց . նախատինքն՝ պարերգութի . խաչահանուքն՝ հանդիսա-
վիրք , և ինքն յայն նորատեսիլ փեսայութենն հանդիսի՝ օրհնու-
թիս առ վերին պսակադիրն առաքէր . և զնոյն ինքն զփեսայա-
գեալն ամենայն զարդիւքն հանդերձ նմին ընծայէր . ՝ի սրտին
ձգդտեղով զդրեալսն գրիգորի ծաբաբանին ՝ի դէմս շամունեայ ,
( ճառ իբ . ) * Ո՛չինչ թոյզն աշխարհի , զամենայն ետու ՝այ ,
զդանձն իմ , զյոյս իմ զարմանիլ ծերութիս .... Ապաքէն
այնպէս հայիմ յերեսս դահճացն , որպէս թէ բարիս ՝ի նոցա

նէ ընկալեալ իցեմ. և չէք այնպէս երաւացի՝ քան վասն այսր շնորհս մատուցանել բռնաւորին, զի յետին զնա պահեաց ի տանջանս.

Ո՛վ, որպէս զի անճառ է զօրութիւն շնորհացդ և սիրոյն նորա, որ զնոյն զմի ամենավիշտ անցս ածորդւոյն՝ յերկուս դէմս կերպաբանէր ի միտս ածամօրն, իբր երկուս ըմպանակս պատրաստեալ ի միում ձեռին, մինն արեամբ՝ և միւսն կաթամբ. երկուս բուրանոցս ծխեալս, մին ձենձերով, և միւսն խնկով. երկուս արեգակունս ի ծայրս մոացն. մին խաւարի, և միւսն լուսոյ. որով միակ մասն նորա վերին հաւասարէր բովանդակ երկրական դնտոյս, կիսով չափ խաւարեալ ցաւոք, և կիսով՝ լուսաւորեալ մխիթարութիւն: Տեսեր արդ զմիտս ասացածի երանելւոյս դրիգորի, թէ զնդրդ տիրամայրն ի վերայ սիրոյ սեղանոյն մատեաւ պատարագ. առեր ի միտ զքանիծնուէնի սիրոյն, զսատկուէի նոցա, զբռնաւորութիւնն, և զպատերազմն՝ որ ի նոցանէ. տեսեր իբր եղև պատարագ փրկութեան, և պատարագ օրհնութեան, պատարագ յինքեան, և պատարագ յորդւոյն. միանդամայն քահանայութեի իւր՝ և որդւոյն. զի վասն այսորիկ իսկ յերկարեալ յամեցաք ի բանիս, զհետ մտեալ քննութիւն՝ ո՞չ զի հասանիցեմք իրացն խորութեան, այլ զի զնոցա զանհասութիւնն ծանուցեալ, մակացուք միայն ասացելոցն սքի վարդապետին լինիցիմք, ի միտ առնուլ վկայութիւն մտաց, թէ ի փորձ այսպիսի նահատակութիւն քանի կարևոր էր խաչին դաստիարակութիւնն առ նբ տիրամայրն. զոր ի գլուխս բանիս նախադրեաց նբ վարդապետս: Բայց այսուհետև որ ի բանիս մնացեալն է՝ զայն տեսցուք:

## Ա՛սրաբոյս և սպառագէսակ գեղջաբարչ յատուր պատարագ:

Ի Դ. Ո՛ զդ զդ սպանդիցն՝ որ ի հինան էին պատարագ, միով բանիւս պարագրէ: Աբրեոյս, որ ի դառանցն լինէին՝ սպիտակազգետս աներբն մատաղամորթք: սպառագէսակ, որ յարջառոց և յայծեաց, զկարծր ստէն իբրև դէսս արձակելք: և գեղջաբարչ, որ յոչխարաց, թանձր բրդովքն ծանրաբեռնեալք: Արդ՝ զայն ասէ բանիւս, թէ մի միայն անարատ որոյս բանական՝ զամենայն որոշմունս պատարագացն զնմանոց յինքն բովանդակեաց. զի կցորդութիւն ընդ որդւոյն մատուցաւ իբր զոհ վասն մեղաց, իբր ղոհ խաղաղական, իբր գոհութիւն, իբր սրբութիւն: Եւ զի ի նոցանէ զանարատսն մատուցանել օրէնքն հրամայէին, և ո՛չ սակս իւրեանց ինչ յանցանաց գային նորա ի զնումն, այլ վասն մարդկան յանցանացն սրբութիւն, նոյն օրինակ և բանական որոյս տիրամայրն՝ մաքուր գոլով ամենայն անարատութիւն, ո՛չ վասն իւր ինչ մեղացն գործելոց ի նուիրումն մատչէր, այլ վասն աշխարհի մեղացն քաւութիւն: Ա՛ռ այսոքիւք և զայն միտս ընծայեցուցանէ, թէ բանիւքն պատարագս այնպէս մատուցաւ այ, զի առ իւր ամբողջ

և անկէղ պահեաց զասրն՝ զտեւն և զգեղմն, հակառակ անբաժանելոյն մատուցմանց. յայտ արարեալ այսու, թէ ներքնայնովքն հոգւոյն մասամբք ևեթ նուիրեցաւ ի զենումն և յայրումն, ոչինչ յարտաքին պատշաճից մարմնոյն նուաղեցուցեալ. զոր և վերադոյն անչնաւղոյր փօֆ անուանեաց. ի նոյն միտս և զյաջորդն առեալ բերէ։

## Ի ՃԳՆԱՒՈՐԱԿԱՆ ՎԱՐՔ ՈՂՋԱԿԷՂԵԼ։

ԻԵ. Երկուս դէմն իմանալի ճգնաւորականն, կամ զմարմնոյ սականն ասէ, զոր կրեաց տիրամայրն ամենայն զդայարանաւքն, յինքն վերաբերեալ առաստանաւ սիրոյն զամենայն արիւնաւոր կիրս ածորդւոյն. և կամ զանապատական և զհրաժարական վարուց ակնարկէ. զի նա զերօրինակ չափով յանձն քանայ կեաց զճգնողական հանդիսից կարգ, զաղօթս մշտամուննչս, զլռութիւն, զտքնութիւնն, զպահս, զսուգ, զաղքատութիւն, զհրաժարումն յամենայն կենցաղականաց որովք ոչ միայն անձինն առաքինացաւ, այլ և ամենեցուն առաքինասիրաց՝ եղև Պաշճառ պատշաճից անպակաս ճգնութեանց։

Կրկին այս ճգնութիւք ողջոյն կիզեալ ի հոգին, չան ևս ի սրոյ հանդէս խողխողել։ Եւ զի պիտոյ էր այնմ՝ որ հոգւովն կարէ վէր խոցոտեալ, սուր զդալն՝ մարմնոյն կտրատօղ. կամ զինչ ծանր էր նմա սուր երկաթի, որ ի տեսիլ աչաց միայն ունկն զահարկութիւն, և այն ինչ սկսեալ ցաւեցուցանել, անդէն ամենայն ցաւոցն արձակուրդ կոչէ մահուանն փողով։ Իակ ի մանալին սուր անցեալ մինչև ցորոշումն հնոյ և ոգւոյ, տանջէ անմահապէս. որ և անց միսեցաւ ընդ անձն տիրամօրն ի դուշակութիւն անտի սիմէոնի. և յարակայեաց անարտաբերելի՝ ոչ միայն մինչ յաւարտումն խաչունակ տնտեսութեն որդւոյն, այլ և յետ ածապէս յարութիւնն և երկնաչուս ճանապարհորդութիւնն յաթոռն հայրենի։ Խօրամբս էր սուրն, խորաթմբամայ վիրացն ճարակ՝ անողջանալի մխիթարութիւնն որ ի վաւրաց որդւոյն. յանուշակ վտակաց անտի մեղմանայր արգելօք անչափ դառնութեի ցաւոցն, այլ ոչ քաղցրանայր։ Եւ եթէ ի փառունակ մարմինն տէրունեան պահեցան վէրք առանց ցաւոց, ի սիրոն կուսական ողջիկ կային և վէրքն՝ և ցաւքն։ Ա յն զի առձեռն իակ էին բազմապատիկ պատճառք՝ ցաւոցն յիշեցուցիչք. երրունական չարչարանացն վայրք անբարբառ զնոյնս քարոզէին. անարիւն պատարագին օր ըստ օրէ նուիրագործութեի՝ զարիւնաւոր զենումն ի միտսն կերպարանէր. հրէայքն ածամարտունէն դրդիռ՝ գոգցես զ Խաչեցոյն ի նորա լսելիսն վերադոչէր. և ինքն ընդ այրութեն մենացեալ և յորդւոյն, բազմորդի մնայր ցաւովքն և հեծութեամբք. արտադրեալ աբեամբ սրտին զեղեկական քերթածս՝ երկայնս և ղղկականս քան զՀոմերոսին։ Թէ յանցեալս հայէր, ցաւք. թէ ի ներկայսն, խառն յուրախալւոյն և ի տրտմականէն. թէ յապառնիս,

անըմբռներելի կարօտանաք որդւոյն : Երկրաւորքս ամենայն ի տաղտկանս էին . երկնաւորացն ծարաւ անհանդուրժելի ըղ-ձերան տոչորէր .

Ա յսպէս աղաւնին մաքուր թևացեալ յաշխարհականս ապարիսի , ի ձայն ձեպով մեչևն ի սրտի քաղցր հեղաբանէր . երբ հասանիցէ կենացս երեկոյ . երբ երևեցայց ցանկալի դէմս իմ ածորդւոյս . երբ բուռն հարեալ ոգեխառնեցայց անընդմիջելի : Եւ ահա հնչեաց առ նա հրաւէր սիրելւոյն : * Արի՛ եկ մերձաւո՛ր իմ , դեղեցի՛կ իմ , աղաւնի՛ իմ . վասն զի ահա ձմեռն էանց , անձրևք անցին , և դնացեալ մեկնեցան : * ( Երգոց . բ . 10 . 11 : ) փութացարո՛ ի ձայնն . թռեաւ սրացաւ , եմուտ ի բոյնն՝ ի սիրտ ածորդւոյն :

## Ա՛ստն այսորիկ ի նուէրս ոտ գնհանան՝ հրեղէնաձայն պարտպաղատանեալ :

Ի՛Զ . Այր լինքնին ասէն դիմեալ հասանէր , զինարդ և ո՛չ նըւազն պաշտօնեայք անդր ձեպէին . դայլն խռնէին ի հանդէս պարու , և սքանչացումն զամենեքումբք պատեալ պաշարէր : Զի ահա նուէր , և հուր չիք . վկնո՛ւն և ո՛չ սուր . վեներեալ և ո՛չ արիւն . այլ ամենուստեք լոյս , դլխովին փայլուածն , ամենասփիւռ ճառագայթ : Զառ ի յեսայեայ աւանդեալն հարցուած տարակուսանաց դարձեալ երկբորդէին , անդ վասն եղից որդւոյն . * Իսկ այս ո՞վ է՝ որ դիմեալ գայ յեդովմայ : ‖ ( կի՛ . 1 : ) իսկ ասասանօր . * Ո՞վ է սա՝ որ երևեալս է իբրև զառաւօտ , գեղեցիկ որպէս լուսնի , ընտիր իբրև զարեգակն , իբրև զհիացումն կարդեալ : ‖ ( Երգոց . ը՛ . 9 : ) Ա՛ռ երկոսին հիացումն նոյն , հարցումն նոյն , վասն զի և գնումն նոյն՝ մեր ը՛ որդւոյ : Եւ կրկին հիացումն , զի երևէր լուսնոյ օրինակ՝ յարևելս լուսաւորեալ , և միանգամայն արեգակնապէս , որ ինքնալոյս է : Ա՛ռ որս ձայն արձակեալ հարսնն շքեղաշուք , բովանդակ հիացմանն՝ միակ բանիւ լուծումն շնորհէր . * Ես եղբօրորդւոյ իմոյ , և եղբօրորդին իմ ինձ : ‖ ( ը՛ . 2 : ) Ձի՛ ի միջն այլ որոշումն , բայց միայն յեսն և ի նա . յայնն ամենայն նոյն է ինն , և նորայն : Ես նորա եմ իբր արարած , իբր սիրելի , իբր մայր . և նա իմ՝ իբր արարիչ , իբր սիրոյ , իբր որդի , իբր պակ : Ապա իմ է նորայն գնումն , իմ է և փառքն . սիրոյ նուէր եմ , ցաւոց գնումն . իբր արարած՝ լուսին եմ ի նմանէ պայծառացեալ . իբր մայր՝ արեգակն եմ , զանձամբ արկեալ ընդն ինքն արեգակն՝ յորմէ դուքդ լուսաւորիք : Սիրացան բովանդակ երկնաքաղաքացեացն նահապետուիք ընդ ածակերպ երևումնն , տեսեալ զնաչապակ գիւրեանց թադաւոր՝ հպատակօրէն ձևով ի մեծարանս անցեալ խաչապակ մօրն դլխոյն , և զբևեռապինդ զբազուկսն ի սպաս նմին մատուցեալ . զի որովք խոցեցաւն՝ պսակեսցի . զահեակն զդլխովն արկեալ , և զաջն գիւս-

սական անձամբն. (երդոց. բ. 6։) Այլ ի բարձանց բովանդակ փառքն հովանի կացեալ. հոգին սրբութեն ազատնակերպ ընտրեալ թևապարեալ. և ինքն համակ երկրդոմբէ փառացն պատրաստ երևեալ։

Ա յնուհետև ապա զնեղուան հրանիւթս յօրհնաբանուն նմին շարժէին, ընդ առաչելոցն գոհանալ դասակցեալ, որք մեծի նահատակութեանն տեղեակք էին, և զնմանէն յուզարկաւորք. զիայն արձանիէ պատուել հովէին աբ Աձածէն։ Հանգիստական եղելոց որդւոյն՝ և մօրն՝ զուգաձայն և խոստովանութենէն. զի որք առ օրդին մեծաձայն բարբառէին. ‖ Արժան է գառնդ զնեալ առնուլ զմեծութենէ, և զնմանատութենէ, և զզօրութենէ, և զպատիւ և զփառս, և զօրհնուն. ‖ (յայտն. ե. 12։) նոքին ձայնիւ և զնոյնս՝ միայն արժանի այնպիսեաց փառազարդութեց զոյդ խոստովանէին. զի ոչ միայն ծնող՝ այլ և զնմանէն համակցորդ ի յերկրի. որով և յերկինս ի պատկեր գառինն զնեալ՝ հանմանութեանպէս իմանի որոշն զնեալ։ Ա ան զի որք իբր առնչակից՝ համանգամայն էին բնութբ և ճանաչմամբ, եղեն համանգամայն և ցաւովք, ապա և փառօքն։

Եւ արդարև ուժ ունէք յերկուանալ ընդ այս զմտաւ գայցէ. ուր տառք ճծայինք ամենայն ուրեք ըստ վերոյն կրելոց վասն այ՝ խոստանան և զուրախութենէն չափել. զոր յանձին կրեալ հոգերգակն դաւիթ՝ գոչէր ցնծալից. ‖ Ըստ բազում ցաւոց սրտի իմոյ՝ մխիթարութիւնք քո ուրախ առնէք զանձն իմ։ ‖ (սաղմ. ղէ. 19։) Որով քաջալերս անձինն բերեալ մեծն պօղոս երանելի, սրտիւ ընդարձակելով դիմադրաւ ի նեղութենան լինէր, ասելով. * Չի առժամայն յաճախութենէ թեթև նեղութես մերում՝ ի յաւիտենականն առաւելութենէ զմեծութիւն փառացն գործէ ի մեզ։ ‖ (բ. կոր. դ. 17։) Իսկ արդ՝ եթէ չափաւոր ցաւոց և նեղութեանց ըստ բազմին և ըստ յաճախելոյն հանդիտակիւս է և մխիթարուին և փառքն, զինչ առ անչափ ցաւս տիրամօրն զհամեմատութենէն արժան է խմանալ, առ որով այլոցն ամենեցուն կիրք ծածկեալ անյայտին՝ իբր առ տեղք յարեգակնէ, կորուսեալ բնաւ զանուն ցաւոյ և նեղութեան։ Մի անչիշատակեսցի և վրկչականն խոստումն առ աշակերտան. դուք ասէ՝ ցանդ ընդ իս ի փորձութենս կցորդեցայք. վասն այսորիկ ուխտիւք խոստանամ ձեզ զարքայութիւն, որպէս և հայրն ինձ ուխտեաց. (ղուկ. իբ. 28. 29։) Իսկ ի տիրամայրն զառաւելութենէն տեսաք վերագրեցելովքդ. յոբում՝ ոչ այնչափ կցորդութենէ քան թէ նոյնութենէն էր ցաւոցն ի սկզբանէ մինչև ցկատարումն. ապա զոր ուխտադրութեան խոստումն առ նա եղեալ կարծիցեմք։ Ինձ թուի, ոչ այլ՝ բայց նոյն իսկ հայրական խոստումն, որով որդւոյն ուխտեաց, և զոր արդեամբք կատարեաց, բարձրացուցանել զնա գեր ի վերոյ ամենայն իշխանութենէ. և շնորհել նմա անուն երկրպագելի յերկնաւորաց և յերկրաւորաց։ Եւ ոչ արտաքոյ գրոց է ասացեալս. քանզի ինքնին տէրն ի յայտնութենէն ասէր, (հ.21.)

*Որ յաղթէ, տայ նմա նստիլ ընդ իս յաթոռ իմ. որպէս և ես յաղթեցի, և նստայ յաթոռ Հօր իմոյ: *Եւ զի տիրամօրն յաղթութիւն ոչ միայն չնաշխարհիկ դոյր քան զամենայն նահատակաց, այլ նմին ընդ քեռի յաղթութեանն, յայտ է թէ հրաշափառագոյն օրինակաւ 'ի զուգապատուէն որդւոյն բարձրացաւ, աթոռակից նմին լեալ, իշխանակից, և փառաբանակից։

ԻԲ. Պաքէն անպատում և քան զամենայն միտս դերազանց են զանազան աթոռոցն երևելութիւք, յորս բարձրացոյց աչ հզօրին զարերեանեալ տիրամայրն: Զի իբր արարչին մայր, իսկուհի երկնի և երկրի պատուեցաւ. իբր սկզբնաշաւիղ կուսութեան, ամենայն կուսից մայր և պսակ յարդեցաւ. իբր մահաւիթ ցաւոց վերբերօղ, մարտիրոսացն խմբի դահերէց բազմեցաւ. իբր փրկութիւնագործ կրկին հաւասարօրդ, մայր փրկողին իսկ և իսկ դաւանեցաւ. բայց իբր կամաւ նուիրօղ որդւոյն 'ի փրկութեանն կատարումն, մայր փրկութեան՝ և մայր փրկելոց խոստովանեցաւ: Ահա ըստ արժանեացն՝ և փառքն. ըստ վաստակոց՝ պատուղն. դիշերային սգոյն՝ առաւօտ ուրախութեան, անդնդային ցաւոց՝ բարձրութիւն երկնից, ընդ միածնին նուիրման՝ անբաւութիւն որդւոց, ընդ խոնարհ աղախնութեանն՝ բարձր ածատեսակութիւն. որով չանէգծին ֆառացն ճոխութիւ ինքեան աչսկանջալ երգիչ երանելիս դրիզոր. որով բարձրացաւ՝ որքան մարթացաւ. և որպէս 'ի ցաւսն՝ նոյնպէս 'ի վայելսն բարձրացոյց զզօրութիւն ամենակալին, հրաւիրեալ ինքեան երգակիցս զերկնից դասապետսն՝ քաղցր եղանակել զիւր Մեծացոյցն: Ալ նոքա զինչ, կցորդիւք ձրն և պիրաւայրն մեծացուցանեն. միաձայնեալ անդուլ բարբառով համբրէն դասուց անդրանկացն եկեղեցւոյ։

Ընդ որս ձայնակից կարգեալ երկրաւորս եկեղեցւոյ դասապետաց և դասակառաց, յաղթս դարուց 'ի տոհմս ազանց՝ և յոլորտս տիեզերաց, անթիւ պաշտամունք սրտից ըղձանաց զերապատուեն զնախապատուեալն յամենեցունց արարչէն՝ 'ի նուէրս ընծայից, 'ի կառուցմունս խորանաց, 'ի շինուած տաճարաց, 'ի հանդէս տօնից, 'ի ճառս գովեստից անբաւից. խոստովանեալք առ որքանութիւն փառացն զնուիրեանցն անհասութիւն, միայն պարտ վարկուցեալք ընծայել նմին զոր կարեն, թէև ստորև քան զնորա արժանին: Քննեն զիսառն, խնդան ընդ վայելսն, թէև առ երկոսին անկարութիւք պաշարին միտք և սիրտք։

Ընդ փառացն խնդութիւն՝ և ղցաւոցն խառնեն յիշատակ, զկսկիծն պատմեն. զվերն նկարեն 'ի լերս և 'ի դրիչ. գիտեն լոլ թէ տրտմականացն յիշատակաւ զնորա ղյաղթականին գեբահչակեն յառաւելութիւն խնդութեն: Եւ թէպէտ երկոքին այս յիշատակք՝ փառաւորութեցն՝ միանդամայն և վշտակրութեց՝ մեծապէս նմին հաճելիք, և փառացն ահեցուցիչք, և մեզ ոչինչ դանդաղելիք, սակայն առ մերս ընտրութիւն՝ երկրորդսն

առաւելապէս զմեր պարտս նմին հատուցանեմք՝ զարդարուեն և զերախտագիտութիւն. վասն զի ՚ի մերոյ անօրէնութեաց յայն վիշտս ըմբռնեցաւ. և զամենայն յանձն առեալ ախորժաբար, այ ընծայեաց ընդ որդւոյն նուէր հաշտութիւն առ ՚ի մեր բարերարութիւն: Ջհարդ և զորդիականն բնակակիր կարիս անտես սեպել բանս, որով կապեաց բնութիւն՝ լինել ծնողական վշտացն յիշատակօղս և կարեկիցս. իսկ աստանօր շնորհօք մայր. ապա և ՚ի շնորհաց պարտք: Թո՛ղ և զոր առ յիշատակէ նորին վշտոտաց՝ զհոգևորական արգասեացն բազմաբերութիւն ՚ի մեզ ներդործեալ ՚ի մտաւորապէս յիշատակելն. վասն զի նոքօք՝ զրկեալն զանոխակալուի վարդապետի. վշտատեսն՝ զհամբերութիւնն. անարգեալն՝ զյանձնառութիւն. սգաւորն՝ զմխիթարութիւն. ամբարտաւանն՝ զխոնարհութիւն. անհաւատարիմն՝ զհէր. կոծադիրն՝ զհամեստութիւն. և մեղուցեալք առ հասարակ՝ զմեղացն ծանրութիւն, զիւն հոգւոց, զշնորհաց ստացումն: Վ ասն որոյ յիրաւի է շնորհն վշտացն դատարկութիւն՝ մատեան աստեղ ձեռագրութեան, և զկրօնն վարդապետութի, ըստ դեղեցիկ ճահճադրութեն երանելոյս գրիգորի. Որպէս երեքեան ՚ի չէն ջուրն անդրանիկ բնութիւնն հօր՝ ակնդէն ասէ հեթանոսն խաչատուկ մահակիր ճգնաց, այսպէս երանելոյք ի բարեբեռնելոյ՝ գերօրինակ ցուցման պետութի ձեռակրօն էարգոյ ծագելոյ,

ԻԸ. Ձայս, կացցեն այսուհետև բանք, ՚ի մէջ անցցեն խղճք. խնդամտեալքս սակաւուք անարիւն նահատակութեան ձեռամօրն՝ ցաւոցն լիցուք մի պատմօղք միայն, մի լսօղք միայն, այլ կրօղք, այլ շնորհակալուք, այլ նախանձաւորք. ընդ մեր ամենեցուն անպարտ վշտացաւ. պարտաւորքս վշտացն հաղորդեացուք. նա յանտրտունն վերառեալ ՚ի կեանս՝ ՚ի հովտիս վշտաց եթող զնիւթ աղէտս. պանդխտեալքս մնան ընկալցուք: Անկեալ յաւխտեանսն նուիրեալ կան ՚ի հանդէս նորին խնդութեանն. զառաջամանակեայս՝ ցաւոցն նուիրեսցուք: Մի՛ ք միտս դայցէ ումեք, թէ մերժեցան նորայն վշտաց, բարձեալ են հեծութիւնք, արդ ՚ի հրճուանս է: Վ ասն զի անչափութեի վշտացն զամենայն դարս գրաւէ, զամենայն սիրտս հրաւիրէ յիւր կարեկցութիւն. եթէ ցարդ ՚ի մարմնի պանդխտացեալ էր կոյսն ցաւագին, ժամանակացն երկարութի ոչ արդեօք աղօտացուցանէր զկսկծանացն տագնապ: Յիշողականիս զօրութի՛ զանցեալն մեզ ներկայ գործեսցուք. մանաւանդ թէ զետինքս հուպ ՚ի ժամանակ անդր փոխադրեսցուք. ձեպեսցուք ՚ի դաղդոթա. առ խաչին կացցուք անմիկնելի. լցի՛ ՚ի մէնջ ոմն յով հաննէս, ոմն մագդաղենացի՝ ողբակիցք և տրտմահաղորդք ցաւագնելոյ մօրն: ՚Ի ցաւս մարմնականս, բազում անգամ և յանարժանս, թափեցաք վտանեցաք զմեր աղէտս. և զնմ՛րդ անկարեկիցն լինիցիմք առ արժանին ամենայն ցաւակցութե. ո՛չ մի այդպէս. այլ զամենայն զհոգւոյս մասունս ՚ի նա ժողովեսցուք, զյիշողականն ՚ի յիշատակել, զմիտս ՚ի խորհել, ըզ-

կամ ՚ի ցաւիլ, զսիրտ ՚ի կսկիծ, զաչս յարտասուս, զլեզու յաղօթս: Կա՛ մի մերայնովքս ևեթ շատասցուք, առցո՛ւք յա՛ նօթ և զընկերացն զսիրտ՝ զաչս և զլեզու, յորդորատիտս զնո՛ սա արարեալ ՚ի փոյթ ցաւակցութեան: Ցուցցո՛ւք զանձինս՝ արժանիս որդիութեանն Աստուծոյ, հաւատարիմ գտեալք ՚ի ժա՛ ռանգուէ ցաւոց նորա. առ խաչին որդիացաք, ՚ի խաչէ անտի ակնուն ընդունել զարժանաւորսն ՚ի կցորդութիւն երկնային ժառանգութեան. զի անշուշտ է ասացեալն. * Եթէ չարչարա՛ նացն կցորդ լինիցիմք, և փառացն հաղորդ լինելոց եմք ‖: (Հռոմ. ը. 17:) Որում արժանի գտցուք հանդիպել չարչա՛ րակցութեանն և փառակցութեանն՝ նորին բարեբանեալ աստուածոյն բարեխօսութիւք, ՚ի Քո՛ Յի՛, որ խաչեցաւն ՚ի մեր փրկութիւն, և ՚ի Հայրն՝ որ առ մեր սէր մատնեաց զնա, և ՚ի Հոգին սո՛ր, որ հաւատարմացոյց զսէր աստուածութեանն, Ամէն:

# ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

## Ի ՃԱՌ ԿՈՎԵՍՍԻ ԱՔԻ ԱՌԱՔԵԼՈՑ։

ՔՆերքոզական ճառ սքի Առաքելոց, ընդ որս և Եւթանասնիցն, նախ քան զԱզօթեան յօրինեալ ի սքի Նարեկացւոյն՝ դիտեմք ապաքէն ի բանէ անտի. ձբ. 2. յասելն։ * Ջորոց զգուշեան արժանաւորութեամբ՝ ըստ իմում կարի յայլում բանի պաշտեցեալ ‖։ Ասել ճգրիտ ոչ ունիմք՝ որչափ յառաջ ժամանակաւ քան զաղօթեան յօրինեալ իցէ. և ոչ հաւանելի է ժամանակակից կարծել ընդ ճառից սքի Խաչին և Ածածնին. վասն զի երկուց ևեթ ճառից խոստումն և կատարումն յիշատակի անտանօր, և մակդրութիւն այսր ճառի չունի ինչ յարակցութիւն, որպէս ունի երկուցն յիշատակելոց։ Այնուամենայնիւ կրսեր քան զնոյնս ժամանակաւ ցուցանել ասելն ի սկսուածի աստ. * Քանզի առ ձեզ և յաղագս ձեր ի դադարմանէ լռութեամբ շարժեալ կարգ բանիս եմ ‖։

Իսկ թէ յորմէ պատճառէ լռութիւնդ ասացեալ, և զայդ ահա լռեաց առ մեզ. այլ թերևս սակս նշխարացն Առաքելոց՝ որ կային յեկեղեցւոջ Ապարանից, կի՞մ զի ի Նարեկայ վանս և ի շրջակայս նորա կայր եկեղեցի և նշխարք առաքելոյն Թովմայի, կամեցաւ յառուկ դուռնատիս պատուական ալրել զդլխաւոր պետս եկեղեցւոյն Քրի։ Զսոյն թերևս ակնարկիցէ ասելն մերձ ի կատարած. Համար իմ։ Ոչ երբօրէն ցամաքելով ջրեն հեղուկ էին երկունք։

Ի տպաղրութեանս յայսմ, թող զյառաջմէ տպեալսն ի կոստանդնուպոլիս, կալաք առաքինորդ զերիս զրքոյկս օրինակս, որք յերևան ածեն զվերապանս կամ զայլայլութիւնս նախկին տպագրելոցն։ Օրինակ մի գտեալ ի կոստանդնուպոլիս, բառական ըստ հնութեն, այլ ուրեք ուրեք պակասորդ։ Երկրորդ օրինակ յարքունի դրատանէն վարիզու՝ երկաթագիրս հնութեամբ ակնածելի։ Երրորդ օրինակ ի հնագիրս մեծագիրս ճառընտրի մերում, յորում մի թուղթ ևեթ պակասի ի սկսմանէն մինչև ի համար. ե. ի բանն. Եւ այսպէսօք համարձակութեամբ։

Որ միանգամ համաձայն ընթերնուն երեքին օրինակացն, զայն ընտրեալ դնեմք ի բնաբանին. իսկ ուր այլաձայն գտանին, զյարմարագոյնն կալեալ ի բնաբանի անդ, թողումք զտարբերութիւնսն ծանուցանել ի կարգի լուծմանցն, համառօտ նշանակութեամբ՝ պև, էբ, ճա, այսինքն պօլսոյ օրինակն, կամ վանիցի, կամ ճառընտրին։

Ի բացայայտութիւն խրթնածածուկ բանից այսր ճառի՝ ի բաւականէ ինձ դողգոջ թախանձել ունիմք զերջանիկ մատենագրիս մեր՝ մատուցանել մեզ գիւրն՝ և զքեզ Առաքելոյն ձեռնտուն. քանզի բազում ուրեք ընդ քոյով ձեւացուցանէ զիմաստն՝ իբր առեղծուածս ինձ արկանել ի խոյս բանաքննից։

Գրիգորէ Լաբեկացւոյ ներբողեան գովեստիւ առաջեալ ի հա-
մօրէն գոհանալս Աստուծոյ եկեղեցին Հրէից՝ նախապատիւ Պե-
տրոսէն գլխաւորեալ, և Յովհաննէսեան և երկուցն աբեղան
Աշխէրտացին վրէն։ [1]

Ա. Տիեզերաց ծաղիկք և տունկք տեսչալիք [2] տանն եդեմայ։ Ղամայ նախաստեղծին ծնունդք, և [3] զարմք սիոնի։ Ծառք ամբարձուղէշք բիւրոց տեառնք, ծիրանածայր ընծիւղք երկնագեղք, քաղցրապտուղք և ախորժելիք։ [4] Երկնընթացք դիտակք ընտրութեանք, լուսատունկք և տիրահաստատք, շահաւէտք և արդիւնականք, առողջալք և արմատայեալք, պարարեալք և պանծացեալք ի ցօղոյ պարզևողին. [5] ընտրական սերմանք ազնուական բարեբոյս անդաստանին։ Հղիմունք հանապազահոսք, միտայկայլակք, [6] յարակայընթացք։ Վեհք հանդարտահետք, [7] գերածաւալք և գեղածիծաղք, գարնագուշակք, սառնական օդոյն սուղիչք, և [8] գժնդակասիք ընչոյն նհանգիչք և ապաքինիչք։ Աքք և երջանկագունդ գումար [9] դասու Հրաբելոյ։ Վանզի առ ձեզ և յաղագս ձեր ի դադարմանէ լռութեանք շարժեալ կարգ բանիս՝ ի գովեստ փառաց մեծութեանք վերինն հաստութեանք, անսասանելի դրութեանք հիմնացեալ միշտ կառուցանի։ Ալ ասն զի յաւէտ բնակող բարեշունչ բանից՝ քան եթէ շինուածոց՝ եկաւանն ազգ դաւանի։

Բ. Այս արդ՝ ձօնեսջիք երգոյս բանի [10] շնորհ ի մաղթանաց ձերում հայցուածոց, զարժանապատիւս ձեր տերութիւն գերահռչակել։ Վանզի [11] ի վեր քան զձառ շրթանց և զիմաստական բանի զօրութեանք՝ շուք և զարդ գեղոյ ձոխութեանք ձերում բարձրութեանք չքնաղապէս գերահռչակի։ Այս եթէ ոչ հրաշալի գրեսցի լսողաց, մերկասցի բաց ի բաց երևեսցի [12] ծածուկ ծոցոյ բանիս, անեղծականս ձառել զըստեղծելոցդ ժամանակաւ, և գրեալս շնորհօք որդիք էուեն. և թէպէտ և ոչ անժամանակք ըստ անսահմանին, այլ սկիզբն գոյից յաւիտեանց, իբր հիմն ժամանակաց սկսեալք, ընտրեալք նախ քան զեղաց

նիլ ելից աշխարհի, ըստ բարբառոյ ձայնին պօղոսի։ Վասնզի որպէս սիոնին վերին երկնայինն՝ սկզբնամեծար և կանխակառոյց մայրն աղատ մաքրածինն, նոյնպէս և որդիք նորին անդրանիկք և հոդեպայծառք [13] ի սիրզեն ծայրից անկըսկետ եղերաց ընդարձակ ամաց միջոցի աստուստ նկատեալք. [14] ի գրուածէ մատենի բանին նկարեալք. փառօք բարձրութէ շնորհին պատկերեալք. անստուերական փայլմամբ բարերարն հօր կերպացեալք. անհատասար համարձակութէ [15] ստորիցս ստեղծագործեալք. մանկակից կրօնից [16] օծութէ փրկչին ձեռնադրեալք։ Հանդուրնակից խմբից անմահիցն գաստուց պարակցեալք։

Գ. Վասն զի [17] գերազանց քան զասպարէս չափոյ սահմանի հին ամանակի՝ համբաւ հրաշափառ խորին խորհրդոյ մարգարէաբարոյ և տեսանողագուշակ երևման տնօրինեցելոյն մարմնով Յի՝ հօրն արարչակի՝ ձեւք քարոզեցաւ ծագաց աշխարհի։ Կրակնելիք ևս և բաղձալիք, սպասաւորք նախապատիւք մարմնացելոյ և միացելոյ [18] ըստ կերպի մերոյ այ։ Վազմապատկաբար ընտրութէ փորձեալք ոսկիապէս [19] ի հողոյ նիւթոյ։ Ընդունակք յանցման մեղաց չարութէ ախտից մերոյս զանգուածոյ։ Պայծառազգեստք և սպիտակափայլք ըստ պատահման արծաթոյ։ Աչքուրք վարուք և բարիք բարուք, ըստ պարզութէ տարածման տեսութէ օդոյ։ [20] Վաչասկնդք ի հաստութէ, ըստ կարծրութէ ձուլման երկաթոյ։ Ընդականք և ախորժելիք գունակութէ տենչալի լուսոյ։ Վասնզի արդարև լոյսք միջատպայծառք [21] ի բնութեամբ անստուեր լուսոյն վերակարգեցեալք անաղօտապէս ծագել ի ստորինս. ուստի նորոգ [22] գոյութէ երկնի և երկրի ի Յեկ ձեւք սահմանեցաւ։

Դ. Այ զի և [23] ընդմիջեալն ի յամաց՝ խորհուրդ քառանիւթ աւուրն պահպանութէ, յորում արուսեակն հսկայընթաց և վայելչագեղ լուսապատարն պայծառութէք [24] լծակցութէք ընկերին լուսոյ անընդդայաբար իբր ընչապէս՝ երասանակաւ կամաց անբաւին անմոլար շաւղօք հետևմամբ աստեղացն պարագրութէք, յանվրիպական խորհուրդ ձերումդ դիտման՝ վարարածս բարեզարդեն։ [25] Վասնզի ցիրապա-

հակք և պահպանակք և կանոնք ուղղութեանց երկրի, կրօնաշրջը մաքրականի գծագրութեանց ձերում տեսու-
թեդ կանխադրոշմեցաւ։ Ա՛ան զի ո՛չ պաճարք խո-
տաճարակք, և կամ ղօղակք կերակրելիք, և կամ
բոյսք[26] սերմանատատոյցք, և պտղաձին ծառք վարսա-
ւորք, մարմնաճաշակ կերակրոց խորտիկք, որ յեր-
կրէ ցուցեալ՝ ի սոյն կորնչին։ Ա՛յլ[27] երկնային
զարդք և վերնային կամարին կանթեղք, լուսաբոր-
բոքք և անշէջ ջամբարք. այսր աւուր բարերարու-
թեանց արարչին ստեղծուածք և պարգևք։

Ե. Ա՛րդ նմանաբար և աղգակցապէս՝ ի ձեզ յար-
մարի[28] վայելչական խորհրդոյն տեսակ։ Ա՛րեգա-
կունք բազմահոլով՝ գիշերութեանց[29] չարեաց ցամաքե-
ցուցիչք. բանական բուսոց դարմանիչք. անձնաւոր
տնկոց վերընձիւղիչք. սառնացելոց մտաց հրացու-
ցիչք. Թերի և խակ խորհրդոց հասուցիչք և հմտա-
ցուցիչք։[30] Ա՛թացելոց մտաց խաւարի՝ լուսնապէս
խրախացուցիչք և բարեգործիչք։ Ա՛րիպեցելոց՝ ի
ծովային ծփանաց աշխարհի՝ աստեղապէս ուղղիչք
և առաջնորդիչք։[31] Պայծառափայլ լուսաւորք.
ձրագունք եւթնաշողեանք.[32] շանթք կիզանողք.
ցոլմունք ահագինք. հոսանք հրեղէնք. մարգիչք
մարդկան. բովք ընտրութեան. հալոցք հոգւոց։
Ա՛նպէս յայսոսիկ կոչեցայք՝ ի կամ կոչողին զօ-
րել այսոցիկ։ Ա՛ւ այսքանեօք համարձակութեամբ
բազմամանեայ ընդրհիւ ամբարեալ և յաւէտ լցեալ
և բնաւին մաքրեալ, զբնակութիւն վեհին բարձրու-
թեան[33] զփականս վերընկալայք և ձոխացայք և փարթա-
մացայք փառօք տիրապէս. ա՛ծացեալք ընդհօք
բանին. Թագաւորեալք օծութիւն հոգւոյն. իշխանք
պանծացեալք. պետք գլխաւորք. նահապետք վսե-
մականք. նախարարք նախահոգակք. առաջնորդք
բարեշաւիղք. որսորդք հմտավարժք. դիտապետք
երկնաբնակք. վերատեսուչք անմռայրք. այցելուք
ուղղադատք. քահանայք քաւութեան. երիցունք
երևելիք։ Ա՛ան զի այսպիսիք և այսոքիկ աստիճա-
նի փառաց ձերում տիրաձիր գլխաւորութիք։ Ա՛յ
զի և[34] մասունք անդամոց ստորհաստեալք, մաքուր
սրբութիք, մերձաւորն ընտանութիք, յարին կառուց-

ման գլխոյ գովելոյն [35] արժանապէս միաբարդեցայք։ Ուստի անխտրոյց և անանձնապետ, միակենցաղ և զուգակցորդ ընդ քեզ գոյք փառաւորեալք։ Վասն զի և զոյն հայցեաց միածինն առ պատուակիցն վերընծայեալ զբանիցն մաղթանս, կամիմ և սոցա ընդիս պերձանալ հայր՝ ի քումմ պարգեւս։

Զ. Վառակի երիւք [36] գովութիւք բարեաց բաղդատեալք։ Ողբեքծագեան մասանց եակաց [37] անպատկառ խօսնակք։ [38] Ի խաբան բնութեանէ եղակաց սիրոյ ջատագովք։ Ե նորհաղարդ բանին տուողին հոգեշունչ աւետարանիչք։ Ի մոլք ուղղաձիգք և հանդարտաբայլք։ Ո ուարակք եղանոյ բանականաք և նուիրելիք։ Ի ճակնոյք կրօնիւք համահետք և խոհեմին թացք։ Ի գործի ձեւակի խաչի խորհրդոյ՝ [39] զմարդկային սրտից անդաստանս հերկագործողք։ Ի աղաչանին փրկագործութեան ունողք, [40] և ի պարանոց աղդերի ձերում ամբարձողք։ Վանդի ի կոյս և յառաջն քառից ստորագրեալ գունդս երիս երիս թուով երկոտասանս ի ձուլելի ձեւս պատկերաց ըստ լուց կերպագրեալս, անդրիագործս՝ [41] արհեստակից տուածս, ի դիտումն կայից հիւսիսոյ և դիմաց ծովու ընդ ելս և ընդ մուտս ծագման արեւու, վկերպարան ձերոյ օրինակի, լձակ ջրակիր խաչանիշ և պղնձանիւթ ուսով հաւատոյ ի գաւիթ ծոցոյ սողովմնեան խորանին յարկի, իբր եկեղեցական խորհրդածութեամբ վերադիտողք տիեզերաց. ի նպաստ պատձառի նոր նորոգութեանն զկրտութենէն ջուր սրբելով։ Որով [42] զանեբևայթ մտացն ծածուկս սրբագործեալ, իբր ստուերին առակաւ՝ ի նորս տեսակ կարկառեալ զկինն՝ զապաւառ թաղանդի աղեացն որովայնից, որ վերուստ հոգւոց ե ազգակցութենէ, զմտաւոցելոց պաձարեղինացն։ Վանդի անվրէպ և անտարակոյս նշանակ դիմաց խորհրդոյս կերպի ի ձեզ յարմարի ոմն ածարեալք, խրոխտք՝ միանգամայն և հանդարտք։

Է. Ի ստ [43] օձակոխն զարմի որդւոց եղջերուաց, ի ձեռն ինանց զօրուն մարգասեր և աւետաստեղծ հոգւոյն ժողովեալք, և մանաւորեալք վճռակաւ բանին ընտրութենէ ըստ նախագուշակ ձայնին եսայեայ։

Պահացու և սատակիչ Թունիցն սատանայի [44] խսպառ սատակիչք ։ Ժնդակ խստութեանէ շնչոյն վիշապին՝ առաջնոյ պատրողին պատրիչք ։ [45] Հրեշտակք զօրութեան զօրաթունք անհիրհելիք ։ լուսեղէնն պատգամաւորք ։ անաչառութեանէ բանին դատողին ընծայատուք ։ հնոր հապարգևք կամաց անեղին ։ [46] Սուիերք հոգեմատեանք ծածկուեն խորհրդոց էին ։ Ցառ ամանակաց՝ ծննդոց մարդկութեան նուագք ։ [47] Ցախտակք տիրապիծք և ՚ծադրոշմք ։ Ցօն նաւակատեաց հանդարտաձայն սաղմոսաց , ամենայնիւ [48] գերազանցեալ գովութեամբ ։ Օգեցողք փառաց քան հանդերձից ։ Ընակողք երկնից [49] քան թէ տաճարաց ։ Կենցաղակից քո լուսակերպից՝ քան թէ երկրայնոց ։ Հոգիք թեթևք՚ի Թանձր մարմնի ։ [50] Ընձիւղք ամբծութեամբ հիւթիւ շաղկապեալք ։ Ընդգունք՚ի Թուիչս խմաստից քանի ։ ՚Ի մուտս անմատոյցս մտօք սլացեալք ։ Հրաշիցն երկնայնոց երկրաւոր գոյութեամբ պատմիչք ։ Ընմահին փառաց՝ մահացու զանգուածով քաղաք ։

Բ ։ Ներօղք [51] զգլխաւորն դիւաց՝ կարթիւ հանձարոյ ։ խաղացեալք բռնաւորին սաստկութեամբ՝ իբր ձագու փոքու դիւրըմբռնելոյ ։ Ներկամարմին մատանցն ձեռաքն՝ քան թէ ագուցեալ ոտիցն կօշկօք զհաճանողին խորտակեալ զգլուխ ։ Ոգոյ [52] օրինակ նմանաչաք՚ի ձեռն տիրամեծար մաքրական և ընտրելական պարգևաձիր և հնորհաբաշխ աջոյն պօղոսի՝ երևի հերքեալ՚ի բորբոքեալ խարոյկին քոցոյ՝՚ի բարբարոսական վիճակն առաջնին ։ Յորում հրաշագէս ծանուցաւ Նա յաչակերտին համարձակութիւն ։ [53] Վանգի իբր ծածկեալն ընդ վարագուրաւ խորութեանէ կերպաւորութեամբ պատկերի բանին յոգոյ՚ի յաւարտումն լրութեանէ կատարման լայնաձիգ և դժոխամարտ հին ասպարիսին հանդիսի՝ զմրցանակ յաղթութեան գլխաւորեալ երջանկին , ապա Ճառեցաւ անոստ սաստկութեամբ անգծելի , սխրալի և անքերելի կարծրութեանէ չարին կակղացեալ ։ և յաւէտ վանեալ անդը քան զկայ կենաց կենցաղոյս կարծեաց պատժապարտապէս ըմբերանեցաւ ։ Ոգնպէս և սորին [54] իւրով համակրօն դաւանահամբոյր գործակցօք իբր

’ի գաւիթ դրկաց մի նաւի՝ զերկրածուփ ալիս կո-
խողի՝[55] սակաւաթիւ զնդաս երջանկացն հանգուսնակ-
ցեալ այնր յաղթութեանէ, զմիլեգնաձառ բանսարկուին
զգլուխ՝ բոլորովին իւր զգայութիւք և խորհրդանո-
ցաւ կոր կամացն մեքենայից ’ի յուսոյն արմատոց
հատեալ վերակարեցին։

Թ. Ապան զի ընտրեալն և[56] զարմանալին կիւլի-
կեցին, որ յարաբիայ հեթանոսաց կոչմանն առա-
քեալ, երանեալն Ասս և հրաշանուէնն ախոյեանին և
քաջամարտիկ, մշտանուէր հայցմամբ աղօթից ըզ-
դիւաբախ խորոյն կոհակս[57] կարկեալ նհանջեալ
յինքեան խափանեաց։ Այս թէ և ’ի[58] վկանացն
կայից պատուաստալատան փայտից՝ ’ի ստորին պը-
տոյտս խորոյն սասանեցաւ, այլ անմարմնաբար՝ քան
թէ թանձրապէս յաղթեաց անդնդոց և անդնդայ-
նոց. և ծաղրականաւ այպանմամբ հենդնեաց ըստ
մեծին դաւթի զմայրն ահագին զարմից ղուղակաց։
Այս[59] անսայթաքելի ոտիւն հետովք՝ ընդ անկոխն ըն-
թացաւ սահման յատակի, զանհուն ծովուն միացեալ
ծոյն բարժանեաց ըստ մեծին մովսէսի, ’ի խորհուրդ
[60] հմուտ որսողաց առակաւ նաւին բազմահոլով հո-
գիս նաւողացն՝ ’ի հեղձմանէ խորոյն փրկեաց։ Այս
[61] շրթնաշղթայ կարծր առաստանաւ դանդանաւան-
դակապ պաշարմամբ զկործանողին մալեալ զկզակս
ըստ առակաւոր բանին նախնոյն եզովմայ, զկորու-
սիչ և զմահացու թոյնս իժին ժանեաց՝ զօրութեամբ
կեցուցիչ խաչին պակասեաց և ցամաքեցոյց։ Այս
այսպէս գուշակեալ գիր ստուերական ձշմարտաբար
արդիւնագրեցին. և կոխեցին մանրեցին զատամունս
օձից խիստ հերձուածողաց և թունիկ կարձաց նոցին
գործակցաց, ընդ զօրացեալսն ’ի չարին մահու և
բեւլիարայ։

Ժ. Ասկ լծակից և[62] կցորդակից նորին առաջին,
սկզբնաթիւն և նախամեծար, վէմն հաստատեալ և
արձանն հիմնացեալ, քարն անուանի եւթնաթիւ դա-
ւանութեամբ յարմարագրեցեալ, ըստ չափոյ[63] խոր-
հրդականն ամանակի այսր յաւիտենի սկսման և
լրութեան, ընտրեալն և փառազարդեալն Աստուա
Աստենարարին շրթամբք երանեալ, և բարերարութիք

բարձրացեալն հօր ուշադրեալ և իմաստնացեալ. և ուղղահաւիցոյր դաւանմամբ[64] հոգւոյն իմաստից տեսեալ զանժամանակ պատճառ անքնին ծննդեանն, արժանապէս բարգաւաճեցաւ բանիւ անեղին, երանի՛ ի քեզ սիմոնին ժառանգ յոյնանուս: Աստի և նովաւ ըստ սմին 'ի նոյն ուխտակցութեն պաշտօնակցաց սոցին՝ սոյն երանութեն անճառապարգև ձայնիւ արարչին[65] աւետարանագրեցաւ: Օ՜ի թէ խոստովանութե՛ նոցին համաձայնք՝ և փառացն զուգապատիւք. և մաղթանօք մարդացեալ էին 'ի զօրութե՛ բանիցն նոցա մեք պատսպարեալք, և յաւերժական յուսով պաշտպանեալք, յաղաչել փրկչին մարմնոյն ադամայ զծննդոցս որդւոց փրկութե՛, հայցեմ ասելով, որպէս վասն սոցա՝ և յաղագս հաւատացելոց բանիւ սոցա յիս, իմ բարձրեալդ հայր:

ԺԱ. Ահա պատճառք և սկզբնաշաւիղք քնաւին բովանդակ բազմաբիւր բարեաց այսր երանութեան: Արմատացելոյն կենցաղակցորդք. արարողին բանից խօսակիցք. մատակարարք կամակատարք.[66] կենաց բարին կերպին նկատօղք. ծածկուե՛ փառաց փրկողին մերկապէս տեսօղք. յընտրելոցն թիւ անուանիք, 'ի դասակցութե՛ հարանցն հրաշալիք. վկայք նորոգմանն վախճանելոցն:

Սկզբնաւորեալք 'ի նախապատիւ և կանխամեծար սերմանէն սեմայ անդրանկին նոյի. զուգաշաւիղք մաքրութե՛ վարուց մեքիսեդեկի. զաւակք խրախուսութեան գոգոյն աբրահամու. ժառանգք գովութեան գրկացն իսահակայ. որդիք երանութե՛ ուխտին իսրայէլի. զարմք և շառաւիղք աւետեացն յուդայի.[67] աշակերտք գերազանցք օրինացն մովսէսի. ըղձալիանացն և գուշակելոցն մերձաւորք և առաջակայք: Նպաստեալի կորիւնք առիւծուց. պատարագելի ամալք գառանց.[68] սիրահաւաք գումարք հօտից. ճաճանչարդ ազինք գնդից. անդրանկին հօր ժառանգակիցք.[69] եղբարք փառաց միածնին: Արմինն Յի՛ի՛ 'ի ձէնջ ըստ վկայութե՛նե մարգարէին. մարդկապէս ՚ուր ՚ի՛ն 'ի ձեզ, և դուք հոգեպէս[70] ուղերձեալ 'ի նա: Ահա այսպիսեօք, և ևս բազմօք անկշիռ և ան համեմատ գովեստիւ պատուեալք և փառաւորեալք.

Յանկոյն կենաց ընձիւղեաք. պտղաւէտք, հրաշալնշանք. քաղցրաձաշակ որթոյն բարունակք. աձուռնաճիղ ուռք վարսաւորք։

ԺԲ. Արդ այսու[71] բարգաւաճական բարեբաստութեամբ ի բիւրուց բերկրալիր բանից հրաշալնշան և հաճոյական խորին հանդիսիւ անտխուր հրաձուանօք տօնեալք։ Օ՜ի թէպէտ ննջեցիք կափուցմամբ երկրաստեղծք աչաց, ընծայեալ ամենունակ և յոքնընմբռնող նախածին ծոցոյ մերն որովայնի հողածին զարմի, այլ կենսատու բարբառոյ սերմանձերոյ բոյս ցարդ և ցուցանի յանհատս և յանհամմատ թիւս ամբարոյ արդիւնատրութիւն։ Կենդանիք ի մահու. անմահք ի մարմնի. անեղծք ի ստեղծման. միանձնք ի սկսման։ Յա՜[72] Վա՜հ և հոգւոյ նորա առաքեալք. կաճառակիւք կրօնիւ փրկչին. զուգաշուիդք պարագրողին.[73] հանգուցնատիպք երևելոյն։ Օրն ընդ միածնին փառք և աշակերտք։ Նահիւղն և անժամանակն էութ[74] ազգք և ընտանիք. որպէս ոմն յուժեմնէ առեալ՝ ոմանց իմաստասիրեաց։ Ժամանապատիւ փառօք առաքեալք ի ծածուկ[75] ծոցոյ ստորիջեցելոյն. և ի ձեռն ձեռնադրութեամբ ձերոյ՝ մարգարէք ապաքոս և տիմոթէոս.[76] ի ձէնջ աւետարանիչք անուանեալն պատուէր՝ բարձու վիմին աշակերտ սրբասնունդ պատանին մարկոս. անուանակիրն յարութեամբ, պատմողն համբարձման՝ անտիոքացի համբակն Ղուկաս, բժշկապետն անձանց, քան եթէ մարմնոց։ Ձեզ և ի ձէնջ հովիւք և վարդապետք։

ԺԳ. Խրթնածածուկ[77] բարբառոյ լեզուք։ Ծտաբացեղ ձայնից յայտնութիւնք։ Ներևութիւնն բացերևմունք։ Նզարձակեալք և առատացեալք, ի զօրութիս, յայցելութիս, ի հանձարս, ի պատասխանիս, ի համարձակութեամբ,[78] ի պատշաճաւոր դարձուածս բանից, յաջողուածս երկաքանչիւրոց՝ եղծման որպէս սափիրային, և նորոգութեամբ՝ իբր տաբիթային։ Նուշութեան բուրմունք հոտոց։ Ձայնատուք վեհք ահել որոտման,[79] բաներեգէս ի տեառնէ անուն ձեր. ըստ այսմ զօրացեալք և քաջացեալք. անվնաս ոտից գարշապարօք խրախուսեալք

անդայթակղելիք ։ [80] Կշտիւք փայլմամբ առաջնորդեալք ի Հրագէն կենաց՝ ընթացից ձերոց գործադրան ։ Ը Նորհաշտելիք և լուսատեսիլք . յերկրային տոհմէ անիմանն ։ Ա Ջողակին [81] աջով տեառնագրեալք ի նորոգութեանն նշանակ ։ Ա Խտից և մահու վշտաց տխրութե՛ն ի հրամանէ էին յաղթական . անպարտելիք [82] և արուորագոյնք ։ Ի ստ երկնային զօրուն՝ զուդական ։ Ո ուտք հետոց ձեր ի փառս ի յերջանիկ վայրկին սահման ։ [83] Ն արսանեկան պարուցն կը ցօրդք ի կենդանեացն կայիցն խորան ։ Ա մենակալ ձեռինն օրհնեցեալք ի գովեցեալն աւուր համբարձմանն ։ Խորհրդական խումբք համարու պատկանաւորք թիւք երկոտասան ։ Ա տենապետք դատաստանի ի սոսկալի աւուր նորոգմանն ։

ԺԴ . Ա րդ՝ այսքանեօք խնկելի և նուիրելի այլ և սխրալի և զարմանալի մասամբք երանեալք և բարեբանեալք ։ Ո ւսանշոյլք և ոչ հողանիւթք . հոգեգումարք [84] և ոչ մարմնագունդք . յաղթողականք և ոչ պարտելիք . երկնակենցաղք և ոչ երկրաւունդք . անապականք և ոչ մահացուք . սրովբէամաքուրք և ոչ երկրամեղք ։ Օ ի թէ և ստուգապէս մարդք [85] ի ստորնայնոց համագումնից , այլ հրեշտակք հաւասատապէս՝ բացակայք կայից երկրակիր կրօնից ։ Ա ինայնուամ գլխոյն Յ ի երկոտասան յօդուածք անդամոց ։ Կ ենդանարար կամաց բարձրելոյն հաճոյական յիշատակարանք ։ Ո ւրանդի թէ որ մարմնովն են , ոչ լինել տեղի այ կարեն . և զուք ոչ էք մարմնով , այլ հոգւով . եթէ իցէ ունօղ այ հոգւոյն . և [86] տարտրոհիլ առ ի միմեանց ընչաւոր մարդն և անճնաւորապա հոգեպէս՝ քան թէ մարմնաբար ընտելութե՛ն ձերոյ կենցաղ ։

ԺԵ . Կ շանագիրք [87] կերպատարագք այլազան զարմի միաթիւ շարի երկակի հնգից և երկուց վարդացն և յարմարաց տարեր երկրի , և ամաց շարժութե՛ն և հաստատութե՛ն , ըստ քերթողացն Ա հագրութե՛ն ։ Ո ւրանդի նուիրական ոմն է ի սոցունց , որպէս ոչխար կատարեալ արու ։ Կ ն այլ գործնական [88] իբր զուարակ լծաձիգ , կասօղ . և արքայական՝ իբր մարդատիչ և առիւծ հզօր ։ Կ ն այսպիսեաւ Թուով

յարմարեալ միտչէ ՚ի կատարեալ Թիւն երկոտասան։ [89] Երկոտասան և դրուԹի երկրի ձևականուԹեան. երկոտասան և աւուրցն ժամուց տունջեան տեսակ. [90] երկոտասան և գլխաւոր Թիւք անդամոց մարմնոյն։ Երկոտասան ըստ այսց վկասին զբ քառամանեակ. [91] երկոտասան կայլակք աղբերաց, և որք արբչին զոյն զօրապետք. երկոտասան և [92] վկայական արձանք գետածինք ՚ի յորդանիսայ ծոցոյն համբարձեալք. երկոտասան և [93] զոր հեղիաս կառոյց նպատակ ՚ի կործանեալ հիման սեղանոյն [94]։ Ահա երկոտասան Թիւ խորհրդական՝ զորբազան անուան ձերոյ յիշատակարան կոչման՝ վկայեալ վերակարգելոցդ։

ԺԶ. Այլ և ՚ի սոյն յարեալ համբարձիդ ՚ի յիմանալեացն յանհասուԹիւն զպտղածին [95] Հուղ երկոյ տառիս՝ զպսակօղ և զնորոգօղ անուան էուԹեան ամենազօր զբ ԵրրորդուԹեն։ Վանզի ՚ի սորոքես երից քառադրաց յորջորջեալ կոչմամբ զծանուցեալն մեզ տերուԹիւն միափառ և համապատիւ, անպարագիր և անվայրափակ, Հայր և Որդի և Հոգի, և միաշար դասեալ զԹիւն պատուեալ և օրհնաբանեալ երից ազգակցաց՝ երկոտասան վերանկարի։ Ահա և յայսոսիկ ցանկալիք, և վեհադունաւն վկայելիք, և անձառելեաւն վերագրելիք։ Նշանակիք ով, և սրբոց քաղաքակից. շինուածք իմանալեաց, անբակ տաղաւարք. արարչուԹեանն օԹևանք, և ախորժելի բնակարանք։

ԺԷ. Իսկ [96] Աւետանսնիցն Հառ փոխարկեալ ըզդէմս բանիցս, յաւէտ ըղձական և ախորժելի խորհուրդ ցուցանեն։ Վանզի զայսքանեաց բազմագուման դասուց ընտրելոց՝ որ բան զօրասցի ՚ի նիւԹ ներքողկնի։ Ա՝ ասն զի յամենաձեն գրուե [97] աւետարանական պատմաքանուԹեն՝ զկնի մաքրակենցաղ և տիրաքաղող ՀանապարհորդուԹեն առ առաքօղն Հեպեալ Հասին, յանդիմանակաց տեառն պատկերի զուարԹ բերկրանաք. և զօրուԹի անուան կոչողին փառաց ինքեան պատմչին, զմերժումն ախտից և զայսոցն Հալածումն, աւետարանեաց նոցա մեծագոյն յուսոյ տեսուԹի։ Այնպայմք ասէ ընդ գրելոյ անուան ձեր յերկինս։ Ո՛վ փափագելի մեծի և աներևակայ երա-

նուիրեանն. քանզի որ գրեաց զնոսա Յոհ, նոյն և վկայեաց, այսու պարգեւօք անուանակոչեալ Յոհաննգք և որդիք որոտի արքայութեան։ Վասն Յոհաննգպետք ամենայնիւ գոյիւ կատարեալք բազմաբեւեր բարեգեալ բարուքիք. իսկապէս ընտրհիւ պատարեալք. ապէնիալ պարգեւօք լցեալք։[98] Նուիրանանեկի երկակի լեզուացն այլասեռ ձայնիւքն ի մի տեսակ զուգաշուրթն խօսակցութեամբ համահաւաքիչք։ Խարժանելոց յոքնակի ազգաց՝ անսասանելի շաղկապք սիրոյ։ Վասք և[99] դասապետք վայելչականք պարուց։ Տիեզերաց երկրի դատաւորք։ Վումարք Թագաժառանգք կայսերի։ Ընտնակալ պետութիւք իշխանականք։ Վունդք գեղեցկագեղք նախարարաշնեայ պատուելոց։ Նկեղեցիք ընտրելոց երկնից բնակութեան։ Աաճառակիցք և կցորդք դասակցութեանցն վերից։ Այժք կայունք և անխախտելիք անմահին փառաց։[100] Ացորդք հանդիսի իմաստութեան հանճարոյ։ Աանք և յարձակմունք աւնարկութեան վերնայնոյն։[101] Շ արք աստեղանիշք եկեղեցւոյ հարսնուէ։ Ընհեսեական ձևք պակաց զարդու սիոնի։[102] Նուիրանասուն բոյսք արմաւենեաց ի նշանանուն յեղիմ։

ԺԸ. Նս միանգամայն գրելով զամենայն[103] ի սոյն կարգ բանիս պատկանագրութիք, զնկար անկուածոյ ձառիս դրուատի՝ պայծառապէս պճնազարդեցից։ Օ որ բանն Յոհ առ ի յայ անժամանակ իսկութեամբ ծնեալ միայնակ անձառն յանքնին ծոցոյ. որ և[104] ի կնոջէ կուսէ մաքրելոյ և յանարատ սրբուհոյ, անդրանիկ և անհարազատ, ի մօրէ յատուկ՝ անհաղորդ կամաց հօր երկրաւորի, Ընծ ըստ տեսականին, և մարդ ըստ պարզուքեն միաւորական խառնուրդեն. ոչ սոսկ և ոչ վայրապար, այլ մեծի իրակարգութիք նչխար՝ զձեզ սրբագունդ դասք առաքելոց վերակոչեաց։ Ոչ ընտրութիք միայն վկայեալ, այլ և պատշաճականաւ Թուով պանծանաց պայծառացուցեալ, կարգք և կնիք տասանց եւթանց խորհրդականաց,[105] ըստ ժամանակաց յեղյեղուն շարժութիք դարուց։ Ասկ[106] զերկուսն յեւթանասնիցն Թիւ յարակցեալ, զնշանակ ապառնեացն և զներ-

կայիցս. զերկնաւորացն և զստորնայնոցս. զմարմնոյ և զհոգւոյ. զտապանակակիրս տախտակացն, զերկեակ գոյութիւնէ երկնից, զերկուս լուսատուիցդ, և զլուսաւորացն երկնայնոց, զեդեմայ և զմերս երկրի, զհնոյն օրինի և զնորոյ աւանդութենէ:

19. Յաւուրսն ընդ Լոթ: Զզօրութիւն ընտրհայ քոյ՝ որ երբ լոյս եկեալ յերկինէ՝ ընդ քաղքսը հուպմոյն, միացուցեր, տպաւորեցեր ի ջուր աւազանին մկրտութիւն. յորոյ օրինակ ի պրոպատիկէ աւազանին յուզելով Ջուրցն ազդմամբ հրեշտակի, լինէր ախտացելոցն բժշկութիւն: Որով զմարդիկ գրեցեր յերկինս ծառանդիս անմահիդ կենաց: Ու ձեռ. ծառանգաւորս: յերկու ձեռ. պատկան կենաց:

20. Ա՞ստրոնմ նա ապաստարս: Ու ձեռ. աղտարս: ... Բարեխօս նա մասպնարս: 2 ձեռ. խաղաղարս: Իսկ Թէ չինչ միտս բարեխոս կոչի Հոգին ասէ, տես ի Կարեկն. բան լԳ. լԴ. 30:

21. Հոգի կերպաւոր: Հոգի՝ ոչ երբէք զգալի շունչ՝ անկերպ, անկայուն, այլ գոյօղ, հաստատուն: անկն գիմաւոր. անձն իսկապէս են, Թակայացեալ. և երկու բանիւս իմանի՝ բնութիւն և անձամբ կատարեալ: որով ընդն. յորմէ անաչառ պարգևատրութեամբ լցեալ լինին, Ճոխասնան բարձոնի, երկնայինքն հրեշտակք, և սթրինի, երկրաւորք մարդիկ: Զքո ընտրեալսն զօրացուցես ի հանդէս կամ ի կատարումն գոմ պատրաստիդ: Ու ձեռ. գոյ պատրաստդ: այլ ձեռ, գոյոյ պարգևացդ:

22. Զհանդայապէն՝ զկամաժողովն՝ գլխաւոր իշխանութիւն, որ տանի զպատիւ քո գլխոյդ: Զայսընչուն, զեպիսկոպոսն ուշտունեաց՝ որ գասիչն է և ընտրող այնոցիկ՝ որք ընդունելիք են ի կարգ եկեղեցականն: Զպէս, զվարդապետս, որք վարժին և քարոզեն զդաւանութիւն հաւատոց և վարուց: Զբազմամանեայ. զոչխարն զանազան գաստ քահանայից, սարկաւագաց, գալոց և կրօնաւորաց՝ որք յանուն և ի պաշտօն քո ժողովեալ են: Ասա մի ձեռ. դնէ. ընդ պատրաստ նոսանդ ի յանուն տո ծողովելոցս:

23. Զբարեպաշտ խոգաւորն մեր: Ու ձեռ. պնոգաւորս մեր բարեպաշտ: խորհուրդ ղօրականօք: այսպէս 2 ևս ձեռ. այլ տպ. պաշտօք: ... զօրապետօք. Ու ձեռ. զօրավարօք: ... ՅԴուրկեդ տո պաշտօնեից: այս չինք ի Ու ձեռ: Սոսկականօք և նուիրողօք: Ա յոչսամ ե յերկու ևս ձեռ. իսկ այլ տպ. յատկացուածով, սոսկականօք և տպաւորօք, ուխտաւորօք և նուիրողօք: Սոսկական իմանի՝ ոսամին, որ չէ ի քաղաքական պատուի. տես ի նարեկն. բան իԲ. 2. հմ. 2: Ասնանուն լուծ. մեկնի՝ միաձի կամ հեռևակ. բայց հեռևակն ասացաւ նախ: Ա յլև նուիրօղ փոխանակ նուիրական աւետ, մեկնի՝ (չավուշ,) որ չպարսպի, այլ իմանալի է՝ ընծայաբեր յեկեղեցի. որք նուիրեն մոմ, ձէթ, խունկ և այլն. և սովին մուօք դնի ի նարեկն. իՁ. 3: Ապաչեանօք. ոմանք լուծմանցն իմանան՝ անզէն, ոչ զինուորեալ, որ չունի ձի կամ զէնս: Բայց լաւ ևս իմանին ազգասքն, որք չունին ձեռն նուիրաբեր լինել յեկեղեցի: Ա րդ զայսոսիկ ամենեսեան զօրացուցես ասէ, որ գու ինքնդ հովուես և ինամես ի պէտս փրկութեան փոմդ աղաչողաց: Ու ձեռ. գոմ գաստ նողաց:

24. Հայի բարեգործ: Ու ձեռ. բարեգոռ: Ամենայն ոչն պեսդէ, այսինքն ամենայն բանաւոր քեզ ակնկալեալ ունայ ոմ բարեգործդ ի բնէ: Ա նպարագրելի ոանդ, որ զհամայնս ունես՝ բովանդակես, բայց գու միայս անբովանդակելի: Ու ձեռ. ընդունող: ... օրհնեալդ ի բարեգոռնս: Ու ձեռ. ի բնաւթ:

25. Թոթել զմարմնս: Խնդրելիք, աղաչելիք յօգել, միաբանել զմարմինս մեր ի մի ընտրութեն սիրոյն, կամ ի մի հոգի: Ու ձեռ. բոթել ընդ մարմինս մեր ի ջաւիղս ընտրութեն հոգեոյն սիրոյն:

26. Կոչեսն և յայն : մի ձեռ. գոլեսն : այլ ձեռ. կենդանի յայն և ա հաւոր : Անունն հոգի՝ է գերազանց և ձայն կենդանի , ոչ միայն իբրև նշանակիչ ամծայնի անձին , այլ ըստ ընդհանրապէս գերիվերոյ է քան զամենայն անուն նիւթականաց . զի յայտարար է նրբութեանէ , թեթեւութեան , մշտաշարժ ազդեցութեան , որով և կենդանութեան նշանակիչ : Ահաւոր մեծանուն , գոյ ինքն իսկութեամբ , զօրութեամբ՝ գերազանց անուն , երկրպագելի . բայց յանդգնաբար բարութեանդ՝ հոգի հեղգութիւն ես , և ոչ բարկութեան ևն : Խոսի խոհուհայդ , այսինքն սիրոյ հայդ . կամ իսկապէս կուսիդ , որ՝ի քէն հանդերձեցար կամ պատրաստեցար՝ի ծնանել զՈրդին ից : փրկ մօրդ . մի ձեռ . մօրդ : . . . մաղխողական . մի ձեռ . մաղխական . մաղթանօք սիրոյ թեան կարապետի , ձեռնադրողի համագոյակցիդ փո . մի ձեռ . համագիդ փոամ : . . . մաթրակրօնիդ . լուսեղէն լանուն՝ հայցուածովք սիրական դասուց կամ ժողովոյ միանձանց :

---

## Երբէն Գանձ՝ ի սուրբ Աղեղեայ :

Գանձ[1] բաղձալի բարութեան մեծին՝ գտեալ և ծածկեալ :[2] Ի րուբ անթերի՝ բերող համայնից . և դու ինքն՝ի քնաւս : Որ[3] ոչ իսկ տանէր երկինն վերին՝ անվայր քո խորան՝ եթերն անմատոյց , անջրպետ քեզ զարմից հրանիւթից , յուցաբ սահմանեալ անբանակ պատկեր . [4] զթութեանց խնամոց՝ի յաթոռ փառաց՝ թագաւոր բարձանց՝ ՚ի վեր քան զբան : Ակա ընկալեաս զաղերս աղօթից՝ յարմարեալ խնկօք յայս յարկ նուիրեալ՝ըզ եկեղեցի , աղաչեմք :

Պահանն պերձալի՝[5] կոչումն ընտանի՝ձայն ախորժելի՝ անպարագրելի : Որ՝ի թևս թեթևս հոգմային օդով ամենատես կառավարութեամբ բազմեալ տիրապետ՝ արկեր քեզ գահոյս յառակս խորհրդոյ աւետեաց ելից լման՝ աճօղդ՝ի յարմար զիրին կատարումն՝ նկատեալ զվայր քոյին բնակութեդ : Յաւէտ անջրպետ՝ և յոգիս մեր միշտ : Որոյն աթոռ՝և զայլն պատուանդան : Տեղի լուսատարը ազանց բոլորից : Ակա ընկալեաս :

Համատագործ անսխալատեղծ՝ պատշաճակերտ կազմիչ համայնից : Որ[6] յսկզբնաձեռն յառաջակառոյց՝ զայս կերպարան հրաշազարդ իրի հաձեցար լի-

նել։ Այս զբնակն՝ ապա զբազմեալն։ Զգեցեր զերկին՝ և անդ զերկնայինն։ Հաստատեցեր զադին՝ և զկնի զադամ։ Օ յօդուած տապանին՝ և՛ի նմա զապրեալն։ [7] Ցաղաւար նախնւոյ հիւրընկալուեն աբրահամեան։ Ծեալ արձան և տուն այ։ Անդուղք մերելից և հետք իջմանն։ Հարոնեան վրան պաշտամանն։ Կտակ մատենի, դատիչ խօսողաց՝ բարձր գահիւն ընարուեն։ Եծին սողովմոնի՝ տաճար լուսակիր, լեառն ՚ն և տուն այ։ Մբարձեալ նշան յաղգս հեռաւորս՝ փողով ձայնարկու կոչման աշխարհի՝ ըստ տեսանողացն զանձառ քո խորհուրդ։ Հա ընկալեաս։

Վեղապատճոյ [8] աշտարակ կանգնեալ, երկաթեղէն սիւն անկործանելի, և պատուար ամուր եղեալ պղնձի։ Ասկիաձոյլ աշտանակ լուսոյ։ [9] Կղզի պարփակեալ աւեօք ամրութեամբ։ Ընփոփոխելի երկրորդ տեսութիւն եղեկիելի։ [10] Նոր հրաւիրմամբ եկեալ՚ի ծուրայ. ՚ի խնդիր խմաստից դիմեալ ՚ի սաբայ. յօտարասերմ աղանց քանանու. յօժարընթաց ՚ի բաբելոնէ։ [11] Ասցեալ ոգի սիրով փեսային։ Վտուն հիւսեալ մայրատախտակօք։ Վարինք բիւրեղք ըկարկեհանաց։ Պաղպաջունք արփիանկարք՝ մանկաձանօք արծաթեղինօք։ Վաղաք կենդանի շինեալ այ։ Նոգւոյ ազդեցմամբն խօսեալ Յեի։ Լեառն պարարտ՝ մածեալ սրբութեամբ։ Հա ընկալեաս։

Ասրախ լեր դշխոյ հարսն պանծալի՝ պսակաւոր [12] մեծ զարմանուհի։ Ազմազաւակ կուսութեամբ բերկրեալ։ Որ՚ի սկզբան անդ գծագրեցար, և աստ՚ի նորոգումն հանդերձեցար՝ ոսկիափայլ չքնաղ գոյութեամբ։ Յեղանակաւ կոչմանն հագարու՝ փոխեալ աղախնոյն՚ի սինայէ՚ի սաղիմ։ Ակեալ ինքնին անդրանիկին հօր՝ առնուլ զքեզ կոյրդ ընդ լքեցելոյ ազինն յակոբայ։ Երկեալ քեզ հիմունս պաշտելոս՝ զառաքելոցն գումարութեամբ։ Ստեղանիշ լուսաւորութեամբ բոցաձաձանչ շքով պաճուճեալ։ Յարգանդ մաքուր և՛ի ծնունդս անախտս՝ երկնեալ անդստին ժառանգս այ։ Որ ե օրինակ առձեռն՝ յոսով ակնկալութեան զհաղաղութեամբ գտեալ իսկապէս։ Հա ընկալեաս։

Աբրունն լուսոյ հզօր թագաւոր փեսայն երկնա-

ւոր՝ անձառ խորհրդով ի հանդէս խնձոյից պարու՝ կարգեաց քեզ [13] կանոնս անփոխելիս։ Յաղմամասնեայ օրինակ կերպից ի նոյն տեսուէ բոլոր էութէ ի կերպարանս բիւրատեսակս առ ի շինուած կաթողիկէին։ Յասակ տոհմից զանազանութէ ի մի ժողովեաղ հնազանդուէ։ Ցուն և տեղի և յարկ ծածկութէի։ Նարակ տօթոյ՝ և վեմ օգնականի։ Պարմնագոյիցս հոգիաձիր։ Օ՜ծ ընդ մարդկան ընտանեցուցիչ։ Յամանուշնակ ազանց կուտելոց։ Յոյս քաւութէ պարտաւորելոց։ Ակախացուցակ համարձակելոց։ Պատարելոց անձանց խմբարան։ Ո՜հա ընկալցիս։

Ամաստութէն հօր բնակութէի [14] եօթնատեղեան սեամբք կառուցեալ։ Յորում օրհնեալն պատարագի ի սպանդ կամաց ձաշակման երկնաւոր հացին՝ ի գահաւորակ սքի սեղանոյն։ Կենաց մանանայն և գառն երկնաւոր՝ որ քառնայ զմեղս կենդանեաց և ննջեցելոց։ Նոյն ինքն ամենայն և յամենայնի՝ զհնութէն մեծ քան զհաբելին։ Ուր զգրուեալսն տնօրինէ յանբռնադատ եկաւորութէին։ Ի գիրկս ստեանց սիրով քաղցրութէ կոչէ ձեռամբ յամրոյն անմատոյց՝ փախուցելոյն պատսպարան։ Ի վերնայարկ սրահն հոգեկիր՝ ուր զաշակերտսն զարմանագրեաց։ Յորում եղիցին կարգեալք զօրութէք գահերիցութէիք վերադիտողաց. ի պատիւ աւուրս քո ուրախացեալք՝ [15] ունողք անկեան անքծացն պարու։ Օ՜ հայրապետն մեր՝ եպիսկոպոսօք՝ քահանայիւք և սարկաւագօք։ Օ՜ վարդապետ՝ դպրօք և հոգիապայծառ վարժապետական հնորհիւ։ Օ՜ թագաւորն մեր իւրովք զաւակօք, և որք ընդ նովաւ են իշխանութէիք, պետութէիք և զինուորութէիք՝ հարազատ սիրով օրհնեալ յամենից։ Ո՜հա յիշեցես և ողորմեացիս հոգւոցն հանգուցելոց յուսով յարութէեան. խնդրեմք։

Նա ևս առաւել զյորդորումն սիրոյ։

Յոաեէլ [16] վերստին զմերժեալսն առ ի քէն՝ միջնորդութէք բազմելոցն ի քեզ՝ ազաչեմք։

Պաեէլ ահն [17] պատուական մարգարտի անձառ ներգործուէք յաշխարհիս ծուլոյ՝ Պարիամ՝ որ ածաձին։ Պուստր լուսոյ և մայր սիոնի։ Ընձեռագործ հնման հաւատոյ ձշմարիտ պատկեր։ Որոյ այսր օրհ-

նակի անուամբ օծեալ կնքեցար : Հարմարան միոյ բանին մարմնացելոյդ առ ՚ի քէն այ : Խարեխօս [18] ըզ քեզ ընկալցիս առ ՚ի հաշտութեէ պարտաւորեալոյս՝ զշառաւիղն անմահից կենաց զկարապետն կոչման սըբց , և զպսակն մարտիրոսաց , առաքելով և մարգարէիւք : Լուր մերն է ուսաւորիչ՝ հանդերձ միանձամբք ճգնաւորօք . որք են ժառանգք այ՝ ծնեալք յորդեգրութէ ըզ աւազանաւն՝ անանջրպետ հոգեւոր տոհմութէ : Յորում [19] կրկին հայցեսցես նորոգել ըզ փոքրն ՚ի մեծ լայնութէ փառաց՝ անպարունակ բաց- արձակութէ զմայրն մաքուր զաւակօք հանդերձ՝ ուխտիւք պսակելովք յայնմ առագաստի յաւուր ահաւոր երեւման մեծիդ այ : Լո այժմ ողորմեաց մեզ տէր ըստ մեծի ողորմութէդ քումմ :

---

## ՕՐԱՒՕՐ . ՚Ի ՎԱՆՔ ԱՂԵՂԵՑՈՅ :

1 . Բաղձալի բարութէդ ցնծին : Ու՞ր գանձ ցանկալի՝ ոչ մանաւանդ քեզ բարւոյ , ոչ ոսկւոյ կամ արծաթոյ կամ ականց , այլ ծայրագոյն և անբաւ բարութէ : Գթալ- ծածկեալ՝ գտեալ ՚ի հաւատացելոց , և ծածկեալ յանհաւատից : Կամ , գտեալ հաւատովք , և ծածկեալ տեսութէ : Կամ , չափաւոր ծանօթութէ գտեալ , բայց ըստ էութէ և անհասութէ ծածկեալ : . . . Դիտեա ՚ի գանձիս , զի դէպք բանիցն առ Աչ են՝ և ոչ առ Եկեղեցի՝ յերիս առա- ջին տունսն , Գանձ բաղձալի , Թախճան սիրտճաղի , Խնաստագործ ան- սխալաստեղծ , ուր ՚ի կատարածին ևեթ կան բանք պատշաճեալք առ եկեղեցի : Իսկ ՚ի չորրորդ տանէ և անդր առ եկեղեցի հային դէպք բանին :

2 . Լրութէ անխէրի : Լիութիւն աննուազելի . թէև առատութեամբ ընուս զարարածս , այլ ՚ի քէզ ոչ թերանաս ընաւ : Ու ձեռ . լրութիւն անպէղի , և մարթ է խմանալ՝ ոչ փակեալ ՚ի տեղւոջ . ոչ այնպիսի լրու- թէ՝ որպէս թէ զանօթ ինչ կամ զտեղի ընուցու : Էերող համայնից , տա- րօղ կամ կրօղ ՚ի քումմ զօրութէ զամենայն ինչ . և դու ինքն . Ու ձեռ . ինքնին . բայց և դու ինքնութէ կաս ՚ի նեքս յամենայն կրս . պարփա- կիչ ամենայնի , և պարփակեալ յամենայնէ :

3 . Ջոր ոչ ինչ գանէր : Դու զոր ոչ տանէր յինքեան երկինն վերին , անվայր փո խորան , անչափելի քո սեպհական խորան , որ է ՆԻՆէն անա- պոյդ , հրեղէն վայր անմատչելի մարմնաւորաց : անջրպետ ընդ էեղ , որ և է խորոց ընդ մէջ քո և զարմից հրեշտակաց , դու այդպիսիդ ցոյցաբառ- նանէաւ , տհմանեալ կամ ամբոխեալ ՚ի յէքս , կամ ցուցաբ տհմա- նեալ մարդեղութէ , անփոյթ պապիէր , անչափելի կամ անպարագիր խոհութէ : Բայց տես ու ձեռ . այլև լուծմունքն ընթեռնուն, անանջր- պետն ընդ էեղ ՚ե զլուծ . և մեկնի անդ՝ անորիշ ՚ի հրանիւթիցն ցուցաբ տհմանեալ ըստ որում տսի և սերտեցք կային շուրջ զնովաւ . բայց ամէն-

սրիկէ անդ և զմիւսն՝ անչրպէտ : Ըստ կարգի մնացին , այլև ըստ ձեռ . ընտրեցաք դնել անփանաի պապիէր . բայց զպապիէրն մարթի է ասել և ի յայ ջորդն , պապիէր գիւռնէդ :

4 . Գիւռնէդ խնամոյ : Դուն ես լծագաւոր բարձրեալ՝ բազմեալ յաթոռ միառաց , բայց և գիմուէց խնամոց , այսինքն լի գիմովք , ամենախնամ , որ և ի վեր է քան զամենայն բան , այսինքն եթէ մեծուքիւնդ , եթէ գիմուքիդ : Ընկալցին զաղօթս յարմարեալ խնդօ . մի ձեռ . խնամովք :

5 . Կոլոտն ընպանի : Պէտէս կոչմամբ ընտանի մարդկան եղեալ , իբրև բախճան կամ խրախուճել լի ամենայն բարուքիւ , բայց միշտ ճիւսս անպարագրելի , անբովանդակելի խակուճիւ և անհասուճիւ : Ոյ ի ինս : Ամենարիւ զտեսիլ եղեկիելի . դլ . ա . յորում հոգի վերացեալ գայր ի հիւսիսոյ . և ի վերոյ ամպոյն կամ ալիոտոյ բազմեալ նմանուճիւն կերպարանաց մարդոյ : Աւրդ դու ասէ՝ իբր ոչ իւիք փակեալ ուրիք , իբրև ի թևս հոգւոյ սերաբար բազմեալ անարգել ընթացիւք , կազմիցեր քեզ գահոյս յաոաս խորհրդոյ . մի ձեռ . յաղագս խորհրդոյ . ի նշանակել զնորհուրդ բարերարուճիւ քո , կամ աւետաւոր սարգևացդ՝ զոր կամիր ածել ի վայելուչ կատարումն . այն է՝ ներելուիւնթաց գահոյիւք ընթանայիր գոանել զայր բնակուճիւ քո՝ զեկեղեցի : Ասա մի ձեռ . ընթեռնու . նկարեալ զնայրս գոա բնակուճիւ : Յաւէք անչրպէտ . միշտ և ամենայնիւ անչըզտեաեալ , զատուցեալ ի մէնչ՝ անչափուճիւք և անհասանելի բնուճիւ , բայց սիրով և խնամօք և ազգմամբ յագիս մեր դէպ : Ջոճ աիոռ , զերկինս քեզ աթոռ կոչեցեր , և զայն , զերկիր՝ պատուանդան : Բայց դու լինքն ես պեղի լոսաւորչ . լուսաւոր բոլանդալիչ ամենայն ազգաց՝ ունելով զհամայնս ընդ քով իշխանուճիւ և նախատինանուճեամբ :

6 . Որ չըսիդ բնաչէնն : մի ձեռ . ընթեռնու . որ չըսիչդ բնաչէնն չաոաջ նոցոյ զայս ներպարան հրաշագործիւ հաճեցար լինել : Նախ չբնաին : Դուն ամենիմաստ ի գործել , անսխալ ի չօրինել ի սկզբանե անտի ըստ պատշաճ կարգի պատրաստեցեր զամենայն նպատ հաւատիդ : մի ձեռ . նպատ : Նոյնպէս և զնորհուրդ եկեղեցւոյ նախակարգեցեր խնաստուճիւ , զնուիրական եկեղեցւոյ զօրինական պատրաստեալով չառաջնմէ : Ազգէն չառաջին ձեռնադրեալն և ի կառուցանել զաշխարհ , հաճեցար տալ զոխիլ կիր զնմանուճեմ այսմ սքանչելի իրացս : Նախ չբնաին , չառաջ կազմեալով զքնակարանն , և ապա զբազմեացն կամ զքնակեալն ի նմա : Որպէս ահա նախ չգեղեր , տարածեցեր զերկինս , և ապա զերկնայինսն՝ զնբնակեալս ի նմա , ըստ կարծելոյ ոմանց վարդապետաց . զորմէ ասես ի Դաւիթն . բան հե . լուծ . 56 : Կամ , երկ նայինս մարդիէ խնամալ զնարս լուսաւորաց : Սոյնպէս նախ զազգն դրախտի հաստատեցեր , և ապա զադամ բնակիչ նորա . նախ զտապանն կազմեցեր , և ապա ժողովեցեր զազգեսան ի նմա : Ա չարէս երկինք և դրախտ և տապանն չառաջնակառոյցք՝ տիպք եղեն նիւթական եկեղեցւոյ . նշանակեալ լթէ նախ կազմի այս , և ապա լինի տեղի Աչ , հրեշտակաց և մարդկան հաւատացելոց : Զայս առաւելուլթի նիւթական եկեղեցւոյ հաստատ ընդդէմ շաղակրատ Թոնգրակեցւոց . զորմէ տես դարձեալ ի բանն հե . լուծ . 40 . 41 . 42 . 43 : Նոյնպէս այսմ իրի նախագիծ օրինակք էին տաղաւարն աբրահամու , վէմն օծեալ յակոբայ , և սանդուղքն երևեալ նմա , զորմէն ահարնեան , տաճարն սողոմոնի . այսք ամենայն նախ կառուցան կամ ձևացան , և ապա չիւրաքանչիւր խորհուրդ կամ ի պէտս կատարեցան :

7 . Տաղաւար նախնոյ : մի ձեռ . պաղատեր նախնոյն հիւթընկալուիւ ա բրահամեան . և մարթի է պարզել , տաղաւարն նահինի կամ չառաջագոյն

էր՝ և ասա հիւրընկալութիւն աբրահամեան : օձեալ արչան , նախ օժտաւ քարն կամ վէմն ըստ գլխով յակոբայ , և յետոյ եղև այն բեթէլ , այսինքն տուն ացի : Անդրադարձ մեր եղիցի : սանդուղքն երևեալ յակոբայ՝ ըստ որ մեք ելանեզոց էաք առ ած . և հնչփ ինչման , և հրեշտակք ինչանելոյն առ մեզ : Բայց մի ձեռ . դնէք հնչփ ինչման . իբրև թէ ձանապարհ ինչանելոյն Աշ , կամ որդւոյն ացի մարդեղութիւնն : Աբրահնեան , նախ կազմեցաւ արհարհնեան վանին կամ խորանն , յորում ասա պաշտամունքն կա տարեին : Կապ մաթնէ , յորում ասա եդաւ մասեան կասկի օրինացն . դաթիլ խօսողաց . օրէնքն՝ որ դասէր զանաւորս . կամ ուրոյն առեալ զայս , իմանի վէմն կանգնեալ ի գարիզին՝ յորում օրէնքն գրեցան ի դասել և յընտրել զանաւորս՝ օրհնութիւն , կամ անիծիւք : մի ձեռ . դնէ՝ դասիչ ոսոխաց . որ վերնակ Թուի : այլ և յաւելուածով դնէ , գաբնէնն խոսափնոյն ընդրուէ : Աբրայէլեանն : մի ձեռ . նշան բարչրանալ : Ա յս ամենայն օրինակօք նկարագրեալ զնորհուրդ եկեղեցւոյ , եռուր կամ կանգնեցեր զայն իբրև նշան բարձրացեալ յազգս հեռաւորս հեթանոսաց , ըստ բանին եսայեայ . է . 26 . և իբր փողոյ ձայնիւ կոչելով զնոսա ի նոր եկեղեցիս . որպէս և գուշակեցին մարգարէք տեսօղք ան ճառ խորհրդոց քոց :

8 . Աչաբակ ինգնեալ : Յայս տուն ի մի հաւաքէ զօրինական կամ զնմանութիւնս՝ որ ի նմ գիցս առակաւ կամ իրօք յարմարեալ առ եկեղեցի , մասամբ ինչ առ նիւթականն եկեղեցի , բայց առաւելապէս յիմանական եկեղեցին անճնաւոր : Իակ զկենսական բանին՝ մարթ է ի դէմս եկեղեցւոյ խմանալ իբր կոչական , այսինքն ոմ աշտարակ կանգնեալ . և կամ յերորդ դէմն , այսինքն սա է աշտարակ ևն : Գեղեցկազարդ աշտարակ է եկեղեցի՝ իբրև զդասիցն կամ զաղանմանին , ( երգոց , գ . 4 . ) տեղի պատսպարելոյ ազգաց , և գիտելոյ զնհաւաւորս : Սիւն անկրճա նելի , մի ձեռ . և այլ տպ . անկարձելի . որպէս Թէ ի վեր քան զկարծել բարձր , հաստատուն , կամ անկասկածելի , և պատուար պինդ . ըստ բանին երեմիայ , ա . 18 . որպէս և առաքեալ ասէ զեկեղեցի՝ սիւն և հաստատութիւն ճշմարտութեան : ( ա . տիմ . գ . 15 : ) Ոսկեհատոյց աշտանակ , ըստ զաքարիայ : ( գ . 2 : )

9 . Կղպի պարճաչել : Եկեղեցի է իբրև կղզի պարփակեալ ալեօք ամբոխին . ընդ որ յամենայն կողմանց բաղնեն ալիք փորձանաց , բայց խափանել ոչ կարեն , այլ ինքեանք անդրէն խորտակելով վկայեն ամբոխեալ եկեղեցւոյ : Մի ձեռ . ալեաք ամբոխիք . և կէտ ի միջի եգեալ , զայսորդն ընդհեռնու , անբովանդակ երէցորդ պեսոնին եղկիելի . Զայս ընդհերցուածն կալաք և մեք , քան որ յայլ տպ . եգեալ էր . ալեօք ամբոխեան ըստ երէցորդ պեսոնին եղկիելի . քանզի յերկրորդ տեսութեան եղկիելի չիք յիշատակ կղզւոյ ևն : Վասն որոյ իբրև ուրոյն հատուած իմանի . եկեղեցի է անփոփոխելի այն տեսիլ՝ որ ցուցաւ եղկիելի երկրորդ անգամ յաղագս շինուածոյ տաճարին , ի գլ . կ . զի առակաւ տաճարին նկարագրեցաւ յայնմ կարգաւորութիւն նորոյ եկեղեցւոյս . տպա Թէ ոչ՝ ասացեալքն յայնմ տեսլեան յաղագս շինուածոյ տաճարին և բաժանման սահմանացն՝ ոչ կատարեցան արդեամբք ի հրեական տաճարին որ յերուսաղէմ՝ ի դարձի գերութեն :

10 . Նոր հրաւիրմամբ : Եկեղեցի առ ի հեթանոսաց ժողովեալ . որպէս և բան սաղմոսին հրաւիրելով ասէր . * Լուր դուստր և տես . մոռա զժողովուրդ քո և զտուն հօր քո . . . դուստր ծուրայ երկիր պագցէ տմս ևն . ( սաղմ . խե . 12 . ) ի խնդիր խմաստութեն սողոմոնի . մարթ է խմանալ և զբան սաղմ . հե . 10 . * Թագաւորք արաբայ և սաբայ պա-

տարագս քեզըգեն || ևն. կամ զեսայեան. կ. 6. * Ամենեքեան ՚ի սա- բայ եկեսցեն ... և զվիրուքե՜ն առցեն զաւեսս : || Յօպարաներմ. յայ- լասեռ ազգաց քանանացւոց եկեալք ՚ի ժողովուրդն հրեից, որպէս և յօծեալընծաց, յօժարութե՜ն յաւետեանն առ հրեայս ՚ի բաւեսացուց անուն ՚ի դարձի դեպուելն, այս ամենայն եղեն առհաւատչեայ նախընծայ նշանակք հեթանոսացն ժողովելոց ՚ի նոր եկեղեցիս :

11. Խոցեալ ոգի սիրով է՜նայն : մի ձեռ. խոցեալ սիրով յոգիս է՜նայն : Բան երգոցն. * Խանդակաթ եմ սիրով. || (ը. 5. է. 8 :) Պատ- հասեալ : Եկեղեցին անձնաւոր՝ իբրև կենդանի քաղաք Աւ, ունի դուռն կազմեալ մայր փայտիւք, կամ ըստ երգոց. ը. 9. եղևնափայ- տիւք. որք են խորհուրդքն՝ ընդ որս լինի մարդկան մտանել յեկեղեցի : Թաբիթա, պատուականք յեկեղեցւոջ՝ զանազան պարգեւք ձեռնայինք : պաղպաղոնա. զանազան ատաձեռնք իշխանուեց՝ պայծառք, զօրաւորք՝ օրինաք և կանոնօք ամրացեալք՝ իբրև մարտկոցք : Աչլաբանութեամբ ՚ի կիր առնու զայն երգոց : (ը. 9.) Աչխատս եկեղեցի իբրև հարսն խօսեցեալ է վրե՜ն՝ ըստ առաքելոյն : (ը. կոր. ժա. 2 :) և ըստ սալմ. կէ. 16. լեառն պարարտ լիուե՜ն ընորհաց, յորում արբուե՜ն մածեալ է անկորուստ և անապատ :

12. Մե՜ծ պարծանո՜ւն : Եկեղեցի իբրև հարսն վրե՜ն թագաւորին՝ է գշխոյ պսակաւոր կամ թագուհի, և այն է ՚ի մեծ պարծանս հրեշտա- կաց՝ մարդկան բարձրանալ ՚ի սիւնուե՜ն Աչ, ըստ երգոցն ՚ի հիացումն կարգեալ, կամ պարծանալն յօրինեալ : (ի. 3 :) Թէպէտ պատ. կոյս գո- լով անախտ՝ անշահախ, բայց և բազմորդի առաւել քան զհրեական է- կեղեցին, որ կարի սակաւս ՚ի հեթանոսաց առացաւ յաճախաստուե՜ն. իսկ նոր եկեղեցիս զանբաւս յամենայն ազգաց : Որ և ՚ի հնումն գծա- գրեցաւ օրինակօք և գուշակութե՜ք, իսկ ՚ի նորումն հանդերձեցաւ, որ- գեամբք կատարեցաւ՝ յօրինեցաւ էնոռ գոյութե՜ն իբրև ոսկի զարդուք : Յեղանակս էոլմանն. ըստ օրինակին՝ որով հաւատ աղախինն կոչեցաւ ՚ի հրեշտակէն, նոյնպէս գուռ յաղախնային հեթանոսաց կամ ՚ի սինայէ հին օրինաց փոխեցաւ ՚ի սաղմ նոր օրինաց և յաճախաստուեան : Աչլ- ազգ ընտեռնուռ ձեռ. օրին. հանդերձեցաւ, ոսկեփայլ էնոռ գոյութեամբ յեղանակս. էոլմէն հագարա փոխեալ յաղախնայն ՚ի սրա՜ն ՚ի սաղմ : Բայց գուռ ոչ պարզաբար ՚ի հրեշտակէ կոչեցաւ, այլ ինքն միածինն եկն ան- ձամբ՝ առնուռ զքեզ իւր հարսն, փոխանակ զքեալ ազգին յակոբայ, ըստ բանին երեմ. ժբ. 7. * Լքի զտուն իմ, թողի զժառանգութիւն իմ || ևն. և կամ ըստ Եսայ. ա. 8. * Լքեալ թողցի դուստր սիոնի || ևն : Աբրէնէ էնէ. վրե՜ն արկ քեզ հնմանն զդաստ առաքելոց : ձեռ. ապրէնքեզ : ապռէնանէ. ձեռ. այսչափ միայն ընտեռնուռ. ապռանէ յա- սաւորուե՜ն պճնեալ : Նպերն առաքեալք՝ որք ըստ նախնուելեն եղեն քեզ հնին, ըստ մեծապայծառ գործոցն՝ եղեն աստեղք զարդարիչք նորոյ երկնից, իբրև պսակ ՚ի գլուխ քո՝ ըստ յայտն. ժբ. 1. Յարփանդ մա- գոս, մանքուր արգանիս սկրտուելե՜ն՝ անարատ ծնունդս երկնեալ, ոչ մարմնական ցաւովք, այլ աւետարանական վաստակօք ծնեալ ժառանգս ՚ի սկրտուելե՜ն : Որ է օրինակ առ՚ե՜ն. և այսպիսի ծնունդ է յայտնի ցոյգք աներկբայելի յուսոյ՝ թէ հեթանոսք զկատարել գալին ընդ Աչ : կամ, այս որդեգրուե՜ն ընորհաց՝ է օրինակ կամ առհաւատչեայ ժառանգութե՜ն փառաց : Իսկ ձեռ. օրին. այսպէս ընտեռնուռ. որ առ- յեռն յոռուռ ախնալուե՜ն խաղաղուե՜ն գեալ :

13. Կանոն անփոխելի : ձեռ. անփոփոխելի : Փեսային երկնաւոր զի՜ն որ է և վարդապետ լուսոյ ճշմարտութե՜ն, նոյն և թագաւոր հզօր ՚ի սալ զօրէնս, առ՚ի բարեկարգուե՜ն և ՚ի շուք հաւատեանցն սահմա-

նեաց մշանջենաւոր կանոնս դասանուէրեան հաւատոց, փրկական խորհրդոց, օրինաց և դասատուութեան: Բազմամանեայ. զանազան կարգս, աստիճանս, պաշտամունս, ի նոյն փեսոնէ, բայց կարգեալս, յարմարեալս ի մի կազմած բոլոր մարմնոյն: Ի էնբպարանս բիւրապետնոյս, ի ձեւս զանազան յոքնաոլիսս, բայց ամենայնն յարմարեալ պատկանեալ ի մի շինուած կառոյցի, այսինքն միոյ գմբեթի. զոր օրինակ ի շինուած գմբեթի քարինք տաշեալք զանազան ձեւով պատկանին ի մի մարմին կատարարի, նոյնպէս յեկեղեցւոջ զանազան տարբերանք և պաշտամունք ի մի ըստեղծ կարգեալ են: իսկ ձեռ. դնէ. ի նրօն բիւրապետնոյս տա՜ շինուած կառուցի՛ն. և մարթ է պարզել, ի բիւրատեսակ տարբերութիւնս՝ վարմունս, բայց ուղղեալս ի մի շինուած: Հաւակ փոխ՝ Յեկեղեցւոջ կան անձինք ըստ զանազան հասակաց և սեռից, արք և կանայք, ծերք և տղայք, ճոխք և անանկք, նոյնպէս որ հայ, որ յոյն, որ ասորի, որ լատին, բայց ամենեքեան ի մի հնազանդութեի կոչեցեալք ընդ միով գլխով: Տուն և պեղի և յարի ծածկուածք: ձեռ. համառօտ. հաւակ փոխ մի պանպանութիւն տա՜ տուն եպղ և յարի ծածկուածք. որպէս ԹԷ՝ զանազան հասակք ի մի տեղի և յարի ծածկեալ, բնակեալ: ճարտ փօխ. ի տապի փորձութեէ և վշտաց՝ հովանի. և ՀՆ օգնականի, հալածելոց ի մարդկանէ, պարտաւորելոց յատենի, վտանգելոց յատելութս մեզաց: հոգիս ՅԲր. տուղ մարմնաւորացս զհոգին ՌԷ ի գրկսի և ի քահանայութէ: ՋՀԾ ընդ մարդկան ընթանդրօժել, հաշտեցուցիչ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ: Համանուանակ ապանդ, անուանակից բազմութեան մարդկան ի մի կուտակոց. զի այս կոչի ժողով և եկեղեցի. և նոյնպէս տաճարն և բանաւորն՝ եկեղեցի անուանի: Բայց զայս բառ մարթ է իմանալ և՝ համայնունակ, այսինքն համահաւաքիչ ազգաց ժողովելոց ի պատճառն ՌԾայնի, ի կարգացմունս, ի լուր բանին ՌՅ, յորոց ոչ զոք ի հաւատացելոց արտաքս Թողու, այլ ընդունի նաև զապաշխարօղս և զերախայս: Պարտաւորելոց մեզաք՝ յուսացուցիչ է քաւութէ: Նախապատրաստական համարիոնելոց. որք ազատք են ի խղճէ, և հանարձակք առ ՌԾ, այնպիսեաց նախ ցուցանէ զնորհուրդն եկեղեցւոյ, զնոսա յառաջ կարգ գէ ի ժամ ՌԾայնի պատարագին: Բայց ձեռ. ընթեռնուս՝ նախացուցակ ամբարձելոց, և լուծմունքն գրէ համբարձելոց, և մեկնէ՝ համարձակ եղելոց, անմարկելով Թէ յօրինական կայր երկաքանչիւր ևս ընթերցուած: Կապարելոց անձանց, զորանց կատարելոց վարուք և խնամոտութէ՝ հաւատացիչ ի բան առեան եկեղեցւոյ: Մարթ է կապարելոյ խնամով և զվախճանեալսն՝ զորս եկեղեցի ժողովէ ընդ հովանեաւ իւրով, և որոց օժանդակէ աղօթիւք և պատարագօք: իսկ ձեռ. դնէ. կապարելոյ անձանց խըմ բարբ:

14. Եօթնապղեան աեամբ: Ոմ տուն խնամոտութէն հօր՝ հաստատեալ եօթն լուսաւոր սեամբք, այսինքն եօթն խորհրդովք, եօթն պարգեւօք հոգւոյն սրբոյ: Յորում օրհնեցն զՔՀ պատարագի ի սպանդ կամայ, կամաւոր զնմամբ՝ առ ի ճաշակել երկն հաց երկնաւոր ի վերայ բեմի սրբոյ սեղանոյն, ի բառնալ զնեղս կենդանեաց և ննջեցելոց: Իակ ձեռ. ընթեռնուս, ՃաշակՀան հաւի գահաւորական սեղանոյն . . . որ բառանայ զՀեղս ննջեցելոցն: Իակ զյաջորդն, նոյն ինքն ամենայն և յամենայնի, խնայեալ զՔՀ՝ ըստ ՌԾուԹէն, տէս ի Նարեկն. ղէ. 6: Բայց առ խորհրդաբար և խնանի. այսինքն բոլոր ՔՀ կայ ի պատարագի, և նոյն յամենայն սեղանս և ի պատարագս, տէս ի Նարեկն. խէ. ՀԸ. 9: Ո՞ր ղՀրուեալսն. զգրուեալսն ի ՃանապարՀս մեզաց, կամ ի հոգս աշխարՀի պնօրինէ, Թերև ի տուն ժողովէ, Հաւաքէ անբնագատս եկաւորութէ, ըստ Հրաւիրելոց տանուտեառն յընթրիսն պատրաստեալ՝ առանց զոք

քռնադատեալոյ : ( Մատթ . իբ . 1 : ) Ահինարիկ նաև ՚ի բան առակաց . Ժ . 3 . 5 . ուր ասի՝ խնատուԹիՀ առաքեալ զծառայս իւր կոչել զայս կատամիտն ՚ի Ճաշակուն պատրաստեալ սեղանոյն : ՚ի ձեռ . որ ( այս ինքն ՎԻ ) ընդրեալսն փօրինիՀ անբռնադատ եկեսցուՆ : Եւ ոչ լոկ հրաւիրել պարզաբար , այլ ՚ի գիրկս սփանոյ . կոչէ ընդարձակեալ զձեռնն՝ ընդունել ՚ի մէջ առեանց իւրոց զարժանաւորսն , ՚ի Ճաշակուն անմահական արեան ՎՒՀի , որ է իբր կաԹն առեանց եկեղեցւոյ : ՚Ի կիր առնու զքան երգոյն . ( ա . 12 . ) * ՚ի մէջ առեանց խմոց հանդիցէ : || յամրոյն անմոռոյց : Աչն առինք են իբր ամրոց պատսպարան փախուցեալոյն ՚ի ձեռաց սատանայի . ըստ բանին երգ . ղ . 10 . * Էս պարիսպ , և ստինք իմ իբրև աշտարակ . || ՚ի վերնայարկ սրահն : Եկեղեցի է իբր նոյն վերնայարկ սրահն կամ վերնատունն՝ ՚ի հոգւոյն սըՀ լեալ հողմով , ուր զաշակերտսն Ժողովեալս արար զարմանալիս զանազան պարգեւօք : Աչս պէս զարմանալի առնէ և զարժանաւոր հաղորդեալսն յեկեղեցւոջ :

15 . Ոնոզէ անէեան : Գվնատր գահերեցք եկեղեցւոյ՝ հայրապետք , եպիսկոպոսունք , որք ունին զանկիւն եկեղեցւոյ , այսինքն են իբր անկիւնաքար : Զհայրապետին մեր : այսօրիկ հայկական անուանց բայն՝ կայ ՚ի վայր , ահա յիշէորեա : Զայս տեղի սկսեալ ՚ի բանէն՝ ՚ի գիրկս սփանոյ , ձեռագիր օրինակն բազում տարբերուԹիՀ ընԹերցնու այսպէս . ՚Ի գիրկս սիրոյ փաղցրուՆ կոչ յէորամ յամրոյ անմոռոյց . փախուցեալսն պսպսպարան ՚ի վերայարկս գոգնիերս յորամ վաղայիերան զարմանագրեցաւ . ուր եղիցին դասեալք զօրուՆքն գահերիցուՆք ՚ի պարիս վերագիպոզան . ուր որ ուրախուՆք փծոզան էերիրն յանկեան ամբոցն սարան : Զհայրապետին մեր եպիսկոպոսօք և հոգիաչայծոս վարդապետական ընտրհիս . զՔաղաւորս մեր իւրովք զօրականօք , և որք ընդ նոսա են զինուորուՆք , պեՀուՆեր և իշխանուՆ հարաւոյ ասԷ սիրովք օրհնեալք ՚ի բնաւից :

16 . Րսոնէ վերսին : Աղաչեմք միաւորել յօդել վերասին զմեր Ժեալսն ՚ի քէն ՟ի յանցանաց իւրեանց , զանադրեալսն , զապաշխարողսն , զհերձուածօղս , միմնորդուԹիՀ բաղնելոյն ՚ի քեզ , այսինքն սիրոյն որք իւրեանց վաստակօք և նշխարօք և յիշատակօք միշտ բազմեալ կան ՚ի քեզ , այլև փառօքն բազմեալ կան ՚ի վերնական քոմ դասու յերկինս. իսկ ձեռ . ըոդեալ . . . ինքնորդուՆք բաղնելոյն ՚ի Էեղ խնդրէմք : այսպէս եզակի՝ բաղնել իսնանի ՎՒՀ , որ բազմեալ կայ միշտ յեկեղեցւոջ , և նոքա գԹուԹեամբն և նեղողուԹեամբ ազաչեմք ընդունել զհատուա-ծեալսն :

17 . Պապուական մարգարիտ : Մարգարտոյ նմանեցուցանել զնոսա Աճա-ծինն՝ ասս ՚ի Կերբոն . համար ժԷ : Դուսաբ լուսոյ , հօր Աչ , և մայր պոՀնի , նորոյ եկեղեցւոյս , զի զՔՒՀ ծնանելով ՚ի նմա ծնաւ զամենայն քրիստոսեանս : Բայց և ըստ այլոցմ յեզանակի եղև մայր , լինելոյն անձեռագործ հիման հաւատոյ ձմմարիտ պապիէր , այսինքն քուն նախկին գաղափար հաւատացող զնորհնդրդ մարդեղուԹեՀ . նոր կոյսն եղև առաջինն հաւատացօղ կատարման այսր խորհրդոյ , և ուսուցիչ միանգամայն Հին ՈՂԱԿԱ հաւատալ պարտ է : ՈՒրոյ այսր օրինակի , ըստ նմանուՆ եկեղեցւոյ ընկալաբ և զանուանն , կոչելով տուն և տաճար Աչ տպաւար , խորան ևն : Աչլև հարնաբան , ոչ լոկ արանց արգասից , այլ Աչ բանին ՚ի քէն մարմնացեալ : ՚ի ձեռ . օրին . հարնաբան Ոյնոյդ Ոյդ Տարճաչ ցԷոյդ աս ՚ի Էն :

18 . Ընդ Էեղ ընկալօիս : Կցորդ ՚ի բարեխօսուԹիՀ առնուլ ազաչէ և զգասս Սրբոց , իբր ոչ ԷԹԷ զի այսու զօրանայցեն հայցուածք Աճա-մօրն . ուր ընդ հակառակին՝ այլոց Սրբոյն ազաչանք ընդ ձեռն Տիրամօրն անցանեն առ Աչ . այլ զի հանգէս խնդրուածոց նորա փառաւոր և ա

լինիցի. յորժամ՝ ըստ Տկրամայրն լերև դասակետ մատուցեալ յաղաչել, այլ սուրբք երբ հետևօղք ձայնակիցք ասիցեն զԱմէնն: Զաղաւթէն անմահէդ: Զոր Յոհաննէս սկսուիչ ասել շաւաւիղ կենաց՝ կամ զև անդէն յարգանդի մօր սկիզբն կալաւ ոճծային կենաց, և կամ զև քարոզուԹէն և սկսուԹէն պատրաստեաց ժողովուրդն ի կեանան անմահս: Եթե ասի դարձեալ, Հարպէպ կոչման սրբոց, այսինքն յառաջընԹացս առ ի կոչել զաւրքան կամ զընտրեալն. կամ զև սըկն կոչելոց ի Քրիստ՝ ա ռաջին եղև յովհաննէս՝ յարգանդի մօրն կարգեալ յաւաքելուԹիւն: Զպատճն մարգարէսոց, զոր Սահմանոս, հանդերձ այլովք և անուա նելովք Սրբովք, որք են ժառանգք Աւ ծնեալք որ աւազանաւն յորդեգրուԹեն, անանձրպէպ հոգեպոհմոնք, անփոփոխելի կամ անմեկնելի ազգակցուԹեամբ հօրէդ. զի կինք սկսուԹեն անջնջելի յաղգ Աւ դրէ զմարդն, ԹԷև զընտրհ որդեգրուԹեն կորուանիցէ. զոր օրինակ և առ մարդիկ ծնունդ Թագաւորի միշտ Թագաւորացն է, ԹԷպէտև յանձնաքն ի ԹագաւորուԹէ անկանիցի: Աւյազդ ընտեռնու ձեռ. ֆա ռանէ ոյ ծնիցեալ յորդեգրուԹէ. զոյն առաբ առաքանաւք. ուր զի դէմք բանին են ասկաւին առ որ Աճածինն, և ոչ առ եկեղեցի, զնայդ յարմարիցի ասել զաւազանն սկսուԹէ, բայց եԹէ՝ զի աւազանն նմանուԹէ է կուսական արգանդին:

19. Կրկին հայցեսցէ: Յայդ խնդրուածս քո՝ ի վերայ ընորհայ հաշ տուԹեն՝ հայցեսցես դարձեալ զԱմէնայն՝ ընորոգել զէպոբն, զայժմու փոքր ընորհ կամ զվէճակ որդեգրուԹեան ի մեծ լայնուԹէ, յընդարձակուԹեն փառաց երանուԹեն, անպարտնաի բաշխիչ ընԹայնուԹէ, այնպիսի ընդարձակուԹեն որ մնաց անլռվանդակելի է: Զմայրն Տառոբ. այս բացատրուԹեն է անցելոյն. նորոգել զորդեգրելոցս եկեղեցի՝ զընտրուրեալս իւրովք մաքուր զաւակօք, ոճխիթ պոհնելովք, ժողովով պահելոցն յերկինս, յաւուր դալստեան մեծիդ Աւ: Աւյազդ ընտեռնու ձեռ. այսինքն յորոմ էրէին հայեսցես նորոգեալ զէպոբն ի մեծ բարուն. անպարտնաի բաշխիչ վմայն Տառոբ պատրէզ ոճխիթ պահելովք յայնմ երկնային առաքեալն յաւուրն մեծիդ: ԸնորոգուԹի սահ զմիտնալ երկրաւորս եկեղեցւոյ որդեգրելոցն՝ ընդ երկնաւորն եկեղեցւոյ Թագաւորելոցն ի փառս. քանզի ամենայնիւ տարօրինակ է այս և այն. այլ վէճակ է ընորհայ, և այլ փառաց: ՈրդեգրուԹի է և այս, և այն, բայց այս սկսեալ, և այն՝ լրացեալ, այս՝ կորնչելի կամ արատելի, այն՝ յաւերժ և անբծաւոր. վասն որոյ այս կիզ ընդ երկիւղի, և վշտաց և Ճգանց. իսկ այն՝ ազատ յամենայնէ. յոր վայելեսցեն այնոքիկ և եԹե՝ որք ահիւ և դողուԹեամբ աստանօր զանձանց փրկուԹիւն գործիցեն:

Պատուհ[1] անքնին, ճաճկեալ մեծութեր, զօրեղ ա-
հաւոր, միշտ բարի։ Աչբեքսրբեան անսահմանելի,
օրհնանուն կենդանի։ Ընձառ իսկութեր փակեալ ի
զգալեաց։ Համագոյ անթարգմանելի։ Ընհասանելի
հեռաւոր, և անընդմիջելի մերձաւոր, անմահ թա-
գաւոր։ Ընդ խնկեսցին մաղթանք մեր առաջի քո
ամենակալ. աղաչեմք։

Թոպեից համայնից եից[2] ի կուսից քառից ի մի ե-
ղելութեր զերկիր հաստատեցեր։[3] Ասրհուրդ կրկին՝
ձեռնարկ վերստին. ընդդիմակ միջոց միջնորդաց եր-
կուց՝ եղծման և նորոգութեան, տեսութեր կենացդ
փայտի։ Ընդ խնկեսցին։

Ի բարձունս անբաւս[4] անհետազօտելի գովեստիւ
տօնեալ՝ ահեղ անմատոյց։ Յանհանգչելի նուագ ներ-
բողից աղգաց հրանիւթից՝ պանծալի երգով պսա-
կեալ ածբոլորից։ Ի սահմանս երկրակշռութեանց
երկնից՝ ի թևս չորից արփիակերպից՝ բազմաք կար-
գեցեր քեզ պատիւս անպատուսմն։ Ի դրախտն ա-
դինայ՝ ի տնկոյն պարտեաց ազգեալ ձայնեցեր ի
ծառն օրհնութեր։ Ընդ խնկեսցին։

Պուշակ գարնայնոյ ի թռիչս ամբարձման՝ յօրի-
նակ երկնի կամաց գԹածիդ,[5] ի լաստն ամրացոյ
նոյեան տապանին։ Պատկեր փրկութեր, կերպարան
հրաշից, ապաստան յուսոյ, գեր ի վերնայինսն զնոր
ժողովուրդս ուխտիւ միջնորդեալ ի թևս խաչիդ՝
առ քեզ մատուցես։ Ընդ խնկեսցին։

Ով[6] գիր մատենի մատենդ այ՝ կենսունակ տախ-
տակ անխորտակելի. և աւանդ նորոյ օրինի սրբա-
մանուեց անեղծանելի։ Ի բուսին ցուցմանց կանխա-
պատմութեց աւետեաց ըղձից։[7] Ի բիւրուց հիւթից
մեղ ի յօգնութեր սոյն իսկ ծանուցար։ Տիպ պաշտե-
լի, գրաւ աշխարհի, շաւիղ անհետազօտելի՝ արեամբ
արարչին նկարեալ ի փառս լուսոյ։ Ընդ խնկեսցին
դարձեալ խնդրուածք մեր՝ առաջի քո ամենակալ.
աղաչեմք։

Աբգունեացն պետ, և ձիր[8] խմաստից տէր յո քո.

միայն ուսուցիչ զանխմանալին՝ որ ոչ գծագրի յայսմ յաւիտենի։ Պատկեր հօր անհասի՛ վեր քան զբան։ Արդեաւ յայս նշան՝ հաստատեա սովին պըն-
դուձիք զսիւնս աշխարհի։ [9] Պահեալ ամրուձիք ըստ քումդ իրաւանց՝ զհովուապետան խաշանց քոց բա-
նաւոր հօտի։ Օ եպիսկոպոսունս՝ երիցամիք և սար-
կաւագօք։ Օ վարդապետս՝ դպրօք և քնաւին իսկ պաշտօնեիւք եկեղեցականօք։ Օ թագաւորն մեր իւ-
րովք ծննդովք, հանդերձ պետական նահանդօք հնազանդեցելովք։ Արասցես լինել երկիւղածուձիք սրտի՝ խաչիդ պարծանաց՛ ի քեզ զօրացեալ։ Ահա խնկեսցին։

՛Ի քեզ համբառնամք զձեռս, զմիտս և զդգայու-
ձիս հոգւոց իմաստից։ Արձանացուսցես զմեզ անշարժ պնդուձիք ընդ հովանեաւ թևոց քոց խաչիդ։ Օ արքայուն յաղթող։ Օ դատողուն անպատիժ։ Օ իշխանականն հանդարտս, Օ զինուորուին իրա-
տեալս։ Զհաւատարժիցն տուր սանձս։ Ազոսկականացն անբծուձիւն. հետևականցն խրախոյս, քաղաքացւոցն պատուեր. նուիրողացն լրուձիւ, ուխտաւորացն սփո-
փանս, ննջեցելոցն հանգիստ, և համօրէն ժողովըր-
դեան քումդ սովիմբ ամրուձիւ, պաշտպանուձիւ, քա-
ւուձիւ, առողջուձիւ և ողորմուձիւ օրհնեալ յաւի-
տեան։ Ահա յիշեսցես և ողորմեսցիս ննջեցելոցն յուսով յարուձեաւ. հայցեմք։

Այս ևս առաւել գյորդորուձին սիրոյ։

Որոտել զմարմինս մեր՛ ի մի շաւիղ ընտրուձեաւ հոգ-
ւոյ սիրոյն որ առ տէր. խնդրեմք։

Վոհաքանուձի խնամոյ՝ խնդրողին զքաղաղուձիւ [10] միշտ յերկրպագուացս։ Պաշտպանուձք ծնողի փրկ-
չին և մարմնարանի անպարագրելի սքնի մարիամու աճածնի և միշտ կուսի։ Ազերսիւ և աղաչանօք մկրտչին Ջաւրբք զհոգին հրաւիրողի՝ կարապետին մե-
ծին Յովաննու։ Պաղատանօք Թագաւորելոյն օծու-
ձեաւ հոգւոյն առաքելոյն սրբազգեստից։ Ահատա-
կուձիք նախկին վկայիս սքնի Ստեփանոսի՝ որ է որդի անդրանիկ փրկագործ կրից երկրորդն ադամայ։ Ար-
գահատուձիք և աղօթիւք արի երջանկաց մարտիրո-
սացն կատարելոց։ Ասոտովանողական դաւանուձիք

աբեր Պրիդորի Հայաստանեայցս լուսաւորչի և յանմերձենալիսն նուիրողի ։ Ա՝շտապաշտօն բազկատարած ուԹիւ մաքուր միանձանց ։ Ի՝ ամենայն ընտրելոց պսակելոցն ընդ քեզ խաչակիր վարուք յաւուրն մեծի ։ Ի՝ այժմ ողորմեայց մեզ տէր՝ ած մեր՝ ըստ մեծի ողորմուԹեանդ ։

---

## ՅԱՆՈԼՈՒԵՔ Ի ԳԱՆՁ ԱՐՅ ԽԱՉԻՆ ։

1 ։ Գանձ անգնին ։ ձեռ ։ պապական ։ Ցայս գանձ գՀմք բանիցն են առ Աստ կամ առ Քս, բայց միայն հինգերորդ տունն առ Որ խաչն ուղղակ է ։ Երէսոբեան անսահմանելի ։ Երկիցս Որ կոչմամբ օրհնեալ, բայց այսու ոչ սահմանի սրբուԹիւքն ։ և ոչ՝ եԹէ բիւրիցս և կրկնացի ։ օրհնանան կենդանի, որ օրհնիս և Ճանաչիս անեռատեն՝ կենդանի, հակառակ սուտ աստուածոցն՝ որք անկենդանք են ։ (Դան ։ ԺԲ ։ 4 ։ 24 ։) համաբոյ անխորհրդանելի ։ սատ համաբոյ ոչ այնչափ բնուԹիակից իմանի՝ քան ԹԷ ի միասին գոյող, ամենեցուն և ամենայնի գոյակից, բայց որպէսն՝ անԹարգմանելի, անՃառելի ։ զոր և յաջորդն յայտ առնէ, անհասանելի հեռաւոր ։ ձեռ ։ անսահմանելի ։ հեռի՝ բացակայ ես յամենայնէ՝ ըստ էուԹեան, ըստ կարողուԹեան և ըստ ամենայն կատարելուԹեանց, առանց կարելոյ ուժեք հասանել մտօք կամ ստացմամբ ։ բայց միանգամայն անընդհնելի հերքաւոր ։ այնչափ մերձաւոր ըստ ներկայուԹեան և ազդեցուԹեան և տեսուԹեան, զի ոչ մի ինչ կարէ ընդ մէջ մտանել կամ զատանել, կամ Թագուցանել ։ առաւել ի՝ ներքս մտ ես յիւրաքանչիւր իրս՝ քան ոգեքս յինքեանս ։ կարէ լոյս զատանիլ յարէն, և ջերմուԹիւն ի հրոյ, այլ ի քէն ոչ մի ինչ ։ Եւ ո՞ զայս ի միտ առնուլ կարիցէ կամ Թարգմանել ։ Երկրաքանչիւր տացուածգդ կան և ի Կարեկին ։ իե ։ 1 ։

2 ։ Ի ՀոսԷ Ֆառէց ։ Ի քառեակ կողմանց աշխարհի՝ բազագրուԹեամբ չորից տարերաց՝ ի ո՛ր եղեալ է, ի մի կազմած հաստատեցեր զերկիր ։ Ըստ բացատրուԹեան ասելի բոպէից՝ յայտ առնէ զտարերս՝ որք են բաղկացուիչք բանդակ նիւԹական գոյից ։ և մարԹ է առնուլ իբր բաց յատական հոլով՝ ի բոպէից , Թողեալ զնախդիրն վասն սկսանելոյ ըզառանն Ր գրով ։ կամ, բոպէ խմանալ զչորս կողմն աշխարհի՝ զարևելս , զարևմուտս , զՀիւսիս և զՀարաւ ։ և՝ ի ՀոսԷ Ֆառէց՝ զքառեակ դիրս նիւԹականաց , որ է վեր , վայր , աջ , ահեակ ։ վերն զի այսոքիւք կապակցին առ միմեանս մատունք աշխարհի՝ ըստ մերձակայուԹեանն և ըստ հեռակայուԹեան , և բացակատարեն զմի ամբողջ կազմած՝ զոր Աշխարհ կոչեմք ։

3 ։ ԽորհուրդՔ էրկին ։ Ի չորից տարերաց և ըստ քառեակ դիրց չորեքին՝ լով զաշխարհս , ցուցեալ այսու զկրկին խորհուրդ , և ՅեռաՔրէ Վերսիոն , զայլ միւս կատարումն իրաց ։ Մի խորհուրդ այն է՝ ԹԷ միաբան բաղկացուԹեամբ քառից ներհակ տարերաց՝ չորիւքն էլանէ այս գեղեցիկ կազմած աշխարհիս ։ Եւ միւս խորհուրդ , ԹԷ ի հակառակել կիմ ի չմիաբանել տարերաց՝ քակտումն և այլայլուԹիւն ի վերայ հասանէ՝ կամ միոյ միոյ իրաց , և կամ բովանդակին ևս ։ Եւ սոյն այս է ՅեռաՔրէ Վերսիոն ։ զի փոփոխումն իրաց զայլ ինն կերպարան ի ներքս ածէ ։ Աչյոցկ բացատրուԹիւն է զկնի եկեալն , ընդդիմակ գԼոց ։ լուծ ։ ընդդիմակաց ։ Աչն

քաղաքուրեքի ի տարերաց ներհակաց՝ ի գիմամարտս միջոց կամ պատճառ մշնորդաց երկուց, երկուց հակառակ կամ որոշեալ իրաց, որ են եղծուած, և նորոգեսցի. վասն զի տարերքը համեմատ չափով զուգահատեալք՝ նորոգեն և յօրինեն զերս. իսկ անչափուրեքի ինչ ի ներքս անկեալ՝ եղծուն ածէ: Այսպէս ի հակառակուրեանէ տարերացդ՝ յեղ ծանիլ միոյն այլ ինչ նորոգեալ ծնանի: Արդ՝ քառակ տարերացն դիմամարտ ներգործուրեքի՝ ցոյց կամ օրինակ է պէսպէս էնոգոդ էայիւ. որ քառաթև է ըստ Թուոյ տարերաց, և քառակողմ ըստ գրից աշխարհի, և լինի միջոց մահու և կենաց. մահու եղև միջոց՝ յատամ, և կենաց՝ ի Քե. կամ, ինքնին կենաց գոլով առնէ, առ անհատանան լինի յեղծուն. ըստ այնմ: * Ջի ճառ խաչին՝ կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ՝ զօրութիւն ոյ: || ( ա. կոր. ա. 18: )

4. Անհեպազբաելի գովեստիս: Յանքառ բարձրութիւնս երկնից միշտ անքննելի գովեստիս օրհնաբանեալ, և անհանգիստ երգովք հրանիւթից պահեալ Աֆ էոլբից. ձեռ. յաւելու, պահեալ դէնչ: ի ահ ման էրիակշռութիւն. այս հաստատած զնոյն իմաստս անցելոց բանիցն երկրորդէ, առեալ զնորհնորդ տեսչեանն եսայեայ և եղեկիելի: Սահման երկրակշռութիւն՝ իմանի երկինն օդոյ, որ պատեալ զերկրաւ՝ կշիռ ունի զնա և անխախուտ: Արդ՝ ասէ, յօդն վերացեալ ի մէջ տատաղին, ի ներս ըրէց, ի չորեքծիւեան ի լուսաւոր կենդանիան և յանիւսն չորեքկարգեանս կարգեցեր քեզ պատիւս անպատուս. զի ձիք և կերպարանք անուղղն, շարժուն նոցա անհանգիստ, հնչիւն նոցա, այլև որովհետիցն սաստուածելոց յայտ առնէին զանպատում փառսն Աֆ: ( Եսայ. իզ. 2. 3: Եզեկ. ա և Ճ: ) ի դրախտն ապինայ: Թէպէտ և այսպիսի և այսքան փառաւորեալ դու յերկինս յանդգնեալ օրհնաբանից, սակայն խոնարհեցար ինքեր ի գրահան ազնուդ, ի փնոյն պարբեցդ. այսպէս ընծեռնու և մեկնէ լուծմունքն, որ յարմար ևս է՝ քան Թէ ըստ տպ. ասէ, պարբեալ: ի ծառոյն գիտուրեքի որ եղև տունկ պարտեաց, յանցանացդ, անիծից, ազգեալ ագամայ՝ ձայնեցեր կոչեցեր զնա ի ծառն օրհնուրեքի, առ վայս խաչին: Եթէ կամիցի ոք ընծեռնուլ պարբեալ, խնամալի է տրական հոլով, այսինքն պարտեցելոյն ագամայ ազգեցեր գիմեք ի ծառն օրհնուրեքի: Աթէ կամի բանիս, որպէս անբաւ են քո փառք և պատիւք՝ անլուելի հռչակեալք յերկինս, նոյնպէս անբաւ են գումք խնամոցդ առ մարդն՝ ցուցեալ յերկրի, որով զդրախտն ագինայ՝ զտեղին պարտեաց՝ արարեր քեզ գնալի վոխանակ երկնից. ոչ ի հրեշտակաց զոք առաքեցեր ի խնդիր կանցուցելոյն, այլ գու ինքնին եկեր յայց, զնորհնորդ վերկագործուրեդ յայտնելով. մինչ զի հրեշտակացն բերանք ոչք յերկինս մեծացուցանէին զքեզ, սկսան այ նուհետև օրհնել յերկրի և ի խաչին:

5. ի լսոյն ամբաւոյ նոյեան պատանին: Այսպէս ամբաւոյ ընծեռնու ոչ միայն այլ տպագիր, այլև ձեռագիր օրինակն, նոյնպէս և լուծմունքն գնէ՝ ի յամբաւոյ լսոյն, և բայսարէ՝ յամուր լսոյն, ազգ առնելով ևս՝ ոչ լինել բայ, զի ոչ ինդրէ ասէ՝ ամբաւցուցանել ի լսոյն նոյեան. իսկ այլք յետոյ եդեալ են ապրաւս, հայելով ի նման բան ներբոլի մ՝ծչնաւցոյն. համար ժէ: Արդ իբրև ածանցական առեալ զառագ, այսինքն ամբաւցս, պնդակամբ, կի՛ առնի ամբանալոյ, իմաստք բանիցն են: Դու ինքն Տէր, ըստ նմանութիւն աղաւնոյն՝ որ չիւղ ձիթենւոյ ի բերանին, ի թռչիչս զուարթացեալս եկն հանգեաւ ի յամբանական լսոյն նոյեան, իբր գուշակ գարնաշնոյ գալստեաբերուհին. յօրինակ էրինէ, ( ձեռ. էրինէ. ) իբր նշանակ Թէ երկինք հաշտեալ են ըստ կամս գԹածիւդ. ոչ ևս հեղեղք և սահանօք ապականեն զերկիր, այսպէս

ահա և դու հաշտութեան մարդկան աւետաբեր եղեր, ի փայտ խաչիդ ամբացուցանելով։ Ըստ այսմ յայնժրդն՝ պարկեր էրէոնէ ևն, յարմարին եթէ ի քո, և եթէ ի նը Խաչն. զի են նշանակք ազատութեան ի մեզայ և ի սատանայէ։ Կերպարան հրաչէց. գործի պանչելի գործոց սիրոյն այ. պատարան չոսոց. տեղի ապաւինի յամենայն վտանգս, այնկա- ղեալ բարեաց ամենայնի անօրինիչ։ Գէր ի վերնայինն. կամ ըստ ձեռ. ի յերկինսն։ Աձատել ևս ի բարձունս կամ յերկնայինն մատուս- ցես թէևսք նը խաչիդ զքո նոր ժողովուրդս, ընդ որում նոր ուխտ ես գեր։ Եթէ զհինն իարայել բարձր բազկաւ հաներ յեգիպտոսէ՝ յաւե- տեացն երկիր, իսկ սատանօր քոյին ձեռայնն բազկօք տարածեցելովք ի վերայ խաչին՝ ոչ արդեօք՝ բայց ի բուն յերկինս ունելս ամբառնալ զքո վրկեալսդ։ կամ, գեր առեալ ըստ բազդատութեն՝ խնամի. առա ւել կամ վերոյ քան զապաստանեալն ի նոյեան տապանին՝ որք ըստ բարձրանալ ջրոցն վերացան քան զամենայն լերինս բարձունս, զքո ժո- ղովուրդս ամբարձցես առ քեզ Տէր. առ նոյեանն ուխտ եղեր՝ չսպա- նանել այլևս զերկիր, իսկ նորոյ ժողովրդեանս զերկինս ուխտեցեր ժա- ռանգեցուցանել։ Ասա ձեռ. դնէ՝ առ քեզ տապաստեր։

6. Գէր տապնի։ Առ որ խաչն է գէմք բանիս, առակեալ զայն ի տախտակս մովսիսեան օրինաց։ Դու տախտակ կամ մատեան՝ գրեալ ոչ առակաւ իբրև զմովսիսեան տախտակն, այլ իսկապէս՝ մատամբ Որդւոյն այ, ի վերայ քո զերր բազուկն տարածելով, և իւրական ա- րեամբն գծագրելով. որով և կենսառնակ ես, ունելով կենաց՝ որ է ինքն Քս, այլև հաւատացելոց տուօղ ճշմարիտ կենաց՝ և ոչ մահու, որպէս մովսիսեան տախտակքն մահու եղեն ասելի։ (Եւք. ը. 27.) ան- խորպանելի։ մշանչենաւոր գրեալ առանց յայրդելոյ այլում օրինաց. կամ միանգամ գրեալ արեամբ Քնէ, որոյ մահ միանգամ եղև, և ոչ այլ մեռանի։ Ասանդ. դու տուչդ կիր գանձարան անչնչելի ամենայն սրբազան խորհրդոց և պարգևաց նորոյ օրինիս, որք խաչիւն և ի խաչին հաստատեցան։ արբամանաւորելոց անեղծանելի։ ձեռ. արբամանաւորելամբ։ Լրատս ցոցմանց, ձեռ. լրատս կանխատաց պատմելոց։ կատարումն, լցու- ցիչ ամենայն օրինակաց, գուշակութեանց՝ որք մարգարէիւքն աւետարա- նեցան, և որոց լրմանօք ակնուանելին։

7. Ի բիւրոց հիւրնից։ Ի բիւրաւոգի նիւթոց մարմնականաց՝ դու միայն փայտ տուար մեզ յօդուածի. ոչ քար, ոչ երկաթ, ոչ պղինձ, և ոչ այլ իրք կարծրանիւթք կամ ազնիւք տուան մեզ գործի պահ- պանութեն, այլ փայտ տկար, անարգ, խորտակելի, այրելի. սակայն զօրութեդ գերազանց քան զամենայն պնդակազմ։ կամ, ի բիւրաւիսի մարմնական ձևոց՝ դու միայն քառակուսի կազմած եղեր մեր օգնական։ Ազանուն լուծմունքն մեկնէ, յորմէ նիւթոց և իցես՝ քար, փայտ, ար- ծաթ կամ նկար, միօրինակ օգնութեն ընդհանս։ Տիպ պաշտելի. ձև կիր կազմած յարգելի, և ոչ որպէս յառաջն՝ անարգ։ գիրս աշխարհի. առ հաւատչեայ կամ հաստատութեն վրկութեդ աշխարհի։ ղաւիդ անհեպա- զոփելի. ճանապարհ ընդ որ հաւատացեալք միայն գնան, և զոր նոքա ևւեթ իմանան. իսկ անհաւատից անգնալի և անխմանալի. որ և արեամբ արբւելն Քնէ գծագրեցար՝ լուսափայլ փառօք, և ոչ սիրատեսակ։ կամ, ճանապարհ որ ասիս ի փառան երկնայինս։

8. Զէր նմանիդ։ Տուող կիր պարգևիչ խնամոց. դու միայն գլուխ կամ իշխան վարդապետաց, իբրև զի դու միայն ուսուցանես մարդկան զանձաւորելի և զշծայնի գիտութեանն՝ որ մարդկային բանիւ կամ հան- ճարով ոչ բացայայտին. որպէս և ասացեր * Մի ե ձեր ուսուցիչ Քս։ || (Մատթ. իգ. 8. 11։) Եւ այս քեզ միայն արդարև յատուկ.

վան զի դու միայն պապիկը հօր. ՚ի քեզ նկարեալ ունելով զամենայն
Հշմարտութիւնն. որով դու միայն կարես յայտնել և ուսուցանել: Վասն
որոյ ասացեմք, ոգեղէնս յայս նշան, ՚ի նշան խաչիդ յեցուցեալ հաստա-
տեա զնգապակս զխոնս աշխարհի, զնկեղեցական և զաշխարհական պետս՝
որովք վարի և պահպանի աշխարհ:

9. Պահեալ ամբարիք: Աստանօր ձեռ. այլազգաբար ընթեռնու: Պահեալ արիւնարիք ըստ տոմ իրաւանց գիտողաբերս խաչանց դոց բանաստրոց, գհայրապետին մեր ՚ի || եպիսկոպոսէ երիցմէ և սարկաւագէ. գնափաստրն մեր իւրովք ծննդովք հանդերձ պէտական նահանգօն հնազանդելով: ... Աբ յանաղատացեալ յանդարձ պնդուրիք ընդ հովանեաւ սիոյ խաչիդ, զարքայութիւն ևն: Առ քեզ համբառնամք աստ՝ զգուանդակ մեր խնդրուածս սրտի և մարմնոյ, ամրացո՛ ընդ հովանեաւ սիոյ խաչիդ զևրացանչիւր կարգ, որ պէս զի Թագաւորն լինիցի յաղթօղ, գատաւորն՝ անպարիծս. իրաւա րար՝ և ոչ խիստ ՚ի պատժել: Իշխանաւորք՝ հանդարտք ևն: առաքեալոց, տուր ոամկաց կամ գեղականաց՝ անխարդախութիւն: հէքեաթացն, որք ոտիւք ունին վաստակիլ՝ տուր ոյժ, քաջալերուն: Կոխիրոզին, ընծայաբերացն յեկեղեցի՝ տուր յաջողութիւն ընդ. զնաստուածն. կիստուր նուիրել հաւատով և սիրով. կամ, տուր նոցա լի հաստոցութիւն: Ոչխարաց բոյն, որք միանգամ ուխտս լինէ պարտական են պահոց, կամ այցելուն ՚ի չոր տեղիս ևն, տուր սփոփանս յաշխատութիւն, միխիթարութիւն ՚ի կա տարել զհայցուածս նոցա: Եւ համօրէն ժողովրդեան՝ առաղնուրիք և աղերսուրիք ՚ի ձեռ. չիք աղերսուրիք: ... Րոպէ՛ի ի ջուխդ ձեռ. դնէ, ՚ի ընորհս պրուրիք հագոյդ սիրոյ:

10. Ա՛ելք յերկրպագուցս: ձեռ. յերկրաւորացս: Խակ ասելն զոր Աճա ծիւնն անպարագրելի, նշանակէ՝ մտաց կամ Հանդուգնամբ անչափելի: Խա գաւորելոցն օծուրիք հոգեւոն առաքելոցն արքազգեսից: ձեռ. Նագաւորելոցն օծուրիք առաքելականացն արքազգեսից... Նահապահուրիք. ձեռ. դնէ. Նա հապահուրիք նահանգային գս սրբեցեանսն առաջին մարգիրոսի: Խակ յայլորդն, որ ե սրդէ ևն. չիք ՚ի ձեռ: ... Մարգիրոսոյն կապարելոց: ձեռ. գասուց: ... Խոսրովանողական գասանուրիք: ձեռ. գասանմամբ: ... Տղապապացոյ: ձեռ. Տղապապացոյ բազկապարագ մատրիցօն մնանչանց: ... խալաիկը վարդոտ. ձեռ. խալաիկ վարդոտ:

# ՅՈՒՅԱԿ

## Պարունակելոյն ի Ա՛ռաջինէս։


Յառաջաբան էրէս 3։
Նախադրութիւն ի պատմութիւն սրբոյ Խաչին Ագարանից։ 5։
Պատմութիւն սրբոյ Խաչին Ագարանից։ 9։
Դանօթութիւնք ի նոյն։ 28։
Ներբողս սրբոյ Խաչին։ 37։
Դանօթութիւնք ի նոյն։ 54։
Ներբողս սրբոյ Աճառնին։ 69։
Յիշատակագիր նամակ առ Սոեի. մոկ։ 84։
Դանօթութիւնք ի ներբողս Աճառնին։ 86։
Բացայայտութիւն ի բանն՝ Խրախայիր յաւէտ հրճուանօք էբէրէաւէ ի հանոյս։ 112։
Նախադրութիւն ի ներբողս սրբոյ Առաքելոց։ 148։
Ներբողս սրբոց Առաքելոց։ 149։
Դանօթութիւնք ի նոյն։ 164։
Նախադրութիւն ի ներբողս սրբոյն Յակոբայ մծբնի։ 187։
Ներբողս ի սրբն Յակոբ մծբնի։ 189։
Դանօթութիւնք ի նոյն։ 205։
Գանձ ի սբ Հոգին։ 230։
Դանօթութիւնք ի նոյն։ 233։
Գանձ ի սբ Եկեղեցի։ 238։
Դանօթութիւնք ի նոյն։ 241։
Գանձ ի սբ Խաչն։ 248։
Դանօթութիւնք ի նոյն։ 250։

| ԵՐԵՍ | ՏՈՂ. | ՎՐԻՊԱԿՔ | ՈՒՂԵԱՒ |
|---|---|---|---|
| 11 | 4 | աշխարհապարունակ | 11 աշխարհապարունակ |
| | 19 | Եւ 11 ևս 'ի քիլս | Եւ 12 ևս 'ի քիլս |
| 53 | 34 | յարմարէ զմեզ | 55 յարմարէ զմեզ |
| 54 | 4 | Որում անաահմանն | 56 Որում անսահմանն |
| 68 | 24 | անպատկառելի | անպատկառելի |
| 72 | 9 | այդ արփիսակիզքն | այդ արփիսակիզքն |
| 85 | 25 | միջնորդաւ էութեան | միջնորդաւ էութեան բանիւ |
| 173 | 43 | Ղուկ. | Ղուկ. |
| 229 | 28 | կամ յոյս | կամ յոյս |
| | 36 | հանդէս հաւատոց | հանդէս հաւատոց |
| 244 | 29 | Յեղանակաւ խոչանն | Յեղանակաւ էլանն |
| 206 | 28 | առ իոչանն. | առ էլանն. |
| 250 | 27 | Երկաքանչիւր առա- յուածքդ | Երկաքանչիւր ասացուածքդ |

---

*Tip. ed Edit. li RR. PP. Armeni di S. Lazzaro in Venezia.*

---

էրէցաբառարքիզ
քիւր քրքիւր, 11, 38, 238. բրքու քիւր, 201.
բարբպարքի պատարհարաւ, 11.
բառ քեռարքի, 15.
քարի ե քարի, 16.
քեռրի քարի, 16.
էքիսարքրի էքիցաւագրարքի, 17
բացատար ի բաց, 18. բացի բաց, 149.
ևս քան զան, 20, 22.
բարքիրացարքիզ յորքառաւ, 20.
առարքի արքառարքի, 21.
էրաց առ էրաց, 41.
Քրիստոսի ձեռնադր, 42
առարքացարքիզ յերաւ, 45.

Анализ функции, 50.
функциональная функция, 50.
индекс ид, 50, 157.
матрица, матрицы, 52.
сфера, сферы, 54.
эллипсоид эллипсоидов, 151.
эр эллипсоидов, 152.
гиперболоид гиперболоидов, 153.
функционал функционалы, 196.
функция фия, 201.

Предисловие

Предисловие стр. 12:
Текст рукописи; 13:
Краткое описание рукописи Ереванского
и Матенадаранского; 14:
Краткое описание Ереванского Архива, 42:
Краткое описание рукописей Ереванского
и Матенадаранского, 45:
Описание описей и каталогов
описей, 52:
Из всех книг книги книгохранилищ
Ереванского и Матенадаранского, 70:
Содержание книги = 12, из 6 описей
академии наук в Ереванском, из 4
описей книги Ереванского ... Книги
Матенадаранского ... Ереванского Архива, 158.

